Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ XIX ԴԱՐԻ 80–90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г.Л. КИРАКОСЯН

СОЦИАЛЬНАЯ СТРУКТУРА НАСЕЛЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 80–90-Х ГОДАХ XIX ВЕКА

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2010

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

A 95996

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ XIX ԴԱՐԻ 80–90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ - 530

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.թ. Վ.Խ.Հովակիմյան

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, Ա.Ա.Խառատյան
պ.գ.դ., պրոֆեսոր Հ.Մ.Հարությունյան

Կիրակոսյան Գ.Լ.
Կ - 530 Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը XIX դարի 80- 90-ական թվականներին – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010 - 228 էջ:

Աշխատությունում արխիվային, հրատարակված փաստաթղթերի հիման վրա լուսաբանվում են Արևելյան Հայաստանի վարչական բաժանումը, բնակչության տեղաբաշխումը, շարժը, դասային կառուցվածքը, կրթական մակարդակը, աշակերտության և մտավորականության թվաքանակը XIX դարի վերջին տասնամյակներին: Լուսաբանվում են նաև բնակչության զբաղվածությունը, ինքնագործների, վարձու աշխատողների թվաքանակը, ճյուղային կառուցվածքը արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում, ինչպես և յուրաքանչյուր դասի, դասակարգի տեսակարար կշիռը բնակչության սոցիալական կառուցվածքում:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8080-0844-1
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010թ.

Նվիրում եմ 1915 թ. Սասունից գաղթած ուջանցի նախնիներիս հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հասարակության սոցիալական կառուցվածք», կամ ուղղակի «սոցիալական կառուցվածք» հասկացությունն ավելի ու ավելի է գրավում սոցիոլոգների, փիլիսոփաների, իսկ վերջին շրջանում՝ նաև պատմաբանների ուշադրությունը: Եվ դա հասկանալի է, քանի որ սոցիալական կառուցվածքում խտացված ձևով արտահայտվում են տվյալ շրջանի հասարակական հարաբերություններ, յուրաքանչյուր սոցիալական շերտի գրաված տեղը, դիրքը տվյալ սոցիալական հարաբերություններում:

Միևնույն ժամանակ սոցիալական կառուցվածքի տեսությունը այն նախադրյալներից մեկն է, որի վրա հիմնվում է հասարակության գիտական ուսումնասիրությունը, կանխատեսվում նրա զարգացումն ու առաջընթացը, նրանում կատարվելիք փոփոխությունները: «Ներկա շրջանում, - գրում է ֆրանսիացի գիտնական Ջ.Գուրվիչը, - սոցիալական կառուցվածք հասկացությունն արժանանում է մեծ ուշադրության և ունի ավելի մեծ հաջողություն, քան ... մեկ այլ հասկացություն», իսկ ըստ ամերիկացի գիտնական Կ.Հերցլերի, տվյալ բնագավառին նվիրված ուսումնասիրություններն ամենատարածվածն են ԱՄՆ-ում[1]:

Ռուսաստանում խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքին շատ ուսումնասիրություններ են նվիրվել: Որոշակի հաջողությամբ ուսումնասիրվել է նաև նախախորհրդային կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը: Թեմային նվիրված լույս են տեսնում նոր աշխատություններ:

Ուսումնասիրվել է նաև Հայաստանի խորհրդային շրջանի սոցիալական կառուցվածքը, այնինչ կապիտալիստական շրջանին առ այսօր ոչ մի առանձին ուսումնասիրություն չի նվիրվել:

Այդ շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված բազմաթիվ աշխատություններում հեղինակներն այս կամ այն չափով անդրադարձել են սոցիալական կառուցվածքի

---

[1] Семенов В.С. Капитализм и классы. М., 1969г., сс. 10-11.

միավորներ դասակարգերին՝ հատկապես գյուղացիությանը և բանվորությանը, նրանց սոցիալական վիճակին, շերտավորմանը, թվաքանակին և այլն: Սակայն, բնականաբար, դա չէր կարող գոհացուցիչ լինել: Շատ ուսումնասիրողներ էլ բավարարվել են միայն Երևանի նահանգով, Կարսի մարզով, կամ, որն ավելի անընդունելի է, ներկա Հայաստանի տարածքով:

Աշխատության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է XIX դարի 80-90-ական թվականները, երբ Արևելյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների հետագա զարգացումը, աշխատանքի հասարակական բաժանման ավելի խորացումը, ներքին շուկայի ընդլայնումը, ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը, օտարերկրյա կապիտալի ներթափանցման ուժեղացումը, հետռեֆորմյան շրջանում արագ թափով զարգացող Ռուսաստանի՝ տնտեսական հարաբերությունների ոլորտում ավելի ընդգրկվելը երկրում վերջնականապես ստեղծեցին և ձևավորեցին կապիտալիզմի նյութական բազան: Բնականաբար փոփոխություններ էին կատարվում տվյալ ժամանակահատվածի հասարակության սոցիալական կառուցվածքում: Ֆեոդալական հասարակարգին բնորոշ դասակարգ-դաս միավորներն իրենց տեղը զիջեցին կապիտալիզմը պայմանավորող բուրժուազիային և բանվորությանը: Երևան եկավ և որպես սոցիալական կառուցվածքների առանձին միավոր ձևավորվեց մտավորականությունը:

Բացի այդ, ժամանակագրական առումով նեղ շրջանակները հնարավորություն են տալիս ավելի խորությամբ ուսումնասիրել բնակչության տեղաշարժերը, դասային կազմը, մտավորականության թվաքանակը, կազմը և գրաված տեղը, բանվորության քանակը, ճյուղային կառուցվածքը և վերջապես նրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը և տեղը բնակչության սոցիալական կառուցվածքում:

Մենագրության աշխարհագրական շրջանակներն ընդգրկում են Երևանի նահանգը, Կարսի մարզը, պատմական Հայաստանի մաս կազմող, բայց Թիֆլիսի և Ելիսավետպոլի նահանգներում գտնվող Բորչալուի, Ղազախի, Շուշիի և Զանգեզուրի գավառները: Անհրաժեշտ հաշվարկները կատարելու և համեմատելի դարձնելու համար Բորչալուի գավառը, որի հյուսիսային շրջանները չէին մտնում Արևելյան Հայաստանի պատմական

սահմաններում, վերցված է ամբողջությամբ: Անհրաժեշտ ամփոփ նյութերի բացակայության հետևանքով միշտ չէ, որ ընդգրկվել է Ախալքալաքի գավառը:

Փորձ է արված աշխատությունը շարադրել ցուցաբերելով քննական-վերլուծական, պատմահամեմատական մոտեցում: Ուսումնասիրությունը կատարվել է բնակչությանը վերաբերող բազմաթիվ տնտեսա-վիճակագրական, արխիվային նյութերի, պաշտոնական և այլ տվյալների համեմատությունների, ընդհանրացումների հիման վրա: Զուգակցված են տնտեսագիտական, ժողովրդագրական, ճյուղային ու տարածքային համեմատությունները:

XIX դարի 80–90-ական թվականների ժողովրդագրության պատկերը պարզելու, քանակական, դաս-դասակարգային փոփոխությունները վերհանելու, մտավորականության, բանվոր դասակարգի քանակը, տեղաբաշխումը և տեղը տվյալ հասարակարգում լուսաբանելու համար անհրաժեշտորեն ուսումնասիրվել են բազմաթիվ հրապարակված, արխիվային, վիճակագրական և այլ աղբյուրներ: Աղբյուրների տվյալները շատ հաճախ տարբեր են, երբեմն նույնիսկ հակասական, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել քննական վերլուծական մոտեցում:

Հայտնաբերվել և շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նոր նյութեր, ուսումնասիրված մի շարք նյութերի նկատմամբ դրսևորվել է նոր մոտեցում:

Հրատարակված աղբյուրների շարքում իրենց անփոխարինելի տեղն ունեն 1886թ. Անդրկովկասում անցկացված ընտանեկան ցուցակագրության վիճակագրական նյութերը, որոնցում ընդգրկված յուրաքանչյուր գյուղի և քաղաքի բնակչությունն բաժանված է ըստ ծխերի թվաքանակի, սեռի, ազգային և կրոնական պատկանելիության, դասային կազմի, ընտանեկան դրության, լեզվի, գրագիտության, կրթության, ծխերի զբաղմունքի, ինչպես և նրանց ունեցվածքի[2]:

1883թ. ապրիլի 26-ին հրապարակված օրենքի համաձայն, պետական գյուղացիության թվաքանակը ճշգրտելու, հողատարածության, ծխերի վերաբերյալ հավաստի տվյալներ ունենալու

---

[2] Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1893, с.IV.

նպատակով ցարական կառավարության պետական գույքի նախարարությունը 1884, 1885 և մասնակիորեն 1886 թվականներին հավաքած նյութերը ուսումնասիրելուց և համակարգելուց հետո հրատարակեց յոթ, այնուհետև դրանց հիման վրա՝ հինգ հատորանոց ժողովածուներ[3]:

Հրատարակված ժողովածուները, չնայած նյութերի որոշ անկանոնությանը, հարուստ տեղեկություններ են պարունակում հողագործության[4], անասնապահության, գյուղատնտեսական բանվորության, նրա աշխատավարձի, վարձման ժամկետների վերաբերյալ: Թեմայի ուսումնասիրման համար հետաքրքիր են նաև Ի.Ս.Խատիսովի և Ն.Ն.Շավրովի բամբակագործությանը և մետաքսագործությանը նվիրված ուսումնասիրությունները[5]:

Գյուղացիական ծխերի քայքայումը, սոցիալական շերտավորումը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ուսումնասիրելու համար բազմակողմանի նյութեր է պարունակում զեմստվոյական վիճակագրությունը: Այդ վիճակագրական տվյալները վաղուց արժանացել են գիտնականների ուշադրությանը, որոնք բազմիցս ընդգծել են դրանց հուսալիությունը[6]: Սկզբնական շրջանում անկետաներն ընդգրկում էին 100, իսկ վերջին շրջանում՝ ավելի քան 250 ցուցանիշներ: Հավաքված նյութերը, որոնք կազմում են հարյուրավոր հատորներ, որպես կանոն, հրատարակվել են: Զեմստվոյական վիճակագիրների ամենահիմնական թերությունը գյուղացիության որպես մեկ միասնական կա-

---

[3] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (այսուհետև՝ Материалы). Тт. I-VII. Тифлис, 1886-1997 гг. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края (այսուհետև՝ Свод материалов). Тт. I-V, Тифлис, 1887-1888 гг.

[4] Տես Зелинский С.П., Садоводство в Закавказском крае. Вермишев Х.А. Земледелие у государственных крестьян Закавзского края. – Свод материалов, т. IV, ч. I, Тифлис, 1888 г.

[5] Տես Андраников И.З. Скотоводство в Закавзском крае. - Свод материалов, т. V, ч. I, Тифлис, 1888 г. Տես նաև Материалы, т. I, сс. 46-47, 340-342, 390-400, т. II, ч.II, с.200 և հետո, т. III, с. 320 և հետո, т. IV, ч.I, с. 96, ч. II, с. 176 և հետո:

[6] Земские подворные переписи. М., 1961.

տեգորիա դիտարկելն է[7]: Այնինչ, հանրահայտ փաստ է՝ կապիտալիզմի շրջանում այն շարունակաբար ենթարկվում է տնտեսական շերտավորման ծնունդ տալով գյուղատնտեսական բուրժուազիայի և պրոլետարիատի, դառնալով նաև այլ դասակարգերի համալրման աղբյուր:

Քանի որ Արևելյան Հայաստանում զեմստվոներ գոյություն չունեին, այստեղ կիրառվել է զեմստվոյական վիճակագրության միայն մեկ ձև՝ գյուղացիական տնտեսությունների բյուջեների ուսումնասիրում: Ընդհանուր առմամբ ցարական կայսրությունում հետազոտվել են 12 հազար նման բյուջեներ[8], որոնցից 65-ը Արևելյան Հայաստանում: Բյուջեների ուսումնասիրումը կատարվել է բավական լայն ծրագրով, ընդգրկելով մանրամասն տեղեկություններ ծխերի եկամուտների և ծախսերի մասին: Գյուղացիական ծխերի տնտեսական բնութագրման, գյուղացիության տարբեր շերտերի առկայության և դրության, նրանց միջև եղած տնտեսական տարբերության, գյուղատնտեսական և արդյունաբերական բուրժուազիայի և բանվոր դասակարգի առաջացման տնտեսական հիմքի ուսումնասիրման համար բյուջեները առանձնահատուկ աղբյուր են: Դրանք հետազոտվել են թե ռուս, թե հայ պատմաբանների և տնտեսագետների կողմից[9]:

Թեմայի ուսումնասիրման համար խիստ կարևոր են նահանգապետերի հաշվետվությունները: Դրանց աղբյուրագիտական արժեքն անվիճելի է, իսկ Նրանց պարունակած տեղեկությունները հաճախ եզակի, միակ փաստերն են տվյալ ժամանա-

---

[7] Хрящев А.Х. К вопросу о принципах группировки массовых статистических материалов в целях изучения классов в крестьянстве. М. 1925. Анфимов А.М. О мелком товарном производстве в сельском хозяйстве пореформенной России. – История СССР, 1963, N 2.

[8] Այդ մասին մանրամասն տես՝ Чайнов А., Студенский Г. История бюджетных исследований. М., 1922; Чайнов А., Бюджетные исследования. История и методы. М., 1929. Корневская Н. Бюджетные обследования крестьянских хозяйств в дореволюционной России. М. 1954.

[9] Տես Рындзюнский П.Г. Экономический строй крестьянского хозяйства России в пореформенное время. – Вопросы истории, 1971, N 11; Туманян О.Е. Экономическое развитие Армении. Ереван. 1954, сс. 134-152; Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении. Ереван, 1957, сс. 364-373; Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван. 1959, сс. 114-123.

կաշրջանի շատ հարցերի վերաբերյալ: Հաշվետվությունները բավական հավաստի տեղեկություններ են տալիս տվյալ նահանգի հողատարածքների, ցանքատարածքների, անասնապահության, արդյունաբերության, բանվոր դասակարգի թվաքանակի, տեղաբաշխման, քաղաքների, գյուղերի բնակչության տեղաշարժերի և այլնի մասին:

Հաշվետվությունների ձևերը մշակվում էին և անընդհատ կատարելագործվում: Նրանցում ընդգրկված հարցերը ամրագրված էին օրենսդրությամբ: Նշված աղբյուրի հավաստիության հարցը դարձել է բազմաթիվ պատմաբանների ուսումնասիրության առարկա, որոնք հաշվետվություններում պարունակած այս կամ այն տեղեկությունները համադրել, ստուգել են այլ աղբյուրներով և հանգել այն եզրակացությանը, որ դրանք, չհաշված առանձին դեպքեր, խիստ արժեքավոր են[10]: Հայ ուսումնասիրողների կողմից դրական գնահատականի են արժանացել նաև Երևանի նահանգապետի հաշվետվությունները[11]:

1870թ. հրատարակված կանոնադրության համաձայն, «Նահանգապետի հաշվետվությունը, գլխավորապես, պետք է լինի տվյալ նահանգի վիճակի և կարիքների մասին ցարին ներկայացվող զեկուցագիր»[12]:

Հաշվետվության երկրորդ մասը վերաբերում էր տվյալ նահանգի տնտեսական կյանքին՝ բաժանված վեց ճյուղերի: Տնտեսական կյանքին վերաբերող վիճակագրական տվյալները հավաքվում էին ներքին գործերի նախարարության կենտրոնական վիճակագրական կոմիտեի և ֆինանսների նախարարության մշակած ձևերի հիման վրա՝ 1830թ. և որոշ լրացումներով 1834 թվականներին հրատարակված օրենքների համաձայն[13]: Նշված ձևե-

---

[10] Дятлова Н.П. Отчеты губернаторов как исторический источник. – Проблемы архивоведения и источниковедения. Л., 1964; Литвак Б.Г. Очерки источниковедения массовой документации. М., 1979г.; Улащик Н.Н. Очерки губернаторов Литвы и Западной Белоруссии как исторический источник. – Проблемы источниковедения. М., 1961 և այլն:

[11] Թադևոսյան Ա.Ա., Երևանի նահանգապետի հաշվետվությունների հավաստիության հարցի շուրջը (1851-1917): - ԲՀԱ, 1983, թիվ 3, էջ 159-164:

[12] Литвак Б.Г. Очерки источниковедения массовой документации. М., 1979, с. 146.

[13] Полное собрание Законов Российской империи (այսուհետև ПСЗРИ), II, т. V, отд. 1, թիվ 3467, т. IX, отд. 2,թիվ 7484: Այդ մասին մանրամասն տես Ры-

ոի հիմնական թերությունն այն է, որ «ֆաբրիկա» - «գործարանների» հստակ բնորոշում չկար: Դրանք տարանջատված չէին մանուֆակտուրային և արհեստագործական մանր ձեռնարկություններից և, ինչպես նշում է ուսումնասիրողներից մեկը, փաստորեն կրկնում էին XVIII դարի օրենսդրական ակտերը[14]: Բացի այդ, ձեռնարկատերերը, որոնց տեղեկությունների հիման վրա էին լրացվում նշված ձևերը, շատ հաճախ նվազեցնում էին արտադրության ծավալը, գումարը, բանվորների քանակը[15]: Հաճախ տարանջատված չէին բուն արտադրությունում զբաղված, օժանդակ կամ օրավարձու բանվորները:

1884 - 1885 թվականներին հարցաթերթիկները ենթարկվեցին նոր փոփոխության: Հարցերի ընդգրկումը լայնացավ: Գործարանատերերը պարտավոր էին տեղեկություններ հաղորդել ձեռնարկության տեղի, հիմնադրման թվականի, արտադրության քանակի և գումարի, մեխանիկական շարժիչների հզորության, բանվորների քանակի, սեռատարիքային կազմի, աշխատավարձի, բանվորական օրվա տևողության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ[16]: Ցանոթագրությունում հստակ նշված էր, որ միանման տեղեկություններ պիտի տրվեն այն գործարանների մասին, որոնց արտադրության գումարը գերազանցում է 1000 ռ.: Իսկ ավելի փոքրերը պիտի ընդգրկվեն նահանգների ընդհանուր հարցաթերթիկներում[17]:

XIX դարի վերջին տասնամյակում փորձ արվեց վերակառուցել արդյունաբերության վիճակագրությունը և համապատասխան դարձնել ժամանակի պահանջներին: Հիմնական մի-

---

баков Ю.Ч. Программа и организация сбора сведений по промышленной статистике России XVIII – XIX веков. – Археграфический ежегодник за 1964 г. М., 1965.

[14] Воробьев Н.Я. Очерки по истории промышленной статистики в дореволюционной России и в СССР, М., 1961, с. 9-10.

[15] Այսպես՝ Ա.Բ.Բուշևի հաշվարկների համաձայն ձեռնարկատերերի կողմից բանվորների քանակի նվազեցումը երբեմն կազմում է 50%, իսկ Դ.Ա.Տիմիրյազևը ավելի հավանական է համարում 15-20%: Տես՝ Массовые источники по социально-экономической истории России периода капитализма. М., 1979, с. 29.

[16] Российский Государственный Исторический Архив в С.Петербурге. Այսուհետև՝ РГИА СПб, ф. 20, оп. 12, д. 12, лл. 14, 65.

[17] Նույն տեղում:

տումներն ամփոփված էին ֆինանսների նախարար Ս.Վիտտեի շրջաբերականում: Միաժամանակ փորձ արվեց արդյունաբերությունը դասակարգել նոր ձևով (12 խումբ): 1895 թվականին մշակված հարցաթերթիկների նոր ձևն ընդգրկում էր արդեն 35 հարց, բազմաթիվ ենթահարցեր, աղյուսակներ: Բացի այդ, նոր փորձ էր արվում ավելի հստակ բնորոշելու ֆաբրիկա-գործարան հասկացությունը: Հարցաթերթիկներում պիտի ընդգրկվեին այն գործարանները, որոնք ունեին 15-ից ոչ պակաս բանվոր, կամ 15-ից պակաս լինելու դեպքում՝ որոնք ունեին շոգեկաթսաներ, շոգեմեքենաներ, մեխանիկական կամ շոգեշարժիչներ[18]:

Չնայած նշված հրահանգներին, շատ հաճախ տեղական իշխանության ներկայացուցիչները բավական անտարբեր էին վերաբերվում վիճակագրական տվյալների հավաքմանը: Այսպես, 1889 թվականին Երևանի նահանգապետը չեղյալ է հայտարարում Նոր Բայազետի գավառապետի հաշվետվությունը, քանի որ նրանում տեղ էին գտել մի շարք սխալներ[19]:

Այդ առումով տեղին է նաև «Մուրճ» - ի դժգոհությունը. «Հետազոտող մարդը հանդիպում է ահագին դժվարությունների, երբ նա դիմում է համեմատական վիճակագրության թվերին, պարզ որոշելու, թե արդյունաբերության մի ճյուղի այս կամ այն կողմը որքան է զարգանում: Այս վերաբերությամբ վիճակագրական տեղեկությունները կամ բոլորովին պակասում են կամ միմյանց սաստիկ հակասում»[20]:

Երևանի նահանգապետերի, ինչպես և Կարսի մարզպետների հաշվետվությունները արդյունաբերության վերաբերյալ, որպես կանոն, տեղեկություններ են պարունակում գործարանների տեղի, արտադրության գումարի և բանվորների քանակի վերաբերյալ: Բացառություն կարելի է համարել Երևանի նահանգի 1890թ. հինգ գործարանների վերաբերյալ 1890թ. տեղեկությունները գտնվելու վայրը, հիմնադրման թվականը, արտադրության չափը, բանվորների քանակը, սեռատարիքային կազմը, շոգեշարժիչների առկայությունը և հզորությունը, աշխատավարձի չափը, աշխատանքային օրվա տևողությունը և այլն[21]:

---

[18] Նույն տեղում, դ. 395, ա. 73.
[19] Հայաստանի ազգային արխիվ: Այսուհետև՝ ՀԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 14, թ. 133:
[20] «Մուրճ», 1894. թիվ 4:
[21] РГИА СПб, ф. 20, оп. 12, д. 245.

Հարկ է նշել, որ վերոհիշյալ հաշվետվությունների տեղեկությունները աշխատանքային օրվա և հատկապես աշխատավարձի վերաբերյալ, եթե այդպիսիք կան, հստակ չեն: Այսպես, երբեմն նշվում է բանվորի ստացած ամսական, երբեմն՝ օրական, երբեմն էլ մեկ ժամվա համար ստացած գումարը: Հաշվետվություններից դուրս էին մնում այն ձեռնարկությունները, որոնք վճարում էին ակցիզային հարկ և լեռնարդյունաբերությունը:

Չնայած նշված թերություններին, նահանգապետերի հաշվետվությունները և նրանցում ընդգրկված վիճակագրական տվյալները շարունակում են մնալ կարևոր աղբյուր ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար:

Երևանի նահանգապետերի և Կարսի մարզի կառավարչապետերի հաշվետվությունների մի մասը հրապարակվել է[22], իսկ հիմքերը պահպանվում են Երևանի, Թբիլիսիի և Պետերբուրգի պատմության արխիվներում[23]:

Թեմայի համար կարևոր են նաև Թիֆլիսի և Ելիսավետպոլի նահանգապետերի՝ մեզ անհրաժեշտ ժամանակաշրջանի հաշվետվությունները, քանի որ Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ ընդգրկված էին հիշյալ նահանգների կազմում (Ախալքալաքի, Բորչալուի, Շուշիի, Ղազախի, Զանգեզուրի գավառներ):

Բացի նահանգապետների ու Կարսի մարզի կառավարչապետների հաշվետվություններից, ներքին գործերի նախարարության կենտրոնական վիճակագրական կոմիտեի հավաքած վիճակագրական տվյալները իրենց արտացոլումն են գտել այլ

---

[22] Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1884-1893 гг., Обзор Карсской области за 1894-1901 гг., Обзор Эриванской губернии за 1887-1902 гг., Памятная книжка Эриванской губернии за 1892-1901 гг.

[23] РГИА СПб., ф. 387, оп. 7, д. 4604, лл. 1-84, ф. 932, оп. 1, д. 306, 333, лл. 30-37, ф. 1263, ж.з. 1884 г., д. 113, 1896 г., оп. 2, д. 5189, лл. 230-279, 655-713, д. 5257, лл. 469-511, 722-786, ж.з. 1900 г., ч. II, лл. 150-176 և այլն: Ф. 1268, оп. 21, д. 174, оп. 23, д. 53, 219, оп. 24, д. 231, оп. 25. дд. 262, 297 և այլն: Ф. 1276, оп. 14, д. 485. Ф. 1282, оп. 3, дд. 263, 325, 371, 372, 432, 438, 471, 530, 536, 538, 541 և այլն: Ф. 1284, оп. 223, дд. 36, 59, 67, 75, 86, 123, 124, 180, 200, 214 և այլն: Центральный Государственный Исторический Архив Грузии (այսուհետև՝ ЦГИАГ) ф. 5, g. 1, գ. 4816, 4849, 5800, 6311, 6655, 7063, 7405, ф. 12, g. 1, գիրք I, գ. 969, 1061, 1109, 1266, 1466, գիրք II, գ. 2573, 2653, 2757 և այլն:

հրատարակություններում: Նշենք, որ Ռուսական կայսրության վիճակագրության հիմնական առանձնահատկությունն էր, որ այն տարանջատված էր պետական և մասնավոր զանազան հիմնարկությունների միջև, ուստի նրանք միանման չէին, արտացոլում էին արդյունաբերության կամ գյուղատնտեսության այս կամ այն ճյուղերը, ունեին նեղ, կամ համեմատաբար ավելի լայն ընդգրկում:

XIX դարի երկրորդ կեսին, XX դարի սկզբին իր որակով հատկապես առանձնացավ լեռնարդյունաբերության վերաբերյալ վիճակագրությունը: Ամեն տարի արդյունաբերության և առևտրի նախարարության լեռնային դեպարտամենտում ստացվում էին վիճակագրական զեկույցներ, որոնք կազմվում էին շրջանային լեռնային հսկիչների կողմից և հիմնված էին պետական ու մասնավոր ձեռնարկությունների կողմից ստացված տեղեկությունների վրա: Համապատասխան մշակումներից հետո դրանք հրատարակվում էին: Թեմայի ժամանակաշրջանին համապատասխանող տարիների ժողովածուները բնականաբար օգտագործվել են[24]:

Առանց նշված ժողովածուների անհնար էր ամբողջական, հստակ պատկերացում կազմել Արևելյան Հայաստանում պղնձի և աղի արտադրության մասին: Դրանցում ամենամյա տեղեկություններ կան պղնձահանքերի, հանքաքարի արդյունահանված քանակի, հիմնական և օժանդակ բանվորների քանակի վերաբերյալ: Ամենամյա տեղեկություններ կան պղնձագործարանների քանակի և տեղաբաշխման, տեխնիկական զինվածության, արտադրված պղնձի, հիմնական և օժանդակ բանվորների քանակի վերաբերյալ: Նման վիճակագրական տեղեկություններ են պարունակում նաև աղահանքերի, արտադրված աղի, ինչպես և այդ

---

[24] Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1887 году. Сост. С.Кулбин. С. Петербург, 1890. Тоже в 1888 году. СПб, 1891, Тоже в 1889 году. СПб, 1892. Тоже в 1890 заводском году. СПб, 1892 г. Тоже в 1891 заводском году. СПб, 1893. Тоже в 1892 заводском году. СПб, 1895. Тоже в 1893 заводском году. Сост. А.Лоранский. СПб, 1893. Тоже в 1894 заводском году. СПб, 1896 г. Тоже в 1895 заводском году. СПб, 1897 г. Тоже в 1896 заводском году. СПб, 1899 г. Тоже в 1897 заводском году. СПб, 1899 г. Тоже в 1898 заводском году. СПб, 1900 г. Тоже в 1899 заводском году. СПб, 1901 г. Тоже в 1900 заводском году. Сост К. Робук. СПб, 1903 г

ճյուղում զբաղված հիմնական և օժանդակ բանվորների քանակի վերաբերյալ: Ժողովածուների հիմնական թերությունն այն է, որ դրանց նախնական տվյալները նորից ներկայացնում էին ձեռնարկատերերը, որոնք շահագրգռված էին մի շարք ցուցանիշների նվազեցումով: Բացակայում են օրավարձու բանվորների, ինչպես և բանվորների սեռատարիքային կազմի վերաբերյալ տվյալները:

XX դարի սկզբին ցարական կառավարությունն արդյունաբերության հարցաթերթիկային վիճակագրությունից անցում կատարեց գործարանների համընդհանուր միաժամանակյա ցուցակագրման: Ցուցակագրման հիմքում դրված էին ֆինանսների նախարար Ս.Վիտտեի՝ գործարանատերերին հասցեագրված 1895 թ. ուղերձի պահանջները:

Ընդհանուր առմամբ արդյունաբերության հաշվառում կատարվեց 1900, 1908 և 1910-1912 թվականներին[25]: Տվյալ դեպքում մեզ համար կարևորվում է 1900 թ. կատարված ցուցակագրումը, որի արդյունքների մի մասը հետագայում ֆինանսների նախարարության արդյունաբերության բաժնի կողմից հրատարակվեց[26]: Առաջին հրատարակումը (Список фабрик и заводов...) ղեկավարում էր ժամանակի խոշոր վիճակագիրներից մեկը՝ Վ.Ե.Վարզարը: Հրատարակումը կատարյալ դարձնելու համար ձեռնարկատերերին ուղարկվել են հարցաթերթիկներ, սակայն հետ են ստացվել դրանց 1/3-ը:

Ցուցակագրման, ինչպես և հրատարակման ժամանակ արդյունաբերությունը բաժանվում է 12 ճյուղերի[27]: Հաշվառման հիմնական միավորը, ինչպես նշվեց, գործարանն էր, որի սահմանումը տրվել էր դեռևս 1895 թվականին: Ժողովածուն տեղեկություններ է պարունակում գործարանների գտնվելու վայրի, հիմնադրման թվականի, արտադրանքի տարեկան գումարի և մեզ համար տվյալ դեպքում ավելի կարևոր՝ բանվորների քանակի վերաբերյալ:

---

[25] Массовые источники по социально-экономической истории России периода капитализма. М. 1979, с. 46.

[26] Sби Список фабрик и заводов Европейской России. С. Петербург, 1903 г. Адресная книга фабрично-заводской и ремесленной промышленности всей России, под редакцией А.В.Погожева. С.-Петербург, 1905 г.

[27] РГИА СПб, ф. 22, оп. 2, д. 2927, лл. 3-4.

"Адресная книга ..." ժողովածուն ևս համանման տեղեկություններ է պարունակում: Այն ընդգրկում է 5 և ավելի բանվոր ունեցող 24.777 ձեռնարկություններ, որոնք դասակարգված են 16 խմբերում ըստ նահանգների: Չեն ընդգրկվել 1 բանվոր ունեցող 3.246 և 2-4 բանվոր ունեցող 8.455 ձեռնարկություն: Նշված ժողովածուների աղբյուրագիտական արժեքը բավական բարձր են գնահատել ուսումնասիրողները՝ մատնանշելով նաև թերությունները (բացթողումները, դասակարգման պայմանականությունը և այլն)[28]:

Հրապարակված ժողովածուներից թեմայի համար կարևոր են նաև "Кавказский календарь"-ի ամենամյա հրատարակությունները, որոնք վիճակագրական տեղեկություններ են պարունակում բնակավայրերի, բնակչության թվի, սեռատարիքային կազմի, հողագործության, անասնապահության, արդյունաբերության տարբեր ճյուղերի, բանվորների թվաքանակի, աշխատավարձի վերաբերյալ[29]: Արժեքավոր են նաև "Сборник статистических сведений о Кавказе", "Сборник материаов для описания местностей и племен Кавказа", "Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях" և մի շարք այլ վիճակագրական ժողովածուներ[30]:

Թեմայի ուսումնասիրման համար հրատարակված աղբյուրների շարքում անփոխարինելի են և խիստ կարևորվում են Ռուսական կայսրությունում 1897թ. անցկացրած մարդահամարի

---

[28] Տես Васильев Б.И. Численность, состав и территориальное размещение фабрично-заводского пролетариата Европейской России в конце XIX – начале XX в. – История СССР, 1976, N1.

[29] Кавказский календарь за 1880-1901 гг. Тифлис, 1881-1902 гг.

[30] Сборник статистических сведений о Кавказе. Т. I-VII, Тифлис, 1869-1880, Сборник материаов для описания местностей и племен Кавказа. Вып. 1-46. Тифлис, 1881-1914 гг. Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях. Исследования А.М. Аргутинского-Долгорукова, В.П. Бочкарева и Р.И. Даниловича. Тифлис, 1897. Сборник статистических сведений по Закавказскому краю. Тифлис, 1902. Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края. Тифлис, 1899 г.

նյութերը[31]: Դրանք նախ և առաջ ամփոփ, ամբողջական տվյալներ են պարունակում բնակչության քանակի, ազգային, սեռատարիքային կազմի, գրագիտության, ըստ նահանգների, գավառների տեղաբաշխման, դասային կազմի, հավատքի, զբաղվածության վերաբերյալ:

Ռուսական կայսրության պատմության ընթացքում դա բնակչության միակ մարդահամարն էր: Այդ տվյալները հրատարակվել են նաև ըստ նահանգների և մարզերի[32]: Մարդահամարի նախնական անկետային տվյալների ամբողջական հավաքածուն պահպանվում է Ռուսաստանի կենտրոնական պատմական արխիվում[33]:

Բնակչության ազգային կազմը մարդահամարի ժամանակ, հակառակ վիճակագիրների 1872թ. Պետերբուրգի կոնգրեսի որոշման, հաշվառվել է ըստ լեզվի, որը, մի շարք ուսումնասիրողների կարծիքով, արհեստականորեն բարձրացրել է ռուսների և հակառակը նվազեցրել մյուսների՝ այդ թվում նաև հայերի քանակը մինչև 10% - ով[34]:

Ռուսական կայսրությունում կատարված առաջին մարդահամարի նյութերն իրենց ընդգրկումով և միաժամանակությամբ անփոխարինելի են նաև բանվորության թվաքանակի, տեղաբաշխման, ճյուղային կառուցվածքի, սեռատարիքային կազմի, ընտանեկան դրության, գրագիտության աստիճանի որոշման առումով:

Այդ ուղղությամբ կատարված մշակումների առաջին արդյունքները հրապարակվեցին 1905 թվականին, որում տրված էր

---

[31] Первая всеобщая перепись населения Российской империи. Общий свод по империи результатов разработки данных первой всероссийской переписи произведенной 28 января 1897 года, тт. I-II, СПб, 1905. Краткие общие сведения по империи. Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и по некоторым занятиям. Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельными территориальными районами, т. III, СПб, 1905.

[32] ПВПНРИ. Вып. 1-89, СПб, 1900-195.

[33] РГИА СПб, ф. 1290, оп. 11, дд. 1-2823.

[34] Брук С.И., Кабузан В.М. Динамика и этнический состав населения России в эпоху империализма (конец XIX в. – 1917 г.). История СССР, 1980, N 3, с. 90.

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

բանվորության ճյուղային կառուցվածքը, ծննդավայրն ըստ նահանգների[35]:

Ներքին գործերի նախարարության պահանջով բանվորներին, սևագործներին, օրավարձուներին և ծառաներին վերաբերող նյութերը ենթարկվեցին լրացուցիչ մշակման, որի արդյունքները երկու հատորով նույնպես հրատարակվեցին[36]: Թեմայի համար շատ ավելի արժեքավոր են առաջին հատորի երեք աղյուսակները և հատկապես գյուղատնտեսական բանվորությանը վերաբերող հավելվածը, որի համար ֆինանսների նախարարությունը հարկ չէր համարել միջոցներ հատկացնել[37]: Այնինչ այդ տվյալներն իրենց ամբողջականությամբ և ընդգրկումով միակն են, առանց որոնց հնարավոր չէր լինի պարզել այդ բնագավառի բանվորության թվաքանակը, ճյուղային կառուցվածքը, սեռատարիքային կազմը և այլն:

Բացի այդ, սևագործներին, օրավարձուներին, ծառաներին վերաբերող ամբողջական տվյալներ կարելի է գտնել միայն այդ հավելվածում:

Չնայած իրենց ամբողջականությանը և արժեքավորությանը, ցավոք, այս աղբյուրը ևս զերծ չէ թերություններից: Ըստ գլխավոր խմբագիր Ն.Ա.Տրոյնիցկու, դժվար է երաշխավորել վերոհիշյալ տվյալների ամբողջությունը և հնարավոր են բացթողումներ[38]: Դա երևում է նաև մինչ այդ հրապարակված տվյալների հետ համեմատելուց:

Բացի այդ, ինչպես ճիշտ նշում է ներքին գործերի նախարարության վիճակագրական կոմիտեի խմբագիր Վ.Վ. Ստեպանովը, մարդահամարի ժամանակ (ձմռանը՝ հունվարին) արդյունաբերական մի շարք ճյուղերում բանվորների թվաքանակը խիստ կրճատվում էր (լեռնարդյունաբերություն, վերամշակող արդյունաբերության մի շարք ճյուղեր և այլն)[39]: Ավելացնենք, որ

---

[35] Распределение рабочих и прислуг по группам занятий и по месту рождения на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 28 января 1897 г. СПб, 1905 г.

[36] Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи1897 г., т. I, т. II, СПб, 1906.

[37] Численность и состав рабочих в России ..., т. I, с. IV.

[38] Նույն տեղում:

[39] Նույն տեղում, с. X.

գյուղատնտեսության բնագավառում նշված կրճատումը շատ ավելի պիտի լիներ: Ըստ ռուս գիտնական Բ.Պ.Կադոմցևի, գյուղատնտեսական բանվորների թիվն ամենայն հավանականությամբ, թեև ոչ դիտմամբ, նվազեցված է[40]: Այդ հարցի մի այլ մասնագետ Ա.Վ.Պոգոժևի կարծիքով, մարդահամարի ժամանակ հաշվարկված է բանվոր բնակչության նվազագույնը, ուստի և հրապարակված տվյալները պայմանական են, մոտավոր[41]: Մեր կարծիքով այս տեսակետի հետ ամբողջությամբ համաձայնվել չի կարելի: Հետագա շրջանի գիտնականներ Պ.Ի.Լյաշչենկոն, Ա.Գ.Ռաշինը, Ա.Գ.Ստրումիլինը, Մ. Ադոնցը, Ա.Համբարյանը, Ա.Սիմոնյանը և ուրիշներ, իրենց ուսումնասիրություններում անդրադառնալով նշված հարցին, հանգել են այն եզրակացությանը, որ, իրոք, բանվորության թվաքանակը խիստ նվազեցված է:

Ամեն դեպքում Ռուսական կայսրությունում անցկացված մարդահամարի նյութերը XIX դարի վերջին տասնամյակների Ռուսաստանի, ինչպես և Արևելյան Հայաստանի պատմության բազմաթիվ հարցերի ուսումնասիրման համար շարունակում են մնալ անփոխարինելի:

Թեմայի վերաբերյալ արխիվային կարևոր փաստաթղթեր են պարունակում «Արդյունաբերության վիճակը և բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում» (1803-1920թթ.) ժողովածուն[42]: Այդ նյութերում արտացոլված են Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը հատկապես XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, բանվորության (առանձնապես երկաթուղային, լեռնարդյունաբերական) քանակը, դրությունը:

Բնակչության թվաքանակի, տնտեսություններում կիրառվող վարձու աշխատանքի, գյուղատնտեսական բանվորության թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ են պարունակում 1916-1917 թթ. գյուղատնտեսական մարդահամարի նյութերի մշակումները[43], որոնք թույլ են տալիս մի շարք համեմատություն-

---

[40] Տես Кадомцев Б.П. Профессиональный и социальный состав населения Европейской России по данным переписи 1897 г. П. 1909, с. 48.

[41] Погожев А.В. Учет численности и состава рабочих в России. СПб. 1906, с. 98.

[42] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1984 թ., թիվ 1:

[43] Համբարյան Ա.Ս., Առաքելյան Գ.Ռ., Կիրակոսյան Գ.Լ., Մկրտչյան Ս.Ս., Արևելյան Հայաստանը 1916-1917 թթ. մարդահամարներում: Երևան, 1992 թ:

ներ կատարել մեզ հետաքրքրող շրջանի համանման տվյալների հետ: Օգտագործված են նաև այդ շրջանի «Մշակ», «Մուրճ», «Դրոշակ», «Կարս» և այլ թերթերի, ինչպես և հետագա շրջանի պարբերական մամուլում, ամսագրերում, «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր», «Բանբեր Հայաստանի արխիվների», "История СССР", "Вопросы истории" և այլն, հրապարակված նյութերն ու հոդվածները: Գրքում մեծ տեղ է հատկացված Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ, ֆ. 90, 101, 102, 113, 117, 125, 170, 270, 271) նյութերին: Թեմայի համար շատ ավելի արժեքավոր են Ռուսաստանի (Российский Государственный Исторический Архив в С. Петербурге – РГИА СПб, ф.20, 22, 37, 229, 387, 560, 1263, 1268, 1282, 1284, 1290) և Վրաստանի (Центральный Государственный Исторический Архив Грузии – ЦГИАГ, ф.5,7, 12, 13, 264, 415, 422) արխիվների նյութերը:

Լեռնարդյունաբերությունում զբաղված բանվորների թվաքանակը պարզելու, այլ՝ հրապարակված աղբյուրների հետ համեմատելու, ճշտելու առումով անփոխարինելի են Ռուսաստանի Պատմության արխիվի թիվ 37 (Горный департамент) և հատկապես Վրաստանի արխիվի՝ թիվ 264 (Кавказское горное управление) ֆոնդերի նյութերը[44], որոնք ամենամյա տվյալներ են պարունակում լեռնարդյունաբերության, պղնձագործարանների, արտադրանքի, մշտական և ժամանակավոր բանվորների քանակի վերաբերյալ:

*

* *

Արևելյան Հայաստանի բուրժուական հասարակության սոցիալական կառուցվածքին նվիրված ոչ մի ամբողջական ուսումնասիրություն չկա: Սակայն թե մինչխորհրդային, թե խորհրդային և թե ժամանակակից բազմաթիվ ուսումնասիրողներ իրենց արժեքավոր աշխատություններում այս կամ այն չափով անդրադարձել են կամ հատուկ ուսումնասիրել են Արևելյան

[44] Տես ՑԳԻԱԳ, ֆ. 264, ց. 1, գիրք I, գ. 1030, թթ. 15-49, 192,194; գ. 1132, թ. 2; գ. 1390, թթ. 4-19, 88-97, 117, 118; գ. 1542, թթ. 14-39, 246, 247; գ. 1908, թթ. 16, 47, 226, 227; գ. 1909, թթ. 48, 49; գ. 2037, թ. 64; գ. 2132, թթ. 14, 15; գ. 2171, թթ. 67, 68; գ. 2385, թթ. 4-13, 80-98; գ. 2460, թթ. 18-75; գիրք II, գգ. 2673, թթ. 28, 29, 89, 90; գ. 2912, մաս I, թթ. 83, 84; գ. 2913, մաս II, թթ. 66, 67; գ. 3120, թթ. 7-52:

Հայաստանի բնակչությունը և հատկապես բանվորության թվաքանակը, ուստի և դրանք այս կամ այն չափով առնչվում են մեր թեմային:

Ցարական շրջանի ուսումնասիրողներից ուշագրավ են Ս.Ի.Գուլիշամբարովի աշխատությունները, որոնցում հեղինակն ուսումնասիրելով Թիֆլիսի նահանգի և ընդհանրապես Անդրկովկասի արդյունաբերության վիճակը, անդրադառնում է նաև բանվորության թվաքանակին[45]: Ցավոք այդ տվյալները շատ հաճախ ճիշտ չեն: Ուշագրավ են նաև Սիմոն Զավարյանի աշխատությունները, որոնցում հեղինակը լուսաբանում է գյուղացիության սոցիալական շերտավորումը, պղնձահանքերում և հատկապես Զանգեզուրի ու Արցախի մետաքսի գործարաններում աշխատող բանվոր-բանվորուհիների քանակը, սեռատարիքային կազմը[46]:

Բանվորների քանակի վերաբերյալ որոշ տվյալներ կան Արղության-Երկայնաբազուկի աշխատություններում[47]:

Բորչալուի գավառի, Ալավերդու և Զանգեզուրի լեռնահանքային արդյունաբերությունում աշխատող բանվորների դրության, աշխատավարձի և հատկապես մեզ հետաքրքրող քանակական կազմի վերաբերյալ բավականին տվյալներ կան Մ.Շոստակի մենագրություններում[48]:

---

[45] Гулишамбаров С.И. Обзор фабрик и заводов Тифлисской губернии. Историко-статистическое описание фабрично-заводской деятельности Тифлисской губернии в связи с развитием в ней кустарных промыслов. Тифлис, 1888 г., Обзор фабрик и заводов Закавказского края. Тифлис, 1894 г., Историко-экономический обзор шелководства Закавказского края.СПб, 1898г.

[46] Заваров С. Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899 г., Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг., СПб, 1907 г. Кавказ в сельскохозяйственном отношении в 1899 г., Тбилиси, 1900 г.

[47] Аргутинский-Долгоруков А.М. История сооружения и эксплуатации Закавказской железной дороги за двадцать пять лет ее существования 1871-1896 гг., Тифлис, 1896 г., Борчалинский уезд в экономическом и коммерческом отношениях. – Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях. Исслед. А.М. Аргутинского-Долгорукого, В.П. Бочкарева, Р.И. Даниловича. Тифлис, 1897 г.

[48] Шостак М.А. Современное состояние меднорудников и заводов в Зангезурском уезде Елизаветпольской губернии в Закавказье. Тифлис, 1904 г., Исторический очерк развития горного дла в Закавказье. Тифлис, 1901 г.

Արևելյան Հայաստանի լեռնահանքային, գործարանային բանվորների թվաքանակի հետազոտման, ճշտման ուղղությամբ առաջին լուրջ ներդրումներից են Ա.Վ.Պոգոժևի աշխատությունները[49], որոնցում հեղինակը, բավական խորությամբ ուսումնասիրելով ժամանակի վիճակագրական նյութերը, մարդահամարի տվյալները, միաժամանակ քննադատական մոտեցում է ցուցաբերում դրանց նկատմամբ:

Գրքում օգտագործված են նաև Դավիթ Անանունի ուսումնասիրության մի քանի տվյալներ, որոնք առնչվում են թեմային[50]: Ուսումնասիրությունների շարքում առանձնապես կարևոր և արժեքավոր են Բախշի Իշխանյանի երկու աշխատությունները, որոնք առանձին մոտեցում են պահանջում[51]:

Հեղինակը, փաստորեն, հայ պատմագրության մեջ առաջինն է, որ անդրադարձավ Ռուսական առաջին մարդահամարի նյութերին և հենվելով դրանց վրա, փորձեց տալ Անդրկովկասի հայ ազգաբնակչության թվաքանակը, սոցիալական կազմը՝ համադրելով տարածաշրջանի այլ ժողովուրդների համանման տվյալների հետ:

«Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը» աշխատությունում Բ.Իշխանյանը փորձում է տալ նույնիսկ բուրժուական հասարակության սոցիալական կառուցվածքը, իհարկե առանց օգտագործելու տերմինը: «Նորագույն ազգը մի միատարր ու միապաղաղ զանգված չէ ... սոցիալական բարդ օրգանիզմ է», գրում է հեղինակը[52], որտեղ «դասակարգերը ընդհանրապես կազմում են հասարակական բարդ օրգանիզմի մի ամուր օղակված օրգանը, ազգային ընդհանուր միասնության մի ամբողջական անդամը»[53]: Կապիտալիստական հասարակարգում

---

[49] Погожев А.В. Адресная книга фабрично-заводской и ремесленной промышленности всей России. СПБ, 1906.

[50] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. 2, էջմիածին, 1921 թ.:

[51] Իշխանյան Բ., Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը: Թիֆլիս, 1908 թ.: Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը (սոցիոլոգիական պրոբլեմներ): Թիֆլիս, 1914:

[52] Իշխանյան Բ.,նշվ. աշխ., էջ 30:

[53] Նույն տեղում, էջ 31:

«Ավելի բարձր դասակարգ կամ հասարակական շերտ, քան բուրժուազիան է չկա, - շարունակում է հեղինակը, - ավելի ստորին դասակարգ, քան պրոլետարիատն է, դարձյալ գոյություն չունի»[54]: Ըստ հեղինակի, այս՝ բարձր բուրժուազիայի և ցածր՝ պրոլետարիատի միջև եղած տարածությունը լրացնում են հասարակության միջին խավերը մանր բուրժուազիան, ինտելիգենցիան և այլն[55]:

Թվում է, թե Բ.Իշխանյանը, ելակետ ունենալով հասարակության այդ ճիշտ դասակարգային բաժանումը, պիտի կարողանար տալ նաև այդ հասարակության գիտական սոցիալական կառուցվածքը: Սակայն հետագայում առաջին պլան են մղվում ոչ թե արտադրական հարաբերությունները նյութական արտադրությունում գրաված տեղը, արտադրամիջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունները, բաշխման համակարգում գրաված տեղը և այլն, այլ աշխատանքի հասարակական բաժանումը: Ուստի, այսպիսով, ունենալով սխալ ելակետ, հեղինակին չի հաջողվում վերարտադրել Կովկասի ժողովուրդների, հայ բնակչության սոցիալական կառուցվածքի գիտական պատկերը:

Հետաքրքիր է, որ ժամանակակից մի շարք գիտնականներ ևս հասարակության սոցիալական կառուցվածքն ուսումնասիրելիս, անտեսում են դասակարգերը, առաջին պլան մղելով «սոցիալական ստրատիֆիկացիայի» և «սոցիալական շարժունության» տեսությունները, որոնց ժամանակ դիտարկվում են տվյալ հասարակության շերտերը և դրանցում կատարված փոփոխությունները: Խորհրդային գիտնականներից շատերն էլ քննադատելով նշված տեսակետները, դրանք հայտարարեցին «բուրժուական» և հասնելով ծայրահեղության, ժխտեցին նույնիսկ հասարակությունում կատարվող սոցիալական տեղաշարժերը[56]: Նույնիսկ ֆեոդալական հասարակարգում, որն աչքի է ընկնում իր հարաբերական կայունությամբ, անցումներ էին կա-

---

[54] Նույն տեղում, էջ 59:

[55] Նույն տեղում, էջ 62-63:

[56] Տե՛ս Рабочий класс и технический прогресс. М., 1965 г., с. 289; Афросов А.А. Изменение социальной структуры советского общества. М., 1966 г., с. 42; Филипов Ф.Р. Процессы изменения социальной структуры в советском обществе. Свердловск, 1967 г., с. 42; Философский словарь. М., 1963 г., с. 277 և այլն:

տարվում մի դասից մյուսը, իսկ հետֆեոդալական հասարակարգերին, ճիշտ հակառակը, խիստ բնորոշ են բնակչության տեղաշարժերը:

Խորհրդային շրջանում Արևելյան Հայաստանի սոցիալական կառուցվածքին առաջինն անդրադարձել է բոլշևիկյան գործիչ Ս.Կասյանը 1922թ. «Նոր աշխարհ» ամսագրում (թիվ 1) լույս տեսած «Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան» հոդվածում: Հետագայում այն լույս տեսավ առանձին գրքով[57]: Ըստ հեղինակի, «Հայաստանը զուրկ էր մնացել ռուսական կապիտալիզմի ներգործությունից: Նա ենթարկված էր միայն առևտրական կապիտալի քայքայող բրչին, իսկ արդյունաբերական կապիտալի շինող մուրճն ու զնդանը չեն աշխատել այնտեղ»[58] և որ «Հայաստանը լինելով ռուսական կապիտալի գաղութ, ամբողջովին ենթարկված լինելով առևտրական կապիտալի պաուպերիզացիայի հետադիմական պրոցեսին, իսկ Անդրկովկասի օազիսային կապիտալիզմը ունենալով որպես «օդանցք», գերծ էր մնացել կապիտալիզմի և պրոլետարիզացիայի առաջադիմական պրոցեսից»[59]: Նախ նկատենք, որ հեղինակի այս և նման պնդումները հիմնված չեն և ոչ մի փաստի վրա և մնում են լոկ հայտարարություն: Ճիշտ է, Արևելյան Հայաստանը, և ոչ թե ամբողջ Հայաստանը, ինչպես գրում է հեղինակը, Ռուսական կայսրության գաղութն էր, բայց 1828 - 1917 թվականներին, հատկապես հետռեֆորմյան շրջանում, ինչպես իրենց ուսումնասիրություններում ցույց են տվել բազմաթիվ տնտեսագետներ, պատմաբաններ, տնտեսության բոլոր բնագավառներում էլ համեմատական մեծ առաջընթաց է ապրել:

Սխալ է հեղինակի նաև մի այլ պնդում, որ Հայաստանը չունենալով խոշոր արդյունագործություն, հետևաբար չունի «....սոցիալական այն հակոտնյա կատեգորիաները, որոնք հատուկ են արտադրության այդ եղանակին - կապիտալիստական բուրժուազիա և պրոլետարիատ»[60]: Նախ նկատենք. բուրժուազիայի և պրոլետարիատի առկայությունը և ոչ մի երկրում, այդ

---

[57] Կասյան Ս., Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923:
[58] Նույն տեղում, էջ 13:
[59] Նույն տեղում, էջ 17:
[60] Նույն տեղում, էջ 31:

թվում և Արևելյան Հայաստանում, պայմանավորված չէ միայն և միայն խոշոր արդյունաբերությունով: Բուրժուական հասարակության նշված դասակարգերը երևան են գալիս դեռևս ֆեոդալական տնտեսածևի վերջին շրջաններում, աստիճանաբար դուրս մղելով հասարակական կյանքից թե այդ տնտեսածևը, թե դրան հատուկ դասերն ու դասակարգերը: Իհարկե, բոլորովին այլ է, որ նույնիսկ այն երկրներում, որտեղ գերիշխում են կապիտալիստական արտադրահարաբերությունները, կապիտալիստական արտադրաեղանակը հանդես չի գալիս որպես միակը, չնայած տիրապետողն է: Այդ երկրներում, տարբեր ձևերով և աստիճանով, գոյություն ունեն «ոչ կապիտալիստական» արտադրահարաբերություններ: Կապիտալիզմին հատուկ սոցիալական կառուցվածքի միավորների կողքին կարող են հանդես գալ ֆեոդալական, կիսաֆեոդալական միավորներ: Նշված երևույթը առավել բնորոշ է Ռուսաստանի, Արևելքի երկրների, Անդրկովկասի և բնական է նաև Արևելյան Հայաստանի համար:

Դեռևս Ս.Կասյանից մոտ երկու տասնամյակ առաջ Ստ.Շահումյանը գրել էր. «Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց և մեր երկիրը, և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա: Մենք ունենք արդեն խոշոր արդյունագործություն: Մենք ունենք արդյունագործական կենտրոններ, որոնք ավելի նման են ժամանակակից եվրոպական կենտրոններին... Մենք ունենք արդեն այդ քաղաքներում բուրժուազիա և պրոլետարիատ՝ իսկական եվրոպական իմաստով»[61]: Հարկավ այստեղ որոշակի չափազանցություն կա, բայց տնտեսական կյանքում կատարվող փոփոխությունները բնութագրված են ճիշտ:

Ստ.Շահումյանը նկատել է նաև գյուղացիության քայքայումը: Ըստ հեղինակի, այն « ... բնական անհրաժեշտությամբ բաժանվում է երկու մասի, մի կողմից ծնունդ է առնում գյուղական մանր բուրժուազիան, որ հետզհետե հարստանում, կենտրոնացնում է իր ձեռքին հողերը, մյուս կողմից գյուղացիության մեծամասնությունը զրկվում է հողից ու արտադրության միջոցներից,

[61] Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. I, Երևան, 1975, էջ 152-153:

ստվարացնում է պրոլետարիատի շարքերը ...»[62]: Շատ ավելի խորությամբ ընկալելով երևույթը, Ստ.Շահումյանն ավելացնում է «բայց կա և մի ուրիշ բավականին մեծ դասակարգ, որ մնացորդ է նախկին ֆեոդալական շրջանից... Այդ ազնվականական կամ հողատեր դասակարգն է»[63]:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո թե Ռուսաստանում, թե Հայաստանում առաջին տարիներին պատմագրության մեջ հիմնական շեշտը դրված էր բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական պայքարի ուսումնասիրման պատմության վրա:

Այդ շրջանում լույս տեսան Ս.Տ.Արկոմեդի (Ղարաջյան) և Ն.Մելիք-Յոլչյանի աշխատությունները, որոնցում փորձ է արված վերհանել կապիտալիզմի զարգացումը, գյուղացիության շերտավորումը, բանվորության հետ կապված մի շարք հարցեր[64]:

Խոշոր նվաճում էին այդ տարիներին լույս տեսած Պ.Աբելյանի[65] և հատկապես Զ.Կորկոտյանի[66] աշխատությունները: Վերջինիս «Խորհրդային Հայաստանի բնակչությունը» վիճակագրական ժողովածուն բազմաթիվ աղբյուրների օգտագործման, բաղդատման, թվերի ճշտման, վերլուծության առումով աննախադեպ էր: Այն պարունակում է Խորհրդային Հայաստանի բնակավայրերի լրիվ ցուցակը, տեղադրությունը, անունների փոփոխությունը, բնակչության թիվը, ազգային և կրոնական պատկանելիությունը հարյուր տարվա ընթացքում 1831 - 1931 թվականներին: Թեմայի համար կարևոր են 1873, 1886 և 1897թթ. վերաբերող հաշվարկները: Ցավոք աշխատանքը չի ընդգրկում ամբողջ Արևելյան Հայաստանը: Բանվոր դասակարգի ձևավոր-

---

[62] Նշվ. աշխ., էջ 153:

[63] Նույն տեղում, էջ 71:

[64] Արկոմեդ Ս.Տ. (Ղարաջյան), Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում: Երևան, 1929թ.: Մելիք-Յոլչյան Ե., Հայաստանի բանվորական շարժման պատմությունից 1903-1907: Երևան, 1930:

[65] Աբելյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում: Երևան, 1931թ.:

[66] Կորկոտյան Զ., Ճերմակ ջարդից դեպի Կարմիր շինարարություն: Երևան, 1929թ.: Երևան քաղաքի ժողովրդագրությունը (հարյուրամյա աճման պատկերը 1830-1930):Համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ: Երևան, 1930թ.: Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931): Երևան, 1932թ.:

ման, թվաքանակի, սեռատարիքային կազմի, ճյուղային կառուցվածքի հարցերը Ռուսական կայսրությունում քննարկված են Ա.Ռաշինի 1940-50-ական թվականներին լույս տեսած աշխատություններում[67]: Դրանցում ուշադրության արժանի տվյալներ կան նաև ազգային ծայրամասերի վերաբերյալ: Որոշակի արժեք են ներկայացնում Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում հրապարակված մի շարք այլ ուսումնասիրություններ ևս, որոնցում քննարկված են Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման, բանվոր դասակարգի ձևավորման, քանակի և այլ հարցեր[68]:

Նշված աշխատությունները օգտակար փաստական նյութեր են պարունակում Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների բանվորների թվաքանակի և կազմի վերաբերյալ: Որպես ընդհանուր թերություն՝ նշենք, որ հարցին անդրադարձած հեղինակները որպես կանոն, նվազեցնում են հայ բանվորների տեսակարար կշիռը Անդրկովկասում, հատկապես Թիֆլիսում և Բաքվում: Այսպես, ըստ Մ.Կանտերեի Վրաստանի հայ բանվորների քանակն ընդամենը երեք հազարից մի փոքր էր ավելի, իսկ 1897թ. մարդահամարի նյութերի հիման վրա նրա կատարած հաշվարկների հա-

---

[67] Рашин А.Г. Состав фабрично-заводского пролетариата СССР. М., 1930 г.; Формирование промышленного пролетариата в России. М., 1940 г.; Формирование рабочего класса России. М., 1958.

[68] Լյաշչենկո Պ.Ի., ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հատ. II, Երևան, 1950թ.: Минц Л.Е. Очерки по истории статистики СССР. – Очерки развития статистики, численность и состав промышленного пролетариата в России. М., 1957г.; Струмилин С.Р. Статистико-экономические очерки. М., 1958г.; Очерки развития статистики, численность и состав промышленного пролетариата в России. М., 1957г.; История рабочего класса в период капитализма. М., 1981; Рабочий класс России от зарождения до начала XX в., М., 1983; Гугушвили П.В. Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX-XX вв., Тбилиси, 1957г.; Его же; фабрично-заводская статистика в Закавказье 1864-1928 гг. – Труды института экономики АН Груз. ССР, т. XI, Тбилиси, 1957г., Антелава И.Г., Орджоникидзе Э.А., Хоштария Э.В. К вопросу о генезисе и развитии капитализма в сельском хозяйстве и промышленности Грузии. Тбилиси, 1967 г.; Кантере М.Я. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970 г.; Хоштария Э.В. Очерки социально-экономической истории Грузии. Промышленность, город, рабочий класс, XIX начало XX вв., Тбилиси, 1974 г., Сумбат-заде А.С. Промышленность Азербайджана в XIX в., Баку, 1965 г., Сельское хозяйство Азербайджана в XIX в., Баку, 1958 г.; Исмайлов М. Социально-экономическая структура Азербайджана в эпоху империализма. Баку, 1982 г. և այլն:

մածայն, Հայաստանի բանվորների քանակը 21 հազար մարդուց էլ պակաս էր[69]: Խիստ նվազեցված է նաև Բաքվի հայ բանվորների քանակը Ի.Վ.Ստրիգունովի կողմից[70]:

Քննարկվող մի շարք հարցեր տարբեր ընդգրկումով և խորությամբ բնականաբար ուսումնասիրվել են և այդ շրջանի խորհրդահայ պատմաբանների և տնտեսագետների կողմից: Ժամանակագրական առումով առաջինը հարկ է նշել Հ.Ե.Թումանյանի ուսումնասիրությունը, որում արդյունաբերական բանվորների քանակը հաշվարկված է ընդամենը 6 հազար մարդ[71]: Ինչպես ցույց են տվել հետագա ուսումնասիրողները, որոնց հետ համաձայն ենք և մենք, այդ թիվը շատ հեռու է իրականությունից: Հեղինակն անդրադարձել է նաև գյուղատնտեսական բանվորներին, սակայն ուսումնասիրել է միայն Երևանի, Նոր Բայազետի և Շարուր-Դարալագյազի գավառներին վերաբերող մարդահամարի տվյալները[72]: Ա.Բաղալյանն իր հոդվածներից մեկում, հետևելով Վ.Ի.Լենինին[73] քննարկել է բնակչության տեղաշարժերը և սոցիալական կազմը[74]:

Որոշ ժամանակ անց լույս տեսած Մ.Հ.Ադոնցի աշխատությունում, փաստական հարուստ նյութերի հիման վրա, խորությամբ ուսումնասիրված է Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում: Հեղինակը, թեև համառոտ, անդրադարձել է նաև բնակչության սոցիալական կառուցվածքին կատարելով հետևյալ խմբավորումը.

1. խոշոր բուրժուազիա, կալվածատիրություն, բարձրագույն աստիճանավորներ և այլն,
2. շահագործող մանր տնտեսատերեր,
3. չքավոր մանր տնտեսատերեր,

---

[69] Кантере М.Я. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970 г., с. 27.
[70] Стругунов И.В. Из истории формирования бакинского пролетариата 70-90-е годы XIX в., Баку, 1960 г.
[71] Туманян О.Е. Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, с. 196, Հայաստանի նախասովետական շրջանի ազգաբնակչությունը: - Պատմաբանասիրական հանդես, 1965, թիվ 4, էջ 52:
[72] Туманян О.Е., նշվ. աշխ., էջ 129-132:
[73] Լենին, Երկեր, հ. 3, էջ 438-439:
[74] Бадалян А. Население Армении со времени присоединения ее к России до наших дней. – ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1953 թ., թիվ 5, էջ 67:

4. պրոլետարներ և կիսապրոլետարներ[75]:

Վերջիններիս թիվը 1897թ. մարդահամարի նյութերի հիման վրա Մ.Ա.Ադոնցի կատարած հաշվարկների համաձայն ներկա Հայաստանի տարածքում կազմել է 361.6 հազար մարդ, որն անշուշտ չափազանցություն է: Նշենք նաև, որ զուտ գիտական առումով նման խմբավորումը հեռու է բնակչության սոցիալական կառուցվածքն արտահայտելուց: Արևելյան Հայաստանում կալվածատիրությունը չի կարելի միավորել բուրժուազիայի հետ: Կալվածատիրական հողատիրությունը չնչին տոկոս էր կազմում, այն չվերածվեց բուրժուականի: Կալվածատերերի մեծ մասը նույնիսկ սեփական տնտեսություն չէին վարում: Ստորաբաժանված չեն սոցիալական կառուցվածքի գյուղական և քաղաքային միավորները: Կապիտալիստական հասարակության միջին խավերը տարալուծված են այլ դասակարգերի մեջ: Եվ վերջապես չի երևում յուրաքանչյուրի ներքին կառուցվածքը:

Հետագայում այդ հարցին անդրադարձած Ա.Մ.Եղիազարյանը[76], չգիտես ինչու, քննադատելով Ա.Մ.Ադոնցին՝ պրոլետարիատը և կիսապրոլետարիատը միացնելու համար, փորձում է տալ Անդրկովկասի հայ բնակչության սոցիալական կազմը, կրկնելով այն սխալները, որոնք արդեն մատնանշվեցին[77]:

Արևելյան Հայաստանում կապիտալիզմի զարգացման, գյուղացիության քայքայման, գյուղատնտեսական բանվորության առաջացման, քանակի, աշխատավարձի հարցերը խորությամբ ուսումնասիրված են Ա.Ս.Համբարյանի մի շարք աշխատություններում և հոդվածներում[78]: Ա.Ս.Համբարյանն անդրադարձել է նաև Արևելյան Հայաստանի մանուֆակտուրային արտադրությանը, զբաղված բանվորների թվաքանակին, ինչպես և բուրժուազիայի

---

[75] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении. Ереван, 1957, с. 519.

[76] Եղիազարյան Ա.Մ. Անդրկովկասի հայ բնակչության սոցիալական կազմի մասին: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1961, թիվ 5:

[77] Նույն տեղում, էջ 62-63:

[78] Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне (1860-1920). Ереван, 1959 г., Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը XIX դարի երկրորդ կեսին: - ՊԲՀ, 1984 թ., թիվ 1, Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին: - ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թիվ 8:

և պրոլետարիատի ձևավորման հարցերին[79]: Ուշագրավ է նաև Թ.Խ.Հակոբյանի «Երևանի պատմությունը» ուսումնասիրությունը, որում տրված են բնակչության, արհեստանոցների, մանուֆակտուրաների, գործարանների, նրանցում զբաղված բանվորների, ուսումնական հաստատությունների, աշակերտների, աշակերտուհիների քանակը և քանակական փոփոխությունները 1801-1917 թվականներին[80]:

Ա.Գրիգորյանցի աշխատություններում[81] քննարկված, են բանվոր դասակարգի և տեխնիկական մտավորականության ձևավորման և զարգացման հարցերը: Ըստ հեղինակի, բանվոր դասակարգի թվաքանակը նախախորհրդային շրջանում կազմել է 10.500 մարդ և նույնիսկ XX դարի սկզբին էլ այն որպես դասակարգ չէր ձևավորվել: Մի կողմ թողնելով թվաքանակի հարցը, նշենք, որ վերջին պնդումը ոչ մի քննադատության չի դիմանում:

Պղնձաարդյունաբերական բանվորների դրության, թվաքանակի ուսումնասիրման գործում լուրջ ներդրում ունի Հ.Կասպարովան, որի աշխատությունում հարուստ աղբյուրագիտական հենքի վրա, տրված են այդ բնագավառում աշխատող բանվորների կազմը, քանակական փոփոխությունները: Ցավոք, հեղինակը շատ է հավատ ընծայում «Կովկասյան օրացույցի» տվյալներին, որոնք միշտ չէ, որ աչքի են ընկնում հավաստիությամբ[82]:

---

[79] Համբարյան Ա.Ս., Մանուֆակտուրայի զարգացումը Հայաստանի արդյունաբերության մեջ: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 12: Ֆաբրիկա-գործարանային արտադրության զարգացումը նախասովետական Հայաստանում: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1959թ., թիվ 6; Амбарян А.С., Амбарян С.А. К характеристике промышленности Восточной Армении в конце XIX в. - «Պատմա-բանասիրական հանդես», 1967, թիվ 2-3; Արևելյան Հայաստանում բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման հարցի շուրջը 19-րդ դ. 80-ական թթ.: - ՀՀ ԳԱ «Լրաբեր», 1981, թիվ 1:

[80] Հակոբյան Թ.Խ., Երևանի պատմությունը (1801-1879 թթ.): Երևան, 1959 թ.: Երևանի պատմությունը (1879-1917 թթ.): Երևան, 1963:

[81] Գրիգորյանց Ա., Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում: Երևան, 1960; Формирование и развитие технической интеллигенции Армении. Ереван, 1966.

[82] Каспарова А.Г. Из истории рабочего класса дореволюционной Армении. – ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1959. թիվ 7; Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал. Ереван, 1961.

Բնակչության թվաքանակի, տեղաշարժերի, ազգային կազմի վերաբերյալ ուշադրության արժանի տվյալներ կան Խ.Հ.Ավդալբեգյանի աշխատությունում[83]:

Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման, կալվածատիրական գյուղացիության սոցիալական շերտավորման, կազմի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ կան Վ.Հ.Ռշտունու աշխատություններում[84], որոնք շարադրված են մեծ վարպետությամբ և ունեն աղբյուրագիտական լայն հենք:

Հարկ է անդրադառնալ նաև Մ.Եգանյանի աշխատությանը, որում հեղինակը մի կողմից ժխտում է Արևելյան Հայաստանում կատարված 1870թ. ռեֆորմի նշանակությունը, մյուս կողմից նշում, որ այն առաջացրեց արտադրողական ուժերի ճահճացում[85]: Միաժամանակ, հեղինակը Արևելյան Հայաստանում վարձու աշխատուժ օգտագործած տնտեսությունների թիվը հաշվարկելիս թույլ է տվել մի շարք թվաբանական սխալներ[86]:

Մեզ հետաքրքրող մի շարք հարցեր այս կամ այն խորությամբ ուսումնասիրվել են Վ.Ա. Ավետիսյանի, Գ.Ա.Գալոյանի, Ա.Տ.Սահիրադյանի, Մ.Ա. Խոնդկարյանի, Խ.Հ.Բարսեղյանի, Հ.Ա. Պետրոսյանի, Վ.Խ. Հովհաննիսյանի, Վ.Խ.Հովակիմյանի, Ա.Մ.Հակոբյանի, Պ.Պ. Հարությունյանի և այլոց աշխատություններում[87]:

---

[83] Ավդալբեգյան Խ.Հ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917 թթ.), Երևան, 1959:

[84] Ռշտունի Վ.Հ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության 1828-1917 թթ., մաս Ա, (1828-1870), Երևան, 1960; մաս Բ, (1870-1917), Երևան, 1968:

[85] Եգանյան Մ. Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները: Երևան 1964, էջ 57: Այդ մասին տես նաև Հովակիմյան Վ.Խ., Գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում: Երևան, 1984թ., էջ 17:

[86] Եգանյան Մ. Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները: Երևան 1964, էջ 138:

[87] Ավետիսյան Վ.Ա., Մի էջ Հայաստանի բանվորական շարժման պատմությունից (1896-1900): Երևան, 1961: Галоян Г.А. Рабочее движение и национальный вопрос. Ереван, 1969: Բարսեղյան Խ.Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք I, Երևան, 1967թ., գիրք II, Երևան, 1975; Саградян А.Т. История железных дорог Закавказья,1970; Խոնդկարյան Մ.Ա., Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից: Երևան, 1970; Оганесян В.Х. Кафанские медные рудники, Ереван, 1978; Հովակիմյան Վ.Խ., Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում XIX դարի վերջին: Երևան, 1984; Հակոբյան Ա., Կարսի մարզի ազգաբնակչությունը (1817-1914թթ.): - ՊԲՀ,

1970-ական թվականների երկրորդ կեսին և հետագա շրջանում հրապարակվեցին Գ.Ե.Ավագյանի[88] և Վ.Ե.Խոջաբեկյանի[89], Հ.Գ. Սարգսյանի[90] ուսումնասիրությունները: Մեզ համար առավել կարևոր է Վ.Ե.Խոջաբեկյանի աշխատանքները, որում ամենայն բարեխղճությամբ և գիտական պատշաճ մակարդակով տրված են Երևանի նահանգում, Կարսի մարզում և ընդհանրապես Անդրկովկասում բնակչության քանակական փոփոխությունները, ազգային պատկանելիությունը, զբաղվածությունը և այլն: Առավել կարևոր են 1897թ. մարդահամարի տվյալների մշակումները:

Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը նվիրված առաջին ամբողջական, գիտական ուսումնասիրությունը հրապարակվել է 1988թ.[91]: Այն սերտ առնչություն ունի խնդրո առարկա թեմայի հետ: Աշխատությունում ամենայն մանրամասնությամբ, փաստական հարուստ նյութի հենքի վրա լուսաբանված են գյուղատնտեսական (հեղ. Ա.Ա.Համբարյան), արդյունաբերական (հեղ. Ա.Հ.Սիմոնյան) պրոլետարիատի ձևավորումը, թվաքանակը, ճյուղային կառուցվածքը և այլն: Առանձին գլուխ է նվիրված ինքնակալության դեմ նրա մղած պայքարին (հեղ. Դ.Ա.Մուրադյան): Սակայն հեղինակները ևս ընդունում են, որ բանվոր դասակարգի թվաքանակին վերաբերող տվյալները չեն կարող վերջնական համարվել: Արժեքավոր է նաև Ա.Սիմոն-

---

1976, թիվ 4; Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուրվագծեր 1878-1917թթ.): Երևան, 2000թ.; Հարությունյան Պ.Պ., Հայաստանի բանվոր դասակարգի դրությունը 1900-1914 թթ.: - ՀԳ, 1975թ., թիվ 8, Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ վարձու աշխատանքի կիրառման հարցի մասին: ԼՀԳ, 1984, թիվ 1; Հարությունյան Պ.Պ., Կիրակոսյան Գ.Լ., Արևելյան Հայաստանի արդյունաբերության զարգացման պատմությունից (19-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկիզբ): ԲՀԱ, 1983, թիվ 2:

[88] Ավագյան Գ.Ե., Հայկական ՍՍՀ բնակչությունը: Երևան, 1975թ.:

[89] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը: Երևան, 1979 թ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX – XX դարերում, XXI դարի շեմին: Երևան, 2001: Բնակչությունը և ինքնագործները Արևելյան Հայաստանում (XIX դ. – XX դ. սկիզբ): ՊԲՀ, 2006, թիվ 1, էջ 29-49:

[90] Саркисян Г.Г. Население Восточной Армении в XIX – начале XX в., Ереван, 2002. Ցավոք, հեղինակն անդրադարձել է միայն Հայաստանի ներկա տարածքին:

[91] Համբարյան Ա.Ս., Սուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., - Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն: Երևան, 1988:

յանի «Անդրկովկասի բանվորությունը վարձու աշխատանքի համառուսական շուկայում» աշխատությունը[92]:

Ինչպես նախորդ, այնպես էլ սույն ուսումնասիրությունն ունի լայն աղբյուրագիտական հենք, շրջանառության մեջ են դրվում նոր փաստաթղթեր, կատարվել են ուշագրավ եզրակացություններ: Գիտական պատշաճ մակարդակով քննարկված են Անդրկովկասի բանվոր դասակարգի առաջացման նախապայմանները, համալրման աղբյուրները, ազգային կազմը, որակավորման աստիճանը, ճյուղային կառուցվածքը և թվաքանակը: Աշխատությունում անհրաժեշտ տեղ է հատկացված բանվորների ընտանեկան բյուջեին, փաստական աշխատավարձին և այլն:

Ժամանակագրական առումով վերջին աշխատանքը, որն առնչվում է մեր թեմային, Ս.Ս.Հակոբյանի ուսումնասիրությունն է, որում հեղինակը ժամանակագրական լայն ընդգրկումով (1861–1914թթ.) քննարկում է բանվոր դասակարգի առաջացման աղբյուրները, թվաքանակը և հատկապես ընտանեկան դրությունը, կրթական մակարդակը և սեռատարիքային կազմը[93]: Հատկապես վերջին երկու հարցերը նման խորությամբ հայ պատմագրության մեջ քննարկվում են առաջին անգամ:

Ամփոփելով պատմագրությունը որպես ընդհանուր թերություններ նշենք, որ նախ անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված չեն Արևելյան Հայաստանի բնակչության աճը, տեղաբաշխումը, տեղաշարժերը, սեռատարիքային կազմը: Հեղինակների մեծ մասը նշված հարցերը ուսումնասիրել են Հայաստանի ներկա տարածքի շրջանակներում, այնինչ հարկավոր էր դրանք քննարկել, ընդգրկելով ամբողջ Արևելյան Հայաստանը՝ նույնիսկ Անդրկովկասը:

Նույն թերությունը թույլ են տվել նաև այն հեղինակները, որոնք անդրադարձել են բանվոր դասակարգի կազմավորմանը, թվաքանակին և այլ հարցերի, որն էլ բնականաբար անդրադարձել է վերջնական արդյունքի վրա: Որպես բացառություն այդ առումով կարելի է առանձնացնել Ա.Սիմոնյանի և Ս.Հակոբյանի

---

[92] Симонян А.Г. Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в коце XIX – начале XX вв. (историко-статистический анализ). Ереван, 1995.

[93] Հակոբյան Ս.Ս., Բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1861–1914թթ.): Երևան, 1998: Ատենախոսություն:

աշխատությունները: Սակայն, ինչպես նշվեց, երկու հեղինակներն էլ ընդունում են, որ իրենց ուսումնասիրության արդյունքները վերջնական չեն:

Գյուղացիության տնտեսական քայքայումը, սոցիալական շերտավորումը վերհանելու ժամանակ սովորաբար հեղինակները բավարարվել են տնտեսության հողատարածքի, կամ անասնաքանակի, կամ ցանքի քանակական տարբերություններով, որն էլ հանգեցնում է ընդհանուրի մեջ չքավոր գյուղացիության թվաքանակի մեծացմանը: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է, իհարկե առկա նյութերի ընձեռած հնարավորությունների սահմաններում, այդ բոլորը բաղդատել և դիտարկել միաժամանակ, հաշի առնելով նաև տնտեսությունների ունեցվածքի ոչ միայն քանակական, այլև որակական տարբերությունները: Ընդհանրապես գյուղացիությունն ունի շատ բարդ կառուցվածք և առանձնահատուկ մոտեցում է պահանջում:

Բնականաբար, մեր ուսումնասիրության արդյունքները ևս վերջնական չենք համարում: Նոր աղբյուրների երևան գալը, նոր նյութերի շրջանառության մեջ մտնելը, արդեն եղածների նորովի քննարկումը հնարավորություն կտա ավելի խորացնել ուսումնասիրություններն այդ ուղղությամբ:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր հասարակարգի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությունը բավական դժվար խնդիր է՝ կապված անհրաժեշտ նյութերի բացակայության, առանձնահատկությունների հետ: Դժվարին խնդիր է նաև Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրումը, ուստի սույն աշխատությունը, լինելով առաջին փորձերից մեկը, չէր կարող սպառել բոլոր հարցերը:

Արդյունաբերական և գյուղատնտեսական բուրժուազիային, նրա ճյուղային կառուցվածքին, թվաքանակին, տեսակարար կշռին փաստորեն անդրադարձել ենք մասնակիորեն և այդ հարցերը դեռևս սպասում են իրենց ուսումնասիրողներին, որոնց հետազոտությունն ավելի ամբողջական կդարձնի Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի պատկերը կապիտալիզմի շրջանում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ: ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՃԸ

XIX դարի վերջին քառորդին Արևելյան Հայաստանը հիմնականում ընդգրկված էր Երևանի նահանգի և Կարսի մարզի վարչական միավորներում: Երևանի նահանգի կազմավորման մասին օրենքը հրապարակվեց 1849 թվականի հունիսի 9-ին[94] և ուժի մեջ մտավ հաջորդ տարվա հունվարի 1-ից: Նահանգը բաժանվում էր հինգ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Օրդուբադի և Բայազետի գավառների[95]:

Այդ նույն շրջանում Ախալքալաքի ոստիկանական տեղամասն անջատվում է Ալեքսանդրապոլից և միացվում Ախալցիխե գավառին՝ դառնալով Թիֆլիսի նահանգի մի մասը: 1862 թվականին Ալեքսանդրապոլի գավառից անջատվում է նաև Փամբակի ոստիկանական տեղամասի հյուսիսային մասը կազմող Լոռին, որը նույնպես միացվում է Թիֆլիսի նահանգին:

1867 թվականին կազմավորվում է էջմիածնի գավառը, իսկ Օրդուբադինը միացվում է Նախիջևանի գավառին:

1874 թվականին Երևանի նահանգը ենթարկվում է վարչական նոր փոփոխությունների: Էջմիածնի գավառի Սուրմալու ոստիկանական տեղամասից ստեղծվում է նոր՝ Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի գավառից առանձնանում է Շարուր-Դարալագյազինը[96]: Այսպիսով նախկին հինգի փոխարեն ստեղծվում են յոթ գավառներ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նախի-

---

[94] Մի շարք ուսումնասիրություններում, ինչպես նաև Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 5-րդ հատորում (էջ 210, Երևան, 1974թ.) նահանգի կազմավորումը նշվում է հունիսի 9-ին, որը ճիշտ չէ:

[95] АКТИ, собранные кавказской археографической комиссией, т. X, с. 875-876.

[96] Հակոբյան Թ.Խ., Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան 1960, էջ 339; նույնի՝ Երևանի պատմությունը (1801–1879 թթ.), Երևան, 1959, էջ 384-385:

ջևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի և Նոր Բայազետի[97]: Գավառներն իրենց տարածությամբ չպիտի գերազանցեին 6.500 քառ. վերստը, իսկ բնակչության քանակով 80.000 մարդուց կամ 10.000 տնտեսությունից[98]:

Ի տարբերություն Կովկասի մյուս վարչական միավորների, սկզբնական շրջանում Երևանի, ինչպես նաև Քութայիսի նահանգներում կառավարման ապարատը պարզ էր[99], բայց հետագայում ցարիզմը ելնելով իր գաղութատիրական մղումներից, բավականին բարդացրեց այն:

Նահանգը գլխավորում էր գեներալ-նահանգապետը՝ մարդաշատ կառույցներով հանդերձ, իսկ գավառապետերը կառավարում էին գավառները: Վերջիններս բաժանված էին ոստիկանական տեղամասերի և ունեին իրենց պետերը: Նահանգի ցածրագույն վարչական միավորը գյուղական համայնքն էր, որն ուներ իր ավագը:

Երևանի գավառը բաժանված էր չորս՝ Թաջիրաբադի, Հաջի-էյլասի, Ղամարլուի և Դավալուի ոստիկանական տեղամասերի: Ալեքսանդրապոլի գավառն ընդգրկում էր Ղարաքիլիսայի, Աղբուլաղի, Ճըզըխլարի, Հոռոմի, իսկ էջմիածնի գավառը՝ Բաշ-Ապարանի, Աշտարակի, Վաղարշապատի և Սարդարաբադի ոստիկանական տեղամասերը, Նախիջևանի գավառը՝ Ալիբադի, Ջահրիի, Ապրակունիսի և Վ.Ագուլիսի տեղամասերը:

Սուրմալուի գավառը բաժնված էր երեք՝ Իգդիրի, Դաշբուռունի, Կողբի ոստիկանական տեղամասերի: Ն.Բայազետի գավառն ընդգրկում էր Դարաչիչագի, Գյոգչայի, Գյոզալդարայի և Մեծ Մազրայի տեղամասերը: Շարուր-Դարալագյազի գավառն ընդգրկում էր ընդամենը երկու ոստիկանական տեղամաս՝ Շարուրի և Դարալագյազի[100]: 1867թ. դեկտեմբերի 9-ի օրենքով, երբ

---

[97] Материалы для военного обозреия Эриванской губернии, ч. I, вып. 1, с. 15-16.

[98] Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управление Кавказским и Закавказским краем его императорским высочеством Великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 – 6 декабря 1872 гг., Тифлис, 1873, с. 49-50, Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 15:

[99] Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, с. 87.

[100] Кавказский календарь на 1893 г., с. 15.

Անդրկովկասը բաժանվում է հինգ նահանգների, Երևանի նահանգի տարածքը կրճատվում է 1519 քառ. վերստով, քանի որ Մեղրիի շրջանն էլ միացվում է նոր կազմավորված Ելիսավետպոլի նահանգին[101]:

Այսպիսով, XIX դարի 80-90-ական թվականներին Երևանի նահանգի վարչական բաժանումն ուներ հետևյալ տեսքը (տե՛ս աղյուսակ թիվ 1):

1862թ. Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառին միացված հայկական շրջաններից կազմավորվում են Բորչալուի և Լոռու ոստիկանական տեղամասերը: Գավառը ներառում էր ևս երկու՝ Եկատերինենֆելդի և Թրիալեթի ոստիկանական տեղամասերը: Նույն նահանգի կազմում ընդգրկված Ախալքալաքի գավառը բաժանված էր երկու՝ Բարալեթի և Բոգդանովկայի ոստիկանական տեղամասերի: Զանգեզուրը և Ղազախը վարչականորեն ենթարկվում էին նորաստեղծ Ելիսավետպոլի նահանգին՝ կազմելով առանձին գավառներ[102]:

Զանգեզուրի գավառը բաժանված էր Ղարաքիլիսայի, Տեղի, Արծվանիկի և Ղաթարի ոստիկանական տեղամասերի, իսկ Ղազախը՝ Աղստաֆայի, Ներքին Սալասայի, Դիլիջանի և Շարիֆ-Բեգլի ոստիկանական տեղամասերի: Շուշիի գավառը բաժանված էր չորս՝ Խանքենդի, Ղաջարի, Աղդամի և Աղջաբեդի ոստիկանական տեղամասերի: Թիֆլիսի և Ելիսավետպոլի նահանգների վարչական ենթակայության տակ գտնվող նշված գավառները միասին ունեին մոտ 24.654 հազ.քառ.կմ տարածք[103]:

Փաստորեն ցարիզմը հաշվի չառնելով ազգագրական սկզբունքները, ելնելով միայն իր գաղութային-նվաճողական քաղաքականությունից, ձգտելով որքան հնարավոր է Անդրկովկասի կառավարումը մերձեցնել ու նմանեցնել բուն Ռուսաստանի կառավարմանը, իրականացրեց վերոհիշյալ վարչական բաժանումը, որն առանց էական փոփոխությունների պահպանվեց մինչև 1917 թվականը:

---

[101] РГИА СПб, ф. 1268, оп. 14, д. 153, л. 256.

[102] Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968, էջ 12:

[103] Кавказский календарь на 1893 г., сс. 3, 11.

Աղյուսակ թիվ 1[104]

հ/հ	Գավառներ	Ոստիկանական տեղամասեր	Տարածք (քառ.կմ)	Ընդամենը
1.	Երևան ք.Երևան	I Թաջիրաբաղ II Հաջի-Էյլաս III Ղամարլու IV Դավալու	1004,57 306,22 375,98 1241,69	2968,32
2.	Ալեքսանդրապոլ ք. Ալեքսանդրապոլ	I Աղբուլաղ II Ճըզըխլար III Հոռոմ IV Մ.Ղարաքիլիսա	1031,39 728,94[105] 1018,32 1015,57	3794,22
3.	Նախիջևան ք. Նախիջևան	I Ալիաբաղ II Ջահրի III Ապրակունիս IV Վ.Ագուլիս	1002,18 1109,51 1101,84 1280,55	4494,08
4.	Սուրմալու ք. Իգդիր	I Իգդիր II Դաշ-Բուռուն III Կողբ	739,92 1384.00 1510,47	3634,39
5.	Նոր Բայազետ ք. Ն.Բայազետ	I Դարաչիչագ II Գյոգչա III Գյոզալդարա IV Մ. Մազրա	1354,33 1156,72 1367,86 812,08	4690,99
6.	Էջմիածին գ.Վաղարշապատ	I Սարդարաբաղ II Վաղարշապատ III Աշտարակ IV Բաշ-Ապարան	1600,86 437,73 810,39 746,13	3595,11
7.	Շարուր-Դարալագյազ գ. Բաշ-Նորաշեն	I Շարուր II Դարալագյազ	815,55 2101,92	2917,47
			Ընդամենը Երևանի նահանգում	26094.58[106]

[104] Կազմված է 90-ական թթ. "Кавказский календарь" – ի տվյալների և հետևյալ քարտեզների հիման վրա. Энтографические карты губерний и областей Закавказского края, приложения к "Кавказскому календарю на 1902 г.", նույնի 1898 և 1904 թթ. ներդիր քարտեզները: Տես նաև Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902, сс. 10-12, որում գավառների և ոստիկանական տեղամասերի տարածքների վերաբերյալ տրվում են մի փոքր այլ տվյալներ:

[105] Նշված տարիների "К.к." - ում տրված է 677 քառ. կմ, որը չի համապատասխանում ընդհանուր գումարին: Անհրաժեշտ հաշվարկից հետո ստացվում է նշված թիվը:

[106] Ընդհանուր տարածությանը պետք է ավելացնել Սևանա լճի մակերեսը՝ 1416 քառ. կմ: Այսպիսով՝ Երևանի նահանգի տարածքը կկազմի 27.510,58 քառ. կմ: Նշված "Сборник" - ում (էջ 12) ընդհանուր տարածքը հաշվարկված է 28.464.20 քառ. կմ, որն ավելի ամբողջական է:

Արևելյան Հայաստանի մաս կազմող Կարսի մարզը կազմավորվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Բեռլինի պայմանագրի 58-րդ հոդվածի համաձայն[107]՝ Ռուսաստանին անցած Կարսի սանջակից, Չլդրի սանջակի մեծ մասից և Բասենի սանջակից կազմվում է Կարսի մարզը:

Միացումից հետո, ի տարբերություն Երևանի նահանգի, որտեղ գոյություն ուներ քաղաքացիական կառավարում, ցարիզմը Կարսի մարզում, ելնելով ռազմաքաղաքական նկատառումներից, մտցնում է ռազմաքաղաքացիական կառավարում: Կովկասում այն ստեղծվել էր դեռևս 1858թ. ապրիլին լեռնական ժողովուրդների համար[108]: 1881թ. հունվարի 1-ից "Кавказское горское управление"[109]-ի, որի ենթակայության տակ էին Կարսի, Բաթումի և Դաղստանի մարզերը, Սուխումի ու Զաքաթալայի օկրուգները:

Կարսի մարզը ղեկավարվում էր ռազմական նահանգապետի կողմից, որն անմիջականորեն ենթարկվում էր կայսրության ռազմական և ֆինանսների նախարարություններին: Մարզը ձևավորվեց աստիճանաբար:

1877թ. մայիսի 20-ին գրավված տարածքները բաժանվեցին հինգ օկրուգի: Նույն թվականի հունիսին դրանց ավելացվեցին ևս երկուսը: 1878թ. դեկտեմբերի 28-ին Կովկասի փոխարքայության կողմից Կարսի մարզի կառավարման համար հաստատվեց նոր կանոնադրություն, որի համաձայն, մարզը ենթարկվեց վարչական փոփոխությունների:

1881թ. կատարված վարչական նոր բաժանման հետևանքով մարզում ստեղծվեցին չորս օկրուգներ՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի: Օկրուգները բաժանված էին տասնչորս տեղամասերի և ընդգրկում էին 148 գյուղական հասարակություն-

---

[107] Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 127:
[108] Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, с. 168.
[109] РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 170, л. 2.

ներ[110]: 1883թ. հունիսի 27-ին վերջնականապես ավարտվում է Կարսի մարզի վարչական բաժանումը[111]:

Կարսի օկրուգը բաժանվում էր հինգ տեղամասերի՝ Կարսի, Շորագյալի, Զարուշատի, Սողանլուի և Աղբաբայի: Արդահանի օկրուգն ընդգրկում էր չորս տեղամաս՝ Արդահանի, Չլդըրի, Փոցխովի, Գյոլի: Կաղզվանը բաժանված էր երեք՝ Կաղզվանի, Նախիջևանի և Խորասանի տեղամասերի, իսկ Օլթին՝ ընդամենը երկու տեղամասերի՝ Օլթիի և Թոուզքյարի: Փոփոխություններից հետո Կարսի մարզի վարչական բաժանումը, որը ևս պահպանվեց մինչև 1917 թվականը՝ ուներ հետևյալ տեսքը (տե՛ս աղյուսակ թիվ 2):

Այսպիսով, նշված վարչական միավորներում ընդգրկված Արևելյան Հայաստանի տարածքը կազմում էր 70 հազ. մառ. կմ -ից ավելի: Ուսումնասիրությունից դուրս է մնում Ելիսավետպոլի նահանգում ընդգրկված պատմական Արցախի մաս կազմող Հայկական կամ Լեռնային Գանձակը:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում այն ընդգրկում էր Ջևանշիր գավառի մինչև Թարթառ բնակավայրն ընկած հատվածը, Կարյագինոյի գավառի հյուսիսային և Գանձակի հարավ-արևմտյան մասերը:

Փաստորեն դրանք մոտավորապես այն տարածքներն են, որոնք խորհրդային տարիներին ընդգրկված էին Շահումյանի, Քարհատի, Գետաբեկի շրջաններում, Խանլարի հարավ-արևմտյան և Շամխորի հարավային մասերում[112]:

Ինչպիսի՞ն էր մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բնակչության աճը և տեղաբաշխումն ըստ այդ վարչական բաժանումների:

---

[110] Известия Кавказкого отдела императорского русского географического общества, т. 7, 1881, сс. 175-176.

[111] РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 113, л. 7. Кавказский календарь на 1884, отд. III, с. 355. Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Погосян А.М. Социально-экономические отношения в Карсской области (1878-1920 гг.), Ереван, 1961; Акопян А.М. Государственные крестьяне Карсской области (1878-1914 гг.), Диссертация, Ереван, 1980, նույնի Կարսի մարզը (գյուղացիության պատմության ուրվագծեր), 1878-1917 թթ.: Երևան, 2000 թ.:

[112] Բաղալյան Գ., Հայկական Գանձակի ազգացեղային նկարագիրը XIX դարի վերջին և XX դարի սկզբին: - Տես եզերք, 2007 թ., թիվ 2, էջ 58:

Աղյուսակ թիվ 2[113]

հ/հ	Օկրուգներ	Ոստիկանական տեղամասեր	Տարածք (քառ.կմ)	Ընդամենը
1.	Կարս ք. Կարս	I Կարս II Աղբաբա III Զարիշատ IV Սողանլուղ V Շորագյալ	1659,68 434,05 1227,58 1586,90 996,11	5904,32
2.	Կաղզվան ք. Կաղզվան	I Կաղզվան II Նախիջևան III Խորասան	1608,67 1454,82 1354,70	4418,19
3.	Արդահան ք. Արդահան	I Արդահան II Գյոլե III Փոցխով IV Չըլդր	2038,93 1898,78 597,12 1109,91	5644,74
4.	Օլթի ք. Օլթի	I Օլթի II Թավուզքյար	2093,37 865,27	2958,64
			Ընդամենը Կարսի մարզում	18925,89

Բնակչության ընթացիկ տեղաշարժերը Ռուսական կայսրությունում գրանցվում էին հիմնականում ներքին գործերի նախարարության վիճակագրական (ЦСК МВД) և նահանգային վիճակագրական կոմիտեների կողմից: Սովորաբար տեղական կառավարման մարմինները գրանցում էին բնակչության բնական և մեխանիկական փոփոխությունները, այսինքն՝ բոլոր ծնվածներին և եկածներին, որոնք ավելացվում էին նախորդ տարվա տվյալներին և դրանից հանվում մահացածներն ու մեկնածները: Ծնունդը և մահը հաշվարկվում էին նաև եկեղեցիներում: Եկեղեցիները գրանցում էին նաև եկածներին՝ ըստ հավատի: Արդյունքները

[113] Կազմված է 90-ական թթ. "Кавказский календарь"-ի տվյալների և նույն աղբյուրի 1898, 1902, 1904 թթ. ներդիր քարտեզների հիման վրա: Տես նաև Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902, сс. 12-14, որում մարզի ընդհանուր տարածքը հաշվարկված է 19.197 քառ. կմ:

հրատարակվում էին նահանգապետերի տարեկան հաշվետվություններում, մի շարք պարբերականներում: Կոնկրետ կովկասյան նահանգներին և մարզերին վերաբերող տվյալները հրատարակվել են "Кавказский календарь"-ում, սակայն բավականին անճշտություններով և վրիպակներով:

Ռուսական կայսրությունում անցկացվել է նաև վեց վարչական ոստիկանական հաշվառում, որոնցից վերջին երկուսը 1885 և 1896 թվականներինը[114] կարող են աղբյուր ծառայել մեզ համար: Բավականին նյութ է պարունակում նաև 1886 թվականի Անդրկովկասում անցկացված ընտանեկան ցուցակագրությունը, որի ամփոփ տվյալները ևս հրատարակված են[115]: Սակայն ընտանեկան ցուցակագրությունները ընդհանրապես նպատակ ունեին ճշտելու հարկատու բնակչության, տվյալ դեպքում ծխերի և ոչ թե առկա բնակչության քանակը: Նշենք նաև, որ ընտանեկան ցուցակագրությունները չէին անցկացվում միաժամանակ և այս բոլորից հետո, բնական է, որ ստացված տվյալները չէին կարող արտացոլել իրական դրությունը, այն է՝ բնակչության իրական քանակը: Սակայն 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալները, ընդգրկելով Անդրկովկասը, ամբողջական են, միասնական մեթոդով համակարգված[116]:

Բնակչության գիտական հաշվառումը Ռուսական կայսրությունում կատարվեց միայն XIX դարի վերջում, 1897թ. հունվարի 28-ին, երբ կազմակերպվեց մեկօրյա, առաջին և միակ մարդահամարը: Մարդահամարն ընդհանուր առմամբ ճիշտ տվյալներ է տալիս բնակչության քանակի, ազգային, դասային, սեռատարիքային կազմի վերաբերյալ: 1897թ. մարդահամարի տվյալները ժողովածուներով[117] հրատարակվել են 1902-1905 թվականներին: Տվյալները հրատարակվել են նաև ըստ նահանգների և մար-

---

[114] Статистика Российской империи, вып. I. Сборник сведений по России за 1884-1885 гг., СПб, 1887; То же, вып. II, за 1896 г., СПБ, 1897.

[115] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.

[116] Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932, էջ XXV, XXXVI:

[117] Первая Всеобщая перепись населения Российской империи. Общий свод по империи результатов разработки данных Первой Всероссийской переписи 28 января 1897 года, тт. I-II, СПб, 1905.

զերի[118]: Մարդահամարի նախնական՝ անկետային լրիվ հավաքածուն, ինչպես արդեն նշել ենք, պահպանվում է Ռուսաստանի պատմության կենտրոնական արխիվում[119]:

Արևելյան Հայաստանին վերաբերող ժողովրդագրական տվյալներ կան նաև զանազան այլ աղբյուրներում և հրատարակություններում, սակայն դրանք ամփոփ չեն, հնարավորություն չեն տալիս համեմատություններ ու ընդհանրացումներ կատարել, կրում են տեղական բնույթ, կամ վերաբերում են բնակչության այս կամ այն դասին:

XIX դարի 80-90-ական թվականներին Արևելյան Հայաստանում համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծված բնակչության հետագա աճի համար: Հարկավ, բնակչության աճը և նրա կառուցվածքային փոփոխությունները տվյալ երկրի զարգացման ցուցանիշներից են: Միևնույն ժամանակ չլինելով հասարակության զարգացման վճռական գործոն, բնակչության աճը, որպես ընդհանուր օրինաչափություն, նպաստում է արտադրության, արտադրողական ուժերի հետագա զարգացմանը: Արտադրության ամեն մի եղանակին իրականում հատուկ են բնակչության առանձին պատմական բնույթ ունեցող օրենքներ:

Բացի տնտեսական գործոններից, որոնք միջանկյալ ձևով են ազդում, բնակչության աճը պայմանավորված է բազմաթիվ այլ հանգամանքներով: Դարի 90-ական թվականներին Արևելյան Հայաստանում պարբերաբար կրկնվող անբերրիություններն ու սովը բացասական ազդեցություն էին ունենում բնակչության բնական աճի վրա:

Արևելյան Հայաստանն աչքի էր ընկնում սակավահողությամբ, որի հետևանքով առաջանում էր «ագրարային գերբնակչություն»: Բացի այդ, կապիտալիզմի թույլ զարգացման հետևանքով «ավելորդ» բնակչության մեծ մասն աշխատանք էր փնտրում Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս: Կապիտալիզմն անհրաժեշտորեն ստեղծում էր բնակչության շարժունակություն, որը չէր պահանջվում հասարակական տնտեսության նախկին համակարգերի կողմից և քիչ թե շատ լայն չափերով ան-

---

[118] Первая Всеобщая перепись населения Российской империи 1897 года, вып. 1-89, СПб, 1900-1905.
[119] РГИА СПб, ф. 1290, оп. 11, дд. 1-2823.

կարելի էր այդ ժամանակ: Արտագաղթող բնակչությունը մեծ մասամբ կենտրոնանում էր տնտեսապես ավելի զարգացած շրջաններում, հատկապես Թիֆլիսում և Բաքվում, որտեղ աշխատուժի կարիքը շատ ավելի մեծ էր:

Այսպիսով, արտագնացությունը և դրան գումարած արտագաղթը, որոնք սկսեցին ուժեղանալ հատկապես 90-ական թվականներից, չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չթողնել բնակչության բնական աճի վրա: Ըստ պաշտոնական տվյալների, միայն Երևանի նահանգից XIX դարի վերջին արտագնացների թիվը տարեկան հասնում էր 10-15 հազարի: Բայց շատ ուսումնասիրողներ կասկածի տակ են վերցնում այդ տվյալները, քանի որ դրանց համար հիմք են ծառայել տրված անձնագրերը, այնինչ շատերը մեկնում էին գյուղական ավագների վկայագրերով[120]: Չնայած նշված հանգամանքներին՝ Արևելյան Հայաստանում բնակչության և բնական, և մեխանիկական աճը չէր դանդաղում: Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների խորացումը, Կովկասի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը չէին կարող չնպաստել բնակչության՝ հատկապես բնական աճի արագացմանը:

Արևելյան Հայաստանի բնակչությունն աճում էր նաև մեխանիկական փոփոխությունների հաշվին: Իհարկե, այդ շրջանում մեխանիկական աճը, որը պայմանավորված էր հիմնականում Արևմտյան Հայաստանից կատարվող ներգաղթով, 80-ական թվականների երկրորդ կեսին և 90-ական թվականների առաջին կեսին նվազել էր, բայց շարունակում էր իր դերը խաղալ: Մեխանիկական աճը շատ ավելի նկատելի էր Կարսի մարզում:

Արևելյան Հայաստանն աչքի էր ընկնում բավականին բարձր ծնունդով: Բայց բժշկական սպասարկման գրեթե բացակայության, վարակիչ հիվանդությունների լայնորեն տարածված լինելու պայմաններում բավականին բարձր էր նաև մահացության տոկոսը, ուստի բնական աճը 1000 շնչի հաշվով հազվադեպ տարիներ էր գերազանցում 16-ի սահմանները: Ըստ Վ.Ե.Խոջա-

---

[120] Տես Бадалян А. Население Армении со времени присоединения ее к России до наших дней. – Известия общественных наук АН Арм. ССР, 1953, N 5, с. 60. Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 63:

բեկյանի, աշխատանքային տարիք էր թևակոխում ծնվածների կեսից քիչ ավելին[121]:

1886 թվականի արխիվային տվյալների[122] և նույն թվականի ընտանեկան ցուցակագրության հիման վրա Խոջաբեկյանի կատարած հետաքրքիր հաշվարկների համաձայն, բնակչության աճը Երևանի նահանգում 1000 շնչի հաշվով հավասար է եղել 15,3-ի (ծնունդ՝ 32,2, մահ՝ 16,9)[123]:

1894-1898 թվականներին, այսինքն հինգ տարվա ընթացքում, ծնվել են արական սեռի 80.479, իգական՝ 69.463 մարդ, մահացել են համապատասխանաբար 44.476 և 38.026 մարդ, այսինքն, բնական աճը կազմել է 36.003 և 31.437, ընդամենը 67.440, կամ տարեկան միջին հաշվով 13.488 մարդ[124]:

Ինչպես տեսնում ենք, արական սեռի ծնունդը բավականին գերակշռում է իգականին: Հազար մարդու հաշվով բնական աճը կազմել է 16,7 մարդ, ընդ որում, արական սեռի մոտ՝ 8,9, իգական սեռի մոտ՝ 7,8 մարդ: Նշված աճից 62,445-ը բաժին է ընկնում նահանգի գավառներին: Գավառներում մեծ է նաև բնական աճը հազար մարդու հաշվով, որը կազմում է 17,3 մարդ:

Այսպիսով, քաղաքներում բնական աճը հինգ տարվա ընթացքում (1894-1898թթ) կազմել է ընդամենը 4.995, կամ տարեկան՝ 999 մարդ: Բնակչության աճը բավականին ցածր էր Երևան քաղաքում, որը բացատրվում է մահացության բարձր տոկոսով՝ հատկապես 1897 և 1898 թվականներին: Նշված տարիներին քաղաքի բնակչությունը նվազել է համապատասխանաբար 16 և 103 մարդով[125]: Հազար մարդու հաշվով բնական աճը քաղաքներում կազմել է ընդամենը 6,1, իսկ իգական սեռի մոտ՝ 5,9 մարդ: Ընդհանուր աճը հավասար է ընդամենը 12 մարդու, որը բավականին զիջում է նահանգի բնակչության ընդհանուր աճին (16,7):

---

[121] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 54:
[122] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 42, թթ. 61-62:
[123] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 55:
[124] Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902, сс. 35-36.
[125] Նույն տեղում, էջ 34:

Երևանի նահանգի քաղաքներում նույն՝ 1894-1898 թվականներին բնական աճը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Աղյուսակ թիվ 3[126]

Քաղաքներ	ծնվածներ		մահացածներ		աճը		
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	միաս.
Երևան	1562	1358	1422	1290	140	68	208
Ալեքսանդրապոլ	2593	2544	1841	1545	752	999	1751
Նոր Բայազետ	851	750	528	499	323	251	574
Նախիջևան	1511	1384	692	626	819	758	1577
Օրդուբադ	947	762	444	380	503	382	885
Ընդամենը	7464	6798	4927	4340	2537	2458	4995

Ինչպես նկատում է Մ.Ա.Ադոնցը, բնակչությունը բարձր աճ է ունեցել Նոր Բայազետի գավառում, իսկ բոլորից ցածր՝ Շարուր-Դարալագյազի և Երևանի գավառներում: Ընդհանուր առմամբ լեռնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության ավելի բարձր աճով: Հարթավայրային շրջաններում զանազան հիվանդությունների (հատկապես մալարիայի) տարածման հետևանքով բավականին բարձր էր մահացության գործակիցը, որը և հանգեցնում էր բնակչության դանդաղ աճին[127]: Նկատենք նաև, որ ըստ տվյալների 1000 մարդու հաշվով արական սեռի բնական աճը և քաղաքներում և գավառներում գերազանցում է իգականին, որն էլ հանգեցնում է բնակչության ընդհանուր քանակում արական սեռի գերակշռությանը[128]: Նշված երևույթը նկատվում է ոչ միայն Երևանի, այլև Անդրկովկասի մյուս նահանգներում:

1899 և 1900 թվականներին բնակչության բնական աճը Երևանի նահանգում մի փոքր նվազում է՝ կազմելով համապա-

---

[126] Աղյուսակը կազմված է "Сборник статистических сведений..." տվյալների հիման վրա, էջ 34-35:

[127] Адонц М.А., Экономическое развитие Восточной Армении Ереван, 1957, с. 507.

[128] Գրականության մեջ սովորաբար այս երևույթը բացատրվում է Արևելքում կանանց վատ կենսապայմաններով, տնտեսության հողագործական բնույթով, կամ քոչվորական կյանքով: Տես Янсон Ю.Э. Сравнительная статистика населения, СПБ, 1892, с. 80. Նման հարցադրումը թերի է: Ուստի, մեր կարծիքով, շատ ավելի ճիշտ է Վ.Ե.Խոջաբեկյանը, երբ դա բացատրում է արական սեռի ավելի բարձր բնական աճով, ինչպես նաև իգական սեռի ոչ բավարար հաշվառումով: Տես Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 56:

տասխանաբար 10.354 և 10.371 մարդ[129] (նախորդ հինգ տարիների միջինը՝ 13.488 մարդ): Հազար շնչի հաշվով բնակչության բնական աճը 1897-1900 թվականներին կազմում է ընդամենը 14 մարդ[130]: Ընդհանուր առմամբ, երկու տասնամյակի ընթացքում՝ 1880-1900թթ. Երևանի նահանգի բնակչությունը աճում է 51,6% - ով, կամ տարեկան 2,7% - ով:

Այժմ դիտարկենք, թե քանակական ինչպիսի փոփոխություններ է կրել նահանգի բնակչությունը նշված տարիներին: Պաշտոնական տվյալների համաձայն, բնակչության քանակը Երևանի նահանգում 1880-1981 թվականներին հավասար էր 563.047 մարդու[131]: 1882 թվականին նախորդ տարվա համեմատությամբ բնակչությունը ավելանում է 6.823 մարդով կամ 1,2%-ով, կազմելով 569.870 մարդ[132]: 1884-1885 թթ. բնակչության տարեկան աճը մեծանում է՝ կազմելով մոտ 1,7%, որի հետևանքով էլ 1886 թվականի ընտանեկան ցուցակագրության տվյալների համաձայն, նահանգում բնակչության քանակը հասնում է 670.405 - ի[133]: Հինգ տարվա ընթացքում բնակչությունը ավելանում է 107.358 մարդով, կամ 19,06%-ով: Տարեկան միջին աճը կազմում է 3,81%: Այդ բարձր տոկոսը ցույց է տալիս, որ նշված տարիներին Երևանի նահանգում բնական աճի հետ միասին բավականին դեր է խաղացել նաև մեխանիկականը:

Դարի 90-ական թվականների առաջին տարիները Երևանի նահանգում անբերրի էին: Դրա հետևանքով նվազում են բնակչության աճի տեմպերը՝ միայն մի փոքր գերազանցելով տարեկան մեկ տոկոսի սահմանները: Բնակչության աճը դանդաղեցնում էր նաև ամուսնական տարիքի հասած տղամարդկանց՝ տեղում աշխատանք չգտնելու պատճառով արտագնացության մեկնելը, որոնց մի մասը չէր վերադառնում: Սակայն նշված երևույթները կարող էին միայն դանդաղեցնել բնակչության աճի տեմպերը: Երևանի նահանգում 1897 թվականին բնակչության քանա-

---

[129] Кавказский календарь на 1902 г., отд. III, сс. 44-45.
[130] Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 55:
[131] ЦГИА ГР, ф. 5, оп. 1, д. 7063, л. 2.
[132] РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 151, л. 2. Кавказский календарь на 1884 г., отд. III, с. 291.
[133] Свод статистических данных о населения Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.

կը ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, արդեն հավասար էր 829.556 մարդու[134]՝ տասը տարվա ընթացքում ավելանալով 159.151 մարդով, կամ 23,73%-ով[135]: Տարեկան միջին աճը կազմել է 2,4%, որը բավականին բարձր ցուցանիշ է: Դարի վերջին Երևանի նահանգում բնակչության քանակը հասնում է 853.404 մարդու[136]:

Այսպիսով, երկու տասնամյակի ընթացքում բնակչությունը Երևանի նահանգում ավելանում է 290.357 մարդով, կամ աճում է 51,56%-ով: Տարեկան միջին աճը կազմել է 2,7%: Նշենք, որ 1880-1897 թթ. ռուսական կայսրությունում բնակչությունը աճել է ընդամենը 20,43 %-ով[137]՝ Երևանի նահանգի աճին զիջելով մոտ 2,5 անգամ:

Բնակչության տեղաբաշխումը Երևանի նահանգում ըստ գավառների, ուներ հետևյալ տեսքը (տե՛ս աղյուսակ թիվ 4, տրվում է ըստ 1886 և 1897 թթ., տվյալների, քանի որ դրանք ավելի հավաստի են):

Ինչպես երևում է աղյուսակից, XIX դ., 80-ական թթ. բոլորից շատ բնակչություն է ունեցել Ալեքսանդրապոլի գավառը՝ 20,25%, բոլորից քիչ՝ Շարուր-Դարալագյազինը՝ 9,21%: Քիչ էր բնակչությունը նաև Սուրմալուի գավառում՝ 10,6%: Մնացած գավառների բնակչության քանակում եղած տարբերությունը մեծ չէ և նրանց բաժին է ընկնում 12-ից մինչև 16 տոկոսը:

90-ական թվականներին բնակչության տեղաբաշխումը Երևանի նահանգում, ըստ գավառների, էական փոփոխություն չի կրում: Բացառություն է կազմում միայն Երևանի գավառը, որի բնակչության տեսակարար կշիռը մնացած գավառների համեմատությամբ գնալով ավելանում է՝ միտում ունենալով գերազանցելու Ալեքսանդրապոլի գավառի բնակչության քանակը:

---

[134] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI. Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

[135] Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902 г. էջ 17-ում տրված է 20%, որը ճիշտ չէ:

[136] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5551, л. 270.

[137] Кавказский календарь на 1910 г., с. 146. Իշխանյան Բ., Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, էջ 30:

Աղյուսակ թիվ 4[138]

Գավառները	1886		1897	
	բնակչութ.	տոկոսը	բնակչութ.	տոկոսը
Երևանի	113.614	16,96	150.879	18,19
Ալեքսանդրապոլի	135.731	20,25	165.503	19,95
Էջմիածնի	100.591	15,00	124.237	14,98
Նախիջևանի	84.020	12,53	100.771	12,15
Նոր Բայազետի	103.611	15,45	122.573	14,78
Սուրմալուի	71.066	10,60	89.055	10,73
Շարուր-Դարալագյազի	61.772	9,21	76.538	9,22
Ընդամենը	670.405	100	829.556	100

19-րդ դարի 80-90-ական թվականներին բնակչության աճը, հատկապես մեխանիկական, առավել զգալի է Կարսի մարզում: 1880 թվականից (ընդունելով բնակչության քանակը մոտ 100.000) մինչև 1886 թվականը բնակչությունը աճել է 74 հազարով կամ 74 %-ով: Տարեկան միջին աճը կազմել է 12,3 հազար մարդ կամ 12,3 %: Իսկ 1886-ից մինչև 1897 թվականը աճը հավասար էր 116.610 մարդու: Այսպիսով, տարեկան միջին աճը կազմել էր 11.661 մարդ, կամ 6,7%: Այս և հատկապես նախորդ շրջանի բարձր աճը բացատրվում է միայն և միայն մեխանիկական գործոնով, որի դերը, ինչպես երևում է վերը բերված տվյալներից, գնալով նվազում է՝ միտում ունենալով ավելանալու դարի վերջում:

1894-1898 թթ. տվյալները հնարավորություն են տալիս ավելի մանրամասն քննարկելու բնակչության աճի տեմպերը Կարսի մարզում: Հինգ տարվա ընթացքում ծնվել են արական սեռի 21.692, իգական՝ 19.480, ընդամենը՝ 41.172 մարդ: Մահացել են համապատասխանաբար 9.897 և 8.645, ընդամենը 18.542 մարդ[139]: Արական սեռի բնական աճը կազմում է 11.795, իսկ

[138] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. Свод статистических данных о населения Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI. Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

[139] Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902, с. 40.

իգական սեռի աճը՝ 10.835, ընդամենը 22.630 մարդ: Արական սեռի տարեկան միջին աճը հավասար է 2.595, իգական սեռինը՝ 2.167, միասին՝ 4.526 մարդու: Կարսի մարզում, ինչպես և Երևանի նահանգում, արական սեռի ծնունդը գերազանցում էր իգականին, ուստի և արական սեռի բնական աճը բարձր էր:

Հազար մարդու հաշվով տարեկան միջին աճը կազմում էր ընդամենը 15,9, ընդ որում արական սեռին՝ 8,3 , իգականին՝ 7,6 մարդ: Նույն հաշվով արական սեռի ծնունդը ևս գերազանցում էր իգականին (համապատասխանաբար 15,3 և 13,7 մարդ, որը և բնակչության ընդհանուր քանակում հանգեցնում էր արական սեռի գերակշռությանը. մահվան գործակիցների տարբերությունը չնչին էր):

1894-1899 թթ. բնակչության ընդհանուր աճում (22.630 մարդ) 21.753-ը բաժին է ընկնում Կարսի մարզի օկրուգներին: Օկրուգներում մեծ է նաև բնական աճը՝ հազար մարդու հաշվով՝ 17 մարդ:

Ինչ վերաբերում է մարզի քաղաքներին, ապա նշված հինգ տարիներին բնակչության բնական աճը հետևյալն է.

Աղյուսակ թիվ 5[140]

Քաղաքներ	ծնվածներ		մահացածներ		աճը		
	արակ.	իգակ.	արակ.	իգակ.	արակ.	իգակ.	միաս.
Կարս	791	753	575	533	216	220	436
Արդահան	126	100	71	78	55	22	77
Կաղզվան	292	272	178	106	114	166	280
Օլթի	92	68	43	33	49	35	84
Ընդամենը	1301	1193	867	750	434	443	877

Ինչպես երևում է աղյուսակից, տարեկան միջին աճը քաղաքներում կազմել է 175, իսկ հազար մարդու հաշվով՝ 6 մարդ: Հազար մարդու հաշվով հինգ տարվա ընթացքում ծնվել են արական 9, իգական՝ 8,2 մարդ, մահացել են համապատասխանաբար 6 և 5,2 մարդ: Կարսի մարզի քաղաքներում 1894-1898 թվականներին երկու սեռերի բնական աճի քանակը նույնն է (3

[140] Աղյուսակը կազմված է "Сборник статистических сведений по Закавказскому краю", ч. I, Тифлис, 1902, л. 39 տվյալների հիման վրա:

մարդ), մի երևույթ, որն Արևելյան Հայաստանի այլ վայրերում չի նկատվում:

Ընդհանուր առմամբ, 1880-1900 թվականներին Կարսի մարզում բնակչության նման աճը (ավելի քան 300%-ով, կամ տարեկան մոտ 17,6%-ով) շատ անգամ գերազանցում է կայսրության տարեկան միջին աճը, չնայած ծնելիության մակարդակը Ռուսաստանում շատ ավելի բարձր էր: Այսպես, 1890-1900 թվականներին Արևելյան Հայաստանում հազար բնակչին տարեկան միջին հաշվով ընկնում է 36,6 ծնունդ, իսկ այդ ընթացքում եվրոպական Ռուսաստանի 50 նահանգներին՝ 48,7 ծնունդ[141]: Բայց քանի որ մահացության գործակիցը Ռուսաստանում շատ ավելի բարձր էր, քան Արևելյան Հայաստանում, վերջինիս բնակչությունն աճում էր շատ ավելի արագ: Դրան, իհարկե նպաստում էր նաև մեխանիկական աճը, որի շնորհիվ էլ տարբերությունը դառնում էր այդքան զգալի:

1880-ական թվականների առաջին տարիներին Կարսի մարզի բնակչության բնական աճի վերաբերյալ հավաստի տվյալներ չկան: Բնակչության ընդհանուր քանակին վերաբերող տվյալները բավականին հակասական են, որը բացատրվում է մարզում բնակչության տեղաշարժերով (արտագաղթ, ներգաղթ), ինչպես նաև տեղական վարչության աշխատանքների դեռևս կարգավորված չլինելով:

Համաձայն 1879թ. Կ.Պոլսում կնքված պայմանագրի թիվ 27-րդ հոդվածի՝ բնակիչները, երեք տարվա ընթացքում վաճառելով իրենց անշարժ գույքը, իրավունք ունեին հեռանալու Ռուսաստանին զիջված տարածքներից: Մուսուլմանական բնակչության մի մասը օգտվեց այդ իրավունքից և տեղափոխվեց հիմնականում Արևմտյան Հայաստան: Տեղական վարչությունը, ցանկանալով որքան հնարավոր է, շուտ ազատվել «անհարազատ» տարրերից, ոչ միայն արգելք չէր հանդիսանում, այլև խրախուսում էր նման տեղափոխությունները: Տեղափոխվել ցանկացողների անշարժ գույքը գնելու համար կառավարությունը բաց թողեց 500 հազար ռուբլի գումար[142]: Ռազմական գործողությունների շրջանում, 1877-1878 թթ., Կարսի մարզի բնակչությունը հավասար էր

---

[141] Адонц М.А., Экономическое развитие Восточной Армении, с. 505.
[142] ՀԱԱ, ֆ.113, ց.1, գ. 506, թթ. 97-99:

մոտ 140-150 հազարի: 1878-1880 թթ. Կարսի մարզից ըստ Պ.Ֆ.Ստեպանովի, արտագաղթեց 65.447 մարդ[143]: Նշված պայմանագրի համաձայն, 1879-1881 թթ. Կարսի մարզից ընդհանուր առմամբ տեղափոխվեց մոտ 83 հազար բնակիչ[144], որոնց մեծ մասը քոչվոր անասնապահներ էին և որն էլ ավելի էր նպաստում նրանց հեշտությամբ տեղաշարժվելուն:

Միևնույն ժամանակ պատերազմի ընթացքում գրավված, բայց Սան Ստեֆանոյում (19.2.1878) և Բեռլինում (13.7.1878) կնքված պայմանագրերի համաձայն՝ Թուրքիային վերադարձվելիք Արևմտյան Հայաստանի տարածքներից հայ բնակչությունը, ցանկանալով խուսափել թուրքական կառավարության հալածանքներից, տեղափոխվում էր հիմնականում Կարսի մարզ: Կարսի մարզ տեղափոխվեցին մոտ 50 հազար հայ և 40 հազար հույն[145], որոնց մի մասը հետագայում բնակություն հաստատեց Անդրկովկասի այլ շրջաններում և նույնիսկ Ռուսաստանում: Ցարիզմը, ելնելով իր գաղութային և ռազմաքաղաքական շահերից, ցանկանում էր նորաստեղծ մարզը բնակեցնել հիմնականում ռուսներով և ամեն կերպ խանգարում էր հայկական տարրի ավելացմանը, բայց լրիվ արգելել չկարողացավ: Միևնույն ժամանակ, մարզը ռուսներով բնակեցնելը պահանջում էր մեծ միջոցներ և ժամանակ, իսկ գրավված տարածքները հարկավոր էր տնտեսական շահագործման ենթարկել:

Կարսի մարզ էին տեղափոխվում նաև ռուսական կայսրության այլ շրջանների բնակիչներ, այնպես որ, չնայած մահմեդական՝ հիմնականում թուրք բնակչության հեռանալուն՝ մարզի բնակչության թիվը 1880 թվականին կազմում էր 95.086 մարդ[146]:

Բավականին հավաստի են 1882թ. բնակչության քանակին վերաբերող տվյալները: Այդ թվականի սկզբին վերջանում էր տեղափոխման համար սահմանված երեքամյա ժամանակա-

---

[143] Степанов П.Ф., Заметка о Карсской обалсти. – Известия Кавказского отдела императорского русского географического общества, Тифлис, 1882-1883, т. 7, с. 182.

[144] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 506, թ. 63:

[145] Исмаил-Заде Д.Н. Русское крестьянство в Закавказье, М., 1982, с. 120.

[146] Кавказский календарь на1883 г., отд. I, с. 253. Կարսի մարզի այդ տարվա բնակչության քանակի մասին կան նաև այլ տվյալներ: Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880, с. 63-70. Տրված է 114.282 մարդ:

շրջանը և ցարական կառավարությունը, ցանկանալով ճշտել բնակչության ռեալ քանակը, տարվա երկրորդ կեսին մարզում անցկացրեց միաժամանակյա մարդահամար, որի տվյալները հրատարակվեցին «Կարս» թերթում և արտատպվեցին «Կովկասյան օրացույց»-ում[147]: Ըստ տվյալների, Կարսի մարզի մշտական բնակչությունը կազմել է 145.412 մարդ (20.890 ծուխ): 6306 մարդ եղել են ժամանակավոր բնակվողներ: Քանի որ մարզը սահմանամերձ շրջան էր և ուներ կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն, մեծ էր նաև զորքի քանակը: Այն հավասար էր 11.261 մարդու[148]: Այսպիսով, մարզի ընդհանուր բնակչության քանակը, զորքի հետ միասին, հավասար էր 162.979 մարդու՝ մոտ երկու տարվա ընթացքում ավելանալով 67.793-ով կամ 71,4%-ով: Եթե նույնիսկ ընդունենք, որ մարզի բնակչությունը 1880 թվականին եղել է 114.282 մարդ, ապա աճը կկազմի մոտ 42,6%: Երկու դեպքում էլ այն խիստ բարձր է, բավականին հեռու բնական աճից և կարելի է բացատրել միայն բնակչության ներգաղթով, այսինքն՝ մեխանիկական գործոնով:

1886 թվականի ընտանեկան ցուցակագրության տվյալների համաձայն, Կարսի մարզում բնակչության քանակը հավասար էր 174.044 մարդու[149], իսկ ըստ 1897 թվականի մարդահամարի տվյալների՝ 290.654 մարդու[150]: Այսպիսով, մեկ տասնամյակի ընթացքում ավելացել էր 116.610 մարդով, կամ 64,2%-ով: Տարեկան միջին աճը կազմում էր 11.661 մարդ, կամ 6,4%:

Նշենք, որ ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, Կարսի մարզի բնակչության 13,5%-ը Թուրքիայից, հիմնականում Արևմտյան Հայաստանից տեղափոխվածներն էին[151]:

Ընդհանուր առմամբ, 1880 - 1897թթ. Կարսի մարզի բնակչությունն ավելացել է մոտ երեք անգամ, կամ 300% -ով: Տարեկան միջին աճը կազմում է մոտ 17,6%: Այն ժամանակվա բարձր մահացության պայմաններում նման բնական աճ հնա-

---

[147] Карс, 1883, N 7, Кавказский календарь на1884г., отд. III, с. 319.
[148] Նույն տեղում:
[149] Свод статистических данных о населения Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.
[150] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т.LXIV, Карсская область, тетрадь I, 1900, с. I.
[151] Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 57:

ռավոր չէր և դա կարելի է բացատրել մեխանիկական գործոնի շնորհիվ: Հարկ է նշել նաև, որ Անդրկովկասում բնակչության աճը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին չի հասել նույնիսկ տարեկան 2%-ի, իսկ կայսրությունում այն հավասար էր 1,6%-ի:

Կարսի մարզում բնակչությունը տեղաբաշխված էր շատ ավելի անհամաչափ, քան Երևանի նահանգում (տե՛ս աղյուսակ թիվ 6):

Աղյուսակ թիվ 6[152]

Օկրուգները	1886		1897	
	բնակչութ.	տոկոսը	բնակչութ.	տոկոսը
Կարսի	76.917	44,19	134.142	46,15
Կաղզվանի	34.158	19,63	59.230	20,38
Արդահանի	43.643	25,08	65.763	22,63
Օլթիի	19.326	11,10	31.519	10,84
Ընդամենը	174.044	100	290.654	100

Ինչպես երևում է աղյուսակ թիվ 6-ից, մարզի բնակչության 44,19%-ը (1886թ.) բաժին է ընկնում Կարսի օկրուգին: Մեկ տասնամյակ անց այդ ցուցանիշն ավելի է բարձրանում՝ հասնելով 46,15%-ի: Բոլորից քիչ բնակչություն է ունեցել Օլթիի օկրուգը՝ 11,1%: 1897 թվականի մարդահամարի տվյալների համաձայն, այն ավելի է նվազում՝ կազմելով ընդհանուր բնակչության 10,84%-ը: Նվազում է նաև Արդահանի բնակչության տոկոսը 22,63, 1886 թվականի 25,08-ի դիմաց: Նշված երկու օկրուգների բնակչության այդպիսի անհամաչափ տեղաբաշխումը պայմանավորված էր տնտեսական զարգացման տարբեր մակարդակով, ինչպես նաև բնակլիմայական պայմանով:

Արևելյան Հայաստանի մյուս շրջանների բնակչությունը 1886-1897 թթ. նույնպես նկատելի աճ է ունեցել: Այսպես օրինակ, Ղազախի գավառում բնակչությունն աճել է 31,77%-ով՝ 85050-ից հասնելով 112.074 մարդու[153]: Տարեկան միջին աճը կազմում է

[152] Աղյուսակը կազմված է 1886թ. ընտանեկան ցուցակագրության և 1897թ. մարդահամարի արդեն նշված աղբյուրների նյութերի հիման վրա:

[153] Свод статистических данных о населения Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893. Первая всеобщая перепись населения Российской империи, т. LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 3.

3,17%: Աճման տեմպերով երկրորդ տեղը գրավում է Բորչալուի գավառը, որի բնակչությունը նշված շրջանում 101.847-ից հասել է 128.587 մարդու[154]՝ աճելով 26,26%-ով: Տարեկան միջին աճը կազմել է 2,62%: Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում բնակչությունը նման աճ չի ունեցել: Այսպես, Զանգեզուրի գավառում բնակչությունն աճել է ընդամենը 11,19%-ով՝ 123.997-ից հասնելով 137.871 մարդու, Շուշիի գավառում՝ 10,69%-ով՝ 126.263-ից հասնելով 139.771 մարդու[155]: Առաջինում տարեկան միջին աճը կազմել է 1,19 %, իսկ երկրորդում՝ ընդամենը 1,07%:

Արևելյան Հայաստանի թվարկված շրջաններում 1897թ. անցկացված մարդահամարի տվյալների համաձայն, բնակչության քանակը (չհաշված Ախալքալաքի գավառը) կազմել է 1.638.513 մարդ, առանց տարածաշրջանում տեղաբաշխված զորքի՝ 1.604.142 մարդ: Ախալքալաքի գավառում բնակվում էր 72.709 մարդ, առանց զորքի՝ 71.544 մարդ[156]: Այսպիսով, Արևելյան Հայաստանում բնակչության ընդհանուր թվաքանակը հավասար էր 1.711.222 մարդու, առանց զորքի՝ 1.675.686 մարդու:

Բնակչության աճի հետ միասին Արևելյան Հայաստանում մեծանում էր նրա ֆիզիկական խտությունը, որը մեծապես առնչվում էր արտադրության տեղաբաշխման և զարգացման աստիճանի հետ: Բնակչության խտությունը պայմանավորված է նաև փոխկապակցված մի շարք այլ գործոններով, բնակեցվածության վաղեմությամբ, սոցիալ-տնտեսական վիճակով, տարածքի յուրացման աստիճանով, աշխարհագրական ու բնակլիմայական պայմաններով և այլն: Արևելյան Հայաստանը, հատկապես Երևանի նահանգը, համեմատած Անդրկովկասի մնացած շրջանների հետ, խիստ լեռնային է: Հետաքրքիր է բերել այդ մասին հետազոտողներից մեկի՝ Մ.Դուբենսկու տվյալները:

Դրանց համաձայն, Բաքվի նահանգում լեռնային տարածություններ համարյա թե չկային, իսկ Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում կազմում էին ընդհանուր տարածքի մոտ 20%-ը,

---

[154] Там же, т. LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. 3.

[155] Свод статистических данных о населения ..., Первая всеобщая перепись ... , т. LXIII, Елисаветпольская губерния, с. 3.

[156] Նույն տեղում, т. LXIX, с. 1.

Երևանի նահանգում՝ տարածքի կեսից ավելին[157]: Եվ բնական է, որ նման պայմանների հետ կապված, բնակչությունն Արևելյան Հայաստանում տեղաբաշխված էր անհամաչափ: Նշենք նաև, որ բնական նման պայմաններ ունեցող երկրի համար բնակչության ֆիզիկական խտությունը հեռու է իրական պատկերը տալուց: Եթե բնակչության խտությունը դիտարկենք գյուղատնտեսության համար պիտանի հողատարածության, կամ ըստ վարելահողերի քանակի, ապա պատկերը բոլորովին այլ կլինի, այսինքն՝ բնակչության խտությունը շատ ավելի բարձր կստացվի: Երևանի նահանգի բնակչության ֆիզիկական խտությունը տրված է աղյուսակ թիվ 7-ում, որի տվյալների համաձայն, այն գնալով մեծանում է: 1880-ական թթ. կեսերին Երևանի նահանգում 1 քառ. կմ-ին ընկնում 25,69, իսկ 1897 թվականին՝ մոտ 32 բնակիչ:

Աղյուսակ թիվ 7[158]

Գավառները	Մեկ քառակուսի կմ վրա (մարդ)	
	1886 թ.	1897 թ.
Երևանի	38,28	50,83
Ալեքսանդրապոլի	35,77	43,62
Նախիջևանի	18,70	22,42
Սուրմալուի	19,55	24,50
Նոր Բայազետի	22,09	26,13
Էջմիածնի	27,98	34,56
Շարուր-Դարալագյազի	21,17	26,23
Ընդամենը	25,69	31,79

Խիտ էին բնակեցված հատկապես Երևանի և Ալեքսանդրապոլի գավառները[159], որոնցում 1897 թվականին քառ. կմ-ի վրա այն կազմել է համապատասխանաբար 50,82 և 43,62 մարդ: Բնակչության ֆիզիկական խտությունը մեծ էր նաև էջմիածնի գա-

[157] Дубинский М.М. Очерки по экономической географии Закавказья, Тифлис, 1924, сс. 4-5.

[158] Հաշվարկները կատարվում են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. "Свод статистических данных о населения ...", "Первая всеобщая перепись ...", т. LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

[159] Հաշվարկները կատարվում են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. "Свод статистических данных о населения ...", "Первая всеобщая перепись ...", т. LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

վառում՝ 34,56 մարդ: Երևանի նահանգի մնացած գավառներում խտությունը համեմատաբար փոքր էր, իսկ Նախիջևանի գավառում այն հասնում էր ընդամենը 22,42 մարդու, որը Երևանի գավառի խտության կեսից էլ պակաս էր: Երևանի նահանգում խիտ էին բնակեցված այն շրջանները, որոնք առավելապես զբաղվում էին աշխատատար կուլտուրաների արտադրությամբ (խաղող, բամբակ, բրինձ): Դա վերաբերում է հատկապես Արարատյան դաշտին: Հացահատիկային կուլտուրաների մշակումով զբաղված շրջանները՝ Շիրակի դաշտը, Սևանի ավազանը, համեմատաբար նոսր էին բնակեցված: Առավել նոսր էին բնակեցված նահանգի հարավարևելյան և հյուսիսարևելյան շրջանները, որտեղ գյուղատնտեսության համար պիտանի հողատարածություններ քիչ էին և բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ: Ընդհանուր առմամբ, Երևանի գավառը բնակչության ֆիզիկական խտությամբ Անդրկովկասում գրավում էր առաջին տեղը, իսկ ռուսական կայսրության համապատասխան ցուցանիշը (1897թ.՝ 6,7 մարդ) գերազանցում էր մոտ հինգ անգամ[160]:

Բնակչության խտությունը, ռուսական կայսրության հետ համեմատած, բավականին մեծ էր նաև Կարսի մարզում, չնայած շատ էր զիջում Երևանի նահանգին: Ըստ օկրուգների մարզի, բնակչության խտությունն ուներ հետևյալ պատկերը:

Աղյուսակ թիվ 7ա

Օկրուգները	մեկ քառ. կմ-ի վրա (մարդ)	
	1886թ.	1897թ.
Կարսի	13,03	22,71
Արդահանի	7,73	11,65
Կաղզվանի	7,73	13,40
Օլթիի	6,53	10,65
Ընդամենը	9,20	15,35

Կարսի մարզի բնակչության ֆիզիկական խտությունը նշված տասնամյակում ավելացել է շատ ավելի, քան Երևանի նահանգում, սակայն Երևանի նահանգի հետ համեմատած շարունակում է մնալ նոսր բնակեցված շրջան: Դրան նպաստում էր նաև ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը,

[160] Адонц М.А., Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, с. 508.

որը, ձգտելով մարզը բնակեցնել ռուսներով, արգելում էր հայկական տարրի այդտեղ հաստատմանը: Մարզում բնակչությունը, կապված աշխարհագրական, հողակլիմայական պայմանների հետ, տեղաբաշխված էր խիստ անհամաչափ: Բոլորից խիտ բնակեցված էր Կարսի օկրուգը՝ 22,71 մարդ, բոլորից նոսր, ինչպես նշվեց, Օլթիինը՝ ընդամենը 10,65 մարդ, ընդսմին Կարսի օկրուգում խտությունը աճում էր շատ ավելի արագ, քան մնացած շրջաններում: Արևելյան Հայաստանի մաս կազմող, բայց վարչականորեն այլ նահանգների մեջ մտնող գավառներում՝ Բորչալուում 1897թ. մեկ վերստի վրա բնակվում էր 20,9 մարդ, Զանգեզուրում 20,18 մարդ, Ղազախում՝ 18,6, Շուշիում՝ 32,16 մարդ[161]:

Այժմ քննարկենք քաղաքային և գյուղական բնակչության տեղաբաշխումը:

1880-ական թթ. քաղաքային բնակչության տեսակարար կշիռը Արևելյան Հայաստանում փոքր էր: Դա բացատրվում էր ինչպես երկրի տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակով, այնպես էլ բուն քաղաքներում արդյունաբերական համեմատաբար խոշոր ձեռնարկությունների սակավությամբ, որոնք հիմնականում կենտրոնացված էին քաղաքներից դուրս (Ալավերդի, Զանգեզուր): Գյուղատնտեսական «ավելցուկ» բնակչությունը կլանվում էր գերազանցապես Անդրկովկասի խոշոր քաղաքների՝ Թիֆլիսի ու Բաքվի կողմից:

Անդրկովկասի այլ քաղաքների հետ համեմատած, Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչությունն աճում էր շատ ավելի դանդաղ, չնայած հողազրկման, քայքայման գործընթացը հայ գյուղում ավելի լայն ծավալ էր ընդունել:

Արևելյան Հայաստանի քաղաքներում տնտեսական կյանքը թույլ էր զարգացած: Շատ ավելի զարգացած էին առևտրական հարաբերությունները, ինչն աշժատուժի մեծ պահանջարկ չէր ներկայացնում: Եղած արդյունաբերական ձեռնարկությունները փոքր էին, սակավաթիվ բանվորներով: Եվ բնական է, որ արտագնաց բնակչությունը կլանվում էր Անդրկովկասի ավելի զարգացած շրջանների կողմից: Այնուհանդերձ քաղաքային բնակչու-

---

[161] Первая всеобщая перепись ..., Тифлис, ,1893, т. LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. III; т. LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. IV.

թյունն աճում էր ավելի արագ, քան գյուղականը: 1886-1897 թթ. Երևանի նահանգում քաղաքային բնակչություն աճել է 41,5%-ով, իսկ գյուղականն ընդամենը 17,7%-ով, (ընդհանուր բնակչությունն աճել է մոտ 20,3% -ով)[162]: 1886 թվականին Երևանի նահանգի հինգ քաղաքներում բնակվում էր 57.594 մարդ, Կարսի մարզի մեկ քաղաքում և երեք քաղաքատիպ ավաններում՝ 8.825 մարդ[163]: Երևանի նահանգում քաղաքային բնակչությունը կազմում էր ընդհանուրի 8,6%-ը, Կարսի մարզում՝ ընդամենը 5%-ը:

Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչության աճի մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար դիտարկենք հետևյալ աղյուսակները[164].

Աղյուսակ թիվ 8

Քաղաքներ	Երևանի նահանգ		
	1886թ.	1897թ	աճը %-ով
Երևան	14.738	29.006	96,8
Ալեքսանդրապոլ	24.230	30.616	26,4
Ն.Բայազետ	7.488	8.486	13,3
Նախիջևան	6.939	8.790	26,7
Օրդուբադ	4.199	4.611	9,8
Ընդամենը	57.594	81.509	41,5

Աղյուսակ թիվ 9

Քաղաքներ	Կարսի մարզ		
	1886թ.	1897թ	աճը %-ով
Կարս	3.939	20.805	428
Կաղզվան	3.435	10.518	206
Արդահան	778	4.142	432
Օլթի	673	2.373	253
Ընդամենը	8.825	37.838	329

[162] Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 20:

[163] Свод статистических данных ..., Кавказский календарь на 1896 г., отд. V, сс. 56-57.

[164] Աղյուսակները կազմված են Свод статистических данных ..., Первая всеобщая перепись ..., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, сс. 1-2; LXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900, с. 1; Общий свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведеной 28 января 1897 г., т. 1, СПб, 1905, сс. 32-33.

Տաս տարվա ընթացքում Երևանի նահանգի քաղաքային բնակչությունը 57.594-ից հասնում է 81.509 մարդու[165]՝ աճելով 41,5%-ով: Աճի ամենամեծ բաժինը (14,268 մարդ) ընկնում է Երևանին, որի բնակչությունը նշված շրջանում ավելացել է 96,8%-ով: Տարեկան միջին աճը կազմում է 9,7%: Աճի նման բարձր տոկոսը հեռու էր բնականից և բացատրվում է միայն մեխանիկական գործոնով: Միևնույն ժամանակ, այս աճն առերևույթ է, քանի որ 1886 թվականին հաշվի է առնվել մշտական, իսկ 1897 թվականին՝ առկա բնակչությունը: 1897 թվականին զորքի թիվը Երևան քաղաքում հասնում էր 2264 մարդու, մինչդեռ 1886 թվականին այն հաշվի չէր առնված: Մշտական և առկա բնակչության տարբերությունը, ըստ Զ.Կորկոտյանի հաշվարկների, կազմել է մոտ 5000 մարդ[166]: Եթե նույնիսկ այդ էլ նկատի չունենանք, աճը շարունակում էր մնալ բավականին բարձր և կազմում էր 9268 մարդ: Երևանի բնակչության նման աճի պատճառները մեխանիկականից բացի տնտեսական էին: Երևանն այդ շրջանում Արևելյան Հայաստանի հիմնական տնտեսական կենտրոնն էր՝ միևնույն ժամանակ կապող օղակ հանդիսանալով Թուրքիայի և Պարսկաստանի հետ կատարվող առևտրական հարաբերություններում:

Բարձր էին նաև Ալեքսանդրապոլի և Նախիջևանի բնակչության աճի տեմպերը (ավելի քան 26%), այն դեպքում, երբ Նոր Բայազետի բնակչությունն ավելացել էր 13,3%, իսկ Օրդուբադինը՝ ընդամենը 9,8%-ով՝ չկազմելով տարեկան նույնիսկ մեկ տոկոս: Քաղաքային բնակչության աճի հետևանքով մեծանում էր

---

[165] Մի շարք աղբյուրներում Երևանի նահանգի քաղաքային բնակչությունը նշված է 92.323 մարդ, որը ճիշտ չէ: Հաշվարկված նաև Շարուր-Դարալագյազի, Էջմիածնի և Սուրմալուի գավառական կենտրոններ Բաշնորաշենի (867 մարդ), Վաղարշապատի (5267 մարդ) և Իգդիրի (4680 մարդ), բնակչությունը, որոնք գյուղեր էին: Տես Процентное распределение наличного населения империи обоего пола по группам занятий, показанных при переписи главными, доставляющия главнейшие средства существования, СПб, 1905, с. 16; Первая всеобщая перепись населениа Российской империи, т. LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. I. В сборнике статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902, с. 19. Տրված է 83.332 մարդ, որն ավելի մոտ է իրականությանը:

[166] Կորկոտյան Զ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը: Հարյուրամյա աճման պատկերը (1830-1930)՝ համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ, Երևան, 1930, էջ 28.

նաև նրա տեսակարար կշիռը՝ 1886թ. 8,6%-ի փոխարեն 1897 թվականին կազմելով 11%: Նշենք, որ դեռևս 1886 թվականին Անդրկովկասում քաղաքային բնակչությունը կազմում էր ընդհանուրի 11%, Եվրոպական Ռուսաստանում 12%[167]:

Հայ բնակչության տեսակարար կշիռը մեծ էր Անդրկովկասի քաղաքներում մնացած ազգերի մեջ, ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, գրավելով առաջին տեղը[168]: Մի շարք խոշոր քաղաքներում հայերն ունեին բացարձակ գերակշռություն: Ընդհանուր առմամբ երկրամասի քաղաքային բնակչության 30,3%[169] կազմում էին հայերը, 11,8% ադրբեջանցիները և 9,2% վրացիները[170]:

Նշված շրջանում էլ ավելի մեծ տեմպերով է ավելացել Կարսի մարզի քաղաքային բնակչությունը՝ 8.825-ից հասնելով 37.838 մարդու կամ աճելով 329%-ով: Ընդ որում՝ Արդահանի բնակչությունն աճել է 432, իսկ Կարսինը՝ 428%-ով: 1897 թվականին Կարսի մարզի քաղաքային բնակչության ընդհանուր թվից Կարսին բաժին է ընկնում 20805 մարդ, կամ մարզի ամբողջ քաղաքային բնակչության 55%-ը[171]: Մեծ էր նաև Կաղզվանի և Օլթիի քաղաքային բնակչության աճը, որը կազմում էր համապատասխանաբար 206 և 253%: Ընդհանուր առմամբ Կարսի մարզի քաղաքային բնակչությունը 1886թ. 5%-ի դիմաց 1897թ. արդեն կազմում էր ընդհանուր բնակչության 13%-ը:

1886-1897 թթ. Կարսի մարզի քաղաքային բնակչության աճի նման բարձր տոկոսը պայմանավորված է նախ և առաջ Ռուսաստանին միանալուց հետո նրա տնտեսական զարգացումով: Բացի այդ 1886 թվականին հաշվի էր առնված հիմնական, իսկ 1897 թվականին առկա բնակչությունը: Մեծ էր նաև, ժամանակա-

---

[167] Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1888, с. 421. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 21:

[168] Իշխանյան Բ., Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, էջ 70:

[169] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 78:

[170] Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 22:

[171] Հակոբյան Ա., Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914թթ): -Պատմաբանասիրական հանդես, N 4, 1976, էջ 149:

վոր բնակվողների հոսքը, որոնք սկզբնական շրջանում բնակություն էին հաստատում մարզի քաղաքներում և նոր միայն տեղափոխվում այլ շրջաններ:

Արևելյան Հայաստանի այլ շրջաններում միակ քաղաքը Շուշին էր, որի բնակչությունը 1886թ. կազմում էր 26.806 մարդ[172], իսկ 1897 թվականին 25.881 մարդու: 1886թ. բնակչության թվաքանակով լինելով Անդրկովկասի երրորդ քաղաքը (Թիֆլիսից և Բաքվից հետո)՝ Շուշիի բնակչությունը, տնտեսական մի շարք գործոնների հետ կապված, ոչ միայն չավելացավ, այլև, ինչպես երևում է բերված տվյալներից, նվազեց: Համենայն դեպս, 1897թ. Ելիսավետպոլի նահանգի քաղաքային բնակչության 29%-ը բնակվում է Շուշիում[173]:

Այսպիսով, չնայած Շուշիի բնակչության նվազմանը, նախորդ տասնամյակներում Արևելյան Հայաստանում սկսված բնակչության հողագործությունից կտրվելու և առևտրաարդյունաբերականին հարելու գործընթացը XIX դարի 80-90-ական թվականներին ավելի էր խորանում, որը և հանգեցնում էր, նախ և առաջ, քաղաքային բնակչության ավելացմանը, նրա աճին: Եվ ինչպես ցույց են տալիս փաստերը, քաղաքային բնակչությունն աճում էր շատ ավելի արագ, քան գյուղականը, այսինքն Արևելյան Հայաստանում էլ տեղի էին ունենում այն գործընթացները, որոնք նկատվում էին Ռուսաստանում:

Արևելյան Հայաստանի բնակչության տեղաշարժերը դիտարկելիս անհնարին է չանդրադառնալ Անդրկովկասի այլ շրջաններում բնակվող հայ բնակչությանը: Պատմական հանգամանքների բերումով այդ երկրամասը եղել է հայ ժողովրդի վերաբնակեցման վայրերից մեկը: Հայ բնակչության տեսակարար կշիռը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բարձր էր Անդրկովկասի մի շարք նահանգներում ու շրջաններում և հատկապես քաղաքներում:

Անդրկովկասի հայ բնակչության թվաքանակի տեսակարար կշռի և դարի 80-90-ական թվականներին կրած փոփոխությունների մասին մանրամասն պատկերացում է տալիս ստորև

---

[172] Свод статистических данных о населении Закавказского края ...

[173] Первая всеобщая перепись ...LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. IV, 4.

տրվող աղյուսակը (տե՛ս էջ 64): (1897 թվականին ազգաբնակչության ազգային կազմին վերաբերող տվյալները տրվում են ըստ լեզվի):

Հայ բնակչությունը բացարձակ քանակով, ըստ պաշտոնական տվյալների, նվազել է միայն Բաքվի նահանգում՝ 55.459-ից իջնելով 52.233-ի, որը չէր կարող համապատասխանել իրականությանը: Բնակչության քանակը նվազում է նաև ըստ հավատի դիտարկելիս:

Հայ բնակչության տեսակարար կշիռը նվազում է նաև Թիֆլիսի նահանգում՝ 22%-ից իջնելով 18,67%-ի: Սակայն, ըստ հավատի դիտարկելիս (ինչպես կատարվել է 1886 թվականին ընտանեկան ցուցակագրության ժամանակ), Թիֆլիսի նահանգում հայ բնակչության քանակը 196.189 մարդու փոխարեն արդեն կազմում է 210.161 մարդ և որի համաձայն, հայ բնակչությունը կկազմի ընդհանուրի մոտ 20%-ը և շատ ավելի մոտ կլինի 1886 թվականի տվյալին՝ 22%:

Տասը տարվա ընթացքում աճը մեկ տոկոսի փոխարեն, որն այդ ժամանակաշրջանում և այդ պայմաններում բացառվում է, կկազմի արդեն 8,25%, որը շատ ավելի մոտ է իրականությանը՝ չնայած ցածր է այդ ժամանակաշրջանին հատուկ բնական աճի տեմպից:

Ելիսավետպոլի նահանգի բնակչությունը բացարձակ քանակով սալելացել է՝ հասնելով 292.188 մարդու, սակայն ընդհանուր քանակում նրա տեսակարար կշիռը նվազել է՝ 35,44%-ից իջնելով 33,26%-ի: Երևանի նահանգում և Կարսի մարզում հայերի թիվը ավելացել է 110.612 մարդով կամ 27,39%-ով:

Այսպիսով, տասը տարվա ընթացքում՝ 1886-1897 թթ. Ելիսավետպոլի, Թիֆլիսի ու Բաքվի նահանգներում և Կարսի մարզում բնակչությունը 3.108.684-ից հասնում է 3.846.343-ի՝ ավելանալով մոտ 22,33%-ով, այդ նույն ժամանակաշրջանում հայ բնակչությունը 911.708-ից հասնում է 1.055.016-ի՝ աճելով մոտ 16%-ով:

Իհարկե, տարօրինակ կարող է թվալ, որ Արևմտյան Հայաստանից շարունակ տեղի ունեցող ներգաղթից հետո էլ հայ բնակչության աճի տոկոսը ցածր է ընդհանուրի համեմատությամբ: Բայց չպետք է մոռանալ, որ Անդրկովկասը բնակեցվում էր նաև այլ ժողովուրդների՝ հատկապես ռուսների կողմից:

Աղյուսակ թիվ 10[174]

Հայ բնակչության թվաքանակը և տեսակարար կշիռը Անդրկովկասի հետևյալ վարչական շրջաններում

Վարչական շրջանները	1886 թ			1897 թ.			բնակչության աճը %-ով	հայ բնակչ. աճը %-ով
	բնակչությունը	հայ բնակչ.	%	բնակչությունը	հայ բնակչ.	%		
Երևանի նահանգ	670.405	366.700	54,70	829,556	441.000	53,16	23,74	20,26
Կարսի մարզ	174.044	37.094	21,31	290.634	73.406	25,25	67,00	97,89
Ելիսավետպոլի նահանգ	728.943	258.324	35,44	878.415	292.188	33,26	20,51	13,11
Թիֆլիսի նահանգ[175]	882.592	194.131	22,00	1.051.032	196.189	18,67	19,08	1,06
Բաքվի նահանգ	712.703	55.459.	7,78	826.716	52.233	6,32	15,99	6,18
Ընդամենը	3.168.687	911.708	28,77	3.876.373	1.055.016	27,22	22,33	15,72

[174] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893 г. Первая всеобщая перепись населения Российской империи по главнейшим сословиям, вероисповедениям, родному языку и по некоторым занятиям, СПб, 1905, с. 7.

[175] Տրված է Զակաթալայի օկրուգի հետ միասին:

1897 թվականի մարդահամարի տվյալների համաձայն ռուս բնակչությունը Բաքվի նահանգում արդեն կազմում էր ընդհանուրի մոտ 9%-ը, Կարսի մարզում 7,6%-ը, Թիֆլիսի նահանգում 7%-ից ավելին[176]:

Ռուս բնակչության տեսակարար կշիռը շատ քիչ էր Երևանի նահանգում՝ 1,6%[177], բայց շարունակում էր ավելանալ: Ընդհանուր առմամբ, ռուս բնակչությունն Անդրկովկասում 1886-1897թթ. աճել է ավելի քան կրկնակի՝ 104.919-ից[173] հասնելով 221.633[179] մարդու: Աճը կազմել է 112,4%, այն դեպքում, երբ Անդրկովկասի բնիկ ժողովուրդների աճը չի հասել նույնիսկ 21%-ի:

Հարկ է նկատել, որ 1886 թվականի ընտանեկան ցուցակագրության ժամանակ, ի տարբերություն 1897թ. մարդահամարի՝ բնակչության օրգանական մասը չկազմող զորքը հաշվառված չէ: Եվ վերջապես, 1897 թվականի մարդահամարի ժամանակ, հակառակ վիճակագիրների 1872 թվականի Պետերբուրգի կոնգրեսի որոշման, ազգային պատկանելիությունը որոշվել է ըստ լեզվական հատկանիշի, որը չէր կարող արտացոլել ռեալ իրականությունը: Վերոհիշյալ պատճառներով մարդահամարի ժամանակ հայ բնակչության քանակը նվազում է և որի հետևանքով էլ իջնում է նրա աճի տոկոսը և տեսակարար կշիռը:

Բավական է նշել, որ եթե ըստ լեզվի, Կովկասում հայ բնակչությունը կազմել է 1.118.094 մարդ, ապա ըստ հավատի (միայն հայ գրիգորյանները) արդեն 1.125.795 մարդ (կայսրությունում համապատասխանաբար 1.173.096 և 1.179.266 մարդ)[180], այսինքն՝ 7701 մարդով պակաս (կայսրությունում 6170-ով պակաս): Սակայն այս տվյալներն էլ վերջնական չեն, քանի որ հայ ժողովրդի մի ստվար խումբ դավանում էր այլ հավատներ:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով 1897 թվականին մարդահամարի ժամանակ երբ ազգային պատկանելիությունը որոշվել է ըստ լեզվի, կայսրության մի շարք ժողովուրդների, այդ

---

[176] Հաշվարկները կատարված են հետևյալ աղբյուրների հիման վրա. Краткие общие сведения по империи. Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и по некоторым занятиям, СПб, 1905, с. 6.

[177] Первая всеобщая перепись ... LXX, Эриванская губерния, СПб, 1905, с. 52.

[178] Свод статистических данных ..., Тифлис, 1893.

[179] Распределение населения ..., СПб, 1905, с. 6.

[180] Նույն տեղում, с. 15.

թվում նաև հայերի քանակը նվազում է 5-10%-ով[181]: Եթե նույնիսկ ընդունենք, որ հայ ժողովրդի քանակը նվազեցված է միայն 5%-ով (52.75 մարդ) և դա ավելացնենք Անդրկովկասում բնակվող հայ ժողովրդի պաշտոնական տվյալին (1.055.016), ապա կստանանք 1.107.767 մարդ: Այդ դեպքում աճը կկազմի մոտ 21,5%, որն ավելի մոտ է այդ ժամանակաշրջանի աճման տեմպերին:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում հետազոտման արդյունքները հանգեցնում են այն հետևությանը, որ Անդրկովկասի նշված վարչական շրջաններում հայ բնակչությունը բնական աճի, ինչպես նաև մեխանիկական տեղաշարժերի հետևանքով շարունակում էր քանակապես ավելանալ շատ ավելի արագ, քան այդ մասին հավաստում են պաշտոնական վիճակագրական տեղեկագրերը:

---

[181] Брук С.И., Кабузан В.М., Динамика и этнический состав населения России в эпоху империализма (конец XIX в. - 1917 г.). - История СССР, 1980, N 3, с. 90.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

XIX դարի 80-90-ական թվականներին Ռուսական կայսրության, բնական է նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը շարունակում էր բաժանված լինել դասերի:

Կապիտալիստական հասարակությունում դասերը, որպես ինքնուրույն միավոր, չեն հետազոտվում, սակայն նրանք, որպես իրականություն, պահպանում են իրենց նշանակությունը հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունների ուսումնասիրման համար:

Դասը ֆեոդալական հասարակարգին բնորոշ հասկացություն է, բնորոշ մարդկանց այնպիսի սոցիալական խմբերին, որոնց դրությունը տվյալ հասարակությունում ոչ միայն որոշված է, այլև օրենսդրական ակտերով ամրապնդված:

Դասերն օբյեկտիվ կատեգորիա են, կազմավորված դասակարգերի հիման վրա, ամբողջովին չընդգրկելով այն: Սովորաբար դասերը խիստ կայուն են և հազվադեպ, շատ քիչ չափով են նրանցում տեղաշարժեր կատարվում մեկից մյուսը: Ազնվականը շարունակում է մնալ ազնվական, վաճառականը՝ վաճառական, քաղքենին՝ քաղքենի, գյուղացին՝ գյուղացի անկախ նրանց անհատական հատկանիշներից, սոցիալական դրությունից:

Ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, բնակչությունը բաժանված էր, նախ և առաջ, երկու անհավասար դասերի՝ արտոնյալների և հարկատուների:

Արևելյան Հայաստանի միացումից հետո սկզբնական շրջանում ցարական կառավարությունը չէր ձգտում վավերացնել կամ ճանաչել տեղական հողատերերի իրավունքները: Հետագայում այդ քաղաքականությունը փոխվեց: Ցարիզմը, ձգտելով տեղական բնակչության մեջ սոցիալական հենարան ստեղծել, ոչ միայն ճանաչեց նրանց իրավունքները, այլև ընդլայնեց դրանք: Նախ, 40-50-ական թվականներին, ընդունվեց մուլքադարների և թիուլդարների իրավունքը հողի նկատմամբ: 1866 թվականից նրանց սկսեցին զինվորական և պետական ծառայության ըն-

դունել ռուսական ազնվականությանը հավասար իրավունքներով[182]:

Հասարակության արտոնյալ դասերին պատկանում էին ժառանգական ու անձնական ազնվականները, խաները, բեգերը, մելիքները, աղաները, զանազան դավանանքի հոգևորականները և վաճառականությունը: Կազմելով Արևելյան Հայաստանի բնակչության փոքրամասնությունը՝ նշված խմբերն իշխում էին թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կյանքում:

Նահանգապետի 1886թ. հաշվետվության համաձայն Երևանի նահանգում կար ընդամենը 90.478 ծուխ, 667.464 բնակչությամբ[183]: Օխերի 2,49% (2250) և բնակչության 2,3% (15,368, որից՝ 8046 տղամարդ) պատկանում էր արտոնյալ դասին: Նշված ծխերի մեծ մասը գտնվում էին գավառներում, իսկ նահանգի հինգ քաղաքներին բաժին էր ընկնում ընդամենը 622-ը[184]:

1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալները հնարավորություն են տալիս ավելի մանրամասն քննարկել այդ հարցը: Ըստ այդ տվյալների, Երևանի նահանգում կային 1978 ազնվականներ, 3917 բեգ ու աղալար և ընդամենը վեց մելիքներ: Նրանց ընդհանուր թիվը կազմել է 5901 մարդ, որից 3168-ը՝ արական, իսկ 2733-ը՝ իգական սեռի: Նշված արտոնյալ դասերը նահանգում, ըստ գավառների, տեղաբաշխված էին հետևյալ քանակով (տե՛ս աղյուսակ թիվ 11):

Ինչպես երևում է աղյուսակից, վեց մելիքներից չորսը բնակվել են Նոր Բայազետի, իսկ երկուսը՝ Երևանի գավառում: Ազնվականների, բեգերի ու աղալարների 39,34% (մելիքների հետ միասին 2322 մարդ) բնակվել են Երևանի գավառում:

Երկրորդ տեղում է Նախիջևանի գավառը 1162 մարդ (19,69%), երրորդը էջմիածնի գավառը՝ 987 մարդ (16,74%): Բավական մեծաթիվ էր նաև Սուրմալուի գավառի ազնվականների թվաքանակը (գավառում բեգեր, աղալարներ և մելիքներ չէին

---

[182] ПСЗРИ, т. XI, с. 321.

[183] РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 214, л. 2.

[184] Ըստ "Обзор Эриванской губернии" за 1886 г. աղբյուրի տվյալների հիման վրա Ա. Համբարյանի կատարած հաշվարկների: Տե՛ս նրա «Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակն ու ազգային կազմը XIX դարի երկրորդ կեսին». – Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 6, էջ 46: Տե՛ս նաև Կիրակոսյան Գ.Լ., Արտոնյալ դասերը Արևելյան Հայաստանի բնակչության կազմում (XIX դ. 80-90-ական թվականներ): ԼՀԳ, 1986, թիվ 11, էջ 36-45:

բնակվում): Մնացած՝ Ալեքսանդրապոլի, Շարուր-Դարալագյազի և Նոր Բայազետի գավառներում բնակվում էին համապատասխանաբար 398 (6,74%), 227 (3,85%) և 137 (2,33%) մարդ:

Ազնվականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության մոտ 0,3%, բեգերն ու աղալարները 0,58%-ը,իսկ միասին՝ 0,88%-ը:

Աղյուսակ 11[185]

Գավառներ	ազնվականներ		մելիքներ		բեգեր, աղալար.		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի	427	321	1	1	852	720	2322
Ալեքսանդրապոլի	182	196	-	-	7	13	398
Նախիջևանի	26	28	-	-	636	472	1162
Նոր Բայազետի	10	12	3	1	58	53	137
Սուրմալուի	328	340	-	-	-	-	668
Շ.Դարալագյազի	13	8	-	-	113	93	227
Էջմիածնի	45	42	-	-	467	433	987
Ընդամենը	1031	947	4	2	2133	1784	5901
	1978		6		3917		

Կարսի մարզի բնակչության դասային կազմի մասին 80-ական թվականներին հավաստի ամփոփ տեղեկություններ չունենք: Դատելով Երևանի նահանգի տվյալներից՝ Կարսի մարզում թվարկված դասերը ևս չպիտի գերազանցեին բնակչության մեկ տոկոսի սահմանը:

Դարի 80-ական թթ. կեսերին Զանգեզուրում բնակվում էին 903 մելիքներ և 4378 բեգեր, Ղազախում՝ ընդամենը չորս ազնվականներ, 395 մելիքներ և 2320 բեգեր, խաներ, աղալարներ: Շատ ավելի մեծաթիվ էր Շուշի գավառի ազնվականների, բեգերի ու մելիքների թվաքանակը՝ 6002 մարդ: Բորչալուի գավառում մելիքներ չկային, սակայն ազնվականության հետ միասին բնակվում էին բեգեր, աղալարներ և խաներ, որոնց քանակը համեմատաբար փոքրաթիվ էր՝ 1781 մարդ: Նշված արտոնյալների մասին

[185] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրի տվյալների հիման վրա. "Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.", Тифлис, 1893.

ավելի կոնկրետ պատկերացում է տալիս ստորև տրվող աղյուսակը[186]:

Աղյուսակ թիվ 12

Գավառներ	ազնվականներ		մելիքներ		բեգեր, խաներ, աղալարներ		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Զանգեզուրի	-	-	499	404	2510	1868	5281
Ղազախի	4	1	221	174	1282	1038	2720
Շուշիի	107	90	1308	1081	2086	1330	6002
Բորչալուի	198	153	-	-	765	665	1781
Ընդամենը	309	244	2028	1659	6643	4901	15.784
	553		3687		11.544		

Այսպիսով, նշված չորս գավառների ազնվականների՝ մելիքների, բեգերի, խաների և աղալարների ընդհանուր թիվը կազմում է 15.784 մարդ, որից արական սեռի 8980, իսկ իգական՝ 6804 մարդ: Արտոնյալների նշված թվաքանակից 2080-ը բնակվում էին Շուշի քաղաքում, մնացածը՝ գավառներում: Ինչպես արդեն նշվեց, թվարկված արտոնյալների ամենամեծ խումբը բնակվում էր Շուշիի գավառում՝ 6002 մարդ, որը կազմում էր բնակչության 4,75%: Բավական մեծաթիվ էր նաև Զանգեզուրի գավառի արտոնյալների թվաքանակը 5281 մարդ, որը կազմում էր բնակչության 4,26% , Ղազախի գավառում՝ 3,20%՝ 2720 մարդ: Համեմատաբար փոքրաթիվ էին Բորչալուի գավառի թվարկված արտոնյալները 1781 մարդ, կամ բնակչության 1,75%[187], որը սակայն գերազանցում էր Երևանի նահանգի համապատասխան ցուցանիշը (0,88):

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են ընձեռում դիտարկել արտոնյալների նշված խմբերում կատարված քանակական փոփոխությունները և բնակչության կազմում նրանց գրաված տեղը դարի վերջում:

Երևանի նահանգում 1897թ. եղել են 8706 ժառանգական և 2117 անձնական ազնվականներ: Ժառանգական ու անձնական

---

[186] Աղյուսակը կազմված է. "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г. աղբյուրի տվյալների հիման վրա:

[187] Հաշվարկները կատարված են "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г. աղբյուրի տվյալների հիման վրա:

պատվավոր քաղաքացիների թիվը հասնում էր 1650 մարդու[188]: Ըստ գավառների թվարկված խավերը տեղաբաշխված են հետևյալ կերպ[189]:

Աղյուսակ թիվ 13

Գավառներ	ժառանգակ. ազնվական.		անձն.ազնվ. և աստիճան.		ժառ. և անձն. պատ.քաղ.		Միա-. սին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի	1470	1307	502	433	330	262	4304
Ալեքսանդ–ռապոլի	492	407	243	252	233	217	1844
Նախիջևա–նի	778	702	153	136	59	54	1882
Նոր Բայա–զետի	120	117	28	26	162	147	600
Սուրմալուի	460	451	61	33	17	17	1039
Շ.Դարալա–գյազի	649	650	58	32	38	34	1461
Էջմիածնի	560	543	87	73	48	40	1351
Ընդամենը	4529	4177	1132	985	887	771	12.481
	8706		2117		1658		

Ինչպես երևում է աղյուսակից, բացարձակ թվաքանակով Երևանի գավառի ժառանգական, անձնական ազնվականները, պատվավոր քաղաքացիներն ու աստիճանավորները գրավում են առաջին տեղը՝ 4304 մարդ, որը կազմում է ամբողջի 30,48%: Ազնվականության մոտ կեսը, աստիճանավորների ճնշող մեծամասնությունը բնակվում էին նահանգական կենտրոն Երևան քաղաքում: Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառներում նշված արտոնյալների թիվը հավասար էր 1882 և 1844 մարդ (15,07 և 14,78%-ը): Շարուր-Դարալագյազի գավառում բնակվում էր նրանց 11,70%-ը, էջմիածնի և Սուրմալուի գավառներում համապատասխանաբար 10,83 և 8,32%-ը: Բոլորից քիչ բաժին էր ընկնում Նոր Բայազետի գավառին՝ ընդամենը 4,8%:

---

[188] Краткие общие сведения по империи. Распределение населения по главнейшим сословиям, вероисповедениям, родному языку и по некоторым занятиям, СПб, 1905, с. 18.

[189] Первая всеобщая перепись населения Российской империи ..., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 30.

ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,5%-ը: 80-ական թվականների համեմատությամբ ազնվականների թիվն ավելացել է: Ավելացել է նաև մնացած խավերի թիվը: Սակայն նահանգի բնակչության նկատմամբ եղած տոկոսային հարաբերությունը համարյա չի փոխվել: Եթե նկատի չունենաք պատվավոր քաղաքացիներին, աստիճանավորներին, որոնք 80-ական թվականներին չէին հաշվառվել, ապա ժառանգական և անձնական ազնվականները դարի վերջին կկազմեին բնակչության մոտ մեկ տոկոսը, որն այնքան էլ հեռու չէր 1886 թ. համապատասխան ցուցանիշից (0,88%):

Ի տարբերություն 1886թ. ընտանեկան ցուցակագրության, 1897թ. մարդահամարը հնարավորություն է տալիս ուսումնասիրել նաև Կարսի մարզի բնակչության դասային կազմը:

ժառանգական ազնվականների թիվը մարզում կազմել է 2089, անձնական ազնվականներինը և աստիճանավորներինը՝ 894 մարդ[190]: Համեմատաբար սակավաթիվ էր ժառանգական և անձնական պատվավոր քաղաքացիների քանակը՝ 272 մարդ[191]:

Նշված դասերի բաժանումն ըստ սեռերի և նրանց տեղաբաշխումը մարզի օկրուգներում տրվում է աղյուսակ թիվ 14-ում:

Աղյուսակ թիվ 14[192]

Օկրուգներ	ժառանգակ. ազնվական.		անձն.ազնվ. և աստիճան.		ժառ. և անձն. պատ.քաղ.		Միասին
	արական.	իգական.	արական.	իգական.	արական.	իգական.	
Կարսի	484	319	268	229	59	42	1401
Արդահանի	161	135	68	41	70	92	567
Կաղզվանի	407	362	144	86	6	1	1006
Օլթիի	98	123	37	21	1	1	281
Ընդամենը	1150	939	517	377	136	136	3255
	2089		894		272		

[190] Краткие общие сведения по империи. Распределение населения по главнейшим сословиям ..., СПб, 1905, с. 18.

[191] Նույն տեղում:

[192] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրի տվյալների հիման վրա. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, с. 32.

Ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորները, ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Կարսի մարզում տեղաբաշխված էին խիստ անհամաչափ: Կարսի օկրուգում բնակվում էին 40,04% (1401 մարդ), Կաղզվանի օկրուգում՝ 1006 մարդ, կամ ընդհանուրի 30,91 %-ը: Փաստորեն այս երկու օկրուգներին բաժին էր ընկնում կեսից շատ ավելին՝ 70,95%: Արդահանի օկրուգում բնակվում էր նրանց 17,42% (567 մարդ), Օլթիում ընդամենը 8,63% (281 մարդ):

Ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորների հետ միասին կազմում էին Կարսի մարզի ընդհանուր բնակչության 1,12%՝ ավելի քիչ, քան Երևանի նահանգում (1,5%):

Արևելյան Հայաստանի բնակչության դասային կառուցվածքում շատ ավելի մեծ էր թվարկված դասերի տեսակարար կշիռը Ղազախի, Զանգեզուրի և հատկապես Շուշիի գավառներում: Այսպես, Շուշիում ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորների հետ (ընդ որում, վերջիններն այնքան էլ բազմաթիվ չէին) կազմում էին գավառի բնակչության 6,02%, (8358 մարդ)[193]: Հայաստանի այդ հին շրջանում բոլորից շատ էր պահպանվել ֆեոդալական դասի ներկայացուցիչների՝ մելիքների և այլ հողատերերի թվաքանակը:

Այդ ժամանակաշրջանի ուսումնասիրողներից մեկը՝ Եղիազարովը[194], մելիքներին ու բեգերին բաժանում է երեք խմբի: Առաջին խումբը ժառանգական հին մելիքներն ու բեգերն էին, որոնց կոչումները շնորհվել էին պարսկական շահերի կողմից, հատուկ հրովարտակով: Երկրորդ խումբը տեղական խաների կողմից այդ աստիճաններին բարձրացվածներն էին: Երրորդ խմբի ներկայացուցիչները գյուղերի, համայնքների կառավարիչներն էին և որոշ արտոնություններից օգտվում էին միայն տվյալ ժամանակաշրջանում: Նրանք ըստ էության մելիքներ ու բեգեր չէին և ոչ էլ այդ կարգավիճակը հաստատող որևէ հրովարտակ

---

[193] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32.

[194] Егиазаров С.А. Административно-экономический строй сельской общины Эриванской губернии. – Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. I, Тифлис, 1887, с. 3.

ունեին: Այս վերջին խումբն, ըստ էության, կապ չուներ մելիքների ու բեգերի դասի հետ և միայն տեղական ժողովուրդն էր նրանց այդպես կոչում: Այնպես որ, կարծում ենք, շատ ավելի ճիշտ կլիներ նրանց երկու խմբի բաժանել:

Շուշի գավառի բնակչության ընդհանուր թվաքանակում ժառանգական ազնվականները, որոնց ճնշող մեծամասնությունը տեղաբնիկ էին, կազմում էին 5,16% (7159 մարդ): Նշված դասերի քանակը մեծ էր նաև Զանգեզուրի գավառում՝ 6868 մարդ, որը կազմում էր գավառի բնակչության մոտ 5% և Ղազախի գավառում՝ 3754 մարդ[195] (գավառի բնակչության 3,35%): Համեմատաբար փոքրաթիվ էին Բորչալուի գավառի նշված արտոնյալները՝ 2319 մարդ[196] (1,80%): Ժառանգական, անձնական ազնվականների ու պատվավոր քաղաքացիների, աստիճանավորների թիվը և բաժանումն ըստ սեռերի, տրվում է թիվ 15 աղյուսակում:

Աղյուսակ թիվ 15[197]

Գավառներ	ժառ. ազնվական.		անձն.ազնվ. և աստիճան.		ժառ. և անձն. պատ.քաղ.		Միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Զանգեզուրի	3198	2695	56	66	435	418	6868
Ղազախի	1681	1476	112	100	201	184	3754
Շուշիի	3814	3345	211	218	390	380	8358
Բորչալուի	963	917	156	94	93	96	2319
Ընդամենը	9656	8433	535	478	1119	1078	21.299
	18.089		1.013		2.197		

Արևելյան Հայաստանի բնակչության արտոնյալների թվում էր նաև հոգևոր դասը: Բնակչությունն ըստ սոցիալական կառուցվածքի դիտարկելու ժամանակ հոգևորականությունն ընդգրկվում է մտավորականության կազմում:

Հայ եկեղեցին, հոգևորականությունը, անկախ նվաճողներից, միշտ էլ գտնվել են համեմատաբար արտոնյալ պայմաններ-

---

[195] Первая всеобщая перепись ..., LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32.

[196] Նույն տեղում, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. 35.

[197] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. Первая всеобщая перепись ..., 1897 г., LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32. LXIX, Тифлисская губерния, СПБ, 1905, с. 35.

ռում: Դարեր շարունակ հայ ժողովրդի պետականությունից զուրկ լինելը նպաստել է եկեղեցու ու հոգևորականության դերի և հեղինակության բարձրացմանը, նրանց արտոնությունների ընդլայնմանը:

Ցարական իշխանությունը, ձգտելով եկեղեցու միջոցով ամրապնդել իր դիրքը Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ազդեցության տակ պահել այլ երկրների հպատակության տակ գտնվող հայերին, ոչ միայն պահպանեց եկեղեցու, հոգևորականության արտոնությունները, այլև նրանց շնորհեց որոշակի իրավասություններ, որոնք իրենց արտացոլումը գտան 1836թ. Նիկոլայ 1-ի կողմից վավերացված «Պոլոժենիե» - ում[198]:

Հայ հոգևորականությունը «Պոլոժենիե»-ի համաձայն, ազատվում էր մարմնական պատիժներից, հարկերից և զանազան այլ պարտականություններից՝ դառնալով Ռուսական կայսրության արտոնյալ դասերից մեկը: Հոգևորականության սոցիալ-իրավական այդ վիճակը պահպանվել էր մինչև կայսրության վախճանը:

Արտոնյալների դասում էր նաև մահմեդական հոգևոր դասը, որի թվական կազմը զգալի էր Արևելյան Հայաստանում: Հրատարակված և արխիվային տվյալները մեզ հնարավորություն են տալիս որոշել նրա թվաքանակը, տեղաբաշխումը և տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության կազմում:

Արևելյան Հայաստանի շրջաններից Երևանի նահանգում, 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով, եղել են ընդամենը 7707 հոգևոր դասին պատկանողներ, որոնցից արական սեռի՝ 4172-ը, իգական՝ 3535[199]:

Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմել հայ գրիգորյանները՝ 6841 (3677 տղամարդ և 3164 կին)[200]:

Հայ կաթոլիկները կազմել են փոքրամասնություն՝ 56 տղամարդ և 41 կին, ընդամենը՝ 97 մարդ: Փոքրաթիվ էր նաև ուղ-

---

[198] Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 112-115:

[199] Свод статистических данных о населении Закавказского края ..., Тифлис, 1893 г.

[200] 1886 թ. ընտանեկան ցուցակագրության ժամանակ հայ հոգևոր դասին պատկանող կանանց թիվը նշված է 3164, որը սխալ է: Տե՛ս նշված աղբյուրի "Свод населения по городам и уездам Эриванской губернии" բաժինը:

ղափառ հոգևոր դասը՝ ընդամենը 59 մարդ (38 տղամարդ և 21 կին): Մնացած հոգևորականները պատկանում էին մահմեդական շիա (691 մարդ) և սյունի (19 մարդ) դավանանքներին, ընդամենը՝ 710 մարդ:

Հայ գրիգորյանները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,02%, հայ կաթոլիկ ու ուղղափառ հոգևոր դասը՝ 0,01%: Մի փոքր ավելի էր մահմեդական հոգևոր դասի տեսակարար կշիռը, որը հավասար էր 0,1%-ի: Ընդհանուր առմամբ, բոլոր դավանանքների հոգևոր դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 1,14 %-ը:

Երևանի նահանգի հոգևոր դասի 26,17%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի, 21,38%-ը՝ էջմիածնի գավառներում: Երևանի գավառում բնակվում էր 18,65%-ը: Բազմաքանակ էր նաև Նախիջևանի գավառի հոգևոր դասը՝ 12,20%: Նահանգի մնացած՝ Նոր Բայազետի, Սուրնալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասի ներկայացուցիչները համեմատաբար փոքրաթիվ էին: Նրանց բաժին էր ընկնում համապատասխանաբար 8,54, 7,05 և 6,01%:

Հոգևոր դասը զգալի թիվ էր կազմում Արևելյան Հայաստանի այլ շրջաններում ևս: Դարձյալ, ըստ 1886թ. ընտանեկան ցուցակագրության, Շուշիի գավառում նրանց թվաքանակը հասնում էր 2461-ի, որից իգական սեռին պատկանում էր 1024-ը: Բավական փոքրաթիվ էր մահմեդական հոգևոր դասը՝ ընդամենը 390 մարդ: Մնացած 2071-ը հայ գրիգորյաններն էին, որոնք կազմում էին Շուշիի գավառի բնակչության 1,64%-ը, իսկ մահմեդական շիա դավանանքին պատկանող հոգևոր դասը՝ 0,31%, միասին՝ 1,95%:

Բորչալուի գավառի հոգևոր դասի ընդհանուր թիվը հավասար էր 1065-ի, որից արական սեռի 576, իգական՝ 489 մարդ: Այս գավառի հոգևոր դասի կազմը ըստ դավանանքի ավելի բազմազան էր: Գերակշռում էր հայ հոգևոր դասը՝ 570 մարդ (47 հայ կաթոլիկներ): Երկրորդ տեղը (377 մարդ) գրավում էին ուղղափառները: Մահմեդական հոգևոր դասը փոքրաթիվ էր՝ ընդամենը 116 մարդ: Կային նույնիսկ 2 լյութերականներ:

Հայ գրիգորյան հոգևոր դասը կազմում էր Բորչալուի գավառի բնակչության 0,52, հայ կաթոլիկները՝ 0,05%, ուղղափառները՝ 0,38%: Սյունի և շիա դավանանքի մահմեդական հոգևոր դասերը կազմում էին գավառի բնակչության 0,1%-ից քիչ ավելին:

Ընդհանուր առմամբ, հոգևոր դասը կազմում էր Բորչալուի բնակչության 1,05%-ը:

Զանգեզուրի գավառի հոգևոր դասի ընդհանուր թիվը հավասար է 1831-ի, որից 806-ը՝ իգական սեռի: Հոգևոր դասի մեծ մասը՝ 1583 մարդ, կազմում էին հայ գրիգորյանները, մնացած 248-ը պատկանում էին մահմեդական շիա և սյունի դավանանքներին: Հայ հոգևոր դասը կազմում էր գավառի բնակչության 1,28%-ը, սյունիները՝ 0,05%-ը, իսկ շիաները 0,15%-ը, միասին՝ 1,48%-ը:

Ղազախի գավառում, կրկին ըստ 1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների, կային հոգևոր դասին պատկանող 935 մարդ, (517-ը՝ արական, 418-ը՝ իգական սեռի), որից 459-ը հայ գրիգորյաններ էին և կազմում էին բնակչության 0,54%-ը: Շիա հոգևոր դասը կազմում էր բնակչության 0,24, սյունիները՝ 0,32%, իսկ ամբողջ դասը 1,1%-ը:

Ախալքալաքի գավառում հոգևոր դասի ընդհանուր թվաքանակը հավասար էր 1218 մարդու (639-ը՝ արական, 579-ը՝ իգական սեռի): Հայ գրիգորյանները կազմում էին ընդհանուրի 76%-ը՝ 921 մարդ: Հայ կաթոլիկների թվաքանակը աննշան էր՝ 110 մարդ: Փոքրաթիվ էր նաև ուղղափառների քանակը՝ 104 մարդ: Մահմեդական հոգևոր դասին պատկանում էին ընդամենը 83 մարդ[201]

Արևելյան Հայաստանի շրջաններից Կարսի մարզի հոգևոր դասի թվակազմի վերաբերյալ 80-ական թվականներին տեղեկություններ չկան: Պետք է ենթադրել, որ մարզի հոգևոր դասն էլ բնակչության նկատմամբ ունեցել է մոտավորապես այն տոկոսային հարաբերությունը, ինչ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այսինքն, տատանվել է 1,1-ից (Բորչալուի գավառում) մինչև 1,95%-ի սահմաններում (Շուշիի գավառում):

Ամփոփելով վերոհիշյալ տվյալները, նկատում ենք, որ հոգևոր դասի ընդհանուր թիվը Արևելյան Հայաստանում XIX դարի 80-ական թթ. (առանց Կարսի մարզի) հասնում էր 13.899 մարդու, որից 11.477-ը՝ հայ գրիգորյաններ: Հոգևոր դասը կազմում էր բնակչության 1,25%-ը:

Ամբողջ Անդրկովկասում, Սևծովյան օկրուգում և Դաղստանի մարզում հայ հոգևոր դասի թիվը հասնում էր 17.700-ի (կաթո-

---

[201] Свод статистических данных ..., Тифлис, 1893 г.

լիկներ՝ ընդամենը 466-ը), ուղղափառներից հետո, բացարձակ թվաքանակով, գրավելով երկրորդ տեղը:

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս քննարկել հոգևոր դասի թվակազմի փոփոխությունները XIX դարի 90-ական թվականների վերջին:

Երևանի նահանգում 1897թ. եղել է քրիստոնյա հոգևոր դասին պատկանող 6531 մարդ, որից քաղաքներում բնակվել են 1078-ը[202]: Նշված թվաքանակից 3.422-ը եղել են արական սեռի, 3.109-ը՝ իգական[203]: Ինչպես 80-ական, այնպես էլ 90-ական թվականներին հոգևոր դասը մեծաթիվ էր Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառներում, որտեղ բնակվում էին ընդհանուրի 24,07 և 22,63 %, Երևանի գավառում 18,50%: Նոր Բայազետի գավառին բաժին էր ընկնում ընդհանուրի 12,04, իսկ Նախիջևանին 10,98%: Համեմատաբար սակավաթիվ էր Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասը (6,92 և 4,87%)[204]:

Եղած վիճակագրական նյութերը հնարավորություն չեն տալիս պարզել մահմեդական և այլ հոգևոր դասի թիվն ըստ գավառների, սակայն նահանգում նրանց թվաքանակը կազմել է 1032 մարդ[205]:

Այսպիսով, Երևանի նահանգի հոգևոր դասի ընդհանուր թիվը կազմում է 7563 մարդ[206] կամ բնակչության 0,91%: Դարի 80-ական թվականների հետ համեմատած, հոգևոր դասը ոչ միայն չի աճել, այլև նվազել է բացարձակ քանակով (44 մարդ), հետևապես նաև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ (0,22%):

Կարսի մարզի քրիստոնյա հոգևոր դասը կազմել է 1332 մարդ, որից արական սեռին պատկանում էին 733-ը, իգականին՝ 599[207]: Նշված թվից 235-ը (17,64%) բնակվում էին մարզի քաղաքներում, 1097-ը՝ (82,36%) օկրուգներում:

---

[202] "Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., LXXI, Эриванская губерния", СПб, 1905, с. 2.

[203] Նույն տեղում, էջ 30:

[204] Հաշվարկները կատարված են վերոհիշյալ աղբյուրների հիման վրա:

[205] "Распределение населения по главнейшим сословиям ...", СПб, 1905, с. 27. Первая всеобщая перепись ..., - LXXI, Эриванская губерния, с. 104.

[206] Ըստ Խոջաբեկյանի եղել է 4646 մարդ, որը չի համապատասխանում իրականությանը: Տես Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը..., էջ 161:

[207] "Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., LXIV, тетрадь I, Карсская область", СПб, 1900, с. 32.

Քրիստոնյա հոգևոր դասի կեսից ավելին 722-ը (54,20%) բնակվում էր Կարսի, իսկ 462-ը, (34,69%)՝ Կաղզվանի օկրուգներում: Հոգևոր դասի աննշան տոկոսը (6,61 և 4,50) բաժին էր ընկնում Արդահանի և Օլթիի օկրուգներին: Նշենք նաև, որ եթե Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում հայ գրիգորյանները կազմում էին քրիստոնյա և ընդհանուր ոգևոր դասի մեծամասնությունը, ապա Կարսի մարզում ընդհանուրի կեսից էլ պակասը՝ 619 մարդ[208]: Բավականին մեծ թիվ էր կազմում նաև մահմեդական հոգևոր դասը՝ 206 մարդ, 44-ն էլ այլ դավանանքի հոգևոր դասի ներկայացուցիչներ էին: Այսպիսով, ըստ ռուսական կայսրությունում 1897թ. անցկացված մարդահամարի տվյալների, դարի վերջին Կարսի մարզի հոգևոր դասի ընդհանուր թիվը կազմում էր 1582 մարդ, կամ բնակչության 0,54%-ը[209]:

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում բոլորից մարդաշատ էր Շուշիի գավառի քրիստոնյա հոգևոր դասը՝ 1184 մարդ (արական՝ 621, իգական՝ 563), որից 270 բնակվում էր Շուշի քաղաքում[210]: Հոգևոր դասը Շուշիի գավառում 80-ական թթ. հետ համեմատած կրճատվել է մոտ կիսով չափ: Շատ ավելի նվազել է Զանգեզուրի և Ղազախի գավառների հոգևոր դասի թիվը՝ կազմելով ընդամենը 859 և 325 մարդ[211]: Նույն պատկերն է նկատվում նաև Բորչալուի գավառում, որտեղ քրիստոնյա հոգևոր դասի թիվը հասել է 838 մարդու: Միակ տարածաշրջանը Ախալքալաքի գավառն էր, որում քրիստոնեա հոգևոր դասի թվաքանակը ավելացել և հասել էր 1292-ի (671 արական, 621՝ իգական սեռի)[212]: Ճիշտ է, մահմեդական և այլ հոգևոր դասերի թիվն այս շրջաններում հաշվառված չէ, բայց նրանք փոքրաթիվ էին և էական փոփոխություններ չէին առաջացնի:

Այսպիսով, XIX դարի 80-90-ական թվականներին հոգևոր դասն Արևելյան Հայաստանում ոչ միայն չի ավելացել, այլև նվազել է, այն դեպքում, երբ երկրի բնակչության աճը կազմել է մոտ 47,95%:

---

[208] "Распределение населения по главнейшим сословиям ...", СПб, 1905, с. 27.

[209] "Процентное распределение наличного населения империи обоего пола по группам занятий ...", նշված է 0,52% (տե՛ս էջ 17):

[210] "Первая всеобщая перепись ..., LXIII, Елисаветпольская губерния", СПб, 1904, с. 32.

[211] Նույն տեղում:

[212] Նույն տեղում, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, сс. 46-47.

Արևելյան Հայաստանի հոգևոր դասի թվաքանակը, տեղաբաշխումը և տոկոսային հարաբերությունների փոփոխությունները տվյալ շրջանի բնակչության նկատմամբ տրված է աղյուսակ թիվ 16-ում:

Ընդհանուր առմամբ հոգևոր դասի թվաքանակն Արևելյան Հայաստանում կազմում էր 13.643 մարդ (առանց Ախալքալաքի, Զանգեզուրի, Ղազախի, Շուշիի և Բորչալուի գավառների մահմեդական հոգևոր դասի) կամ բնակչության 0,8%-ը, ի տարբերություն մեկ տասնամյակի 1,12%-ի:

Արևելյան Հայաստանի բնակչության արտոնյալ դասերից էր նաև վաճառականությունը: Չնայած մի շարք աշխատություններում հեղինակներն անդրադարձել են այդ դասին, այս կամ այն կերպ գնահատել տնտեսական կյանքում նրա խաղացած դերը, այնուամենայնիվ արևելահայ վաճառականության հիմնահարցը դեռևս թույլ է ուսումնասիրված: Ինչ վերաբերում է վաճառականության թվաքանակին, նրա որպես ինքնուրույն դասի՝ բնակչության կազմում XIX դարի վերջում գրված տեղին, ապա դրան անդրադարձել է պատմաբան Ա.Համբարյանը[213]:

Արևելյան Հայաստանի միացումից հետո ռուսական վաճառականությանը վերաբերող օրենսդրական ակտերը տարածվեցին նաև տեղական վաճառականության վրա:

Ռուսական կայսրությունում, ուրեմն և Արևելյան Հայաստանում, սկսած XIX դարի 60-ական թվականներից, վաճառականական դասը բաժանվում էր երկու գիլդայի[214], որոնցում գրանցվելու համար հարկավոր էր ունենալ վկայական՝ վճարելով համապատասխան անդամավճար: Վաճառականությունը միակ դասն էր, որում գրանցվելու համար պետք է վճարվեր որոշակի գումար:

---

[213] Տե՛ս Ա.Համբարյան, Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակն ու ազգային կազմը 19-րդ դարի երկրորդ կեսին. – Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 6, էջ 43-52:

[214] Сюда вступали, преобретая гильдейские свидетельства при одновременной покупке и промысловых: "Для первой гильды – на торговые предприятия первого разряда, или на промышленное предприятие одного из трех разрядов, или пароходное предприятие, за содержание которого уплачено в год более 500 руб. основного промыслового налога; для второй – соответственно на торговое предприятие второго разряда или промышленное - четвертого и пятого разрядов, или на пароходное за содержание которого уплачено от 50-500 руб. основного промыслового налога в год" (Свод законов Российской империи, т. IX, СПб, 1899, сс. 532-533). – Боханов А.Н., Российское купечество в конце XIX – начале XX века. – История СССР, 1985, N 4, сс. 106-107.

Աղյուսակ թիվ 16[215]

Վարչական միավորները	1886թ.			1897թ.		
	բնակչ.	հոգևոր դաս	%	բնակչ.	հոգևոր դաս	%
Երևանի գավառ	113.614	1.419	1,25	150.879	1.208*	0,80
Ալեքսանդրապոլի գավառ	135.731	1.991	1,47	165.503	1.572	0,95
Նոր Բայազետի գավառ	103.611	650	1,62	122.573	786	0,64
Էջմիածնի գավառ	100.591	1.626	1,62	124.237	1.478	1,19
Նախիջևանի գավառ	84.020	928	1,10	100.771	717	0,71
Սուրմալուի գավառ	71.066	636	1,75	89.055	452	0,51
Շ.Դարալագյազի գավառ	61.772	457	1,74	76.538	318	0,42
Ընդ. Երևանի նահանգ	**670.405**	**7.707**	**1,13**	**829.556**	**6.531 | 1.032** 7.563**	**0,91**
Կարսի օկրուգ	76.917	-	-	134.142	722*	0,54
Արդահանի օկրուգ	43.643	-	-	65.767	88	0,13
Կաղզվանի օկրուգ	34.158	-	-	59.230	462	0,78
Օլթիի օկրուգ	19.326	-	-	31.519	60	0,19
Ընդ. Կարսի մարզ	**174.044**	-	-	**290.654**	**1.332 | 250** 1.582**	**0,54**
Զանգեզուրի գավառ	123.997	1.831	1,48	137.871	859	0,62
Ղազախի գավառ	85.050	935	1,10	112.074	325	0,29
Շուշիի գավառ	126.263	2.461	1,95	139.771	1.184	0,85
Ախալքալաքի գավառ	63.799	1.218	1.83	72.709	1.292	1.79
Բուրչալուի գավառ	101.847	1.065	1,05	128.587	838	0,65
Ընդ.Արևել. Հայաստանում	**1.345.405**	**15.217**	**1,30*****	**1.711.222**	**13.643**	**0,8**

* - նահանգի գավառներում և մարզի օկրուգներում՝ առանց մահմեդականների, ** - ավելացված է ոչ քրիստոնյա հոգևոր դասին պատկանողների քանակը, *** - հաշվարկը կատարված է առանց Կարսի մարզի բնակչության:

[215] Հաշվարկները կատարված են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. "Свод статистических данных о населении Закавказского края ..., Первая всеобщая перепись населения Российской империи ..., 1897 г., LXXI, Эриванская губерния", СПб, 1905, сс. 2, 30; LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, с. 32; LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32; LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, сс. 35, 46-47.

1898թ., նոր օրենքի ընդունումից հետո, վաճառականական դասին պատկանելն արդեն անկախ դարձավ տնտեսական գործունեությունից և կապված էր միայն դասային վկայագիր ստանալու հետ[216], որը բնականաբար հանգեցրեց այդ դասի բացարձակ թվի նվազմանը: Շատ ավելի նվազեց նրա տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվակազմում:

1886թ. տվյալներով Երևանի նահանգում վաճառականական դասին պատկանում էր 2.539 մարդ, որից արական սեռի՝ 1301, իգական՝ 1238[217]: Վաճառականական դասից ընդամենը 244-ն էին բնակվում գավառներում, իսկ մնացած 2295-ը՝ նահանգի քաղաքներում: Ընդ որում, քաղաքաբնակների 74,20%-ը բաժին էր ընկնում Ալեքսանդրապոլին և միայն 25,80%-ը՝ մնացածներին: Ընդհանուր առմամբ վաճառականության դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 0,38%-ը:

Կարսի մարզի վաճառականական դասի վերաբերյալ 80-ական թթ. հավաստի տեղեկություններ չկան:

Զանգեզուրի գավառում վաճառականական դասը բացակայում էր, իսկ Ղազախի գավառում կար ընդամենը 15-ը, Բորչալուում 29-ը[218]: Բավական մեծաթիվ էր Շուշիի գավառի վաճառականական դասը՝ 1110 մարդ (650-ը՝ արական, 450-ը՝ իգական սեռի)[219], որը կազմում էր բնակչության 0,87%-ը և բնակվում էին բացառապես Շուշի քաղաքում՝ ընդամենը՝ 3693 մարդ (առանց Կարսի մարզի և Ախալքալաքի գավառի) բնակչության 0,33%-ը:

Դարի վերջին, ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, վաճառականական դասի թիվն Արևելյան Հայաստանում գնալով պակասում էր, կազմելով ընդամենը 1886 մարդ (առանց Ախալքալաքի գավառի), այն դեպքում, երբ նշված թվաքանակում, ի տարբերություն դարի 80-ական կեսերի, ընդգրկված է նաև Կարսի մարզի վաճառականական դասը: Նշված դասն արդեն կազմում էր բնակչության 0,12%-ը, չնայած առևտուրը և արդյունաբերությունը վերելք էին ապրում: Երևանի նահանգում այդ դասի թիվը կրճատվում է մոտ 60%-ով, կազմելով ընդամենը 1014

---

[216] ПСЗРИ, т. IX, с. 531.

[217] Свод статистических данных о населении Закавказского края ..., Тифлис, 1893 г.

[218] Նույն տեղում:

[219] Նույն տեղում:

մարդ՝ 492-ը՝ արական, 522-ը՝ իգական սեռի[220]: Ինչպես 80-ական թթ., այնպես էլ դարի վերջին վաճառականության ճնշող մեծամասնությունը բնակվում էր նահանգի քաղաքներում, իսկ քաղաքներից էլ Ալեքսանդրապոլում:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, Կարսի մարզում վաճառականական դասի մեջ ընդգրկված էր 241 մարդ, որից 128-ը՝ արական, իսկ 113-ը՝ իգական սեռի[221]: Վաճառականական դասը հիմնականում բնակվում էր Կարսի օկրուգում (171 մարդ):

Զանգեզուրի գավառում, ինչպես դարի 80-ական թթ., այնպես էլ 90-ական թթ. վաճառականական դասը բացակայում էր, Ղազախի գավառում նրանց թիվը կազմում էր նորից 15[222], Բորչալուում՝ 19[223], Շուշիի գավառում՝ 597 մարդ[224], 80-ական թթ. համեմատությամբ նվազելով մոտ կիսով չափ:

Ընդհանուր առմամբ ժառանգական, անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորներն ու հոգևորականությունը, վաճառականությունը կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության փոքրամասնությունը, և որպես դաս, պահպանվեցին մինչև ռուսական միապետության անկումը:

Բնակչության հիմնական մասը բաժանվում էր քաղքենիների և գյուղացիության դասերի[225]: XIX դարի 80-ական թվականներին Երևանի նահանգում քաղքենիները բնակվում էին Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում՝ 33.526 մարդ ընդհանուր թվաքանակով, որից արական սեռի՝ 17.371, իսկ իգական՝ 16.155 մարդ: Բավական մեծ էր նաև Շուշիում բնակվող քաղքենիների դասի թվաքանակը՝ 23.025 մարդ, որը գերազանցում էր

---

[220] "Первая всеобщая перепись населения Российской империи ...", 1897 г., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 30. Այդ երևույթը նկատելի էր նաև Ռուսաստանում և կապված էր 1898 թվականին ընդունված օրենքի հետ, որի համաձայն վաճառականական դասին պատկանելը դադարեց տնտեսական գործունեությունից կախված լինելուց:

[221] "Первая всеобщая перепись населения Российской империи ...", 1897 г., LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, с. 32.

[222] Նույն տեղում, LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1905, с. 32.

[223] Նույն տեղում, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. 35.

[224] Նույն տեղում, LXIII, Елисаветпольская губерния, СПб, 190, с. 32.

[225] Տես Կիրակոսյան Գ., Քաղքենիների և գյուղացիության դասերը Արևելյան Հայաստանում XIX դ. 80-90-ական թվականներին: ԲՀԱ, 1986, թիվ 2, էջ 117-131:

Ալեքսանդրապոլի և մանավանդ Երևանի համապատասխան ցուցանիշները[226]:

90-ական թվականներին քաղքենիների դասն ավելանում էր ոչ միայն բացարձակ թվով, այլև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ: Նրանք սկսում են բնակություն հաստատել ոչ միայն այլ քաղաքներում, այլև գավառներում և օկրուգներում:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, քաղքենիներ կային արդեն Երևանի նահանգի բոլոր քաղաքներում և գավառներում՝ 54.222 մարդ ընդհանուր թվաքանակով, որից 28.143-ը՝ արական, 26.079-ը՝ իգական սեռի: Նրանցից 1.595-ը բնակվում էին գավառներում, իսկ մնացած ճնշող մեծամասնությունը նահանգի քաղաքներում[227], կազմելով ընդհանուր բնակչության 6,54%-ը:

Կարսի մարզում քաղքենիները կազմում էին բնակչության 5,46%-ը՝ 15.871 մարդ, որից արական սեռի՝ 9.152, իգական՝ 6.719 մարդ[228]: Զանգեզուրի և Ղազախի գավառներում քաղքենիների դասը փոքրաթիվ էր՝ 342 և 557 մարդ[229]: Ավելի սակավաթիվ էին նրանք Բորչալուի գավառում: Շուշի քաղաքի բնակչությունը դարի վերջում գնալով նվազում էր: Նվազել էր նաև քաղքենիների դասը գավառում կազմելով ընդամենը 18.344 մարդ[230]:

Իսկ ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանում քաղքենիների դասն աշխատանքի հասարակական բաժանման, բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչության տոկոսային հարաբերության բարձրացման, բնական աճի հետևանքով ավելանում էր և մեծանում էր նրա տեսակարար կշիռը:

Գյուղացիության դասն ըստ իր թվաքանակի և տեսակարար կշռի, ամենաբազմամարդն էր Արևելյան Հայաստանում և բաժանվում էր մի քանի խմբերի կամ կատեգորիաների, որոնցից ամենամեծը պետական գյուղացիությունն էր: Գյուղացիության դասի մյուս խմբերը՝ մուլքադարական, թիուլդարական, տերու-

---

[226] "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г.

[227] "Первая всеобщая перепись населения Российской империи ..., 1897 г., LXXI, Эриванская губерния", СПб, 1905, с. 30.

[228] Նույն տեղում, LXIV, тетрадь I,.Карсская область, СПб, 1900, с. 32.

[229] Նույն տեղում, LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1905, с. 32.

[230] Նույն տեղում:

նական, սեփականատիրական, վանքապատկան և այլն, իրենց թվակազմով շատ էին զիջում պետականին:

Գյուղացիության նշված կատեգորիաները միշտ էլ եղել են պատմաբանների ուշադրության կենտրոնում: Նրանց իրավունքները, պարտականությունները, տնտեսական դրությունը լուսաբանվել են բազմաթիվ ուսումնասիրություններում: Հեղինակներից շատերը անդրադարձել են նաև գյուղացիության դասի կատեգորիաների թվին, նրանց հարաբերությանը: Սակայն, հենվելով տարբեր աղբյուրների վրա, շատ դեպքերում չնշելով ուսումնասիրման տարածքային սահմանները, շրջանառության մեջ են դրել տարբեր, երբեմն իրար հակասող թվական տվյալներ, որոնք գալիս են, իհարկե, նախ և առաջ աղբյուրներից:

1883 թվականին Անդրկովկասի հինգ նահանգների պետական ունեցվածքն անցավ համապատասխան նախարարության տնօրինությանը: 1884-1885թթ. և մասնակիորեն 1886թ. Պետական ունեցվածքի նախարարությունը ենթակա գյուղացիության ճշգրիտ թվաքանակը և առհասարակ, դրությունն ուսումնասիրելու համար կազմակերպեց հատուկ խումբ, որի հավաքած տվյալները հետագայում հրապարակվեցին:

Երևանի նահանգի պետական գյուղացիությունը կազմավորվեց նախկին շահական-խանականից, որոնց թիվը հետագայում ավելացավ Արևմտյան Հայաստանից, Ռուսաստանի ներքին նահանգներից կատարված տեղափոխումների հաշվին: 1884-1885 թթ, ըստ պետական ունեցվածքի նախարարության տվյալների, նահանգի պետական հողերում կար 955 բնակավայր, որոնցից 800-ը գյուղեր էին: Այդ գյուղերից 732-ը զուտ պետական էին, 68-ը՝ պետական-մուլքադարական: Մնացած 155-ը քրդերին և թաթարներին պատկանող քոչվորական բնակավայրեր էին, որոնցից մեկը նույնպես պետական-մուլքադարական էր[231]: Նշված բնակավայրերն ըստ գավառների տեղաբաշխված էին հետևյալ տոկոսային հարաբերությամբ[232]:

1.	Աուրմալուի	18,45%
2.	Էջմիածնի	17,19%
3.	Ալեքսանդրապոլի	16,77%

---

[231] Парвицкий А.В., Численный состав государственных крестьян. – Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т.II, Тифлис, 1887, с. 106.

[232] Նույն տեղում, էջ 108:

4. Երևանի 15,41%
5. Շարուր-Դարալագյազի 13,10%
6. Նոր Բայազետի 13,00%
7. Նախիջևանի 6,08%

Ինչ վերաբերում է բնակավայրերում եղած ծխերի քանակին և բնակչության թվակազմին, ապա տվյալներն այնքան էլ հավաստի չեն: Շատ դեպքերում բնակչությունը թաքցնում, հատկապես ծխերի մասին նվազեցված տվյալներ էր տրամադրում ուսումնասիրողներին, որի համար վերջիններս հաճախ են դժգոհել[233]: Ուստի նվազեցված տվյալներով, Երևանի նահանգի պետական գյուղացիությունը կազմել է 53.118 ծուխ՝ 447.729 երկսեռ բնակչությամբ[234]:

1886թ. անցկացված ընտանեկան ցուցակագրության տվյալները շատ ավելի ամբողջական են և հավաստի: Ըստ այդ տվյալների, Երևանի նահանգում եղած 90.918 ծխերից պետական էին 67.671-ը, 525.162 երկսեռ բնակչությամբ[235], որը կազմում էր ընդհանուր բնակչության 78,34%: Ինչպես տեսնում ենք, 1886թ. թե՛ ծխերի և թե՛ բնակչության թիվը շատ ավելի է և դժվար է այդ բացատրել միայն բնական աճով կամ տեղափոխումներով: Ավելի շուտ այդ հավաստում է, որ մեկ-երկու տարի առաջ Պետական ունեցվածքի նախարարության հավաքած տվյալներն ամբողջական չեն եղել:

Երևանի նահանգում պետական գյուղացիությունը գավառների բնակչության նկատմամբ ուներ հետևյալ տոկոսային հարաբերությունը[236]:

1. Նոր Բայազետի 89,47
2. Ալեքսանդրապոլի 80,69
3. Նախիջևանի 78,06
4. Էջմիածնի 75,99
5. Շարուր-Դարալագյազի 74,57
6. Երևանի 73,66
7. Սուրմալուի 71,98

---

[233] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т.I, Тифлис, 1886, с. 479.
[234] Свод материалов ..., т.II, Тифлис, 1887, с. 103.
[235] "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г.
[236] Հաշվարկը կատարված է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:

Բորչալուի գավառում, ըստ 1884-1885 թթ. Պետական ունեցվածքի նախարարության տվյալների, պետական գյուղացիության թիվը հասնում էր 46.458 մարդու, Զանգեզուրում՝ 70.015, Ղազախում 50.024, Շուշիում՝ 33.821 մարդու[237]: Այս տվյալները Երևանի նահանգի հետ համեմատած, շատ ավելի մոտ են 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներին, ըստ որի, Ղազախի գավառում պետական գյուղացիության թիվը կազմում էր 52.333, (բնակչության 61,53%), Զանգեզուրում՝ 68.589 (55,32%), Բորչալուում՝ 53.563 մարդ (52,59%): Պետական գյուղացիությունը փոքրաթիվ էր Շուշիի գավառում՝ ընդամենը 30.198 մարդ, որը կազմում էր բնակչության 23,92%-ը:

Կարսի մարզի միացումից հետո նրա հողատարածքը հայտարարվեց պետական: Բնական է, գյուղական բնակչությունն էլ դարձավ պետական: 80-ական թվականների կեսերին Պետական ունեցվածքի նախարարության Անդրկովկասում կատարած հետազոտությունները չտարածվեցին մարզի վրա, քանի որ միայն 90-ական թվականների առաջին կեսին այն անցավ վերջինիս տնօրինությանը[238]: 1886թ. ընտանեկան ցուցակագրության նյութերն էլ հնարավորություն չեն տալիս պարզել մարզի պետական գյուղացիության թիվը, քանի որ բնակչության դասային կազմը չի հաշվառվել: Սակայն մարզում գյուղացիական այլ խմբեր համարյա չկային, ամբողջ գյուղացիությունը պետական էր:

Ընդհանուր առմամբ, 80-ական թվականների կեսերին Արևելյան Հայաստանի պետական գյուղացիները «կազմում էին 105.051 տնտեսություն (827.623 մարդ) և հանդիսանում գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը (72,0%)»[239]:

Արևելյան Հայաստանի գյուղացիության մնացած 28%-ը բաժին էր ընկնում կալվածատիրական և սեփականատիրական հատվածներին:

Կախված ֆեոդալական հողատիրության ձևից և պետական անվանումներից, երկրի տարբեր շրջաններում «նրանք հայտնի են մուլքադարական, պետական-մուլքադարական, թիուլ-

---

[237] Свод материалов ..., т.II, Тифлис, 1887, с. 120-123.

[238] Амбарян А.С., Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, с. 34.

[239] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 34: Տե՛ս նաև Ա.Համբարյան, Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը XIX դարի երկրորդ կեսին: Պատմա-բանասիրական հանդես, 1984, թիվ 1, էջ 111-112:

դարական, վանքապատկան, թիուլա-մուլքադարական (Երևանի, էջմիածնի, Սուրմալուի և Նոր Բայազետի գավառներում), բեգական, աղալարական, մելիքական (Զանգեզուրի, Շուշիի, Ղազախ-Շամշադինի գավառներում), խիզանական (Լոռիում) և այլ անուններով»[240]: 1870թ. ռեֆորմից հետո այդ գյուղացիների մեծ մասը պաշտոնապես արդեն կոչվում էր «ժամանակավոր պարտավորյալներ»:

Նշված խմբերից թվաքանակով մեծ էր մուլքադարական գյուղացիությունը, որը բնակվում էր Երևանի նահանգի չորս գավառներում: Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում այդ կարգը բացակայում էր: Ըստ 1886թ. Ընտանեկան ցուցակագրության, Երևանի գավառում մուլքադարական գյուղացիության թիվը հասնում էր 12.401 մարդու, որը կազմում էր բնակչության 10,95%ը՝: Շատ ավելի մեծաթիվ էր այդ կարգը Սուրմալուի գավառում՝ 18.652 մարդ, կամ բնակչության 26,26%-ը, Շարուր-Դարալագյազի գավառում՝ ընդամենը 2.576 մարդ՝ 4,17%: Էջմիածնի գավառում մուլքադարական գյուղացիությունը կազմում էր բնակչության 11,23%-ը՝ 11.299 մարդ: Գյուղացիության այդ կարգը ընդհանուր առմամբ կազմում էր Երևանի նահանգի բնակչության 6,70%-ը, 44.928 մարդ ընդհանուր թվաքանակով[241]: Գյուղացիության նշված կարգի մեջ էր մտնում նաև էջմիածնի վանքապատկան գյուղացիությունը:

Աղայական, մելիքական, բեգական և կալվածատիրական այլ խմբերի գյուղացիությունը 1886թ. ցուցակագրությամբ հաշվարկված է ,տերունական ընդհանուր անվան տակ:

Զանգեզուրի գավառում նրանք կազմում էին բնակչության 37,16%-ը, Ղազախում՝ 34,10%, Բորչալուում՝ 32,27%, իսկ Շուշիի գավառում՝ բնակչության կեսից ավելին՝ 50,20%: Թվարկված չորս գավառներում տերունական գյուղացիության թիվը հասնում էր 148.289 մարդու[242]:

---

[240] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 40:

[241] "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г.

[242] Կալվածատիրական, գյուղացիության խմբերի, նրանց իրավունքների, պարտականությունների, թվի և հողատարածության մասին մանրամասն տե՛ս Ա.Համբարյանի «Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը 19-րդ դարի 2-րդ կեսին» հոդվածը՝; ՊԲՀ, 1984, թիվ 1:

Երևանի նահանգում տերունական գյուղացիությունը բնակվում էր Շարուր-Դարալագյազի (12.436), Նախիջևանի (3.047) և Նոր Բայազետի գավառներում (2.762), որոնք կազմում էին նահանգի բնակչության 2,72%(18.245 մարդ)[243]:

Տնտեսապես ինքնուրույն, սեփականատեր գյուղացիությունը Արևելյան Հայաստանում շատ փոքրաքանակ էր: Երևանի նահանգում նրանք բնակվում էին Նախիջևանի (2795) և Էջմիածնի գավառներում (42 մարդ)՝ կազմելով նահանգի բնակչության 0,42%-ը: Այդ տոկոսը շատ ավելի մեծ էր Բորչալուի 3,46 ու Զանգեզուրի գավառներում 1,79 և Փոքր Շուշիում՝ 0,06, որոնց ընդհանուր թվաքանակը հասնում էր 5.828 մարդու[244]:

Դարի վերջին գյուղացիության դասը բնական աճի, 1895-1896 թթ. կոտորածներից հետո Արևմտյան Հայաստանից կատարված ներգաղթի, Ռուսաստանից և այլ շրջաններից տեղափոխությունների հաշվին գնալով ավելանում էր:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, Երևանի նահանգում այդ դասում արդեն հաշվվում էր 737.080 մարդ[245], որը կազմում էր բնակչության 88,85%, Կարսի մարզում՝ 243.839 մարդ[246] (83,89%): Գյուղացիության դասի տոկոսը շատ ավելի մեծ էր Զանգեզուրում՝ 92,82% և Ղազախում՝ 94,58%: Հայաստանի այլ շրջանների հետ համեմատած այն փոքր էր Շուշիի գավառում՝ 77,72%[247]:

Այսպիսով, XIX դարի 80-90-ական թվականներին գյուղացիության դասը մեծաթիվն էր Արևելյան Հայաստանի բնակչության շրջանում, շատ անգամ գերազանցելով մնացած դասերը միասին վերցրած: Սակայն այդ դասը միաժամանակ, արտադրական հարաբերությունների հետագա զարգացման, գյուղատնտեսության ապրանքայնացման և այլ պատճառներով սոցիալապես տարբաժանվում էր՝ ծնունդ տալով հասարակության հետագա շերտավորմանը:

---

[243] "Свод статистических данных о населении Закавказского края ...", Тифлис, 1893 г.

[244] Նույն տեղում:

[245] "Первая всеобщая перепись населения ..., LXXI, Эриванская губерния", СПб, 1905, с. 30.

[246] Նույն տեղում, LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, с. 32.

[247] Նույն տեղում, Елисаветпольская губерния, СПб, 1905, с. 32.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ: ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

XIX դարի 80-90-ական թվականներին ցարական կառավարությունը հատկապես Արևելյան Հայաստանում, ուսումնական բնագավառում, մի շարք փոփոխություններ կատարեց, որոնց նպատակը մի կոմից արևելահայության ազգային ինքնագիտակցության զարթոնքի արգելակումն էր, մյուս կողմից՝ ինքնակալությանը բուրժուական բուռն զարգացման քաղաքական հետևանքներից պաշտպանելը:

Կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացումը, տնտեսության, տեխնիկայի զարգացումը, բուրժուազիայի ձևավորումը, ազգային ինքնագիտակցությունը, ազգային-ազատագրական պայքարի վերելքը կրթված անձնավորությունների պահանջ էին առաջադրում: Ի տարբերություն նախորդ շրջանի, Արևելյան Հայաստանում դպրոցներ էին բացվում ոչ միայն քաղաքներում, այլև գավառներում[248]: Դեռևս 1867թ. հրատարակվել էին կանոններ, «որոնց նպատակն էր կովկասյան դպրոցը համապատասխանեցնել ընդհանուր կայսերական համակարգին, տարրական կրթությունն անջրպետել միջնակարգից և դասավանդման լեզուն դարձնել ռուսերենը» [249]:

Վերականգնվեց Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունը, որը պետական դպրոցների հետագա տարածման փորձեր կատարեց: Երևանի նահանգի համեմատաբար բարձր տիպի դպրոցները՝ Երևանի արական և իգական գիմնազիաները, ուսուցչական սեմինարիան, Ալեքսանդրապոլի առևտրական

---

[248] Դպրոցների պատմությամբ զբաղվել են թե՛ միջնխորհրդային, թե խորհրդային պատմաբանները: Տե՛ս Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837-1912): Թիֆլիս, 1914: Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913): Թիֆլիս, 1914: Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1870), հ. 1: Բաքու, 1916: Հ.2 (1870-1900), էջմիածին, 1922: Երկանյան Վ, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905): Երևան, 1970: Խուդոյան Ս.Կ., Արևելահայ դպրոցները1830-1921 թվականներին: Երևան, 1987; Մելքոնյան Ա.Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ): Երևան, 2005:

[249] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI: Երևան, 1981, էջ 756:

ուսումնարանն ու Օլգայի անվան իգական գիմնազիան անմիջականորեն ենթակա էին Կովկասի ուսումնական շրջանին, մնացած պետական դպրոցները՝ ժողովրդական ուսումնարանների Երևանի նահանգի դիրեկցիային: 90-ական թվականներին նահանգական տնօրինությունը բաժանվում էր երկու տեսչության: Առաջինին ենթակա էին Երևանի նահանգի մի մասի (Երևան քաղաքով), էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Աուրմալուի գավառների, երկրորդին՝ Երևանի գավառի մնացած մասի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառների դպրոցները [250]:

Բացի պետական դպրոցներից հայկական իրականության մեջ առկա էին հիմնականում երեք տիպի դպրոցներ՝ եկեղեցական-ծխական, հոգևոր կամ վիճակային և թեմական: Առանձին տիպ էր ճեմարանական ուսուցումը (էջմիածնի Գևորգյանը, Մոսկվայի Լազարյանը):

Ծխական դպրոցների կանոնադրությունը հրատարակվել էր դեռևս 1868թ., որը մշակել էր Ամենայն հայոց՝ կաթողիկոս Գևորգ 4-րդի կողմից 1867թ. ստեղծված հանձնաժողովը: Ծխական դպրոցներն ունեին մեկ, լավագույն դեպքում՝ երկու դասարան: Ուսուցումը տևում էր 2-3 տարի: «Հայկական եկեղեցական-ծխական դպրոցը, իր հետագա զարգացման մեջ, ի տարբերություն ուղղափառ եկեղեցական դպրոցների, մոտեցավ Ռուսաստանում լայն տարածում գտած ժողովրդական-զեմստվոյական դպրոցին»[251], որը շատ ավելի առաջադիմական էր, ժամանակակից: «Եկեղեցական-ծխական կարգին պատկանող այդ դպրոցները, - գրել է Կ.Վեսելովսկին, - ունեին զուտ ազգային, համաժողովրդական բնույթ և ժողովրդական կրթության գործում հասարակական նախաձեռնության ուսանելի օրինակ էին հանդիսանում»[252]:

Հոգևոր կամ վիճակային դպրոցներում, որոնք ունեին 3-5 հիմնական դասարաններ, ուսուցումը տևում էր 6-8 տարի:

Հայկական դպրոցների ամենաբարձր տիպը թեմականներն էին, որոնցումն է՛լ ավելի երկար էր տևում:

---

[250] ՀԱԱ, ֆ.14, գ.8, թ.18: Տե՛ս Թ.Խ.Հակոբյան, Երևանի պատմությունը, (1879–1917թթ.): Երևան, 1963, էջ 390:

[251] Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 756:

[252] Вестник воспитания, 1905, N 9, с. 130. Տե՛ս Վահե Երկանյան, նշվ.աշխ., էջ 63:

Նշված շրջաններում, բացի թվարկվածներից, գոյություն ունեին նաև մասնավոր դպրոցներ, որոնք բաժանվում էին առաջին կարգի՝ եթե ունեին 6 դասարան, երկրորդ՝ եթե ունեին 3 դասարանից ոչ պակաս և երրորդ՝ երկու կամ մեկ դասարանով: Մասնավոր դպրոցներ կարող էին հիմնել միայն կայսրության քաղաքացիները, որոնք ունեին համապատասխան կրթություն և հատուկ թույլտվություն՝ Կովկասի ուսումնական շրջանից[253]: 80-90-ական թթ. Արևելյան Հայաստանում գործել են միայն երրորդ կարգի մասնավոր դպրոցներ:

Պետական և այլ կարգի դպրոցական ցանցի ընդլայնման հետ մեկտեղ ավելանում էր սովորող երիտասարդության թիվը: Նշենք սակայն, որ դպրոցների և աշակերտների մասին եղած պաշտոնական վիճակագրական տվյալները բավական թերի են, երբեմն՝ հակասական: Իսկ էջմիածնի Սինոդը, որի ենթակայության տակ էին գտնվում հայկական դպրոցները, միշտ չէ, որ տեղերից ստույգ տվյալներ էր ստանում: «Կովկասյան օրացույց»-ում եղած պաշտոնական վիճակագրական տվյալներից պետք է օգտվել զգուշորեն, քանի որ դրանք, մեծ մասամբ, տպագրված են վրիպակներով, երբեմն՝ թվական սխալներով: Ճշգրիտ հաշվարկմանը չէր կարող չխանգարել դպրոցների և աշակերտության թվի հաճախակի տատանումները (շատ դպրոցներ նյութական և այլ պայմանների հետ կապված կարճատև կյանք էին ունենում):

XIX դարի 80-90-ական թթ. Երևանի նահանգի դպրոցների և աշակերտների թիվը տրված է թիվ 17 աղյուսակում [254]:

---

[253]ՀԱԱ, ֆ. 117, գ. 127, թթ. 14-16:

[254] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. Центральный государственный исторический архив Грузии (ЦГИАГ), ф.5, оп.1, д.7063, л.60; Российский государственный исторический архив в Санкт-Петербурге (РГИА СПб), ф. 5, оп. 25, д. 297, л. 217; ф.1263, оп.1, д. 4259, л. 380; ф.1284, оп. 223, д. 122, л. 67; ф.1263, оп.1, д. 4334, л. 308; д.154, л.70; Кавказский календарь на 1885г., с.288, РГИА СПб, ф.1284, оп.223, д.116, л. 58; ф. 1263, оп.1, д. 4477, л. 449; Кавказский календарь на 1887г., сс. 233-235; на 1888г., с.151; РГИА СПб, ф.1284, оп. 223, д. 204, л.168; д. 214, л.191; д.125, л. 66; д. 191-б, лл. 20-21; д. 118, л. 73; ЦГИАГ, ф.12, оп.1, д. 1061, л. 33; РГИА СПб, ф.1263, оп. 2, д. 5013, л. 409; ф. 1284, оп. 223, д. 253, л. 80; ЦГИАГ, ф.12, оп.1, д. 1109, л. 81; РГИА СПб, ф.1284, оп. 223, д.118, л. 40; ф.1263, оп. 2, д. 5189, л. 689; д. 5257, л. 752, ф. 1284, оп. 223, д.86, л.112; ф. 560, оп. 26, д. 86, л. 39; ф. 1263, оп. 2, д. 5384, л.л. 135,173; д. 5501, л. 298; ф.1282, оп. 3, д. 438, л. 21; ф. 1263, оп. 2, д. 5551, л. 270.

Աղյուսակ թիվ 17

Տարեթիվը	Դպրոցների քանակը	Աշակերտների թիվը		Ընդամենը
		արական	իգական	
1880	161	4159	784	4943
1881	144	5621	1027	6648
1882	175	4666	932	5598
1883	126	5331	1118	6449
1884	60	2322	131	2453
1885	99	3170	171	3341
1886	102	2978	192	3170
1887	78	4025	1130	5155
1888	176	5598	1310	6903
1889	118	5932	1372	7304
1890	115	5328	1264	6592
1891	117	5827	1197	7024
1892	114	6430	1190	7620
1893	127	7063	1386	8449
1894	145	8311	1989	10300
1895	144	8408	1749	10157
1896	86	5077	625	5702
1897	93	5176	673	5849
1898	117	6337	1054	7391
1899	121	7167	1446	8613
1900	147	8497	1772	10269

Հարկ է նշել, որ դպրոցներին և նրանցում սովորող աշակերտներին վերաբերող վիճակագրական տվյալները հնարավորություն են տալիս հետևել դրանց քանակական աճին: Այսպես, Երևանի նահանգում 1880-1883 թթ., չնայած դպրոցների քանակի նվազմանը, աշակերտների թիվը 4943-ից հասնում է 6449-ի, ավելանալով մոտ 30,46%-ով: Այդ վերելքը շատ ավելի զգալի կլիներ, եթե չխանգարեին մի շարք հանգամանքներ:

XIX դարի 80-ական թվականների սկզբներին փոխվեց ցարական կառավարության արևելյան արտաքին քաղաքականությունը, որի հետևանքով և վերաբերմունքը հայության նկատ-

մամբ: Սկսվեց հալածանքն այն ամենի նկատմամբ, ինչ ազգային էր: Դպրոցները ևս չէին կարող զերծ մնալ դրանից: Երեք անգամ՝ 1885, 1897 և 1903 թվականներին հայկական դպրոցները փակվեցին: Ցարական կառավարությունը սկսեց վարել բացահայտ ռուսացման քաղաքականություն: Դեռևս 1879թ. Երևանի նահանգապետը կառավարությանը ներկայացվող ամենամյա հաշվետվությունում շեշտում էր, որ հայկական ծխական դպրոցների մեծ մասը հազիվ թե կարողանան ծառայել որպես լուսավորություն տարածող և « ... հետևաբար հայերի ... կրթական գործը հազիվ թե նպատակահարմար է մասնավոր ձեռքերում թողնել»[255]:

1881թ. փոխարքայության վերացումից հետո, կառավարչապետ նշանակված Դունդուկով-Կորսակովը 1883թ. զեկուցագրերից մեկում գրում էր. «Գլխավորը և ամենից առաջ հարկավոր է արմատապես փոխել ... իշխանության վերաբերմունքը հայկական, հատկապես եկեղեցական-ծխական և հոգևոր դպրոցների նկատմամբ, որոնք այժմ գտնվում են էջմիածնի աթոռի գրեթե բացարձակ, իսկ քաղաքական իմաստով՝ ամենևին ոչ հուսալի ազդեցության տակ»[256]: Այդ քաղաքականությունը շուտով գտավ իր կոնկրետ արտահայտությունը: Մի շարք խորհրդակցություններից հետո, 1884թ. ցարական կառավարության կողմից հաստատվեց «Կովկասի հայ-լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին» կանոնադրությունը, որով հայկական դպրոցները զրկվում էին իրենց ինքնուրույնությունից և, միևնույն ժամանակ, բացառվում էր տարրականից բարձր դպրոցների գոյությունը:

Կանոններին չենթարկվելու համար Ռուսական կայսրությունում փակվում են շուրջ 300 հայկական դպրոցներ, որից Կովկասում՝ 250-ը [257]:

Ահա սրանով էլ բացատրվում է 1884–1886թթ. դպրոցների և աշակերտների թվի այդպիսի կտրուկ նվազումը: Այդ նոր քաղաքականությունն իր արտահայտությունը գտավ նաև 90-ական թվականների երկրորդ կեսին: Հայկական դպրոցները վերաբացվելուց հետո նրանք վերելք էին ապրում և ինչպես երևում է աղյուսակից, աշակերտության թիվը քսան տարվա ընթացքում

---

[255] РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 269, л. 160.

[256] РГИА СПб, ф.229, оп.2, д. 1136, л.6: Տես Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 138:

[257] Кавказский календарь на 1886г.,с. 226.

Երևանի նահանգում ավելանում է մոտ երկու անգամ՝ հասնելով 10.269-ի:

Կարսի մարզի միացումից հետո կրթական գործն այդտեղ որոշակի աշխուժացում ապրեց: XIX դ. 80-ական թթ. առաջին տարիների դպրոցների և աշակերտների թվաքանակի մասին տեղեկություններ չունենք: Իսկ հաջորդ տարիներին մեզ հայտնի տեղեկություններն ամփոփված են թիվ 18 աղյուսակում [258]:

Աղյուսակ թիվ 18

Տարեթիվը	Դպրոցների քանակը	Աշակերտների թիվը		Ընդամենը
		արական	իգական	
1883	130	-	-	2591
1884	134	2194	513	2707
1885	65	1076	371	1447
1886	64	3082	1097	4179
1887	345	6490	2029	8519
1888	144	3440	512	3952
1889	-	-	-	-
1890	314	-	-	6897
1891	364	6225	1705	7980
1892	-	-	-	-
1893	300	5152	1854	7006
1894	292	6412	1880	8298
1895	305	6554	1871	8425
1896	252	5919	1915	7834
1897	240	3223	817	4040
1898	204	2186	224	2410
1899	240	5331	1723	7054
1900	108	6012	,1299	7311

[258] Кавказский календарь на 1885г.,с.288; на 1886г., с.226; на 1887г., с.233; РГИА СПб, ф.1284, оп.223, д.124, л.58; д.136, лл.23-27; Кавказский календарь на 1889г., с.157; РГИА СПб, ф.1284, оп.223, д.200, лл.39-40; Кавказский календарь на 1894г., отд.V, с.136; на 1896г., отд.V, с.176, РГИА СПб, ф.1284, оп.223, д.197, л.116, ф.1263, оп.2, д.5384, л.187, ф.1284, оп.223, д.59, л.87; д.75, л.88, ф.1263, оп.2, д.5329, л.126; ф.560, оп.26, д.86, л.48; Кавказский календарь на 1899г.; отд. III, сс.70-72; РГИА СПб, ф.1284, оп.3, д.263, л.28; Кавказский календарь на 1900г., отд.III, сс.68-69; на 1901г., отд III, сс.87-89; ЦГИА Г, ф.12, оп.1, д.2573, лл.29-31; РГИА СПб, ф.1263, оп.2, д.5554, л.112, ф.1282, оп.3, д.471, лл.11, 25,42-43.

Իհարկե այս տվյալները վերջնական չեն: Միշտ չէ, որ ցարական վիճակագրությունն ընդգրկել է ոչ պետական՝ հատկապես հայկական բոլոր դպրոցները, բայց պատկերացում են տալիս աշակերտների թվական փոփոխությունների մասին:

1883թ. մարզում գոյություն է ունեցել 130 դպրոց՝ 2591 աշակերտով: Հաջորդ տարում դպրոցների թիվն ավելանում է չորսով, իսկ աշակերտներինը՝ 116-ով: 1885թ.՝ կապված հայկական դպրոցների փակման հետ, նվազում են թե՛ դպրոցների, թե՛ աշակերտների թվաքանակը:

1887թ. վիճակագրական տվյալները շատ ավելի ամփոփ են և ընդգրկում են բոլոր տիպի դպրոցները: Ըստ այդ տվյալների, մարզում գործել են 345 դպրոցներ 8519 աշակերտներով[259]: 1897-1899թթ. աշակերտության թվաքանակը, ըստ աղյուսակի, պակասում է, բայց պետք է նկատի ունենալ, որ առաջին տարում տրված է միայն պետական դպրոցներում սովորողների թվաքանակը, իսկ հաջորդում՝ հայկական դպրոցները հաշվառված չեն: Իսկ 1900թ. հաշվառված է ընդամենը 108 դպրոց՝ 7311 աշակերտով, որը, մեր կարծիքով, ամբողջական չէ, քանի որ բոլոր նախորդ տարիներին դպրոցների թիվն անցել է 200-ից, իսկ երբեմն էլ՝ 300-ից:

Նույնիսկ այս պակասավոր տվյալներն էլ ցույց են տալիս, որ 1883-1900թթ. կրթական գործը Կարսի մարզում նշանակալի զարգացում է ապրել: Աշակետների թիվը ավելացել է 4720 մարդով, կամ մոտ 3 անգամ:

Մեծ թվով դպրոցներ են գործել Արևելյան Հայաստանի նաև մնացած շրջաններում, սակայն նրանցում սովորող աշակերտների թվաքանակի մասին ամփոփ տվյալներ չունենք: Նշենք միայն, որ Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցում 1900-1901 ուսումնական տարում սովորում էին 588 աշակերտներ, իսկ 13 արական և 3 իգական դպրոցներում՝ մոտ 1300 աշակերտներ[260]: 1880թ. Ախալքալաքում բացվում է ռուսական դպրոց, 1889թ.՝ քաղաքային ուսումնարան: Դեռևս 1836 թվականից Ս.Խաչ եկեղեցուն կից գործում էր հայկական ծխական երկդասյա արական ուսումնարան, որը յուրաքանչյուր տարի ունենում էր

---

[259] РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 136, лл. 23–27.

[260] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 559:

մոտ 140-160 աշակերտ և 4-5 ուսուցիչ: Գավառի 15 գյուղերում 80-ական թվականների վերջերին սովորում էր 1028 աշակերտ, որից իգական սեռի՝ 48-ը[261]:

Բացի բուն Արևելյան Հայաստանից մեծ թվով հայկական դպրոցներ էին գործում Անդրկովկասում և Ռուսական կայսրության այլ վայրերում: 1885թ. Անդրկովկասում կային 270 հայկական դպրոցներ, որից 41-ը իգական էին[262]: 90-ական թվականների կեսերին Անդրկովկասի բոլոր տիպի դպրոցներում սովորում էին մոտ 40 հազար աշակերտներ[263]:

Աշակերտության թվային աճի հետ միասին բարձրանում էր նաև նրա տեսակարար կշիռը բնակչության կազմում: Այսպես, եթե 1880թ. Երևանի նահանգում նրանք կազմում էին բնակչության 0,88, 1890թ.՝ 0,95, ապա 1900թ.՝ արդեն 1,2%-ը: Այդ տոկոսը շատ ավելի արագ էր բարձրանում Կարսի մարզում: 1883թ. աշակերտները կազմել են մարզի բնակչության 1,7, իսկ 1900թ.՝ մոտ 3%-ը: Սովորողների համակարգում փոքր տեսակարար կշիռ ունեին իգական սեռի ներկայացուցիչները: 1900թ. Երևանի նահանգում այն կազմում էր 17,26 և փոքր-ինչ ավելի բարձր՝ 17,8% Կարսի մարզում[264]:

Աշակերտների թվի ավելացումը նպաստում էր նաև բնակչության գրագիտության բարձրացմանը: 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, գրագետ էր Երևանի նահանգի բնակչության (829556 մարդ) 6,4%-ը, իսկ քաղաքայինի 27,4%-ը[265], Կարսի մարզում (290654 մարդ) համապատասխանաբար՝ 10,8 և 38,8%-ը[266]:

---

[261] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ.3999, թթ. 9-11: Լալայան Ե. Երկեր, հ. 1, էջ 127: Տես Մելքոնյան Ա.Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին: Երևան, 2003, էջ 237: Տես նաև Մելքոնյան Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երևան, 2005, էջ 69-70:

[262] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 5, թ.11: Տես Վ.Երկանյան, նշվ. աշխ., էջ 122:

[263] Երկանյան Վ., Հայկական մշակույթը 1800-1917 թթ., Երևան, 1982, էջ 44:

[264] Տես Կիրակոսյան Գ.Լ., Արևելյան Հայաստանի դպրոցների և աշակերտների թվաքանակը XIX դարի 80-90-ական թթ.: ԼՀԳ, 2008, թիվ 2, էջ 37-45:

[265] Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., LXXI, Эриванская губерния, СПб, 1905г.,с.1. Ըստ աղբյուրի՝ 27.2: Քաղաքայինի շարքում են դասվել նաև գավառական կենտրոններ Իգդիրի, Վաղարշապատի և Բաշ-Նորաշենի բնակչությունը (10.814, որից գրագետներ՝ 2772-ը): Համապատասխան պակասեցումներից հետո քաղաքային բնակչությունը կկազմի 81.509 մարդ, որից գրագետ էին 22.328-ը, կամ 27.4%-ը:

[266] Նույն տեղում, LXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900г, с. 1.

Գրագիտության աստիճանն Արևելյան Հայաստանի մի շարք գավառներում ավելի ցածր էր: Այսպես, Զանգեզուրի գավառում՝ 137871 բնակչից գրագետ էին 3593-ը, որը կազմում էր ընդհանուրի 2,6%-ը, Ղազախի գավառում՝ 3,8% (112074 բնակչից 4364-ը)[267]: Շուշիի գավառի 138771 բնակչից գրագետ էին 9654-ը, կամ 6,96%-ը, որն ավելի բարձր է քան Երևանի նահանգի համապատասխան ցուցանիշը: Այդ ցուցանիշը ավելի բարձր էր Ախալքալաքի գավառում, որի 72709 բնակիչներից գրագետ էին 8,3%-ը կամ 6035 մարդ: Համեմատաբար շատ ավելի բարձր էր համանուն քաղաքի բնակչության (5440 մարդ) գրագիտության աստիճանը՝ 42,2%: Բորչալուի գավառում գրագետ էին 128587 մարդուց 9515-ը կամ 7,4%-ը[268]:

Նշենք, որ կայսրությունում նույն տվյալների համաձայն գրագետ էր բնակչության 21,1%-ը, իսկ Անդրկովկասում՝ 12,4%-ը: Ընդ որում գրագիտությունն անհամեմատ ավելի բարձր էր արական սեռի բնակչության շրջանում: Երևանի գավառում այն կազմում էր 10,3%, Կարսի մարզում՝ 18,2%, իսկ գրագետ էին իգական սեռի բնակչության համապատասխանաբար՝ 1,8 և 2,8 տոկոսը[269]:

Գրագիտության տոկոսը խիստ անհամաչափ էր նաև ըստ ազգությունների: Այսպես, Երևանի նահանգում գրագետ էին արական սեռից՝ ռուսների՝ 56,7, հայերի՝ 11,4, թաթարների՝ 3,9 և քրդերի՝ 0,6%, իսկ իգական սեռից՝ ռուսների՝ 18,4, հայերի՝ 2,1, թաթարների՝ 0,3 և քրդերի՝ միայն 0,04 տոկոսը[270]: Իրավիճակը համարյա թե նույնն էր Կարսի մարզում և մնացած գավառներում:

Հետաքրքիր է դիտարկել նաև աշակերտության ազգային և դասային կազմը: Այսպես, ըստ Կովկասի ուսումնական շրջանի 1895թ. հաշվետվության, Երևանի գիմնազիայում 280 սովորողներից 160-ը հայեր էին, 51-ը՝ ռուսներ, 25-ը՝ վրացիներ, 35-ը՝ թաթարներ, մնացածները՝ այլազգիներ: Սովորողներից 173-ը ազնվականական դասից էին, 4-ը՝ հոգևոր, 98-ը՝ քաղաքային զանազան դասերից և 5-ը՝ այլ դասերից: Շուշիի ռեալական ուսում-

---

[267]Первая всеобщая перепись..., LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904 г., с.14-18, 46-49, 56-57.

[268] Նույն տեղում, Тифлисская губерния, СПб, 1905 г., с. 1.

[269] Նույն տեղում, LXXI, Эриванская губерния, с. 9. LXIV, тетрадь I, Карсская область, с.21.

[270] Первая всеобщая перепись..., LXXI, Эриванская губерния, с. XXI.

նարանի 298 սովորողներից 236-ը հայեր էին, մնացածը այլազգիներ: Ազնվականական ծագում ունեին 118-ը, հոգևոր՝ 7-ը, քաղաքացիական դասերից՝ 121-ը, գյուղացիական՝ 45-ը[271]:

1894-95 ուսումնական տարում Կարսի մարզի ութ պետական ուսումնական հաստատություններում 650 սովորողներից (495-ը արական, 155-ը՝ իգական սեռի) 354-ը հայեր էին, 174-ը՝ հույներ, 83-ը՝ ռուսներ, մնացածը այլազգիներ: Ընդ որում հայերը կազմում էին կեսից ավելին՝ 54,46%-ը[272]:

Հարկ է դիտարկել նաև Թիֆլիսի պետական դպրոցներում սովորողների ազգային կազմը, քանի որ նրանցում հայերը նույնպես մեծ թիվ էին կազմում: 1900 թվականին Թիֆլիսի երեք արական գիմնազիաներում և ռեալական ուսումնարանում սովորում էին ընդամենը 2835 աշակերտներ, որից հայեր էին 1020-ը կամ 36%-ը: Երեք իգական գիմնազիաներում սովորում էին 2230 աշակերտուհիներ, որից հայ էին 742-ը կամ 33,27%-ը: Ընդհանուր առմամբ, Թիֆլիսի ութ պետական հաստատությունում սովորում էին 5529 աշակերտ, որից հայ էին 1843-ը կամ ընդհանուրի 33,3%-ը [273]:

Ընդհանուր առմամբ, 1900 թվականին Անդրկովկասի 21 ուսումնական հաստատություններում 4562 սովորողներից 1514-ը հայեր էին, որոնք կազմում էին ընդհանուրի 33,2%-ը[274]: Կայսրության Ժողովրդական լուսավորության նախարարության պահանջով նույն թվականի ապրիլ-մայիսին Կովկասի ուսումնական շրջանում տնօրենների կատարած հաշվառման համաձայն, տարածաշրջանի 40 ուսումնական հաստատություններում 17528 աշակերտներից 4086-ը կամ 23,3%-ը հայեր էին[275]:

Այսպիսով, դարի վերջին տասնամյակներում հայկական դպրոցի պատմության մեջ սկսվեց նոր շրջան: Հակառակ ցարական կառավարության խոչընդոտող քաղաքականությանը, ավե-

---

[271] Հաշվարկները կատարվել են Кавказский календарь на 1896г., отд. V, с. 176 աղբյուրի հիման վրա:
[272] Նույն տեղում, էջ 174:
[273] Հաշվարկները կատարվել են ներքոհիշյալ աղբյուրի տվյալների հիման վրա. ЦГИАГ, ф. 422, оп. 1, д. 6936, л. 37.
[274] ЦГИАГ, ф. 422, оп. 1, д. 6939, лл. 1-55.
[275] Նույն տեղում, ф. 422, оп. 1, д. 6936, л. 37.

լանում էր նրանց քանակը, փոխվում որակը: Ավելանում էր նաև աշակերտության թվաքանակը, դրանով իսկ նրա տեսակարար կշիռը Արևելյան Հայաստանի բնակչության կազմում:

Կրթական այդ բազան չէր կարող բավարարել առկա պահանջները և արևելահայ երիտասարդությունն ուսումը շարունակում էր կայսրության համապատասխան կենտրոններում և արտասահմանում:

XIX դարի 80-ական թվականների կեսերին, «Արծագանքի» տվյալներով՝ մոտ 300 հայ ուսանողներ կային Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում և 200-ը՝ եվրոպական երկրներում[276]: «Ձևավորվում էր ժողովրդի «զարգացած մասը», ժողովրդի մտավոր զորությունը, - նրա ինտելիգենցիան»[277]:

Արևելյան Հայաստանում չգտնելով համապատասխան միջավայր, նրանց մեծ մասը կենտրոնանում էր Անդրկովկասի (Թիֆլիս, Բաքու) և կայսրության (Մոսկվա, Պետերբուրգ) քաղաքներում, որտեղ և հիմնականում ձևավորվում ու գործում էր արևելահայ մտավորականությունը: Այդ երևույթին նպաստում էր նաև նշված վայրերում հայկական գաղթավայրերի առկայությունը:

Հենց սկզբից նշենք, որ, ի տարբերություն բուն ռուսական մտավորականության, որը ձևավորվում էր «գլխավորապես աստիճանավորների, կալվածատերերի, վաճառականների, տերտերների, այսինքն այն դասակարգերի միջավայրից, որոնք կրթությունը դիտում էին որպես կարիերայի միջոց»[278], արևելահայ մտավորականությունն իր կազմով ավելի դեմոկրատական էր: Այդ երևույթը գնալով ավելի էր խորանում (իհարկե, դա նկատվում էր նաև Ռուսաստանում, որտեղ ավելանում էր մտավորականության տեսակարար կշիռը):

Սոցիալական կառուցվածքի մեթոդաբանական ոչ բավարար, վերջնական մշակումն անդրադառնում է նաև մտավորականության տեղի և դերի վրա տվյալ հասարակության մեջ:

---

[276] Արծագանք,1888, թիվ 11:

[277] Րաֆֆի, Երկեր, հ. 9, Երևան, 1964, էջ 473:

[278] Плеханов Г.В., Избранные философские произведения. т.I, М., 1956, с.331.

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում մտավորականությունը տեղ է գրավում բուրժուազիայի և պրոլետարիատի միջակայքում՝ միջին դասերում, մանր բուրժուազիայի հետ միասին և, ի տարբերություն այդ «հին միջինի», անվանվում է «նոր միջին դաս»:

Ժամանակակից սոցիալական, փիլիսոփայական գրականության մեջ գոյություն ունեն «ինտելիգենցիայի» բազմաթիվ բնորոշումներ[279]: Ինչ վերաբերում է նրա ընդգրկման սահմաններին, ապա տարածայնություններն ավելի բազմազան են:

Հենվելով 1897թ. մարդահամարի նյութերի վրա, Լ.Կ.Երմանը Ռուսական կայսրությունում մտավորականության ընդհանուր թիվը հաշվում է 870 հազար մարդ[280]: Սակայն նրա կատարած խմբավորումը համոզեցուցիչ չէ: Ոչ մի տարբերություն չի դրվում մտավորականության և ծառայողների միջև:

Մտավորականության շարքում են հաշվարկվել պետական և դատական մարմիններում վարձով աշխատողները, որոնք մարդահամարում նշված են որպես служители, рассыльные, сторожа: Այդ բոլորի հետևանքով մտավորականության թիվը ինչպես իրավացիորեն գտնում է Վ.Ռ.Լեյկինա–Սվիրսկայան, չի համապատասխանում իրականությանը «ոչ պրոֆիսիոնալ, ոչ սոցիալական և ոչ էլ քանակական առումով»[281]:

Նախախորհրդային շրջանի Արևելյան Հայաստանի մտավորականությանն առ այսօր ոչ մի ամբողջական ուսումնասիրություն նվիրված չէ: Իհարկե, առանձին հեղինակներ այս կամ այն չափով անդրադարձել են նրա առանձին շերտերին, որքանով որ դա առնչվել է իրենց ուսումնասիրած թեմաներին: Դրանում իր «մեղքն» ունի նաև նյութերի ոչ բավարար քանակը: Թերևս միայն 1897թ. մարդահամարն է հնարավորություն տալիս քիչ թե շատ

---

[279] Տես Социология в СССР. М., 1965, с. 394; Кугел С.А., Новая в изучении социальной структуры общества. Ленинград, 1968, с. 23; Семенов В.С., Капитализм и классы. М., 1969, с. 98-115, Карапетян Р.О., Интеллигенция в социальной структуре общества. М., 1974.

[280] Ерман Л.К., Интеллигенция в первой русской революции. М., 1966, сс.11-15.

[281] Лейкина-Свирская В.Р. Интеллигенция в России во второй половине XIX века. М., 1971, с. 15.

ամփոփ պատկերացում կազմել արևելահայ մտավորականության թվաքանակի, մասնագիտական կազմի մասին:

Բնական է, որ Արևելյան Հայաստանում մտավորականությունը չէր կարող մեծաթիվ լինել, նախ այն պարզ պատճառով, որ գաղութային ծայրամաս էր և երկրորդ, բուրժուական հարաբերությունները դեռևս բավարար չափով զարգացած չէին և երրորդ, ինչպես արդեն նշվել է, արևելահայ մտավորականությունը կենտրոնացած էր հիմնականում Թիֆլիսում ու Բաքվում, Մոսկվայում և Պետերբուրգում, որտեղ գործելու ավելի լայն հնարավորություններ կային:

Նյութական արտադրության բնագավառում աշխատող մտավորականությունն ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում փոքրաթիվ էր: Ճիշտ է, XIX դարի վերջին տասնամյակներին, կապված արդյունաբերական վերելքի հետ, նրանց պահանջարկը մեծացավ, բայց Ռուսական կայսրության համապատասխան ուսումնական հաստատությունները հեռու էին այն բավարարելուց, իսկ Արևելյան Հայաստանում չկար ոչ մի տեխնիկական միջնակարգ կամ բարձրագույն հաստատություն: Հայկական տեխնիկական մտավորականության ձևավորման համար նշանակալից դեր խաղացին Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի և կայսրության այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Վ.Կ.Ոսկանյանի հրատարակած արխիվային տվյալների հիման վրա[282] Ա.Կ.Գրիգորյանցի կատարած հաշվարկների համաձայն, մինչհեղափոխական Ռուսաստանի բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատություններում կրթություն են ստացել մոտ երեք հազար հայեր [283]:

Ավելի քան 200 հայեր տեխնիկական բարձրագույն կրթություն են ստացել արտասահմանյան երկրներում[284]: Բնական է, որ այս տվյալներն ամբողջական չեն, և որ շրջանավարտների միայն մի փոքր մասն էր աշխատում Արևելյան Հայաստանում:

---

[282] Восканян В.К. Материалы из украинских архивов.- Известия АН Арм.ССР, 1962г., N3.

[283] Григорянц А.К., Формирование и развитие технической интеллигенции Армении. Ереван, 1966, с.76-77.

[284] Նույն տեղում, էջ 81:

Մարդահամարի տվյալների համաձայն, 1897թ. Արևելյան Հայաստանում կային 21 ինժեներ–տեխնոլոգներ[285], որոնք հիմնականում զբաղված էին պղնձարդյունաբերությունում և որոշ չափով՝ երկաթուղային տրանսպորտում: Տեխնիկական մտավորականության հավանաբար մեծ մասը հաշվարկված է աստիճանավորների խմբում, որը և հնարավորություն չի տալիս պարզելու նրանց կոնկրետ թվաքանակը:

Մեծ չէր նաև առողջապահության բնագավառում զբաղվածների թիվը՝ չնայած պահանջարկը շատ էր, վարձատրությունը՝ բարձր: XIX դարի 80-ական թթ. վերջին (1887թ.) Երևանի նահանգում կար ընդամենը 11 քաղաքային բժիշկ[286], իսկ 90-ական թթ. սկզբին՝ 1891թ., բոլոր մասնագիտությունների գծով ընդամենը՝ 85-ը, նախորդ տարվանից 11-ով ավելի [287], այսինքն՝ մոտ 8 հազարից ավելի բնակչին ընկնում էր մեկ բժիշկ: Մխիթարական չէր վիճակը նաև Ռուսական կայսրությունում: Բժշկական դեպարտամենտի տվյալներով եվրոպական Ռուսաստանում 1890թ. 100 հազար բնակչին բաժին էր հասնում ընդամենը 9 բժիշկ[288]:

1892թ. բժիշկների թիվը մի փոքր ավելանում է, հասնելով 94-ի[289], իսկ 1895թ.՝ նվազում՝ իջնելով 74-ի[290]: Շատ ավելի քիչ էր պետական բժիշկների թիվը: 1893-1896թթ. Երևանի նահանգի գավառներում գործել են ընդամենը 35 գյուղական հաստիքային բժիշկներ, որոնց պահպանման համար պահանջվում էր տարեկան 30 հազար ռուբլի[291]: Դարի վերջին առողջապահության բնագավառում աշխատողների թվաքանակը մեծանում է: 1897թ. Երևանի նահանգում աշխատում էր 217, Կարսի մարզում՝ 145, Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում՝ Ախալքալաքի, Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում՝ 137

---

[285] Первая всеобщая перепись..., Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам. Т.III, СПб, 1905, сс.82,94,96,119,127.

[286] РГИА СПб, ф.1284, оп.223, д.204, л.122.

[287] Նույն տեղում, ֆ.1263, оп.2, д.4938, л.536.

[288] Лейкина-Свирская В.Р. Интеллигенция в России во второй половине XIX века. М., 1971, с. 141. Համեմատության համար նշենք, որ այդ նույն ժամանակ նույնքան բնակչին Անգլիայում ընկնում էր 63,8, իսկ Բելգիայում՝ 45,1 բժիշկ:

[289] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5013, л. 399.

[290] Նույն տեղում, д. 5257, л. 752.

[291] ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 152, մաս 2-րդ, թ. 72:

մարդ[292], ընդամենը՝ 553-ը, իգական սեռին պատկանում էին միայն 117-ը:

Շատ ավելի դժվար էր որոշել լուսավորության բնագավառում աշխատողների թիվը: Ցարական վիճակագրությունը սովորաբար հայկական դպրոցներում աշխատողների մասին տեղեկություններ չի հաղորդում, նույնիսկ նվազեցվում է թե՛ դպրոցների, թե՛ սովորողների թիվը: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր հայկական դպրոց ունեցել է թեկուզ մեկ ուսուցիչ, իսկ իրականում, ինչ խոսք, շատ ավելին էր, ապա նրանց թիվը որոշ տարիների պիտի հասած լիներ 250-300-ի: Ա.Երիցյանը, ելնելով թեմական տեսուչների, մամուլի և Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի տվյալներից, մշակել է և «Արծագանքում» հրատարակել է 1882 թ. վերաբերող մի շարք վիճակագրական տեղեկություններ[293], որոնցից կարելի է կարծիք կազմել ոչ միայն հայկական դպրոցների, աշակերտների, այլև ուսուցիչների թվաքանակի մասին: Տեղեկությունները տրված են ըստ թեմերի, ուստի վերացված են այնպիսիք, որոնք մոտավորապես ընդգրկում են Արևելյան Հայաստանը: Ըստ այդ տեղեկությունների Անդրկովկասի հայկական դպրոցներում 1882 թ. աշխատել են 538 ուսուցիչ, որոնցից 234-ը՝ Արևելյան Հայաստանն ընդգրկող թեմերում: 1894-95 ուսումնական տարում, ըստ էջմիածնի Սինոդի մոտավոր տվյալների, Ղարաբաղի և Երևանի թեմերում աշխատել են 202 ուսուցիչ և 53 ուսուցչուհի[294]: Սա միայն հայկական դպրոցներում, այն էլ՝ ոչ լրիվ տվյալներով: Բայց չէ որ Արևելյան Հայաստանում գոյություն ունեին մուսուլմանական և քիչ թվով հունական և հրեական դպրոցներ: Ճիշտ է, նշված դպրոցներում հիմնականում դասավանդել են նաև եկեղեցականները: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ դպրոցները գտնվում էին կաթողիկոսության ենթակայության տակ և ուսուցիչներն էլ չէին բավարարում:

Դարի վերջին՝ 1897թ., Երևանի նահանգում լուսավորության բնագավառում աշխատում էին 283 տղամարդ և 41 կին, Կարսի մարզում՝ 146 տղամարդ և 29 կին, Զանգեզուրում, Ղազա-

---

[292] Распределения населения по видам главных занятий..., т. III, сс. 82, 84, 96, 119, 127.

[293] Արծագանք ,1882, թիվ 27: Տե՛ս Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 223:

[294] ՀԱԱ, ֆ.56, ց.3, գ.314: Տե՛ս Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 172:

խում, Շուշիում, Բորչալուում և Ախալքալաքում՝ 242-ը, որից 31-ը կին, միասին՝ 741 մարդ: Նշված թվաքանակին հարկ է ավելացնել փակ ուսումնական հաստատություններում աշխատողներին՝ 38-մարդ:

Այսպիսով, առկա տվյալների համաձայն, Արևելյան Հայաստանում կրթության բնագավառում զբաղված էին ընդամենը 779 ինքնագործներ, որից իգական սեռի՝ 101-ը[295]:

Որպեսզի հոգևոր բնագավառում աշխատողների թիվն ամբողջական լինի, հարկ է ավելացնել նաև գիտության, գրականության և արվեստի բնագավառներում աշխատողներին: Ըստ ռուսական առաջին մարդահամարի տվյալների, այդ ասպարեզում աշխատում էին ընդամենը 66 մարդ, որից միայն մեկն էր կին[296]: Մասնավոր իրավաբանական գործունեությամբ զբաղվում էր 61 մարդ[297], որոնց մեծ մասը կենտրոնացված էր նահանգական Երևան քաղաքում: Այսպիսով, թվարկված բնագավառներում աշխատում էին ընդամենը 1459 մարդ, որոնց տեղաբաշխումը, ըստ Արևելյան Հայաստանի վարչական շրջանների, ներկայացված է աղյուսակ թիվ 19-ում:

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման ժամանակ հոգևորականությունը հաշվարկվում է մտավորականության կազմում: Ըստ1897թ. մարդահամարի տվյալների, Արևելյան Հայաստանում հոգևոր դասի ընդհանուր քանակից ինքնուրույն զբաղմունք ունեին (ինքնագործներ էին) 2445-ը: Հոգևորականների կեսից քիչ պակասը՝ մոտ 46%-ը բաժին էր ընկնում Երևանի նահանգին, 19,8%-ը՝ Կարսի մարզին, 12,11%-ը՝ Շուշիի գավառին, իսկ մնացած՝ 22,09%-ը Զանգեզուրի, Ղազախի, Ախալքալաքի և Բորչալուի գավառներին: Հոգևորականները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության (առանց զորքի՝ 1.675.686 մարդ) 0,15%-ը, իսկ ինքնագործների՝ ինքնուրույն զբաղմունք ունեցող բնակչության 0,8%-ը:

---

[295] Первая всеобщая перепись..., Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т.III, СПб, 1905, сс.82, 84, 92, 94, 117, 119, 126-127.

[296] Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и некоторым занятиям, СПб, 1905, с.42.

[297] Распределение населения по видам главных занятий..., лл. 82, 94, 119, 127.

Աղյուսակ թիվ 19[298]

Վարչական միավորներ	Մասնավոր իրավաբան.		Կրթություն		Գիտություն, գրական.,արվեստ		Առողջապահ.	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Երևանի գավառ	27	-	122	27	3	-	55	13
Ալեքսանդրապոլի	6	3	47	10	16	-	45	9
Նախիջևանի	2	-	41	2	1	-	23	13
Նոր Բայազետի	-	-	15	1	-	-	11	3
Սուրմալուի	-	-	9	-	-	-	22	2
Շ.Դարալագյազի	1	-	8	-	-	-	4	-
Էջմիածնի	1	-	41	1	-	-	15	2
Երևանի նահանգ.	37	3	283	41	20	-	175	42
Կարսի օկրուգում	8	-	71	22	17	1	89	10
Արդահանի	-	-	18	3	2	-	10	-
Կաղզվանի	-	-	47	3	2	-	21	1
Օլթիի	-	-	10	1	1	-	14	-
Կարսի մարզում	8	-	146	29	22	1	134	11
Ախալքալաքի գ.	1	-	34	6	-	-	22	2
Բուրչալուի գ.	3	-	33	10	14	-	30	12
Զանգեզուրի գ.	-	-	21	-	-	-	10	3
Ղազախի գ.	2	-	27	4	2	-	16	4
Շուշիի գ.	7	-	96	11	7	-	49	43
Ընդ.Արևելյան	58	3	640	101	65	1	436	117
Հայաստանում	61		741+38*		66		553	

* - փակ ուսումնական հաստատություններում աշխատողների թվաքանակը:

Ընդհանուր առմամբ թվարկված բնագավառներում աշխատող մտավորականության ներկայացուցիչների ընդհանուր քանակը հասնում էր 3904 մարդու, որը կազմում էր Արևելյան Հայաստանի բնակչության (1.675.686 մարդ) 0,23%-ը, իսկ ինքնագործների (299.808 մարդ)՝ 1,30%-ը: Ինչպես այս, այնպես էլ հետագա հաշվարկները կատարվել են առանց զորքի, որն Արևելյան Հայաստանի բնակչության օրգանական մասը չէր կազմում: Արևելյան Հայաստանում, որպես սահմանամերձ շրջան, կենտրոնաց-

[298] Первая всеобщая перепись ..., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, сс. 126-127, LXXIV, Карсская область, СПб, 1900, с. 118-119, Распределение населения по главнейшим сословиям вероисповеданиям, родному языку и некоторым занятиям,..., сс. 30-31, 34-35, 38-39, 42-43, 82-84.

ված էր մեծ թվով զորք՝ 35.536 մարդ, որը կազմում էր բնակչության 2%-ից ավելին, իսկ ինքնագործների՝ 11,85%-ը: Կարսի մարզում զորքը արդեն կազմում էր բնակչության 6,4%-ը, իսկ ինքնագործների՝ 27,24%-ը: Պարզ է, որ զորքի նման թվաքանակի պայմաններում, առանց այն օտարելու հաշվարկներ կատարելիս, չենք կարող ստանալ Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքի օբյեկտիվ պատկերը:

Հոգևորականների քանակը, տեղաբաշխումն ըստ դավանանքի կազմված 1897թ. Ռուսական կայսրության առաջին մարդահամարի տվյալների հիման վրա ներկայացված է թիվ 20 աղյուսակում[299]:

Աղյուսակ թիվ 20

Վարչական միավորները	Հայ գրիգորյան.	Ողղափառ. հոգևորակ.	Այլ դավ. հոգևոր.	Այլ հոգ. սպաս.	Ընդ.
Երևանի գավառ	134	20	71	18	243
Ալեքսանդրապոլի	203	11	10	18	242
Նոր Բայազետի	136	3	15	15	169
Էջմիածնի	164	7	41	7	218
Նախիջևանի	63	2	53	16	134
Սուրմալուի	28	5	20	1	54
Շ.Դարալագյազի	30	2	27	3	62
Ընդ. Երևանի նահ.	758	50	237	78	1123
Կարսի օկրուգում	62	57	88	5	212
Արդահանի	4	24	102	3	133
Կաղզվանի	31	32	25	-	88
Օլթիի	6	10	34	-	50
Ընդ.Կարսի մարզում	103	123	249	8	483
Զանգեզուրի գ.	104	3	56	1	164
Ղազախի գ.	44	2	59	7	113
Շուշիի գ.	161	18	96	21	296
Ախալքալաքի գ.	50	13	17	8	88
Բուրչալուի գ.	62	65	46	6	178
Ընդ.Արևել. Հայաստ.	1282	274	760	129	2445

[299] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. Первая всеобщая перепись... Распределение населения по видам главных занятий..., т.III, СПб, 1905, сс.82-84, 94-95, 118-119, 126-127, LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 1, LXXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900, с. 1, Елисаветпольская губерния, т. LXIII, СПб, 1904, с. 1, Тифлисская губерния, т. LXIX, СПб, 1905, с. 1,

Ի տարբերություն կայսրության մյուս շրջանների, Արևելյան Հայաստանում, հատկապես Կարսի մարզում և Երևանի նահանգում, մեծ չէր նաև վարչական մարմիններում ծառայողների թվաքանակը: Երևանի նահանգում նրանց թվաքանակը հասնում էր 1502, Կարսի մարզում՝ 487 մարդու, մնացած՝ Ախալքալաքի, Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում՝ 1014, միասին՝ Արևելյան Հայաստանում՝ 3261 մարդու[300]: Ծառայողները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության 0,17%-ը, իսկ ինքնագործների մոտ 1%-ը:

Որպեսզի անարտադրողական բնակչության պատկերն ամբողջական լինի, պետք է ավելացնել նաև ռանտյեներին և թոշակառուներին, որոնց թվաքանակն առանց ընտանիքի անդամների, Երևանի նահանգում կազմում էր 2896, իսկ Կարսի մարզում՝ 744 մարդ, այլ անարտադրողական բնակչությունը համապատասխանաբար 3034 և 874 մարդ[301]: Ընդհանուր առմամբ, 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, «Անարտադրողական բնակչությունը զորքի հետ միասին կազմում էր Երևանի նահանգի ինքնագործ բնակչության 13,4 և Կարսի մարզի՝ 31,6%-ը: Ամբողջ անարտադրողական բնակչության հիմնական մասը, Կարսի մարզում ինքնագործների՝ 88,7, իսկ Երևանի նահանգում՝ 63,5%-ը, իրենից ներկայացնում էր պետական-ռազմական ապարատը՝ զորքը և աստիճանավորները: Հոգևորականներն ազատ զբաղմունք ունեցող բնակչության հետ միասին կազմում էին Երևանի նահանգի ինքնագործ բնակչության 8,23 և Կարսի մարզի՝ 3,86%, ռանտյեները, թոշակառուները՝ նշված վարչական միավորների ինքնագործների՝ 8,5%-ը[302]: Ինչպես երևում է բերված թվական տվյալներից, Արևելյան Հայաստանն աչքի էր ընկնում անարտադրողական բնակչության բավական մեծ թվով, սակայն մտավորականությունը քիչ էր՝ չնայած գնալով ավելանում էր նրա թվաքանակը և մեծանում տեսակարար կշիռը:

Այսպիսով, ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, մտավորականությունը, ծառայողների հետ միասին 7.165 մարդ, կազմում էր Արևելյան Հայաստանի բնակչության

---

[300] Распределение населения по видам главных занятий..., т. III, сс.82,94,95,119,127.

[301] Խոջաբեկյան Վ.Ե.,Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 161 (աղյուսակ թիվ 37):

[302] Նույն տեղում:

(առանց զորքի՝ 1.675.686) 0,43%-ը, ինքնագործների՝ (299.808 մարդ) 2,4%-ը: Նշենք, որ Ռուսական կայսրությունում նույն տվյալների հիման վրա Լ.Կ.Երմանի կատարած հաշվարկների համաձայն նրանք կազմում էին ինքնագործ բնակչության 2,7%-ը՝ 870 հազար մարդ [303]:

Ինչպես ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում, մտավորականությունն իր սոցիալական կազմով միատարր չէր, համալրվում էր բնակչության տարբեր դասակարգերից, որի հետևանքով էլ հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները համապատասխան վերափոխումներ էին առաջացնում այդ նոր միջին դասի կազմում, ձևավորելով բուրժուական հասարակությանը հարիր տարբեր հոսանքներ, խմբավորումներ:

---

[101] Ерман Л.К. Интеллигенция в первой русской революции, М., 1966, сс.11-15.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը և զարգացմանը զուգընթաց Արևելյան Հայաստանում ձևավորվում և զարգանում էին այդ հասարակարգին բնորոշ երկու հիմնական դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը, որոնք իրենց գրաված տեղով, խաղացած դերով, սոցիալական դրությամբ ավելի ու ավելի էին տարբերվում ու հեռանում միմյանցից:

Բուրժուազիայի ձեռքում կենտրոնանում էին արտադրության միջոցները, կապիտալը, իսկ բանվորությունը, զրկվելով դրանցից, պահպանում է միայն աշխատուժը՝ դառնալով վարձու աշխատուժ մատակարարողը:

Եվրոպական երկրներում սկզբնական շրջանում բուրժուա նշանակում էր քաղաքի բնակիչ, ընդհանրապես՝ քաղքենի: Հետագայում այդ դասից առանձնացավ մի խավ, որն իր ձեռքում կենտրոնացրեց արտադրության միջոցները, կապիտալը: Բուրժուական դասակարգը ձևավորվեց հիմնականում առևտրականներից, վաշխառուներից, արհեստավորների մի մասից, գյուղական վեր-նախավից, խոշոր հողատերերից:

Բուրժուազիայի ձևավորումը տարբեր երկրներում ընդգրկում է տարբեր ժամանակաշրջաններ՝ սկսած XV դարից: Ռուսաստանում բուրժուազիայի սկզբնավորումը կարելի է համարել XVII դարը, որպես դասակարգ ձևավորվելը՝ XIX դարը, հատկապես դարի երկրորդ կեսը, հետռեֆորմյան շրջանը, իսկ քաղաքական ձևավորումը՝ XX դարի սկիզբը: Ռուսական բուրժուազիայի ձևավորման պատմությանը բազմաթիվ աշխատանքներ են նվիրված[304]: Ցավոք նույնը չի կարելի ասել հայկական և հատ-

---

[304] Ռուսական կայսրությունում բուրժուազիայի ձևավորման, զարգացման առանձնահատկությունների մասին տես Гиндин И.Ф. Русская буржуазия в период капитализма, ее развитие и особенности. – История СССР, 1963, N 2-3; Берлин П.А. Русская буржуазия в старое и новое время. М., 1922; Лященко П.И. История народного хозяйства в СССР, т. II, М., 1956; Рундзюнский П.Р. Городское гражданство дореформенной России, М., 1958; Волков М.Я. Формирование городской буржуазии в России XVII-XVIII вв. -- В книге Города феодальной России, М., 1966 և այլն:

կապես տվյալ դեպքում մեզ հետաքրքրող արևելահայ բուրժուազիայի մասին:

Կայսրությունում, տնտեսական զարգացմանը զուգընթաց, զանազան շրջաններում տարբեր ժամանակ և տարբեր կերպ էր ընթանում բուրժուազիայի ձևավորումը: Այն ավելի վաղ սկսվեց կենտրոնական և արևմտյան շրջաններում ապրող ազգերի՝ ռուսների, լեհերի, ուկրաինացիների, ֆիններ մոտ:

Միջին Ասիայում, Սիբիրում նույնիսկ XX դարում էլ բուրժուազիան, որպես դասակարգ, գոյություն չուներ: Կովկասում և Անդրկովկասում նրա՝ որպես դասակարգ հանդես գալը և քաղաքականապես ձևավորվելը, կարելի է վերագրել XIX դարին, հատկապես դարի վերջին տասնամյակներին և XX դարի սկզբին:

Հայկական գաղթավայրերում առևտրաարդյունաբերական բուրժուազիան վաղ սկսեց ձևավորվել: Ինչպես նշում է Պ.Ս.Լյաշչենկոն. « ... Անդրկովկասում հայկական կապիտալը 19-րդ դարում խաղում էր բավականին ինքնուրույն դեր կապիտալիզմի առաջացման և ձևավորման գործում»[305]: Հետաքրքիր է, որ նույնը դարի 90-ական թվականների սկզբին նշում է նաև «Մուրճը», միաժամանակ մատնացույց անելով առևտրական կապիտալի վերափոխվելը արդյունաբերականի. «Հայ վաճառականական կապիտալիստը մասամբ համոզվեց դառնալ արդյունաբերող կապիտալիստ կամ վաճառական արդյունաբերող: Ներկա րոպեիս մենք ականատես ենք այդ կերպարանափոխությանը՝ այսինքն վաճառականական կապիտալի հոսանքին՝ առևտրականությունից դեպի արդյունաբերությունը»[306]:

Հայկական բուրժուազիան վճռական դեր էր խաղում Բաքվի նավթարդյունաբերությունում: Դարի վերջին հայ կապիտալիստներն առանձին կամ այլ ազգության ներկայացուցիչների հետ շահագործում էին 155 նավթահոր, ռուսներն ու եվրոպացիները՝ 79, մյուսները՝ 61[307]:

1879թ. նավթարդյունաբերությամբ զբաղվում էին 70 հայ ձեռնարկատերեր: Հայերի ձեռքին կենտրոնացված էին 137, հայերի և թուրքերի ձեռքին՝ 15, հայերի և օտարերկրացիների՝ 4,

---

[305] Лященко П.С. История народного хозяйства СССР, т. 2, М., 1956, с. 550.
[306] «Մուրճ», 1891, թիվ 1:
[307] Гулишамбаров Ст. Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, Тифлис, 1880. – Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 72:

եվրոպացիների՝ 132, թուրքերի՝ 2, վրացիների՝ 10 դեսյատին նավթաբեր հողատարածքներ[308]:

XIX դարի վերջին տասնամյակում Բաքվում արտադրված նավթի 2/5-ը պատկանում էր հայ կապիտալիստներին: Հայ կապիտալիստներին էին պատկանում նաև Բաքվի նահանգի առևտրական ձեռնարկությունների 25%-ից ավելին: Բուն քաղաքում 5 հազարից մինչև 50 հազար արժողությամբ սեփականություն ունեցողների 17,5%-ը, իսկ 50 հազար ռուբլուց ավելի ունեցողների 23,4%-ը հայ բուրժուաներ էին: XX դարի սկզբին, ըստ Պիչիկյանի հաշվարկների, Նոբելի ընկերության դրամագլուխը Բաքվում կազմում էր 15 մլն ռ., Ռոտշիլդինը՝ 6 մլն, Մանթաշովինը՝ մոտ 22 մլն, Միրզոյան եղբայրներինը՝ 3 մլն, Եղիազարյանինը՝ 2 մլն, և այլն[309]:

1890թ. Բաթումի նավթի արտահանությամբ զբաղվող 18 ձեռնարկություններից հայերին պատկանում էր 5-ը:

Երկրամասի երկրորդ խոշոր արդյունաբերական կենտրոնում՝ Թիֆլիսում, հայ բուրժուազիան նույնպես գերիշխող էր: Առևտրում, սննդի և ընդհանրապես թեթև արդյունաբերությունում կարևոր դեր էր խաղում հայկական կապիտալը: Խոշոր ձեռնարկատերեր էին Թայիրյանը, Ադիլխանովը, Ալիխանովը, Խուբլարովը, էնֆիաջյանցը, Բոզարջյանցը, Կարապետյանը, Գյոզալյանը, Թամամշևը, Սողոմոնյանը և այլն: 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Թիֆլիսի 9725 առևտրականներից 4727-ը (48,61%) հայեր էին, և ընդամենը 2619-ը (26,93%) վրացիներ, մնացածը՝ այլազգիներ[310]: Հայ խոշոր կապիտալիստները լայն գործունեություն էին ծավալել նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Դոնի Ռոստովում և այլն:

Կապիտալիստական հասարակարգում, ինչպես յուրաքանչյուր դասակարգ, այնպես էլ բուրժուազիան ունի իր ներդասակարգային կառուցվածքը: Այն բաժանվում է երեք հիմնական շերտերի՝ մանր, միջին և խոշոր (ուղղաձիգ բաժանում): Հորի-

---

[308] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, հ. 2, էջմիածին, 1922, էջ 59:

[309] История классовой борьбы в Закавказье, кн. I, Тифлис, 1930, сс. 47, 108-110. – Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 72-73:

[310] Ըստ Ադոնցի՝ հայ առևտրականները կազմել են 43,4%, իսկ վրացիները՝ 26,1%, որը ստույգ չէ: Տե՛ս Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 284:

զոնական դիտարկման ժամանակ նշված երեք շերտերն էլ բաժանվում են գյուղականի և քաղաքայինի: Կապիտալի ներդրման ասպարեզից կախված՝ բուրժուազիան բաժանվում է ֆինանսական, արդյունաբերական և առևտրական խմբերի (առևտրա-արդյունաբերական բուրժուազիա): Բուրժուազիայի ներդասակարգային կառուցվածքում առանձին խումբ է կազմում գյուղատնտեսական բուրժուազիան[311]:

Արևելյան Հայաստանում բուրժուազիայի առաջացումը, ձևավորումը և որպես դասակարգ հանդես գալը, ինչպես և բնակչության սոցիալական կառուցվածքում գրաված տեղն առանձին ուսումնասիրության թեմա է: Բավարարվենք մի քանի փաստեր բերելով:

Դարի 80-ական թվականների վերջին բուրժուազիայի թվաքանակի և ներդասակարգային կառուցվածքի մասին խիստ հետաքրքիր են Երևանի նահանգում և Կարսի մարզում ցարական կառավարության կատարած երկամյա վիճակագրական ուսումնասիրության տվյալները, որոնք հետազոտվել են Ա.Համբարյանի կողմից[312]:

Ըստ նշված տվյալների՝ 10 ճյուղերի 5858 տնտեսական օբյեկտները պատկանում էին մոտ այդքան մարդու: 4220 կապված էին շուկայի հետ: Ընդհանուր քանակում առևտրականները կազմել են 56,06% (3284 մարդ), մնացածը նոր միայն զբաղված են եղել այլ ճյուղերում[313]:

Ելնելով օբյեկտների տնտեսական կարողություններից տերերին կարելի է դասել հիմնականում մանր բուրժուազիայի շարքերը: Հետաքրքիր է նաև նշել, որ 5858-ից 3720-ը գտնվում էր քաղաքներում, մնացածը՝ գավառներում[314]:

---

[311] Մանրամասն տե՛ս Семенов В.С. Капитализм и классы. М., 1969.

[312] Տե՛ս ЦГИАГ, ф.254, оп.3, д.2231, "Журнал генеральной поверки торговых и промышленных заведений Эриванской губернии в 1888г.", д.2230, "Журнал генеральной поверки торговых и промышленных заведений в Карсской области в 1888г.". - Ա.Ս.Համբարյան, Արևելյան Հայաստանում բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման հարցի շուրջ (XIX դարի 80-ական թթ. վերջ): - ՊԲՀ, 1981, թիվ 1, էջ 79-86:

[313] Նույն տեղում, էջ 83:

[314] Տե՛ս ЦГИАГ, ф.254, оп.3, д.2231, "Журнал генеральной поверки торговых и промышленных заведений Эриванской губернии в 1888г.", д.2230, "Журнал генеральной поверки торговых и промышленных заведений в Карсской области в 1888г.". Ա.Ս.Համբարյան, նշվ. աշխ., էջ 84:

Դարի վերջին բուրժուազիայի թվաքանակի և ներդասակարգային կառուցվածքի վերաբերյալ ամփոփ և ամբողջական տվյալներ են տալիս 1897թ. մարդահամարի տվյալները:

Ըստ Մ.Ա.Ադոնցի հաշվարկների՝ Հայաստանի ներկա տարածքում՝ 1897թ. առևտրականները ընտանիքի անդամների հետ միասին կազմել են 17,5 հազար մարդ, ձեռնարկատերերը՝ 3,5 հազար մարդ (ընտանիքի անդամների հետ միասին): 63,2 հազար առևտրաարդյունաբերական բնակչությունից 21 հազարը կազմում էր բուրժուազիան, ընդ որում՝ 4 հազարը խոշոր բուրժուազիան[315]:

Հայաստանում արդյունաբերական և առևտրական կապիտալի խոշոր ներկայացուցիչներ էին Մելիք Ազարյանը, Փարսադանովը, Ղարագյոզովը, Ստեփանովը, Աֆրիկյանը, Գյոգալովը, Ջանփոլադյանը, Իսահակյանցը, Հարությունյանցը և այլն[316]:

Արևելյան Հայաստանում հիմնականում գործում էր գյուղատնտեսական մանր բուրժուազիան մանր էր: Ըստ 1897թ. մարդահամարի՝ եղած 10 հազարից ավելի կալվածատերերի մեծ մասը սեփական տնտեսություն չէին վարում և գերադասում էր իր ունեցած հողատարածքները վարձակալությամբ հանձնել համեմատաբար ունևոր գյուղացիներին:

Ա. Համբարյանի հաշվարկների համաձայն՝ 1894թ. կալվածատիրական հողատարածքների 79,8%-ը վարձակալվել էր գյուղացիների կամ այլ անձանց կողմից և միայն 20,2%-ն էր օգտագործվում սեփական կարիքների համար[317]: Խոշոր կալվածատերեր էին Մելիք Աղամալովը՝ 4897 դեսյատին, Եգոր Թարումովը՝ 2748 դեսյատին, Քելբալիխանովը՝ 1800 դեսյատին, Ա.Կանանբեկովը՝ 1887 դեսյատին, Սուլթան Ֆաթիհ խանը՝ 1267 դեսյատին, Պողոս Անտոնովը՝ 1200 դեսյատին:

Ընդհանուր առմամբ մոտ քսան կալվածատերեր ունեին 1000 դեսյատինից ավելի հողատարածքներ և մոտ քսանն էլ՝ մինչև 1000 դեսյատին:

---

[315] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, с. 518.

[316] Բարսեղյան Խ.Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հ. I, Երևան, 1967, էջ 55:

[317] Амбарян А. С. Развитие капиталистических отношений в армянской деревне (1860-1920), Ереван, 1959, с. 51.

Երևանի նահանգի չորս գավառների բեկերի և մուլքադարների 1894թ. ունեցած հողատարածքների և դրանց օգտագործման մասին հետաքրքիր տվյալներ է հավաքել վիճակագրական կոմիտեի ժամանակի աշխատողներից մեկը, որոնք մշակվել են Մ. Ադոնցի կողմից[318]: Ըստ այդ հաշվարկների՝ Երևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի և էջմիածնի գավառների 499 կալվածատերեր իրենց ունեցած 28.194 դեսյատին պիտանի հողատարածքներից 22.524-ը հանձնել են վարձակալության և միայն 5.670 դեսյատինն է օգտագործվել նրանց կողմից:

Խոշոր հողատարածքներ էին կենտրոնանում նաև հարընտացած գյուղացիների ձեռքին: Նշված երևույթը դարի վերջին տասնամյակներին նկատելի էր Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքում, հատկապես այն տարածքներում, որոնք ընդգրկվել էին ապրանքային արտադրության ոլորտում: Նշենք միայն մեկ փաստ. Բորչալուի գավառում գյուղացիներից մեկն իր ձեռքում էր կենտրոնացրել 2 հազար դեսյատին հողատարածք, որից 400-ը՝ պիտանի, 1600-ը՝ արոտավայր[319]:

Գյուղատնտեսությունում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը հանգեցնում էր գյուղացիության դասի քայքայմանը, բնակչության սոցիալական կառուցվածքում նոր դասակարգերի՝ գյուղատնտեսական բուրժուազիայի և գյուղատնտեսական պրոլետարիատի կազմավորմանը: Արևելյան Հայաստանում գյուղատնտեսական բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչը կուլակությունն էր: Իր ձեռքում նոր հողատարածքներ կենտրոնացնելուն զուգընթաց՝ առաջացող դասակարգն սկսում էր օգտագործել նաև վարձու աշխատուժ:

1897թ. մարդահամարի համապատասխան տվյալների հիման վրա կազմված թիվ 21 աղյուսակը[320] հստակ պատկերացում

---

[318] Сборник статистических данных ... - Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, с. 303.

[319] Район Тифлисско – Карсско - Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях. Исслед. Аргутинского-Долгорукого А. М., Бочкарева В. П. и Даниловича Р. И., Тифлис, 1897, с. 58.

[320] Первая всеобщая перепись населения Российской империи. 1897г., т. LXXI, Эриванская губерния, СПб, 1905, сс. 4-5; т. LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, сс. 4-5; т. LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, сс. 6-7; т. LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, сс. 4-5. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 79, Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 138:

է տալիս Արևելյան Հայաստանում (առանց Ախալքալաքի գավառի) բուրժուականացող տնտեսությունների թվաքանակի և տեղաբաշխման մասին: Չխորանալով հարցի էության մեջ՝ նշենք, որ երկարաժամկետ վարձու աշխատուժ Արևելյան Հայաստանի 208.776 գյուղական տնտեսություններից օգտագործում էր միայն 7147-ը կամ ընդհանուրի ընդամենը 3,42 %-ը:

Աղյուսակ թիվ 21

Երկարաժամկետ աշխատողներ, ծառաներ օգտագործող տնտեսությունների թվաքանակը և տեղաբաշխումը Արևելյան Հայաստանում:

Վարչական շրջանները	Տնտեսությունների թիվը	Վարձու աշխ. օգտ. թիվը	Տոկոսը
Երևանի գավառ	17.774	927	5,21
Էջմիածնի գավառ	17.463	892	5,11
Շարուր-Դարալագյազի գավառ	11.161	369	3,31
Նախիջևանի գավառ	15.060	447	2,97
Սուրմալուի գավառ	12.521	259	2,07
Նոր Բայազետի գավառ	13.127	246	1,87
Ալեքսանդրապոլի գավառ	16.189	249	1,54
Ընդ. Երևանի նահանգում	103.295[321]	3.389	3,28
Կաղզվանի օկրուգ	6.149	372	6,05
Կարսի օկրուգ	14.580	930	6,38
Արդահանի օկրուգ	8.021	355	4,43
Օլթիի օկրուգ	4.609	111	2,41
Ընդամենը Կարսի մարզում	33.359	1.768	5,30
Բորչալուի գավառ	16.578	949	5,72
Ղազախի գավառ	14.371	441	3,07
Շուշիի գավառ	19.132	369	1,93
Զանգեզուրի գավառ	22.041	231	1,05
Ընդամենը Արևելյան Հայաստանում	208.776	7.147	3,42

[321] Երևանի նահանգի գյուղական տնտեսությունների թիվը՝ նշված 101.422 (Эриванская губерния, с. 4), ճիշտ չէ: Դրան պետք է ավելացնել Սուրմալուի գավառի Իգդիր, Շարուր-Դարալագյազի՝ Բաշ Նորուշեն, էջմիածնի Վաղարշապատ կենտրոնների տնտեսությունների (637, 168, 1068) գումարը, որոնք հաշվարկվել են քաղաքային տնտեսությունների թվում:

Նշենք նաև, որ նահանգում վարձու աշխատուժ օգտագործող տնտեսությունների վերաբերյալ հաշվարկներ է կատարել նաև Մ.Եգանյանը, որը թույլ է տվել մի շարք սխալներ: Տես նրա Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, էջ 138:

Ռուսաստանում, ինչպես և Արևելյան Հայաստանում, տընտեսական զարգացումն ուներ իր առանձնահատկությունները, որոնք չէին կարող չանդրադառնալ երկու երկրների բնակչության սոցիալական կառուցվածքի, այդ թվում՝ բուրժուազիայի կառուցվածքի վրա: Բուրժուազիայի և պրոլետարիատի կողքին գոյություն ուներ գյուղացիություն, ազնվականություն: Նունն էր նաև Արևելյան Հայաստանում, որտեղ կապիտալիստական և մինչկապիտալիստական արտադրաձևերի, արտադրահարաբերությունների խառնակությունը, անցումային ձևերը բավական դժվարացնում, բարդացնում են բնակչության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրումը:

Նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը դարի վերջին տվել էր բավականին մեծ արդյունքներ, բայց երևույթը դեռ հեռու էր ավարտված լինելուց: Թե՛ Ռուսաստանում, թե՛ Արևելյան Հայաստանում դեռևս շատ մեծաքանակ էր մանր և միջին բուրժուազիան, մեծ էր նրա տեսակարար կշիռը բնակչության սոցիալական կառուցվածքում: Հայկական խոշոր կապիտալը, ինչպես նշվեց, կենտրոնացած էր հիմնականում Թիֆլիսում, Բաքվում, ինչպես և բուն Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում՝ Մոսկվա, Պետերբուրգ և այլն: Հենց նշված արդյունաբերական կենտրոններում էլ ձևավորվել և գործում էր հայկական խոշոր բուրժուազիան:

Կապիտալիստական հասարակության երկրորդ հիմնական դասակարգը, ինչպես նշվեց, պրոլետարիատն է, որին ևս հատուկ է իր ներդասակարգային կառուցվածքը: Այն նախ և առաջ բաժանվում է երկու խմբերի՝ արդյունաբերական և գյուղատնտեսական: Արդյունաբերական պրոլետարիատը ևս բաժանվում է ֆաբրիկա-գործարանայինի (որը համարվում է հիմնականը, իսկ զարգացման մակարդակով՝ առաջատարը) և լեռնաարդյունաբերականի, այսինքն՝ վերամշակող և արդյունահանող արդյունաբերությունում աշխատող բանվորների:

Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ ճյուղերում (տրանսպորտ, կապ, շինարարություն, կենցաղ և այլն) աշխատող բանվորական ջոկատները բաժանվում են քաղաքայինի և գյուղականի (հորիզոնական բաժանում):

Հետևելով վերոհիշյալին՝ փորձենք տալ արդյունաբերական պրոլետարիատի տեղը և ներդասակարգային կազմը Արևել-

յան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում 19-րդ դարի 80-90-ական թվականներին:

Կապիտալիստական հարաբերությունների ծագումն ու զարգացումը, բնական է, նաև արդյունաբերական բանվորության կազմավորումը, սկսվել էր դեռևս նախորդ տասնամյակներին, բայց նրա՝ որպես ինքնուրույն դասակարգի ձևավորվելը, իր դասակարգային շահերի գիտակցումը առավել ցայտուն դրսևորվեց 80-90-ական թվականներից: Այն փոխվում էր քանակապես, մանավանդ որակապես և սկսվում էր վերածվել հասարակության առաջատար ուժի:

Արդյունաբերության զարգացման աստիճանականությունը (մանր ապրանքային, մանուֆակտուրային, մեքենայացված, գործարանային արդյունաբերության) բնորոշ էր նաև Արևելյան Հայաստանին: Բայց արդյունաբերության ոչ բոլոր ճյուղերում էր նշված աստիճանական զարգացումն ավարտվել, ուստի Արևելյան Հայաստանում կողքկողքի գոյություն ունեին մանր ապրանքային, մանուֆակտուրային և մեքենայական արտադրության զարգացման աստիճանին հասած ձեռնարկություններ: Այդ բոլորը չէր կարող իր կնիքը չթողնել արդյունաբերական բանվորության ներդասակարգային կառուցվածքի վրա[322]:

Կարծում ենք սխալվում էր Ս.Կասյանը, երբ գրում էր. «Հայաստանը, լինելով ռուսական կապիտալիզմի գաղութ, ամբողջովին ենթարկված լինելով առևտրական կապիտալի պաուպերիզացիայի հետադիմական պրոցեսին, իսկ Անդրկովկասի օազիսային կապիտալիզմն ունենալով որպես «օղանցք», զերծ էր մնացել կապիտալիզացիայի և պրոլետարիզացիայի առաջադիմական պրոցեսից»[323] և որ «Հայաստանը չունի խոշոր արդյունագործություն ... նա չունի հետևաբար սոցիալական այն հակոտնյա կատեգորիաները, որոնք հատուկ են արտադրության այդ եղանակին - կապիտալիստական բուրժուազիա և պրոլետարիատ»[324]: Բայց ահա թե ինչ է գրել դրանից առաջ Ս. Շահումյանը. «Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների

---

[322] Այդ մասին տես Симонян А.Г. Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX, в начале XX вв., Ереван, 1995, с. 25.

[323] Կասյան Ս., Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923, էջ 31:

[324] Նույն տեղում, էջ 31:

ընթացքում, մուտք գործեց և մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա:

Մենք ունենք խոշոր արդյունագործություն: Մենք ունենք արդյունագործական կենտրոններ, որոնք ավելի նման են ժամանակակից եվրոպական կենտրոններին, քան իրենք իրենց, ինչպես նրանք գոյություն ունեին սրանից մի 10-15 տարի առաջ: Մենք ունենք արդեն այդ քաղաքներում բուրժուազիա և պրոլետարիատ, իսկական եվրոպական իմաստով»[325] (ընդգծումը հեղինակինն է): Հարկավ այստեղ որոշ չափազանցություն կա:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում բանվորության կազմավորման և ձևավորման հիմնական նախապայմանը գյուղացիության քայքայումն ու հողազրկումն էր, որը հետևանք էր գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցմանը՝ ապրանքային հողագործության զարգացմանը:

Ագրարային հարաբերական գերբնակեցվածության, սակավահողության հետևանքով գյուղացիության քայքայման գործընթացն Արևելյան Հայաստանում ընթանում էր շատ ավելի արագ, քան կապիտալիզմի զարգացումը:

Կրելով որակական խոր փոփոխություններ՝ գյուղացիությունը ֆեոդալական հասարակարգին բնորոշ ներամփոփ «դասդասակարգից», վերափոխվում էր արդեն կապիտալիստական հասարակությանը բնորոշ դասակարգերի: Նրա «մեծամասնությունը զրկվում է հողից ու արտադրության միջոցներից, ստվարացնում պրոլետարիատի շարքերը և մարդկային նյութ մատակարարում խոշոր կապիտալիստական արդյունագործությանը»[326]:

Բացի սակավահողությունից՝ գյուղացիության քայքայման և բանվոր դասակարգի շարքերի համալրման գործում էական դեր էր խաղում հարկային լծի ծանրացումը: XIX դարի 80-90-ական թվականներին անուղղակի հարկերը ռուսական կայսրությունում ավելացել են մոտ երկու անգամ: Արևելյան Հայաստանում, ըստ Մ.Ադոնցի, գյուղացիությունը մոտ տասն անգամ ավելի էր հարկվում, քան բուն Ռուսաստանում[327]:

---

[325] Շահումյան Ս., Երկեր, հատ. 1, Երևան, 1975, էջ 152-153:
[326] Նույն տեղում, էջ 153:
[327] Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968, էջ 99:

1900թ. Երևանի նահանգից գանձվել էր արդեն 1.225.417 ռուբլի հարկ, միայն նախորդ տարվա համեմատ ավելանալով 1624 ռուբլով[328]: Նույնիսկ Երևանի նահանգապետն էր նշում, որ գնալով գյուղացիության դրությունը ծանրանում է, սակավահող և անհող գյուղացիության քանակը՝ ավելանում[329]:

Ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, որոնցում բանվորությունը կազմավորվեց հիմնականում (քայքայված գյուղացիության հետ մեկտեղ) քաղաքային մանր արտադրողների ունեզրկման հիման վրա, Արևելյան Հայաստանում, ինչպես Ռուսաստանում, նրա կազմավորման հիմքը հանդիսացավ քայքայված գյուղացիությունը: Դրանով էլ պայմանավորված էր Ռուսաստանում և Արևելյան Հայաստանում, ի հակադրություն նշված երկրների, պրոլետարիատի և գյուղացիության կապերի համեմատաբար ամրությունը:

19-րդ դարի 80-ական և հատկապես 90-ական թթ. Արևելյան Հայաստանում շարունակվում էր բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությունում ընդգրկվելու երևույթը, որը զարգացող արդյունաբերությանն աշխատուժ մատակարարելուց, պրոլետարիատի շարքերը ստվարացնելուց բացի, ուներ նաև առաջադիմական նշանակություն:

Հողագործական և հատկապես ոչ հողագործական արտագնացությունը կատարվում էր ոչ միայն Արևելյան Հայաստանի սահմաններում, այլև, շատ ավելի մեծ թվաքանակով, երկրի սահմաններից դուրս՝ մեծ մասամբ Թիֆլիս և Բաքու: Արտագնացությունը մեծ էր հատկապես երկրի լեռնային շրջաններից, որոնցում սակավահողությունն ավելի էր արտահայտված: 19-րդ դարի 80-ական թվականներին արտագնացությունը դեռևս քիչ էր տարածված:

Սակայն 90-ական թվականներին ավելանում է ոչ միայն արտագնա աշխատանքի մեկնողների քանակը, այլև երևույթն ընդգրկում է նոր շրջաններ: Արտագնացությունը «մեր նոր կյանքի՝ տնտեսական կյանքի ծնունդն է, - գրում է «Մուրճը», - աշունն սկսվելուն պես, երբ գյուղական ծանր աշխատանքը վերջացած է լինում, մեծ քանակությամբ արհեստավորներ ճանապարհվում են

---

[328] РГИА СПб, ф. 1282, оп. 3, д. 529, л. 12.
[329] РГИА СПб, ф. 1282, оп. 1, д. 163, лл. 6-8.

դեպի մեծ կենտրոնները, իրենց համար գործ գտնելու»[330]: Ըստ ժամանակի ուսումնասիրողներից մեկի՝ Երևանի նահանգի գյուղերից արտագնացության էր մեկնում աշխատունակ տղամարդկանց 10%-ից մինչև 1/2-ը[331]:

80-ական թթ. կեսերին Զանգեզուրից արտագնացության էր դիմել աշխատանքային տարիքի տղամարդ բնակչության 28-30%-ը[332]: 90-ական թվականներին այդ տոկոսը շատ ավելի էր: Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներից 1898թ. արտագնացության էին մեկնել 5236, իսկ Նոր Բայազետի գավառից՝ 1247 մարդ[333]: Արտագնացության էին մեկնում նաև Ալեքսանդրապոլի գավառից, Կարսի մարզից[334]:

Դարի վերջին այդ երևույթն արդեն լայն թափ էր ստացել: 1898թ., ըստ Երևանի նահանգապետի, արտագնա աշխատանքի էր մեկնել շուրջ 20.000 մարդ[335]:

Իհարկե պաշտոնական այս տվյալները վերջնական չեն, քանի որ վերաբերում են միայն այն անձանց, որոնք մեկնել են անձնագրերով, իսկ շատերը մեկնում էին գյուղի ավագի վկայականներով և նույնիսկ առանց դրանց[336]:

Ոչ հողագործական արտագնացության հիմնական ուղղությունները, ըստ Մ.Ա.Ադոնցի, հետևյալներն էին. դեպի Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքները, ինչպես նաև Ղափանի և Ալավերդու պղնձաարդյունաբերական շրջանները, իսկ Արևելյան Հայաստանից դուրս՝ Բաքու, Թիֆլիս և Անդրկովկասի արդյունաբերական այլ կենտրոններ[337]: Արտագնացների մի մասն էլ տեղափոխվում էր Մերձկասպյան շրջաններ, ռուսական կայսրության այլ վայրեր և նույնիսկ այլ երկրներ:

---

[330] Մուրճ, 1899, թիվ 11:

[331] Заваров С. Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, с. 284.

[332] Бадалян А. Население Армении со времен присоединения ее к России и до наших дней. - «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1953, թիվ 5, էջ 60:

[333] Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թիվ 8, էջ 25:

[334] Заваров С., նշվ. աշխ., էջ 286:

[335] Обзор Эриванской губернии за 1898 г., с. 8.

[336] Բաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

[337] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении в XIX веке. Ереван, 1957, с. 513.

Արտագնացության մեկնողների մի մասն այլևս չէր վերադառնում գյուղ, կտրվում էր գյուղատնտեսությունից՝ վերածվելով բանվորների, իսկ մեծ մասը պահպանում էր գյուղի հետ կապերը՝ ծնունդ տալով «հողաբաժնով բանվորների»: Դրանք «բանվոր-գյուղացիներ» էին, որոնց տնտեսական կյանքում գյուղը դեռևս էական նշանակություն ուներ:

Գյուղացիության քայքայումը, արտագնացությունը պրոլետարիատի կազմավորման հիմնական, բայց ոչ միակ աղբյուրն էր: Արևելահայ պրոլետարիատի շարքերը համալրում էր նաև ունեզրկվող արհեստավորությունը:

Այդ երևույթը սկսվել էր շատ ավելի վաղուց, բայց ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, երկրորդական նշանակություն ուներ: Կապիտալիզմի թույլ զարգացածության հետևանքով արհեստավորությունը դեռևս պահպանում էր իր տնտեսական նշանակությունը[338]: Ըստ Ա.Համբարյանի հաշվարկների՝ 1888թ. Երևանի նահանգում դեռևս գործում էին 1062 արհեստագործական ձեռնարկություններ[339]:

Նշենք, որ արտադրության զարգացումը, գործարանային աստիճանին հասնելը չի պայմանավորում պարտադիր ձևով արհեստագործության բոլոր ճյուղերի քայքայումը, վերացումը: Նույնիսկ զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում արհեստագործական շատ ճյուղեր պահպանում են իրենց նշանակությունը, առաջանում են նորերը:

Նույնը նկատվում էր նաև Արևելյան Հայաստանում: Ամեն դեպքում, արհեստավորների որոշ մասը հարկադրված էր թողնել «... իր մշտական արհեստը և վարձվել իբրև հասարակ բանվոր քաղաքներում ...»[340]:

Պրոլետարիատի շարքերը համալրելու գործում որոշակի դեր է խաղում նաև բանվորական ընտանիքների բնական աճը:

Բանվորական ընտանիքների վերարտադրությունը նոր էր երկրամասում և բանվոր դասակարգի թվաքանակի ավելացման գործում երկրորդական դեր էր խաղում:

---

[338] Այդ մասին մանրամասն տես Գ.Ռ.Առաքելյանի «Արևելյան Հայաստանի արդյունագործությունը 19-րդ դարի երկրորդ կեսին» աշխատությունը:

[339] Համբարյան Ա., Համբարյան Ս., Արևելահայաստանում բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման հարցի շուրջ: ԼՀԳ, 1981, թիվ 1, էջ 84:

[340] «Մշակ», 1898, թիվ 213:

Հետաքրքիր է նշել, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ուրալի բանվորների 80%-ից ավելին, Պետերբուրգի, Մոսկվայի, Ուկրաինայի արդյունաբերական շրջանների մի շարք ճյուղերում 30-60% կազմում էին բանվորական ընտանիքներից սերվածները[341]:

Ի տարբերություն զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների՝ Արևելյան Հայաստանում բանվոր դասակարգի համալրման գործում աննշան էր նաև կանանց դերը:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ արդյունաբերությունում, տրանսպորտում և առևտրում զբաղված կին բանվորները Կովկասում կազմել են ընդհանուրի ընդամենը 3,6%-ը, Երևանի նահանգի և Կարսի մարզի արդյունաբերական բանվորների մոտ 2%-ը[342]:

Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի համալրման գործում էական էր անչափահասների դերը: Չնայած դարի 80-ական թվականներին ցարական կառավարությունն անչափահասների աշխատանքային գործունեությունը կարգավորելու նպատակով մի շարք օրենքներ հրապարակեց (ընդ որում մինչև 12 տարեկան երեխաներին արգելվում էր աշխատել), սակայն նրանց տեսակարար կշիռը բանվոր դասակարգի ընդհանուր թվաքանակում գնալով ավելանում էր: Անչափահասների անհամեմատ էժան աշխատուժն արդյունաբերական և ոչ արդյունաբերական ճյուղերում օգտագործվել է ոչ միատեսակ: Այդ մասին բավականին՝ ճշգրիտ և ամփոփ տեղեկություններ են տալիս մարդահամարի նյութերը[343]:

Նշենք սակայն, որ ինչպես ամբողջ բանվորների թվաքանակն է այդտեղ նվազեցված, այնպես էլ՝ անչափահասներինը: Էլ ավելի նվազեցված է գյուղատնտեսության բնագավառում աշխատող անչափահասների քանակը, քանի որ մարդահամարն անցկացվել է ձմռանը, իսկ անչափահասների աշխատանքը նշված ճյուղում հիմնականում օգտագործվում էր գարնանը, ամռանը և հատկապես աշնանը՝ բերքահավաքների ժամանակ: Անդրկովկա-

---

[341] Рашин А.Г. Состав фабрично-заводского пролетариата СССР. М., 1930, сс. 19-22.

[342] Первая всеобщая перепись ..., Численность и состав рабочих в России, т. I, СПб, 1906, сс. 108-109, 118-119.

[343] Տե՛ս Численность и состав рабочих в России, т. I, СПб, 1906; т II, СПб, 1906.

սում և հատկապես Արևելյան Հայաստանում անչափահասների աշխատուժի օգտագործումը և ընդհանրապես բանվորների սեռատարիքային կազմն առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրել են Ա.Սիմոնյանը, Ս.Հակոբյանը[344]:

Ըստ Ա.Սիմոնյանի (1897թ. մարդահամարի նյութերի հիման վրա) կատարած հաշվարկների՝ Անդրկովկասի բանվորների ընդհանուր թվաքանակում (առանց օրավարձուների, սևագործների և ծառաների) կանայք կազմել են ընդամենը 2,7%, ռուսական կայսրությունում՝ 20,2%:

Ի տարբերություն կանանց, անչափահասների աշխատուժն Անդրկովկասում օգտագործվել է շատ ավելի լայնորեն, քան ռուսական կայսրությունում: Երկրամասի բանվորների 3,8%-ը կազմել են մինչև 12 տարեկան երեխաները, 4,4% -ը՝ 13 - 14 տարեկանները, 7,5% -ը՝ 15-16 տարեկանները (առանց սևագործների, ժամանակավորների, ծառաների և գյուղատնտեսական բանվորների), ռուսական կայսրությունում համապատասխանաբար՝ 1,3%, 3,9% և 7,5%[345]: Մինչև 17 տարեկան բանվորները ռուսական կայսրությունում կազմել են ընդհանուրի 12,7%-ը, իսկ Անդրկովկասում 15,7%-ը: Անչափահասների աշխատուժն էլ ավելի լայնորեն էր օգտագործվում Արևելյան Հայաստանում: Ըստ մարդահամարի նշված նյութերի՝ Ս.Հակոբյանի կատարած հաշվարկների, Երևանի նահանգի 4375 արդյունաբերական բանվորներից 12 և ցածր տարիք ունեցողները կազմել են 3,68%, 13 - 14 տարեկանները՝ 6,1%, 15 - 16 տարեկանները՝ 9,37%, միասին 19,1%՝[346] ռուսական կայսրության համապատասխան ցուցանիշը գերազանցելով 6,4% - ով, Անդրկովկասինը՝ 3,4% - ով:

Կարսի մարզում անչափահասների աշխատուժը համեմատաբար քիչ է օգտագործվել: Հաշվարկված 1050 բանվորներից 12 և ցածր տարիք ունեցողները կազմել են 1,7%, 13-14

---

[344] Տե՛ս Симонян А.Г. Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX – начале XX вв., Ереван, 1995, сс. 51-56. Հակոբյան Ս.Ս., Բանվոր դասակարգի կազմավորումը Արևելյան Հայաստանում (1861– 1914թթ.), Երևան, 1998, էջ 55-75, ատենախոսություն:

[345] Численность и состав рабочих в России ... т. I, с. VIII - X, XVI, таб. I, сс. 4-93, Приложение с. 2-9; то же т. II, сс 80-85, 90-99, 107, 113, 124-131, 134-139. См. Симонян А.Г., նշվ. աշխ., էջ 52:

[346] Հակոբյան Ս.Ս., նշվ. աշխ., էջ 58:

տարեկանները՝ 3,12%, 15 -16 տարեկանները՝ 7,56%, միասին՝ 12,38%[347]:

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում՝ Ախալքալաքի, Զանգեզուրի, Ղազախի, Բորչալուի և Շուշիի գավառներում, անչափահասների աշխատուժի օգտագործման վերաբերյալ ամփոփ, ամբողջական տվյալներ չունենք: Այստեղ բավարարվենք միայն նշելով, որ ոչ արդյունաբերական, գյուղատնտեսության և այլ ճյուղերում անչափահասների աշխատուժը թե՛ Երևանի նահանգում, թե՛ Կարսի մարզում էլ ավելի լայնորեն էր օգտագործվում: Բանվորության շարքերի համալրման թվարկված ներքին այս աղբյուրներից բացի գոյություն ուներ նաև արտաքինը: Այլ երկրներից՝ հատկապես Թուրքիայից (հիմնականում Արևմտյան Հայաստանից) և Պարսկաստանից սեզոնային կամ մշտական աշխատելու էին գալիս բազմաթիվ մարդիկ:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Երևանի նահանգի բանվորներից և տնային ծառայողներից 5061-ն այլ վայրերից էին, որի 43,9%-ը (2222 մարդ)՝ Թուրքիայից, իսկ 30,0%-ը (1563 մարդ)՝ ոչ եվրոպական երկրներից (հիմնականում Պարսկաստանից) էին: Բաքվի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգներից, Քութայիսի և Կարսի մարզերից եկածները կազմում էին 11,7% (592 մարդ), ռուսական կայսրության այլ վայրերից՝ 7,6% (386 մարդ), իսկ եվրոպական երկրներից՝ 5,9% (հիմնականում Իտալիայից և Ավստրո-Հունգարիայից՝ 298 մարդ): Եկածների մեծ մասը տղամարդիկ էին, կանայք կազմում էին ընդամենը 5,4%[348]:

Մի փոքր ավելի մեծ էր Կարսի մարզում այլ տեղերից աշխատողների թվաքանակը՝ 5862 մարդ, որոնց կեսից ավելին՝ 62,6%-ը Թուրքիայից էին: Դրանք մեծ մասամբ ազգությամբ հայեր էին, որոնք, չդիմանալով Արևմտյան Հայաստանում (ինչպես նաև այլ շրջաններում) իրենց դեմ կիրառվող բիրտ ու վայրագ քաղաքականությանը, հարստահարումներին, շարունակ կրկնվող կոտորածներին, թողնելով հարազատ վայրերը, տեղափոխ-

---

[347] Նույն տեղում:

[348] Հաշվարկները կատարված են "Распределение рабочих и прислуги по группам занятий и по месту рождения на основании данных первой всеобщей переписи населения Российской империи 28 января 1897 г." (СПб, 1905, сс. 36-49) աղբյուրի տվյալների հիման վրա:

վում էին Կարսի մարզ, այդտեղից էլ որոշ մասը՝ Ռուսական կայսրության այլ շրջանները:

Մեծ էր նաև Անդրկովկասի թվարկված վարչական շրջաններից եկածների թվաքանակը՝ 2908 մարդ կամ 24,9%: Ոչ եվրոպական երկրներից (հիմնականում Պարսկաստանից) եկածները կազմում էին 7,6%, իսկ Ռուսական կայսրության այլ վայրերից 4,8%, (համապատասխանաբար 445 և 281 մարդ): Կանայք կազմում էին 5,4%[349]: Մարդահամարի նյութերը հնարավորություն չեն տալիս Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում աշխատող օտարահպատակների թվաքանակը որոշել: Այսպիսով, Երևանի նահանգում և Կարսի մարզում այն կազմում էր 10.923 մարդ:

Հետաքրքիր է նշել, որ Երևանի նահանգից Անդրկովկասի սահմաններում աշխատում էր 5090 մարդ, որից 20%-ը՝ Կարսի մարզում, Կարսի մարզից՝ ընդամենը 333, որից 24%-ը՝ Երևանի նահանգում[350]: Որպեսզի վերջնականապես որոշվի բանվորության տեղն Արևելյան Հայաստանի բնակչության կազմում, նախ և առաջ անհրաժեշտ է ճշտել նրա թվաքանակը, ներդասակարգային կազմը: Այնինչ, այդ հարցերում ուսումնասիրողների շրջանում միասնություն չկա: Այսպես Օ.Վ.Թումանյանը 19-րդ դարի վերջին ներկա Հայաստանի տարածքում հաշվարկել է մինչև 6 հազար բանվոր[351]:

Մ.Ա.Ադոնցը, հենվելով 1897թ. մարդահամարի նյութերի վրա, նույն տարածքում հաշվել է 25 հազար արդյունաբերական պրոլետարներ և կիսապրոլետարներ[352]: Ծ. Պ. Աղայանը գտնում է, որ միայն Երևանի նահանգում բանվոր դասակարգի թիվն անցնում էր 10 հազարից[353], ըստ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության՝ 13 հազարից[354]: Ըստ Վ. Խ. Հովակիմյանի՝ բանվոր դասակարգի թվաքանակը նույն ժամանակա-

---

[349] Հաշվարկները կատարված են "Распределение рабочих и прислуг по группам занятий ...",сс. 36-49 աղբյուրի տվյալների հիման վրա:

[350] Симонян А.Р. Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX – начале XX вв., Ереван, 1995, с. 42.

[351] Туманян О.Е. Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, с. 196.

[352] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, с. 519.

[353] Агаян Ц.П. К вопросу о формировании рабочего класса в Закавказье. «Պատմա-բանասիրական հանդես», 1974, թիվ 3, էջ 65:

[354] Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 75:

շրջանում անցնում էր 15 հազարից (Կարսի մարզում և Երևանի նահանգում)[355]: Ինչպես երևում է, բերված թվական տվյալները խիստ տարբերվում են, որոնք արդյունք են նախ և առաջ տարբեր սկզբնաղբյուրների, և երկրորդ՝ տարբեր տարածքային ընդգրկումների:

Վերջին շրջանում ևս հրապարակվել են այդ հարցին նվիրված ուշագրավ ուսումնասիրություններ: Այսպես, ըստ Ա.Սիմոնյանի՝ Արևելյան Հայաստանում պրոլետարիատի քանակը կազմում էր 1895թ. 16.334, 1905թ.՝ 22.432, իսկ 1910թ.՝ 28.512 մարդ, բայց այդ տվյալները թերի են, - գրում է հեղինակը, - որովհետև չեն ընդգրկում Զանգեզուրի, Իջևան-Շամշադինի և Լոռու գավառի վերամշակող արդյունաբերության մեջ եղած բանվորների քանակը: Նրանք չեն ընդգրկում նաև առևտրի ու սպասարկման ոլորտներում զբաղված բանվորների, ինչպես և երկրի արծաթ-կապարի, ցինկի, մկնդեղի, քարածխի և այլ բնագավառներում աշխատող բանվորների թիվը[356]:

Ավելի, ուշ լույս տեսած մի այլ աշխատությունում Ա.Սիմոնյանը 1897թ. մարդահամարի տվյալների հիման վրա Երևանի նահանգում հաշվարկել է 17,6, իսկ Կարսի մարզում՝ 7,9 հազար բանվոր, ներկա Հայաստանի տարածքում XX դ. սկզբին, համաձայնվելով այլ ուսումնասիրողների հետ, 15916 հազար բանվոր (առանց գյուղատնտեսականի)[357]:

Մարդահամարի նյութերի հիման վրա Ս.Հակոբյանը 1897թ. Երևանի նահանգի և Կարսի մարզի արդյունաբերական բանվորների թիվը (օրավարձու, սեզագործ, սպասավորներ) հաշվարկել է 16.838 մարդ, իսկ արդյունաբերական և ոչ արդյունաբերական ոլորտների վարձու բանվորների թիվը՝ 29.548 մարդ[358]: Փաստորեն նշված հաշվարկներից դուրս են մնացել Արևելյան Հայաստանի մաս կազմող Ախալքալաքի, Բորչալուի, Ղազախի, Շուշիի և Զանգեզուրի գավառների բանվորները: Հեղինակը ևս իրավացիորեն նշում է, որ բանվորների քանակին վերաբերող

---

[355] Հովակիմյան Վ.Խ., Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում, Երևան, 1984, էջ 22:

[356] Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 65:

[357] Симонян А.Г. Рабочие Закавказья ..., сс. 37-38.

[358] Հակոբյան Ա.Ս., Բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում, Երևան, 1998, էջ 53 (ատենախոսություն):

թվային տվյալները վերջնական չեն և «հարցը դեռևս մանրազնին ուսումնասիրության և հիմնավոր հետազոտության կարիք ունի»[359]:

Արևելյան Հայաստանի բանվորության թվաքանակը որոշելուն մեծ չափով խանգարում են նաև ցարական վիճակագրությանը հատուկ թերություններն ու բացթողումները:

Անդրադառնալով ֆաբրիկա-գործարանային վիճակագրությանը՝ ուսումնասիրողներից մեկը նշել է, որ այն «մինչև այժմ հին, զուտ մինչ ռեֆորմյան ձևով է կազմակերպված, լինելով նահանգապետական հաշվետվությունների հասարակ կցորդը: «Ֆաբրիկա ու գործարան» հասկացության ոչ մի ստույգ բնորոշում չկա[360]: Նշված գնահատականին համերաշխել են համարյա թե բոլոր ուսումնասիրողները: Այդ վիճակը վերացնելու նպատակով ցարական կառավարության 1895թ. հունիսի 7-ի շրջաբերականով «գործարանների և ֆաբրիկաների» թվում ցուցակագրման ենթակա ճանաչվեցին այն բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք ունեն առնվազն 15 բանվոր, հավասարապես նաև նրանք, որոնց բանվորների թիվը 15-ից պակաս էր, բայց ունեն շոգեկաթսա, շոգեմեքենա կամ այլ մեխանիկական շարժիչներ ու մեքենաներ, կամ գործարանային ու ֆաբրիկային հարմարանքներ:

Դարի վերջին ընդունվեց նոր օրենք, որի համաձայն այդ խմբում էին դասվում 20 բանվոր ունեցող ձեռնարկությունները, որը սակայն սկսեց կիրառվել միայն 1901 թվականից[361]: Վարչական տարբեր հաստատությունների, նույնիսկ միևնույն հաստատության կողմից տարբեր ժամկետներում և ոչ միասնական պլանով հավաքած վիճակագրական տվյալները դառնում են անհամեմատելի: Գործարանատերերի տեղեկություններում բանվորների թիվն ու արտադրության գումարները նկատելի չափերով նվազեցվում են: 1897թ. մարդահամարի տվյալները, մնալով կարևոր աղբյուր, ևս մեղանչում են բանվորների թվի զգալի նվազեցմամբ՝ եզրակացնում են ուսումնասիրողները, նույնիսկ այդ նյութերը հրապարակողները:

---

[359] Նույն տեղում, էջ 54:

[360] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ.3, էջ 574:

[361] Տես Массовые источники по социально-экономической истории России периода капитализма. М., 1979, с. 169.

Ահա թե ինչու Արևելյան Հայաստանի բանվորության թվաքանակը որոշելիս հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել աղբյուրների մատնանշված թերություններին: Միևնույն ժամանակ, որպեսզի հնարավոր լինի եղած տվյալները համադրել և հետևել նրա աճի դինամիկային, անհրաժեշտ ենք համարում այն դիտարկել ըստ արտադրության ճյուղերի:

19-րդ դարի 80-90-ական թվականներին Արևելյան Հայաստանի ֆաբրիկա-գործարանային բանվորությունը հիմնականում կենտրոնացված էր պղնձարդյունաբերությունում, որում առավել ցայտուն էր արտահայտված կապիտալիստական հարաբերությունների զարգացումը (մեքենայացված արտադրություն, համեմատաբար մեծ թվով բանվորների առկայություն և այլն): Պղնձարդյունաբերությունը զարգանում էր բավական արագ տեմպերով և արդեն դարի վերջին երկրորդ տեղն էր գրավում ռուսական կայսրությունում[362]:

1880-1890 թթ. ռուսական կայսրությունում պղնձարդյունաբերական ոչ մի շրջան չի ապրել այնպիսի վերելք, ինչպես Կովկասը: Պղնձարդյունաբերական այնպիսի հիմնական շրջան, ինչպիսին Ուրալն էր, նշված տասնամյակում ունեցել է ընդամենը 40% աճ, իսկ Կովկասը՝ 350% (37.000-ից՝ 139.300 փութ)[363]:

Շատ ավելին էր պղնձի արտադրության աճը Արևելյան Հայաստանում՝ 480%: Ռուսական կայսրությունում, ամբողջությամբ վերցրած, նշված տասնամյակում պղնձարդյունաբերությունն աճել է ընդամենը 1,6 անգամ (211,5-ից մինչև 349,5 հազար փութ): Պղնձարդյունաբերության վերելքը շարունակվեց նաև 90-ական թվականներին: 1891-1900 թթ. Արևելյան Հայաստանում պղնձի արտադրությունը 25,3 հազարից հասավ 83,5 հազար փթի[364], ավելացավ մոտ 3,3 անգամ: Նման աճ չի ունեցել ոչ Անդրկովկասը (1,8 անգամ) և ո՛չ էլ Ռուսաստանը (1,5 անգամ):

---

[362] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 58:

[363] Брейтерман А.Д. Медная промышленность России и мировой рынок, ч. II, Л., 1926, с. 90; Туманян О.Э. Экономическое развитие Армении, ч. I, Е., 1954, с. 187-188.

[364] Գրականության մեջ ընդունված է 71,5 հազար փութ: Մ.Ա. Ադոնց, նշվ. աշխ., էջ 418, Մ.Գ. Կասպարով, նշվ. աշխ., աղ. 5, Մ.Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 194: Ըստ "Ведомости медеплавильных заводов за 1900г." գործել են ոչ թե 6, այլ 8 գործարան, որոնք արտադրել են 83,5 հազար փութ պղինձ: Տե՛ս ЦГИАГ, оп. 1, кн. 2, д. 3120, сс. 7, 10, 12, 15, 18, 20, 24, 31, 36, 40, 42, 51-52.

Ընդհանուր առմամբ 1880-1900 թթ. պղնձի արտադրությունը Արևելյան Հայաստանում աճեց մոտ 15,5 անգամ:

19-րդ դ. 90-ական թվականներից սկսած՝ էական փոփոխություններ են կատարվում Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերությունում: Փակվում են որոշ մանր ձեռնարկություններ, բացվում են նորերը: Գնալով ուժեղանում է արտադրության կենտրոնացումը:

Պղնձարդյունաբերության զարգացմանն ու կենտրոնացմանը համընթաց, վերջնականապես ձևավորվում է արտադրության այդ ճյուղի բանվորական ջոկատը, որը կազմում էր Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի առաջավոր մասը: Ի տարբերություն արտադրության մյուս ճյուղերում աշխատողների՝ բանվորական այս ջոկատն աչքի էր ընկնում նաև իր համախմբվածությամբ ու զարգացման համեմատաբար բարձր մակարդակով:

Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորական ջոկատը միանգամից չկազմավորվեց: Այն ունի իր նախապատմությունը: Դեռևս 18-րդ դ. 60 - ական թվականներին Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի գործարաններին ամրակցվեցին 32 հայկական գյուղեր (ավելի քան 7000 մարդ): Յուրաքանչյուր գյուղացի պարտավոր էր տարվա ընթացքում մեկ ամիս աշխատել գործարաններում ու հանքերում[365]:

Զանգեզուրի լեռնաարդյունաբերական շրջանում հարկադրական աշխատանքը տարածում չգտավ, և հենց սկզբից էլ կիրառվեց վարձու աշխատանք: Սկզբնական շրջանում վարձվածները հիմնականում Թուրքիայից գաղթած հույն պղնձարդյունաբերողներն էին, որոնք Արևելյան Հայաստան էին եկել դեռևս 18-րդ դարի 60-ական թվականներին (մոտ երկու հազար հույն): 1880-ական թվականներին, կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացման հետևանքով, նրանց մեծ մասը զրկվել էր արտադրության միջոցներից և վերածվել վարձու բանվորների:

Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորների կազմը համալրվում էր նաև գյուղացիության հաշվին, որը քայքայվում ու զրկվում էր արտադրության միջոցներից, «ստվարաց-

---

[365] Каспарова М.Г. Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Е., 1961, с.161.

նում պրոլետարիատի շարքերը և մարդկային նյութ մատակարարում խոշոր կապիտալիստական արդյունագործությանը»[366]:

Գյուղից նոր դուրս եկած, գյուղական աշխատանքներից նոր կտրված բանվորները, բնականաբար, չէին կարող ունենալ անհրաժեշտ որակավորում: Այդ մասին շատ հաճախ կարելի է բողոքների հանդիպել Կովկասի լեռնային վարչության ամենամյա հաշվետվություններում:

Որպես բացառություն՝ հիշատակվում է միայն Ալավերդու գործարանը, որն ապահովված է եղել համապատասխան որակավորում ունեցող բանվորներով[367]:

Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորները հիմնականում կենտրոնացված էին Սյունիքի և Ալավերդու համեմատաբար ավելի խոշոր գործարաններում:

Դարի 80-90-ական թվականներին գործարանների, դրանցում աշխատող բանվորների, արտադրված պղնձի և ընդհանրապես կատարված քանակական փոփոխությունների մասին կարելի է պատկերացում կազմել թիվ 22 աղյուսակի տվյալներից[368], որոնք սակայն չեն ընդգրկում ամբողջ Արևելյան Հայաստանը:

---

[366] Շահումյան Ստ., Երկեր, հ.1, Երևան, 1974, էջ 153:

[367] ЦГИАГ, ф.12, оп.1, д.3158, л.33.

[368] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. ЦГИАГ, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1030, лл. 15, 17, 43, 45-47, 49, 192-194; Кавказский календарь на 1883 г., отд. 1, сс. 192-194; Там же на 1886 г., отд. III, с. 220; Там же на 1887 г., с. 135; ЦГИА ГР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 5737, лл. 4, 9-10, 19, 88-89, 94-97; Сборник статистических сведений о горнозаводской промышленности России (далее "Сборник") в 1886 году, СПб, 1888 г., сс. 152-153; "Сборник" в 1887 г., СПб, 1890, сс. 148-149; "Сборник" в 1888 г., СПб, 1891, сс. 170-173; "Сборник" в 1889 г., СПб, ч. II, 1892, сс. 10-11; "Сборник" в 1890 г., СПб, 1892, сс. 138-139; "Сборник" в 1891 г., СПб, 1893, сс. 154-155; "Сборник" в 1892 г., СПб, 1895, сс. 170-171; "Сборник" в 1893 г., СПб, 1896, сс. 178-179; "Сборник" в 1894 г., СПб, 1896, сс. 200-203; "Сборник" в 1895 г., СПб, 1897, сс. 192-195; "Сборник" в 1896 г., СПб, 1899, сс. 212-215; "Сборник" в 1897 г., СПб, 1899, сс. 196-199; "Сборник" в 1898 г., СПб, 1900, сс. 196-197; "Сборник" в 1899 г., СПб, 1901, сс. 200-201; "Сборник" в 1900 г., СПб, 1903, сс. 212-215; ЦГИА ГР, ф. 264, оп. 1, кн. 2, д. 3120, лл. 7-51. Տե՛ս նաև Կիրակոսյան Գ., Արևելյան Հայաստանի լեռնաարդյունաբերությունը և նրանում զբաղված բանվորների թվաքանակը (XIX դ. 80-90-ական թվականներ), ԼՀԳ, 1984, թ.8, էջ 52: Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, էջ 249: Ըստ Ա.Սիմոնյանի՝1888թ.՝ 505, 1893թ.՝ 426, 1894թ.՝ 377 բանվոր: Նույն տեղում, աղյուսակ թիվ 2:

Աղյուսակ թիվ 22

Թվական-ներ	Գործ. քանակը	Պղնձի քան.(փուք)	Բանվորների քանակը			Տոկոս-ներով
			հիմն.	օժանդ.	ընդհ.	
1880[369]	9	5.361	315	78	393	100
1881	6	7.309	-	-	358	91,1
1882	5	5.224	-	-	-	-
1883	4	5.005	-	-	286	72,8
1884	4	5.255	-	-	301	76,6
1885	5	8.588	374	103	477	121,4
1886	6	9.366	412	98	510	129,8
1887[370]	8	18.186	404	135	539	137,2
1888	8	27.585	366	109	475	120,9
1899	7	27.572	125	78	203	51,7
1890	8	26.156	151	80	231	58,8
1891	9	25.307	160	160	320	81,4
1892[371]	8	30.572	186	83	269	68,5
1893	8	41.387	288	134	422	107,4
1894[372]	8	46.247	175	198	373	94,9
1895	9	42.348	214	197	411	104,6
1896[373]	6	32.624	213	105	318	80,9
1897[374]	8	39.067	226	183	409	104,1
1898	8	35.164	203	54	257	65,4
1899	6	29.160	198	22	220	56,0
1900	8	83.531	243	63	306	77,9

[369] Հալիծորի և Ուզուրչայի գործարանների բանվորների արխիվում նշված քանակն անհավանական է (տես ЦГИАГ, ф. 264, оп.1, кн. 1, д.1030, лл.45-47): Ուստի վերցված են "Кавказский календарь"-ի համապատասխան տարվա տվյալները՝ 16 և 65 բանվորներ:

[370] Այլ տվյալներով՝ 668 հիմնական և 188 օժանդակ բանվորներ, ընդամենը՝ 856 բանվոր: Պղնձի արտադրությունը՝ 18.013 փուք : Տես ЦГИАГ, ф. 264, оп.1, ч. 1, д.1542, лл. 14-15, 27-29, 37-39, 246-247.

[371] Այլ տվյալներով՝ արտադրված պղինձը կազմել է 32.158 փուք: ЦГИАГ, ф. 264, оп.1, ч. 1, д. 2037, л. 64.

[372] Այլ տվյալներով՝ արտադրված պղինձը կազմել է 45.141 փուք: ЦГИАГ, ф. 264, оп. 1, ч. 1, д. 2171, лл. 67-68.

[373] Այլ տվյալներով՝ արտադրված պղինձը կազմել է 32.537 փուք: ЦГИАГ, ф. 264, оп. 1, ч. 1, д. 2385, лл. 4-98:

[374] Այլ տվյալներով՝ 226 հիմնական և 183 օժանդակ բանվոր, ընդամենը 409: Տես ЦГИАГ, ф. 264, оп. 1, ч. 1 ,д. 2460, лл. 18-75.

Ինչպես երևում է թիվ 22 աղյուսակից, արտադրության նշված ճյուղում աշխատող բանվորների քանակական փոփոխություններն առանձին շեղումներով հանդերձ, ուղիղ համեմատական են պղնձարտադրության աճին: 1882–1884թթ. պղնձի արտադրությունն Արևելյան Հայաստանում 1880թ. համեմատությամբ նվազել է: Նվազել է նաև բանվորների թվաքանակը՝ 393-ից հասնելով 301-ի: 1885թ. պղնձի արտադրությունը, ինչպես նաև բանվորների թվաքանակն ավելացել է 1888թ. հասնելով 475-ի:

1889թ. բանվորների թվաքանակը, մեզ անհայտ պատճառով, կրճատվել է մոտ կիսով չափ (49,3%-ով): 1880թ. մակարդակը գերազանցվել է միայն 1893թ.՝ 422 բանվոր: 1897թ. Ալավերդու շրջանի գործարաններն անցնում են «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերության» ձեռքը: Ընկերությունը ձեռնամուխ է լինում դրանց տեխնիկական վերակառուցմանը, որի հետևանքով նվազում է թե՛ պղնձի արտադրությունը և թե՛ բանվորների թվաքանակը: Գործարանների տեխնիկական վերափոխումներն ավարտվում են հիմնականում 1900թ. կեսերին, որից հետո պղնձի արտադրությունը Արևելյան Հայաստանում կտրուկ բարձրանում է: Ավելանում է նաև բանվորների թվաքանակը, և 1880թ. մակարդակը 1901թ. գերազանցում է 51,9%-ով (597 բանվոր):

Էլ ավելի մեծ թվով բանվորներ էին աշխատում Արևելյան Հայաստանի պղնձահանքերում: Պղնձահանքեր կային Ալավերդիում, Շամլուղում (Թիֆլիսի նահանգ), Դիլիջանում, Հալիձորում, Ղաթարում, Ուզուրչայում, Լազարևում (Ելիսավետպոլի նահանգ), Սիսմադանում (Երևանի նահանգ): Հետագայում՝ XX դ. սկզբին պղնձի հանքեր հայտնաբերվեցին Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի Թեմիր Մաղարա, Նախիջևանի գավառի Շաքար-Դարա և Կարսի մարզի Ղաբան գյուղի մոտ:

Արևելյան Հայաստանում գործող հնագույն և կարևոր հանքավայրերից էր Ախթալան, որը պատկանում էր Լորիս - Մելիքովներին: Հանքերի շահագործման իրավունքը նրանք ստացել են դեռևս 1846թ.[375]: 1886թ. Լորիս - Մելիքովները 150 հազար ռուբլով հանքերի շահագործման իրենց իրավունքը զիջեցին ֆրան-

[375] ԱՐԻԱՐ, ֆ..264, оп. 1, д.143, лл. 3-4.

սահպատակ է. Թիերին[376], իսկ 1887թ. այդ հանքերը, 131 դեսյատին ընդհանուր տարածությամբ, դարձան նույն այդ թվականին կազմակերպված ֆրանսիական «Ախթալայի հանքերի ընկերության» սեփականությունը[377]: 1817թ. Ալավերդուց մոտ 20 կմ հյուսիս-արևմուտք իշխան Արղութինսկի-Երկայնաբազուկի կալվածքում՝ Շամլուղում, հայտնաբերված պղնձի հանքերը 1887թ. Ալավերդու հանքերի հետ ևս դարձան նորաստեղծ ֆրանսիական ընկերության սեփականությունը[378]: Տաս տարի անց՝ 1897թ., այդ հանքերը և կից գործարաններն անցան ֆրանսիական մեկ այլ, ավելի հզոր՝ «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերության» տնօրինությանը:

Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության երկրորդ խոշոր կենտրոնի՝ Զանգեզուրի հանքերի ինտենսիվ շահագործումը սկսվեց XIX դ. 80-ական թվականներից: Դարավերջի երկու տասնամյակներին նշված շրջանում գործում էին Ղաթարի, Կավարտի, Թեյի, Հալիձորի, Ուզուրչայի, Բարաբաթումի, Լազարևի և Աթկիզի հանքավայրերը: Զանգեզուրում գոյություն ունեին ևս մի քանի այլ հանքավայրեր, որոնք նշանակալից դեր չէին խաղում:

Սակայն հարկ է նշել, որ հանքերի հարստացման տեխնոլոգիան դեռևս գտնվում էր ցածր մակարդակի վրա, տեխնիկական զինվածությունը բավարար չէր: Հանքավայրերը և հումքն օգտագործվում էին անխնա: Ավելին, Ալավերդու և Շամլուղի «հանքերի շահագործումը կատարվում էր գիշատիչ ձևով»[379]: Դրությունն այդպիսին էր նաև մնացած հանքավայրերում:

Արևելյան Հայաստանի հանքավայրերի և հանքանյութի հանույթի մասին պատկերացում է տալիս թիվ 23 աղյուսակը[380]:

---

[376] Մելքումյան Բ.Գ., Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն, Երևան, 1972, էջ 64:

[377] РГИА СПб, ф. 37, оп. 24, д. 533, л. 394.

[378] Նույն տեղում:

[379] Гулишамбаров С. Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, с. 57.

[380] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. "Сборник" в 1888 г., СПб, 1890, с. 144; "Сборник" в 1888 г., СПб, 1891, сс. 165-166; "Сборник" в 1889 г., СПб, 1892, с. 7; "Сборник" в 1890 г., СПб, 1892, с. 135; "Сборник" в 1891 г., СПб, 1893, с. 151; "Сборник" в 1892 г., СПб, 1895, с. 167; "Сборник" в 1893 г., СПб, 1896, сс. 176-179; "Сборник" в 1894 г., СПб, 1896, сс. 198-199; "Сборник" в 1895 г., СПб, 1897, сс. 190-191; "Сборник" в 1896 г., СПб, 1899, сс. 210-211; "Сборник" в 1897 г., СПб, 1899, сс. 194-195; "Сборник" в 1898 г., СПб, 1900, с. 193; "Сборник" в 1899 г., СПб, 1901, с. 199; "Сборник" в 1900 г., СПб, 1903, сс. 210-211.

Աղյուսակ թիվ 23

Պղնձի հանքաքարի հանույթն Արևելյան Հայաստանում ըստ տարիների (փթերով)

Գործող հանքերը[381]	1887թ.		1888թ.		1889թ.		1890թ.		1891թ.	
	հոց-ոտ	ժամը-ոտ-ցոտկ	հոց-ոտ	ժամը-ոտ-ցոտկ	հոց-ոտ	ժամը-ոտ-ցոտկ	հոց-ոտ	ժամը-ոտ-ցոտկ	հոց-ոտ	ժամը-ոտ-ցոտկ
Ալավերդու	2	14.790	2	56.640	2	101.940	1	147.174	1	127.140
Շամլուղի	2	540	2	300	2	600	1	3.090	1	1.251
Սիսմադանի	-	-	1	135	1	6.870	3	3.240	2	128.391
Դիլիջանի	1	13.692	1	10.043	1	14.058	1	9.400	1	7.716
Ղաքարի	3	63.371	5	46.898	3	99.691	8	84.210	9	68.965
Կավարտ-Ուզուրչայի	3	74.660	2	62.315	8	38.200	4	35.010	4	44.634
Աքկիզի	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լազարևի	1	13.416	3	39.245	3	37.407	3	31.915	2	23.796
Հալիծորի	2	23.472	4	40.874	3	45.484	2	28.236	2	52.062
Թեյի	2	1000	2	200	2	1.700	2	200	1	100
Ընդամենը	19	.230.171	22	256.650	25	345.950	25	364.177	23	456.218

[381] 1887թ. գործել են նաև Ախթալայի երեք հանքավայրեր, որոնց հանույթը կազմել է 25.230 փութ, 1890թ.՝ Անտոնիևի, Բարաբաքումի, Արալխ-Կաբիրի (5)՝ 21.702 փութ, 1891թ. Բարաբաքումի (2)՝ 2.163 փութ, 1893թ. Անտոնիևի՝ 1.380 փութ, 1897թ. Դսեղի՝ 100 փութ: Այս տվյալներն ավելացված են համապատասխան տարիների ընդհանուր գումարին:

Աղյուսակ թիվ 23 (շարունակություն)

Պղնձի հանքաքարի հանույթն Արևելյան Հայաստանում ըստ տարիների (փթերով)

Գործող հանքերը	1892թ.		1893թ.		1894թ.		1895թ.		1896թ.	
	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ
Ալավերդու	1	200.196	1	206.280	1	280.020	1	149.860.	1	147.260
Շամլուղի	1	120	1	14.009	1	100		-	-	-
Սիսմադանի	1	4.260	2	10.320	2	16.055	1	300	1	180
Դիլիջանի	2	11.190	2	6.388	1	4.320	1	2.270	1	4.100
Ղաքարի	6	67.675	7	107.458	9	101.166	6	110.205	5	136.852
Կավարտ-Ուզուրչայի	2	40.894	4	98.592	4	77.038	5	56.210	3	57.650
Աթկիզի	-	-	2	1.600	2	500	2	1.932	1	100
Լազարևի	4	30.925	3	31.492	3	24.613	2	15.911	3	23.289
Հալիձորի	2	49.267	2	44.847	3	45.766	2	51.418	2	38.449
Թեյի	-	-	-	-	-	-	-	-		-
Ընդամենը	19	404.527	24	522.366	26	549.578	20	388.106	17	407.881

Պղնձի հանքաքարի հանույթն Արևելյան Հայաստանում ըստ տարիների (փթերով)

Գործող հանքերը	1897թ.		1898թ.		1899թ.		1900թ.	
	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ	հոդ-ած	ժամդ-ած-դրամ
Ալավերդու	1	152.500	1	23.025	1	707.037	1	536.458
Շամլուղի	1	100	1	5.000	1	41.298	-	6.650
Սիսմաղանի	1	14.570	2	8.460	2	480	1	-
Դիլիջանի	1	1.060	-	-	1	15	1	-
Ղաքարի	9	185.152	5	55.721	5	142.403	5	113.233
Կավարտ-Ուզուրչայի	5	61.956	3	51.681	3	45.627	3	90.727
Աքկիզի	1	135	-	-	-	-	1	-
Լազարևի	4	45.842	3	20.804	-	-	3	-
Հալիձորի	3	55.413	3	41.600	3	27.602	2	21.898
Թեյի	-	-	2	4.120	-	-	-	-
Ընդամենը	26	516.728	20	210.411	16	964.462	17	768.966

Ինչպես երևում է թիվ 23 աղյուսակից, 1887-1888 թթ. ավելի շատ պղնձի հանքաքար արդյունահանվել է Ղաթարի հանքավայրերում: 1888թ. սկսած՝ ֆրանսիական ընկերության ներդրած կապիտալների և տեխնիկական զինվածությունը բարձրացնելու հետևանքով Ալավերդու հանքավայրերի արտադրողականությունը կտրուկ բարձրանում է. դրանք արդեն 1889թ. շատ ավելի արտադրանք են տալիս, քան Ղաթարինը: Ալավերդու հանքավայրերի արտադրողականության վերելքը շարունակվեց նաև հաջորդ տարիներին և, 1887թ. համեմատությամբ, 1900թ. ավելացավ մոտ 36,6 անգամ:

Նշված շրջանում ավելացավ նաև Ղաթարի հանքերի արտադրողականությունը (1,6 անգամ), բայց հանույթի բացարձակ քանակով չհասավ Ալավերդու հանքավայրերին:

Խոշորագույններից էին նաև Կավարտ - Ուզուրչայի, Լազարևի և Դիլիջանի հանքավայրերը, որոնց արտադրանքը, սակայն, հետզհետե նվազում էր: Ընդհանուր առմամբ, 1887–1900թթ. Արևելյան Հայաստանում պղնձի հանքաքարի հանույթն աճում է մոտ երեք անգամ: Դրան նպաստում էր նաև ցարական կառավարության հովանավորող քաղաքականությունը (լեռնային դեպարտամենտը տարեցտարի ընդլայնում էր հետախուզական աշխատանքները, մեծացնում այդ բնագավառում ներդրվող գումարները)[382]:

Արտադրության ընդլայնման հետ մեկտեղ ավելանում էր նաև հանքերում աշխատող բանվորների թվաքանակը: Այսպես, օրինակ, Զանգեզուրի շրջանում առաջնակարգ տեղ գրավող Ղաթարի հանքերում 1887թ. աշխատում էր ընդամենը 95 բանվոր, 1893թ.՝ 470, 1897թ.՝ 370, իսկ արդեն 1901թ.՝ 612 բանվոր[383]:

Այսպիսով, տասներեք տարվա ընթացքում Ղաթարի հանքերի բանվորների թիվը ավելացավ մոտ 6,5 անգամ: Ալավերդու, Հալիձորի, Լազարևի հանքերում աշխատում էին մեծ թվով բանվորներ, որոնց թվաքանակը ևս տարեցտարի աճում էր: 1887–1900թթ. Արևելյան Հայաստանի հանքավայրերում աշխատող բանվորների թվաքանակի

---

[382] Каспарова М.Г. Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, с. 89; ЦГИАГ, ф. 264, оп. 1, д. 2943, л. 1.

[383] Симонян А.Г. К вопросу о численности пролетариата Армении в конце XIX – начале XX вв. – Рабочий класс России в период буржуазно-демократических революций. М., 1979, с. 125.

փոփոխությունների մասին պատկերացում է տալիս թիվ 24 աղյուսակը[384]:

Աղյուսակ թիվ 24

Թվականներ	Գործող հանքերի քանակը	հանքանյութը (փթերով)	Բանվորների քանակը			Տոկոսներով
			հիմնական	օժանդակ	ընդհանուր	
1887[385]	19	230.171	294	71	365	100
1888[386]	22	256.650	332	91	423	115,9
1889	25	345.950	570	84	654	79,2
1890	25	364.177	820	145	965	264,4
1891[387]	23	456.218	823	139	962	263,6
1892	19	404.527	610	121	731	200,3
1893	24	522.366	867	230	1097	300,5
1894	26	549.578	675	143	818	224,1
1895	20	388.106	700	183	883	241,9
1896[388]	17	407.881	528	183	711	194,8
1897[389]	26	516.728	679	172	851	233,2
1898[390]	20	210.411	755	167	922	252,6
1899[391]	16	964.462	421	32	453	124,1
1900[392]	17	758.966	478	123	601	164,7

[384] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. "Сборник" в 1887 г., с. 144; "Сборник" в 1888 г., сс. 165-166; "Сборник" в 1889 г., с. 7; "Сборник" в 1890 г., с. 135; "Сборник" в 1891 г., с. 151; "Сборник" в 1892 г., с. 167; "Сборник" в 1893 г., сс. 174-175; "Сборник" в 1894 г., сс. 198-199; "Сборник" в 1895 г., сс. 190-191; "Сборник" в 1896 г., сс. 210-211; "Сборник" в 1897 г., сс. 194-195; "Сборник" в 1898 г., с. 193; "Сборник" в 1899 г., с. 199; "Сборник" в 1900 г., сс. 210-211. Տե՛ս նաև Կիրակոսյան Գ., Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերությունը և նրանում զբաղված բանվորների թվաքանակը (XIX դ. 80-90-ական թվականներ): ԼՀԳ, 1984, թիվ 8, էջ 49· Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, էջ 246: Ըստ Ա.Սիմոնյանի՝ հաշվարկների՝ 1888թ.՝ 393, 1890թ.՝ 985, 1891թ.՝ 947, 1900թ.՝ 511 բանվոր:

[385] Առանց Ալավերդու և Շամլուղի բանվորների: Դիլիջանի հանքի և գործարանի բանվորները տրված են միասին: Տես համապատասխան տարվա "Сборник" -ը, էջ 144:

[386] Այլ տվյալներով՝ 686 բանվոր.– ЦГИАГ, ф. 264, оп. 1, д. 1908:

[387] Առանց Դիլիջանի հանքերի: Տե՛ս համապատասխան տարվա "Сборник" -ը, էջ 154:

[388] Առանց Դիլիջանի, Ղաթարի, Սիսմադանի հանքերի:

[389] Առանց Դիլիջանի, Սիսմադանի, Աթկիզի հանքերի:

[390] Առանց Ղաթարի հանքի: Այլ տվյալներով՝ 679 հիմնական և 172 օժանդակ բանվոր, ընդամենը՝ 851: Տե՛ս ЦГИАГ, ф. 264, оп.1, ч. 2, д. 2673, л. 91.

[391] Տրված է միայն Ալավերդու, Շամլուղի և Դիլիջանի հանքերի բանվորների քանակը: Մնացածների վերաբերյալ տեղեկություններ չկան

Ինչպես երևում է թիվ 24 աղյուսակից, հանքանյութի արտադրությունը 1887թ. համեմատությամբ 1900թ. ավելացել է 77,2%-ով, իսկ այդ նույն ժամանակաշրջանում հանքերում զբաղված բանվորների թվաքանակն աճել է 64,7%-ով: Հանքերում աշխատող բանվորների թվաքանակը բարձր է եղել հատկապես 1890թ. (965 բանվոր), 1891թ. (962 բանվոր) և 1893թ. (1097 բանվոր):

1896թ. գործող հանքերի քանակը նվազել է: Բնականաբար, կրճատվել է նաև բանվորների քանակը՝ 711: Սակայն բանվորների թվաքանակի ամենամեծ անկումը, ըստ աղյուսակի տվյալների, նկատվել է 1899թ.՝ 453, նախորդ տարիների համեմատությամբ կրճատվելով մոտ կիսով չափ: Սակայն եղած թվական տվյալը վերաբերում է միայն Ալավերդու, Շամլուղի և Դիլիջանի հանքերին: Հալիձորի, Ղաթարի, Բաշքենդի, Կավարտի, Սիսմադանի հանքերում աշխատողների քանակն անհայտ է: Սակայն, ընդհանուր առմամբ մոտ 15 տարվա ընթացքում (1887-1900) հանքերում զբաղված բանվորների թվաքանակն աճել է 1,9 անգամ՝ 365-ից հասնելով 601-ի:

Արևելյան Հայաստանի հանքարդյունաբերության երկրորդ կարևոր ճյուղը աղի արդյունահանումն էր: Աղահանքեր կային և Երևանի նահանգում (Կողբ, Նախիջևան, Սուստին) և Կարսի մարզում (Կաղզվան, Օլթի), որոնց շահագործման իրավունքը, բացի Սուստինից, որը մասնավոր էր, սովորաբար պետության կողմից որոշակի ժամկետով տրվում էր վարձակալման: Նման դեպքերում կնքվում էր հատուկ պայմանագիր, որը վավերացվում էր Կովկասի շրջանի լեռնային վարչության կողմից[393]:

Քննվող ժամանակաշրջանում՝ 19-րդ դ. 80-90-ական թվականներին, աղահանքերի շահագործման իրավունքը տրված էր Ջանփոլադյաններին: Նրանք, կատարելով որոշ տեխնիկական վերափոխումներ, կիրառելով հորատման նոր եղանակներ (հատկապես պայթեցումներ)[394], օգտագործելով հատուկ բրիչներ[395], ընդլայնեցին աղի հանույթը:

Արևելյան Հայաստանում արդյունահանված աղը վաճառվում էր ոչ միայն Կարսի մարզում, Երևանի և Թիֆլիսի նահանգներում, այլև

---

[392] Աղբյուրում Ալավերդու և Շամլուղի բանվորների քանակը կամ գումարը ճիշտ չէ (107+100-297): Տես նույն տարվա "Сборник" -ը, էջ 210-211:

[393] РГИА СПб. ф. 37, оп. 32, д. 17, лл. 46, 59.

[394] Նույն տեղում, թթ. 5, 6:

[395] Համբարյան Ա., Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն, Երևան, 1983, էջ 22:

արտահանվում էր Թուրքիա[396]: Աղի արդյունահանման տնտեսական նշանակությունը ցարական կառավարության համար բավական կարևոր էր: Դարի վերջին Կովկասի լեռնային վարչության ինժեներներից մեկը նույնիսկ առաջարկում էր կառուցել «թեկուզ նեղգիծ երկաթուղի Սարդարապատ կայարանից մինչև Կողբի աղահանքերը, որը, նկատի ունենալով տեղանքի հարմար պայմանները, կարժենար ոչ թանկ և միշտ էլ կարդարացներ իրեն»`[397] տեղափոխելով արդյունահանված աղը: Երկաթուղու կառուցումը միևնույն ժամանակ կնպաստեր աղի հանույթի ընդլայնմանը: Նշված երկաթուղագիծն այնպես էլ չկառուցվեց, սակայն աղի հանույթն Արևելյան Հայաստանում տարեցտարի ընդլայնվում էր և 1900թ. արդեն կազմում էր մոտ 1,5 մլն փութ, 1880թ. համեմատությամբ ավելանալով մոտ երեք անգամ[398]: Աղահանքերում վարձու աշխատանքը սկսեց կիրառվել 1868թ.: Վարձու բանվորները հիմնականում շրջակա գյուղերի բնակիչներն էին, որոնց մեծամասնությունն ուներ իր տնտեսությունը և զբաղվում էր նաև գյուղատնտեսական աշխատանքներով: 1885թ. Արևելյան Հայաստանի աղահանքերում աշխատել է ընդամենը 83 բանվոր (օժանդակ աշխատողների թիվը հայտնի չէ): Հինգ տարի անց՝ 1890թ., բանվորների թվաքանակը հասնում է 262-ի: Հետագա տարիներին այն գնալով նվազում է (ամենացածր ցուցանիշը նկատվում է 1896թ.՝ ընդամենը 89 բանվոր):1900թ. աղահանքերում աշխատում էր 113 բանվոր: Ընդհանուր առմամբ բանվորների թվաքանակը 1885–1900թթ. ավելանում է մոտ 1,4 անգամ կամ 40% -ով, որի մասին են վկայում թիվ 25 աղյուսակի տվյալները[399]:

---

[396] Амбарян А.С. Развитие капиатлистических отношений в армянской деревне (1860-1920), Е., 1959, с. 28.

[397] ЦГИАГ, ф. 264, оп. 1, кн. 2, д.. 2959, л. 15:

[398] "Сборник" в 1900 г., с. 418.

[399] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. РГИА СПб, ф. 37, оп. 30, д. 112, л. 40; Кавказский календарь на 1883 г., с. 199; ЦГИАГ, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1030, л. 27; Кавказский календарь на 1885 г., отд. III, с. 276; Там же на 1886 г., отд. III, с. 221; Там же на 1887 г., с. 136; Там же на 1888 г., отд. III, с. 97; ЦГИАГ, ф. 264, оп. 1, кн. 1, д. 5737, лл. 117-118; Кавказский календарь на 1888 г., отд. III, с. 97; "Сборник" в 1887 г., с. 172; ЦГИАГ, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1542, л. 14; Кавказский календарь на 1890 г., с. 66; "Сборник" в 1889 г., с. 156; "Сборник" в 1890 г., с. 243; "Сборник" в 1891 г., с. 259; "Сборник" в 1892 г., с. 278; "Сборник" в 1893 г., сс. 304-305; "Сборник" в 1894 г., сс.;331-332; "Сборник" в 1895 г., сс. 335-336; "Сборник" в 1896 г., с. 413; "Сборник" в 1897 г., сс. 353-354; Кавказский календарь на 1899 г., отд. III, с. 60; "Сборник" в 1898 г., с. 354; ЦГИАГ, ф. 264; оп. 1, кн. 1, д. 2912, ч. I, лл. 83-84; "Сборник" в 1899 г., с. 379; "Сборник" в 1900 г., сс. 363-364.

Աղյուսակ թիվ 25

Թվա-կաններ	Արտադրված աղը (փութ)	Բանվորների քանակը		
		հիմնական	օժանդակ	ընդհանուր
1880	494.872	-	-	-
1881	548.400	-	-	-
1882	634.297	-	-	-
1883	675.516	-	-	-
1884	863.939	-	-	-
1885	1.202.796	83	-	83
1886	1.771.277	163	-	163
1887	1.788.388	160	-	160
1888	725.072	65	-	65
1889	740.870	156	-	156
1890	1.179.558	184	78	262
1891	1.035.145	122	26	158
1892	1.336.016	76	78	154
1893	1.107.795	134	30	164
1894	1.480.523	108	50	158
1895	1.423.228	109	29	138
1896	1.520.843	70	19	89
1897	1.504.285	84	21	105
1898	1.955.543	47	45	92
1899	1.820.724	95	-	95
1900	1.452.273	78	35	113

Արևելյան Հայաստանում լեռնահանքային արդյունաբերության վերը նշված երկու ճյուղերից բացի, գործում էին նաև քարածխի, արծաթի, կապարի, ցինկի, ծծմբաքարի հանքեր, որոնց տնտեսական նշանակությունն աննշան էր, դրանցում զբաղված բանվորների քանակը՝ փոքր:

Բացի այդ, նշված հանքերում աշխատող բանվորների թվաքանակի վերաբերյալ եղած տվյալները, հատկապես մեզ հետաքրքրող ժամանակահատվածում, կցկտուր են, հատուկենտ և հնարավորություն չեն տալիս պատկերացում կազմել և համեմատություններ կատարել:

1887թ. Ախթալայի արծաթ-կապարի հանքերում աշխատել են 27 բանվոր, 1910թ.՝ Բորչալուի ցինկի հանքավայրերում՝ 2 բանվոր,

1916թ. Շարուր - Դարալագյազի կապարի հանքում՝ 46 բանվոր և այլն[400]:

Քարհանքերում աշխատող բանվորների թվաքանակը համեմատաբար շատ ավելին էր: Այսպես, Երևանի նահանգում, Կարսի մարզում, Բորչալուի գավառում այդ ճյուղում, Ա.Սիմոնյանի հաշվարկների համաձայն, 1888թ. զբաղված էր 365, 1890 թվականին 454 բանվոր, 1892թ. Երևանի նահանգում և Կարսի մարզում՝ 293, 1895թ.՝ 369 բանվոր: Դարի վերջին նշված շրջաններում հաշվառվել է ընդամենը 31 բանվոր[401]:

*

* *

19-րդ դարի 80-90-ական թթ. Արևելյան Հայաստանի արդյունաբերության երկրորդ կարևոր ճյուղը սպիրտային խմիչքների արտադրությունն էր, որը տարածված էր հիմնականում Երևանի, էջմիածնի, Նախիջևանի և Զանգեզուրի գավառներում:

Գինու-կոնյակի համեմատաբար խոշոր գործարանների կառուցումը սկսվում է դարի 80-ական թվականներից: Բացի բարձրորակ հումքի առկայությունից, դրան նպաստեց նաև ցարական կառավարությունը՝ 1884թ. հուլիսի 5-ին հրապարակված կանոնադրությամբ բարձրացնելով ակցիզային հարկը, որը խոչընդոտում էր մանր արտադրությունը և քայքայում նրանց:

80-ական թվականների վերջին Ռուսաստանում սկսեց վերելք ապրել սպիրտի և օղու արտադրությունը: Կառավարությունն այլևս շահագրգռված չէր տեղական գործարանային արտադրության զարգացմամբ:

Ուստի 1887թ. հունիսի 15-ին սահմանվեցին նոր կանոններ[402], որոնք արգելակում էին գործարանային արտադրության զարգացումը և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծում մանր արտադրողների համար: 1889թ. ակցիզային հարկը Երևանի նահանգում նորից ավելացվեց: Սակայն բուն Ռուսական կայսրությունում ոգելից խմիչքների արտադրությունը բավարար չէր: Չէր բավարարում նաև հումքը: Խա-

---

[400] Համբարյան Ա.Ս.,.Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 57-58:

[401] ՀՊԻԱԳ, ֆ. 264, օп.1, д.1658, лл.63, 219; д. 5746, лл. 50,106, 303-304; д. 5858, л. 206; д. 2144, лл. 33-34; д. 2143, лл. 212-213: Համապատասխան տարիների "Сборник" -ները, էջ 139, 276, 292, 315-316, 349-350, 390-391, 397: - Տե՛ս նշվ. աշխ., էջ 58-59:

[402] Туманян О.Е. Экономическое развитие Армении, ч. I, сс. 189-190.

ղողի տեղափոխումը, դրա ծավալի և արագ փչանալու պատճառով, կապված էր մեծ դժվարությունների հետ: Բավարար չէր նաև երկաթուղային ճանապարհների թողունակությունը: Ուստի ցարական կառավարությունը ստիպված էր հաշտվել ծայրամասերում այդ ճյուղի արտադրության ընդլայնման հետ:

Չնայած ցարական կառավարության՝ գործարանային արտադրությանը արգելակող քաղաքականությանը՝ 80-ական թվականների վերջին և հատկապես 90-ական թվականներին նոր ձեռնարկությունների կառուցման, խոշորացման գործընթացը շարունակվում էր: «Մեր երկրի գինեգործությունը, - գրում է «Մուրճ» թերթը, - մի տասնյակ տարի առաջ տեղական գործածությունից դուրս շուկա չէր ճանաչում: Բայց այժմ մենք տեսնում ենք նրա առջև բացված Ռուսիայի կենտրոնների ընդարձակ շուկան: Դրա ազդեցության ներքո տեղական գինեգործությունը դուրս եկավ յուր նախկին նահապետական դրությունից և ստացավ մեծ արդյունաբերության բնավորություն»[403]:

1887 - 1888 թթ. կառուցվում են կոնյակի առաջին գործարանները, որոնց սարքավորումները ներմուծված էին Շվեյցարիայից[404]: Արդեն հաջորդ տարում այդ գործարանները շարք են մտնում:

1891-1892 թթ. կառուցվում են կոնյակի ևս չորս գործարաններ: Ցարական պաշտոնյա Դանիլովիչը 90-ական թթ. կեսին, անդրադառնալով արտադրության այդ ճյուղին, նշում է, որ այդ գործարանների մեջ կան «մի քանի խոշորները, որոնք աչքի էին ընկնում կատարելագործված արտադրությամբ, մեքենաներով և բանվորների մեծ թվով»[405]:

90-ական թթ. կեսերից գործարանային արտադրության զարգացումն այդ ճյուղում էլ ավելի է արագանում: Կառուցվում են մի շարք նոր գործարաններ: Ընդլայնվում է կոնյակի արտադրությունը, որն արտահանվում էր ոչ միայն Ռուսաստան, այլև նրա սահմաններից դուրս: 1897թ. վերացվում են մանր արտադրողներին տրված արտոնությունները, որի հետևանքով կրճատվում է չկատարելագործված փոքր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների քանակը: 1890 - 1900 թթ. գինու արտադրությունը Երևանի նահանգում ավելա-

---

[403] «Մուրճ», 1890, թիվ 1:

[404] Համբարյան Ա., Ֆաբրիկա-գործարանային արտադրությունը նախասովետական Հայաստանում: - ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1959, թիվ 1, էջ 17:

[405] Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях. Исследование Аргутинского-Долгорукого А.М., Бочкарева В.П. и Даниловича Р.И. Тифлис, 1897, с. 701.

նում է 6,4 անգամ[406], սպիրտինը՝ 3,6 անգամ, իսկ կոնյակինը՝ 36 անգամ[407]: Դարի վերջին նահանգում արտադրվում էր արդեն 283,1 հազար աստիճան կոնյակ, 8995,4 հազար աստիճան սպիրտ, 1.180.000 դույլ գինի[408]: Զանգեզուրում հիմնականում արտադրվում էր գինի և թթի սպիրտ: Վերջիներիս արտադրությունը 1900թ. կազմում էր 326,0 հազար աստիճան[409]: Կոնյակի արտադրությամբ Արևելյան Հայաստանը Կովկասում գրավում էր առաջին տեղը, իսկ գինու արտադրությամբ՝ երկրորդ:

Գինու-կոնյակի արտադրության ընդլայնմանը զուգընթաց, տեղի է ունենում այդ ճյուղի բանվորների թվաքանակի ավելացումն ու համակենտրոնացումը Երևանի նահանգում, որը տրված է աղյուսակ թիվ 26-ում[410]:

Աղյուսակ թիվ 26

Տարիներ	Ձեռնարկությունների քանակը	Բանվորների քանակը	Աճը տոկոսներով
1800	128	252	-
1884	130	454	80,2
1888	278	1227	386,9
1892	282	1273	405,2
1897	293	1507	498,0
1900	437	2530	900,4

Ինչպես երևում է աղյուսակից, երկու տասնամյակի ընթացքում գինու - կոնյակի արտադրությունում բանվորների քանակն ավելացել է 2278 մարդով կամ մոտ 10 անգամ:

Սպիրտային խմիչքների արտադրությամբ աչքի էր ընկնում նաև Զանգեզուրի գավառը: 1897թ. արտադրության այդ ճյուղում զբաղված

---

[406] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, с. 426.
[407] Նույն տեղում, էջ 428:
[408] Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դ. սկզբին, Երևան, 1968, էջ 222:
[409] Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе. Вып. 7, с. 78. Адонц М.А., նշվ. աշխ., էջ 427:
[410] Աղյուսակը կազմված է. РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 297, лл. 259 об-260; ф. 1284, оп. 223, л. 49, д. 214, л. 170, д. 153, л. 62; ՀԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 134, թ. 27; Обзоры Эриванской губернии за 1897, 1900 гг.; Адонц М.А., նշվ. աշխ., էջ 451:

բանվորների թվաքանակը կազմել է 750 մարդ: 1900 թվականին նրանց քանակը նվազում է՝ հասնելով 500-ի[411]:

Այդ նույն թվականին Կարսի մարզում գործել է երկու գարեջրի գործարան, որտեղ աշխատել է 16 բանվոր[412]:

Այսպիսով, դարի վերջին Արևելյան Հայաստանում սպիրտային խմիչքների արտադրությունում զբաղված էին երեք հազարից ավելի՝ 3064 բանվորներ:

Իհարկե այս տվյալներն անթերի չեն: Միշտ չէ, որ նույն եղանակով են հավաքվել: Բացի այդ, հնարավոր չէ առանձնացնել այդ ճյուղի գործարանային բանվորների քանակը, քանի որ միասին են հաշվառված արհեստագործական, մանր և գործարանային տիպի ձեռնարկությունները և նրանցում աշխատող բանվորները: Համենայն դեպս, 1899–1900թթ. Երևանի նահանգում հաշվառվել են 5 և ավելի բանվոր ունեցող գինու-կոնյակի 115 ձեռնարկությունները, որոնցից 8-ը ունեցել են 5 բանվոր, 9-ը՝ 6, 82-ը՝ 7, 7-ը՝ 8 և 9-ը՝ 10-50 բանվոր, որոնց ընդհանուր քանակը կազմել է 859 մարդ[413]:

19-րդ դարի 80-90-ական թվականներին Արևելյան Հայաստանի արդյունաբերական կյանքում շարունակում էր էական տեղ գրավել մետաքսի արտադրությունը, որը կենտրոնացված էր հիմնականում Նախիջևանի, Շուշիի և որպես օժանդակ, բայց տարածված զբաղմունք Զանգեզուրի գավառներում[414]: Մետաքսամշակման առանձին կետեր գոյություն ունեին Սուրմալուի, էջմիածնի և Շարուր-Դարալագյազի գավառներում, Կաղզվանի և Օլթիի օկրուգներում[415]:

Դեռևս Ի.Շոպենը 19-րդ դ. սկզբներին նշել է, որ «Հայաստանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են մետաքսագործության համար»[416]:

Արդեն 70-ական թվականներին Երևանի նահանգում երևան եկան շոգեկաթսաներ ունեցող երկու մետաքսագործարաններ (Ներքին

---

[411] Симонян А.Г. К вопросу о численности пролетариата Армении в конце XIX – начале XX вв. – Sեն Рабочий класс России в период буржуазно-демократических революций, էջ 135:

[412] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5554, л. 117.

[413] Адресная книга фабрично-заводской и ремесленной промышленности всей России. Под ред. Погожева А.В. С.-Петербург, 1905, сс. 527-529.

[414] «Մուրճ» , 1900, թիվ 13:

[415] Шавров Н.Н. Очерк шелководства в Закавказье. – Свод материалов ..., т. IV, ч. II, Тифлис, 1888, с. 177.

[416] Шопен И. Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб, 1852, с. 74.

Ագուլիս գյուղում և Օրդուբադ քաղաքում), որոնցում աշխատում էին 92 բանվոր[417]: 80-ական թվականների սկզբին մետաքսագործարանների և նրանցում աշխատող բանվորների քանակը թեև դանդաղ, բայց ավելանում էր: 1880-1883թթ. Նախիջևանի գավառում գործող 14-16 մետաքսագործարաններում աշխատում էին արդեն շուրջ 500 բանվորներ[418]:

Արտադրված մետաքսի մեծ մասը արտահանվում էր: Միայն չնչին մասն էր օգտագործվում տեղական կարիքների համար: Ռուսական զարգացող թեթև արդյունաբերությունը կլանում էր ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև ամբողջ Անդրկովկասում արտադրված մետաքսը, ինչպես նաև մետաքսաթելը. «Վերջին տարում Ռուսիայում երևան եկան մետաքսագործական գործարաններ, - նշում է «Մուրճը», - որոնք անընդհատ դիմում են Անդրկովկասին հում նյութով պահանջները լրացնելու՝ թե՛ բոժոժով, թե՛ մանած թելով»[419]:

80-ական թվականների երկրորդ կեսին մետաքսագործարանների արտադրողականությունը Արևելյան Հայաստանում մեծանում է՝ 1884թ. 3.500ռ. 1889թ. հասնելով 50.200 ռուբլու՝ ավելանալով շուրջ 14 անգամ: Սակայն գործարանների և բանվորների քանակը կրճատվում է: Այսպես, 1886թ. Նախիջևանի գավառում նախկին 16-ի փոխարեն գործել է ընդամենը 9 գործարան՝ 246 բանվորներով[420], 1889թ.՝ 14-ը, 181 բանվորներով[421]:

Նշված տասնամյակում Շուշիի գավառում գործում էին ավելի քիչ թվով մետաքսագործարաններ: 1880-1885 թվականներին գավառում եղել են 5 - 7 գործարան, որոնք ունեցել են 150-ից մինչև 200 բանվոր:

80-ական թվականների վերջին, ըստ Ա.Ն.Արասխանյանի, Շուշիի գավառում գործարանների թիվը հասնում էր 13-ի, որոնք ունեին 674 դազգահներ և տարեկան արտադրում էին 1400 փութ մետաքսաթել՝ 38.500ռ. արժողությամբ[422]:

90-ական թվականների հենց սկզբին շարք են մտնում մի շարք նոր մետաքսագործարաններ, որոնք արդեն ունեին նոր, կատարելագործված սարքավորումներ: «Եթե անցյալ դարի 80-ական թվական-

---

[417] Гулишамбаров С. Обзор фабрик и заводов Закавказского края, с. 299.
[418] Кавказский календарь на 1885 г., отд. III, с. 252.
[419] «Մուրճ», 1891, թիվ 14:
[420] ՀԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 23, թ. 10:
[421] Նույն տեղում, ֆ. 113, ց. 2, գ. 152, թ. 96:
[422] Арасханян А.Н. Закавказские шелкомотальные заводы, Тифлис, 1888, с. 48.

ներին այս կամ այն չափով նշանավոր մետաքսագործակնան շրջաններում գոյություն ունեին մեծ քանակությամբ տնայնագործ մետաքսաթել փաթաթողներ ապա այժմ այդպիսիները պահպանվում էին միայն հեռավոր, խուլ վայրերում և այն էլ բացառության կարգով»[423]:

Նախիջևանի գավառում 1891թվականին արդեն կար 22 գործարան, որոնց ընդհանուր արտադրողականությունը հասնում է 72 հազար ռուբլու, 21 հազարով ավելի նախորդ տարիներից:

Ավելանում է նաև բանվորների քանակը՝ 210 մարդ: Երևանի նահանգապետի այդ տարվա հաշվետվության համաձայն՝ նշված ձեռնարկությունները լրիվ իրավունք ունեին կրելու «գործարան» անունը[424]: Այդ գործարաններից միայն վեցն էին տեղադրված քաղաքներում, իսկ մնացած 16-ը՝ գավառի գյուղերում: 1894թ. Նախիջևանի գավառում արդեն կային 25 գործարաններ՝ 330 բանվորներով, իսկ նրանց արտադրողականությունն արդեն անցնում էր 100 հազար ռուբլուց[425]:

Հետագա տարիներին գործարանների արտադրողականությունն ավելի է մեծանում, կապված նոր հաստոցների ներդրման հետ: 1900թ. գործարաններում աշխատում էին արդեն 580 բանվորներ[426], իսկ արտադրողականությունը հավասար էր 117.690 ռուբլու[427], որը կազմում էր նահանգի բոլոր գործարանների մոտ 9 տոկոսը, գրավելով երկրորդ տեղը:

1895թ. Շուշի քաղաքում գործում էր մետաքսի երկու գործարան, որտեղ աշխատում էին 170 բանվոր, համանուն գավառում 16 գործարան՝ 1030 բանվորներով[428]:

Դարի վերջում՝ 1900թ., Շուշիի գավառում մետաքսամշակման գործարանների թիվը հասնում է 19-ի, իսկ բանվորներինը՝ 558-ի[429]:

Հարկ է նշել, որ մետաքսամշակման ձեռնարկությունների մեծ մասն արդեն դուրս էին եկել մանուֆակտուրային արտադրության փու-

---

[423] Кавказская шелководческая станция. Вып. 3, т. 12, с. 12. – Տես Առաքելյան Գ., Մետաքսի արտադրությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դ. 2-րդ կեսին, ԼՀԳ, 1975, թիվ 8, էջ 53:

[424] ՀԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 133, թթ 9-12:

[425] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5189, лл. 677, 695.

[426] Адресная книга фабрично-заводской промышленности всей России, С.Петербург, 1905, с. 65.

[427] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5551, л. 262.

[428] Ազգագրական հանդես, գ. Բ, էջ 98: Տես Առաքելյան Գ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 1990, էջ 190:

[429] Адресная книга ..., с. 58-59.

լից և իրենց տեխնիկական զինվածությամբ, աշխատողների թվաքանակով թևակոխել էին գործարանային արտադրության փուլը:

Շուշիի գավառում 1900 թ. գործող 19 գործարաններից միայն 4-ը ունեին 16 - ից պակաս բանվոր (սակայն 10-ից ավելի): Կային այնպիսիք, որոնք ունեին 60 - 70 - ական բանվորներ: Նախիջևանի գավառում 16-ից պակաս բանվորներ են ունեցել ընդամենը տասը ձեռնարկություններ:

Մետաքսագործությունը որոշ չափով տարածված էր նաև Զանգեզուրի և Ղազախի գավառներում: Դարի վերջին նշված գավառներում արտադրության այդ ճյուղում զբաղված էր մոտ 60 մարդ[430]:

Ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանում գործող 45 մետաքսամշակման գործարաններում դարի վերջին՝ 1900 թվականին, աշխատում էին մոտ 1200 բանվորներ:

Յուրաքանչյուր գործարանին ընկնում է 26,7 բանվոր: Մ.Ա. Ադոնցը նշում է, որ Արևելյան Հայաստանի արդյունաբերությունում 19-րդ դարի վերջին միայն երկու՝ պղնձի և գինու-կոնյակի արտադրություններում էր գերակշռում մեքենայական տեխնիկան, իսկ մյուս ճյուղերում դեռևս իշխում էր ձեռքի աշխատանքը, մանուֆակտուրային տեխնիկան[431]:

Նշված տեսակետի հետ չի կարելի համաձայնվել: Դեռևս 80-ական թվականների վերջին Օրդուբադում և Ներքին Ագուլիս գյուղում եղած գործարաններն արդեն ունեին երկու շարժիչներ, որոնք աշխատում էին գոլորշու ուժով (паровые котлы), և 89 հաստոցներ[432]: Իսկ 90-ական թթ., երբ մեքենայական տեխնիկան արագորեն ներթափանցում էր արդյունաբերության բոլոր ճյուղերը, բացի վերոհիշյալ երկու ճյուղերից, նախ և առաջ ընդգրկեց մետաքսամշակման գործարանները: Բավական է նշել, որ միայն Շուշիում և համանուն գավառի 10 գյուղերում 80-ական թթ. կեսերին արդեն գործում էին 13 ձեռնարկություններ, որոնք աշխատում էին գոլորշու ուժով[433]:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության կարևորագույն ճյուղերից էր նաև բամբակի մշակումը: Բամբակի մշակման առաջին ձեռնարկությունները երևան են եկել դեռևս 70-ական թվականներին: Սակայն մինչև դարի վերջն էլ բամբակամշակման ճյուղում չառաջացան համեմատաբար խոշոր գործարաններ, և այդ

---

[430] Распределение населения по видам главных занятий ..., сс. 96-97.
[431] Адонц М.А. նշվ. աշխ., էջ 448:
[432] Гулишамбаров С. նշվ. աշխ., էջ 299.
[433] Свод материалов ..., т. IV, ч. II, с. 223.

ճյուղն այդպես էլ մնաց զարգացման մանուֆակտուրային փուլում, չնայած ձեռնարկություններն ու բանվորների քանակը գնալով ավելանում էր:

Բամբակի մշակմամբ զբաղվում էին Երևանի, Նախիջևանի, Սուրմալուի, էջմիածնի և Շարուր-Դարալագյազի գավառներում: Ռուսական տեքստիլ արդյունաբերության վերելքը դարի 80-90-ական թվականներին էլ ավելի էր մեծացնում բամբակի նկատմամբ եղած պահանջարկը: 80-ական թվականներից ռուսական գործարաններում արդեն լայն չափով օգտագործվում էին անդրկովկասյան բամբակը[434]:

1880 թ. Երևանի նահանգում գործում էին 12 բամբակազտման ձեռնարկություններ, որոնք ունեին ընդամենը 24 բանվոր: Այդ գործարանների արտադրողականությունը հավասար էր 35.239 ռուբլու[435]: 80-ական թվականների երկրորդ կեսին, բամբակազտման ձեռնարկությունների թիվը կտրուկ ավելանում է և արդեն 1889թ. նահանգում գործում էին 273-ը, 644 բանվորներով[436]:

90-ական թվականներին սկսվում է բամբակազտման ձեռնարկությունների տեխնիկական վերազինումը: Լայն կիրառում են գտնում ամերիկյան ջիները (Goton gin, բամբակազտիչ սարքավորում), որոնց քանակը հասնում է մոտ հարյուրի, որոնք աշխատում էին ձիերի կամ ջրի օգնությամբ[437]:

Արտադրության այդ ճյուղում շոգու ուժը կիրառվեց միայն դարի վերջից: Ինչպես մետաքսամշակման, այնպես էլ բամբակազտման ձեռնարկությունների մեծ մասը կենտրոնացված էր գյուղերում:

1893 թ. նահանգում գործող 346 ձեռնարկություններից միայն յոթն էին գտնվում քաղաքներում[438]: 1900թ. նահանգում կային 354 բամբակազտիչ ձեռնարկություններ, որոնցում աշխատում էին 748 բանվորներ[439]:

Արևելյան Հայաստանում 19-րդ դ. 80-90-ական թվականներին գործող բամբակազտիչ ձեռնարկությունները և նրանցում աշխատող բանվորների քանակը, ինչպես և աճը նախորդ տարվա նկատմամբ,

---

[434] История СССР, т. V, М., 1968, с. 313.
[435] РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 297, л. 260.
[436] Նույն տեղում, ֆ. 1284, g. 223, . 125, թ. 71:
[437] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, с. 447.
[438] РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 118, лл. 22-23.
[439] Обзор Эриванской губернии за 1900 г. Вед. N 2.

տրված է թիվ 27 աղյուսակում[440]:

Աղյուսակ թիվ 27

Տարիներ	Ձեռնարկությունների քանակը	Բանվորների քանակը	Աճը տոկոսներով
1880	12	24	-
1884	15	28	16,7
1888	208	392	140,0
1892	337	603	53,8
1896	365	736	22,0
1900	354	748	1,6

Քսան տարվա ընթացքում բամբակազտիչ ձեռնարկությունների թիվը աճել է մոտ 30, իսկ բանվորների քանակը՝ 31 անգամ: Չնայած այդ մեծ քանակական աճին՝ ձեռնարկությունները որակապես չեն փոխվել, շարունակել են մնալ փոքր, ունենալով միջին հաշվով երկու բանվոր:

Ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանի տեքստիլ արդյունաբերությունում նշված երկու ճյուղերում դարի վերջին աշխատում էին 1948 բանվորներ, որոնց մոտ 1/5 - ը կանայք էին: Սակայն կապիտալիզմի թույլ զարգացածությունը, տղամարդկանց պահեստային ուժի առկայությունը, ինչ-որ, չափով նաև ազգային ավանդույթները դեռևս թույլ չէին տալիս կանանց հնարավորին ներգրավել արդյունաբերության մեջ: Չպետք է մոռանալ նաև, որ Արևելյան Հայաստանում հիմնականում զարգանում էին այնպիսի ճյուղեր, որոնցում կնոջ աշխատուժը չէր կարող բավարար լինել:

Արևելյան Հայաստանի վերամշակող արդյունաբերության այլ ճյուղերի ձեռնարկությունները շարունակում էին մնալ մանր կապիտալիստական արտադրության մակարդակին, հազվադեպ անցում կատարելով մանուֆակտուրային փուլը: Ձեռնարկությունների արտադրանքի ծավալը փոքր էր, տեխնիկական զինվածությունը՝ անբավարար, բանվորների քանակը՝ փոքրաթիվ:

---

[440] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 297, л. 260; ф. 1284, оп. 223, д. 116, л. 91; д. 214, л. 270; ՀԱԱ, ֆ. 101, ց. 1,գ. 134, թթ. 26-27; РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5329, л. 43; ф. 1284, оп. 284, д. 86, лл. 95-96, Обзор Эриванской губернии за 1900 г., Вед. N 2.

Սակայն եթե այդ ձեռնարկությունները 19-րդ դ. 80-90-ական թթ. չէին փոխվում որակապես, ապա քանակապես ավելանում էին, որը և հանգեցնում էր նրանցում զբաղված բանվորների թվական աճին:

1880թ., ըստ նահանգապետի հաշվետվության, բացի վերոհիշյալ ցուցակներում եղածներից, Երևանի նահանգում գործում էին 404 ձեռնարկություններ, որոնցում աշխատում էին ընդամենը 911 բանվորներ[441]: Նրանց տարեկան արտադրողականությունը կազմում էր մոտ 100.000 ռուբլի, այսինքն՝ միջին հաշվով յուրաքանչյուր ձեռնարկությանը բաժին է ընկնում մոտ 250ռ. և երկու բանվոր: Չնայած ձեռնարկությունների քանակական աճին, դարի 90-ական թվականների դրությունը չի փոխվում: 1891թ. նահանգում գործում էին արդեն 2635 ձեռնարկություն մոտ 4600 բանվորներով[442], իսկ 1900թ.՝ 2655 ձեռնարկություն 4432 բանվորով[443]:

Կարսի մարզում թեթև արդյունաբերության համանման ցուցակներում դարի վերջին՝ 1900թ., աշխատում էր 1200 բանվոր[444]:

*

* *

Բավականին բազմաքանակ էր շինարարությունում աշխատող բանվորների ջոկատը: Ճիշտ է, այդ բնագավառում աշխատող բանվորների քանակի վերաբերյալ տվյալները բավականին սուղ են, ոչ ամփոփ և հիմնականում վերաբերում են 90-ական թվականներին: 1897թ. մարդահամարի տվյալները ևս թերի են, քանի որ դրանք վերաբերում են ձմռանը, երբ շինարարական աշխատանքները հիմնականում դադարում են: Բավական է նշել, որ 1896թ. Երևանի նահանգում ոչ լրիվ տվյալներով հաշվարկված է 254 որմնադիր և քարհատ[445], Կարսի մարզում՝ 252-ը[446]: Մինչդեռ 1897թ. մարդահամարի ժամանակ և՛ Երևանի նահանգում, և՛ Կարսի մարզում խիստ պակաս է: Մեծ էր նաև բանվորների հոսունությունը, որը ևս խանգարում է կոնկրետ թվաքանակի որոշմանը: Շինարարական աշխատանքներում հիմնականում ընդգրկված էին արտագնաց գյուղացիները, որոնք, չկա-

---

[441] Обзор Эриванской губернии за 1880 г., Вед. N 2, РГИА СПб, ф. 1268, оп. 25, д. 297, лл. 259 об-260.
[442] ՀԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 134, թթ. 25-26:
[443] РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5551, л. 262.
[444] Նույն տեղում, ф. 1263, оп. 2, д. 5554, л. 117.
[445] ՀԱԱ, ֆ. 117, ց. 1, գ. 134, թթ. 227-228:
[446] Обзор Карсской области за 1896 г., с. 17.

ողանալով պահպանել իրենց և ընտանիքի գոյությունը, փնտրում էին լրացուցիչ եկամուտ:

Թիֆլիս-Կարս երկաթուղային ճանապարհի շինարարությունում ընդգրկված էին մեծ թվով բանվորներ, որոնք հիմնականում մերձակա գյուղի բնակիչներ էին : 1897թ. ձմռանը, երբ աշխատանքների ծավալը բնականաբար փոքրացել էր, ճանապարհային, երկաթուղային շինարարությունում միայն Երևանի նահանգում զբաղված էր 800 մարդ[447]: Դրանք մշտական աշխատողներն էին և այն էլ մեծ մասամբ դրսից եկածներ: Դա է վկայում նրանց ընտանիքի անդամների քանակը՝ ընդամենը 15 տղամարդ և 33 կին[448]: Նույն 1897թ. Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության մերձակայքի ընկած միայն 11 գյուղերում ապրում էր 586 բանվոր, որոնք եկել էին հիմնականում Ռուսաստանի կենտրոնական նահանգներից[449]: Կարսի մարզում համապատասխան աշխատանքներում զբաղվածների քանակը կազմում էր 32 մարդ[450]: Բորչալուի գավառում երկաթուղային շինարարությունում նույն ժամանակաշրջանում զբաղված էր 1176 բանվոր[451]:

Այսպիսով, 1897թ. ձմռանը Արևելյան Հայաստանում ճանապարհային շինարարությունում զբաղված էին մոտ 2000 բանվորներ: Տարվա մնացած եղանակներին նրանց թվաքանակը, բնականաբար, ավելանում էր: Դա հաստատվում է նաև Թիֆլիս-Կարս երկաթուղային ճանապարհի շինարարության 4-րդ տեղամասի պետի մի նամակից, որի համաձայն բանվորների ամենամսյա թիվը 1898թ. ձմռանը կազմում էր 300-400 մարդ, իսկ գարնանը հազարից ոչ պակաս[452]: 1900թ. Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի շինարարությունում աշխղեկի մոտ զբաղված էին 240 բանվորներ, որոնք եկել էին Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Երևանի և Էջմիածնի գավառներից:

Նույն այդ ճանապարհի շինարարության չորս տեղամասերից միայն մեկում աշխատում էին 1200 բանվորներ[453]:

---

[447] Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т. III, сс. 132-133.
[448] Նույն տեղում:
[449] ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 11, թթ. 74-80:
[450] Распределение населения по видам главных занятий ..., с. 123.
[451] Նույն տեղում:
[452] ՀԱԱ, ֆ. 271, ց. 1, գ. 17, թ. 749: Տես О.С.Баликян. Из истории формирования рабочего класса на строительстве дорог Восточной Армении. – Լրաբեր հասարակական գիտությունների, 1975թ., թիվ 3, թ. 91:
[453] ՀԱԱ, ֆ. 102, ց. 1, գ. 953, թթ. 40-41; ֆ. 270, ց. 1, գ. 24, թ. 129: - Տես О.С.Баликян, նշվ. աշխ., էջ 90-91:

Քանի որ աշխատանքներ էին ընթանում նաև մնացած երեք տեղամասերում, կարելի է ենթադրել, որ մոտ այդքան էլ աշխատում էին յուրաքանչյուրում: «Մշակ» թերթին Ալեքսանդրապոլից ուղարկված մի թղթակցությունում նշվում է, որ դարի վերջին Կարս-Թիֆլիս երկաթուղագծի շինարարության վրա աշխատում էին 10 հազար[454] բանվորներ, որը չի կարելի հավանական համարել: Ուսումնասիրողների կարծիքով այդ տվյալը չափազանցված է, բայց տալիս է մոտավոր պատկերացում[455]:

Ընդհանուր առմամբ շինարարական զանազան աշխատանքներում զբաղված բանվորների վերաբերյալ ամփոփ տվյալներ կարելի է ստանալ միայն 1897թ. մարդահամարից: Այդ տվյալների համաձայն, 1897թ. ձմռանը Երևանի նահանգում շինարարական և հարակից աշխատանքներում զբաղված են եղել 3017 տղամարդ և 4 կին, որից 1973-ը Ալեքսանդրապոլի գավառում[456]:

Շինարարությունում զբաղվածների ընդհանուր քանակից քաղաքներին բաժին էր ընկնում 1516-ը, գավառներին՝ 1505-ը: Կարսի մարզում շինարարական աշխատանքներում զբաղված էին ընդամենը 635 մարդ (որի կեսից ավելին՝ 325-ը Կարս քաղաքում)[457], Շուշիի գավառում՝ 1474, Բորչալուի գավառում՝ 2289 մարդ, որից 1176-ը երկաթուղային շինարարությունում: Զանգեզուրի և Ղազախի գավառներում զբաղվածների քանակը փոքրաթիվ էր՝ 255 մարդ[458]:

Ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանում շինարարական զանազան աշխատանքներում 1897թ. ձմռանը զբաղված է եղել 7674 մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը եղել են որակավորում չունեցող բանվորներ: Հետագա տարիներին, հատկապես ոչ ձմեռային ամիսներին, նրանց քանակը եղել է շատ ավելի, ինչպես դա երևաց գարնանը երկաթուղու շինարարությունում զբաղվածների թվաքանակի կրկնակի ավելացումից: Դրա մասին է վկայում նաև այն փաստը,

---

[454] «Մշակ», 1896, թիվ 90:

[455] Ավետիսյան Վ.Ա., Հայ հասարակական մտքի մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 52; Հարությունյան Կ., Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ վարձու աշխատանքի կիրառման հարցի մասին (XIX դ. 70-ական թվականներ – XX դ. սկիզբ), ԼՀԳ, 1984, թիվ 1, էջ 18:

[456] Распределение населения по видам главных занятий ..., т. III, сс. 132-133..

[457] Նույն տեղում, էջ 122-123: Մի այլ աղբյուրի համաձայն՝ Կարսի մարզում ընդամենը 175 մարդ, Երևանի նահանգում՝ 1199 մարդ: Տե՛ս՝ Численность и состав рабочих, т. I, с. 81. Ամենայն հավանականությամբ, այստեղ չեն ընդգրկվել «արհեստավորները», որոնք զբաղված էին շինարարական աշխատանքներում:

[458] Распределение населения по видам главных занятий ..., т. III, сс. 88, 101:

որ միայն Երևանի նահանգում 1896թ. աշխատել են 150 վարպետ, իսկ սևագործ բանվորների քանակը հասել է 5407 մարդու[459]:

*

* *

19-րդ դարի 90-ական թվականների վերջին մեծ թվով բանվորներ էին աշխատում տրանսպորտում, հատկապես երկաթուղում, որոնց Վ.Ի.Լենինը և բնականաբար, նրան հետևելով՝ խորհրդային պատմագրությունը (Ռաշին Ա. և այլք) դասում են կապիտալիստական խոշոր ձեռնարկություններում աշխատողների կազմում[460]: Առաջին երկաթուղագիծը (Թիֆլիս-Կարս) Արևելյան Հայաստանում շահագործման հանձնվեց 1899թ. վերջին: Այդ երկաթուղագիծը մինչև 35-րդ վերստը անցնում էր Թիֆլիսի գավառով, մինչև 128-րդ վերստը՝ Բորչալուի գավառով, մինչև 215-րդը՝ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառով և մինչև վերջը (279-րդ վերստ)՝ Կարսի մարզով[461]: Այս ընդհանուր երկարությունից 205 վերստն անցնում էր Արևելյան Հայաստանով (սկսած Այրում կայարանից): Երկաթուղագծի այս հատվածում աշխատող բանվորների քանակի վերաբերյալ ուղղակի տվյալներ չունենք: Սակայն 1900թ. Անդրկովկասում երկաթուղային մեկ վերստին ընկնում էր 12,86 աշխատող, որից մշտական՝ 8,33, ժամանակավոր՝ 0,23, իսկ օրավարձու 4,32 մարդ[462]: Համապատասխան հաշվարկներից[463] պարզվում է, որ Արևելյան Հայաստանում 1900թ. եղել են 2640 երկաթուղայիններ, որոնցից 1707-ը (6.4,67%)՝ մշտական, 886-ը (33,54%)՝ օրավարձու, իսկ 47-ը (1,79%)՝ ժամանակավոր:

---

[459] ՀԱԱ, ֆ. 117, g. 1, գ. 933, pp. 1-8:

[460] Լենին Վ.Ի., ԵԼժ, h. 3, էջ 630: Рашин А.Г. Формирование рабочего класса России, М, 1958, сс. 117-127.

[461] ЦГИАГ, ф, 279, оп. 1, д. 947, л. 6. Ըստ Ա.Տ.Ահիրադյանի՝ այն ուներ 282 վերստ երկարություն: Տես նրա "История железных дорог Закавказья, Ереван, 1970, с. 55.

[462] Статистический сборник Министерства путей сообщения. Вып. 69, СПб, 1902, таб. XII.

[463] Երկաթուղագծի մեկ վերստին ընկնող բանվորներով ընդհանուր քանակը որոշելու այս մեթոդը կիրառել են Ի.Բլոխինը (Влияниежелезных дорог на экономическое состояние России, т. I, Постройка и эксплуатация железных дорог, СПб, 1878, с. 117), Ա.Գ.Ռաշինը (Формирование рабочего класса России, М, 1958, с. 119) Հաշվարկման ձևերի և նրանց շուրջ առաջացած տարաձայնությունների մասին տես Симонян А.Г. Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX – начале XX вв., Ереван, 1995, сс. 34-35.

Տրանսպորտի այլ տեսակներում, կապում աշխատողների վերաբերյալ միակ ամփոփ աղբյուրը նորից 1897թ. մարդահամարն է, որի տվյալների համաձայն այդ բնագավառում Երևանի նահանգում աշխատում էին 665, իսկ Կարսի մարզում՝ 233 մարդ[464]: Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում այդ բնագավառում զբաղված էր մոտ հազար մարդ[465]:

Ամփոփելով այս տվյալները, կարող ենք ասել, որ Արևելյան Հայաստանում դարի վերջին տրանսպորտում և կապում աշխատում էին շուրջ 4500 բանվորներ:

Առևտրում, հյուրանոցներում և նման տիպի այլ հաստատություններում, հիգիենայի, կենցաղի ոլորտներում Երևանի նահանգում 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն, զբաղված էին 403, իսկ Կարսի մարզում՝ 137 բանվորներ[466]: Արևելյան Հայաստանի այլ շրջաններում այդ բնագավառում աշխատում էին 197 բանվորներ, ընդամենը՝ 737 մարդ:

*

* *

Բանվոր դասակարգի ընդհանուր թվաքանակում առանձին խումբ էին կազմում օրավարձուները և սեզոնային բանվորները: Դրանք հիմնականում որակավորում, որոշակի զբաղմունք, բնական է նաև որոշակի եկամուտ չունեցող բանվորների բազմաքանակ մի խումբ էր և կատարում էր ծանր ֆիզիկական աշխատանք:

Բանվորների այդ կատեգորիայի մասին որոշակի ամփոփ տվյալներ տալիս է միայն 1897թ. մարդահամարը (աղյուսակ թիվ 28)[467]:

Մարդահամարի տվյալների համաձայն, Արևելյան Հայաստանում (առանց Ախալքալաքի գավառի) հաշվվում էին 10.758 սեզո-

---

[464] Численность и состав рабочих в России на основании данных первой всеобщей переписи населения Российской империи 1897г., т. I, СПб, 1906, сс. 4, 84-85, 88.

[465] Распределение населения по видам главных занятий ..., т. III, СПб, 1905, сс. 90, 100-103.

[466] Նույն տեղում, էջ 89, 92-93, 108:

[467] Աղյուսակը կազմված է. Բ Распределение населения ..., т.III, СПб,1905, сс.82-84, 94-97,118-135 աղբյուրի տվյալների հիման վրա: Ըստ Численность и состав рабочих в России ..., т. I, приложение, էջ 8 աղբյուրի, Երևանի նահանգում և Կարսի մարզում տղամարդիկ՝ 4.530 և 2.221, իսկ կանայք՝ 534 և 113 մարդ: Ընդամենը Երևանի նահանգում 5.064, իսկ Կարսի մարզում՝ 2.334 օրավարձու և սեզոնային բանվորներ: Այլ աղբյուրների բացակայությունը հնարավորություն չի տալիս ստուգելու իսկությունը:

գործ և օրավարձու բանվորներ, որոնցից քաղաքներում՝ 3.717, կամ 34,6%-ը, գյուղական վայրերում՝ 7.041-ը կամ 65,4%-ը: Ամբողջ բանվորների 47,5%-ը (5105 մարդ) բաժին է ընկնում Երևանի նահանգին, 18,6%-ը (2001 մարդ)՝ Կարսի մարզին:

Աղյուսակ թիվ 28

Վարչական շրջանները	Արական	Իգական	Միասին
Երևանի նահանգ	4558	547	5.105
Կարսի մարզ	1774	227	2.001
Բորչալոի գավառ	1552	24	1.576
Զանգեզուրի գավառ	297	39	336
Ղազախի գավառ	722	32	754
Շուշիի գավառ	881	105	986
Ընդ. Արևելյան Հայաստանում	9784	974	10.758

Գավառների մեջ սևագործների և օրավարձուների քանակով առանձնանում է Բորչալուն, որտեղ աշխատում էին ընդհանուրի 14,6%-ը (1576 մարդ): Նշված կատեգորիաների բանվորների տեսակարար կշիռն անհամեմատ ցածր է Զանգեզուրի (3,1%), Ղազախի (7,1%) և Շուշիի (9,1%) գավառներում:

Թվական տվյալների համադրումից ակնհայտ է դառնում, որ սևագործ ու օրավարձու բանվորների քանակով առանձնանում է Երևանի նահանգը, որը բացատրվում է ինչպես նրա տարածքի մեծությամբ և բնակչության ստվար կազմով, այնպես էլ արդյունաբերական և այլ ձեռնարկությունների անհամեմատ մեծ թվով, քաղաքային կյանքի քիչ թե շատ զարգացմամբ: Իսկ Բորչալուի գավառում այդ տարիներին կատարվում են ճանապարհաշինարարական լայն աշխատանքներ, որը, բնականաբար, սևագործների և օրավարձուների մեծ պահանջարկ էր առաջադրում:

Նկատենք նաև, որ նահանգում, մարզում և գավառներում տղամարդիկ կանանց նկատմամբ բացարձակ մեծամասնություն են կազմում՝ 90,9%:

Օրավարձուների և սևագործների ընդհանուր քանակից քաղաքաբնակներին, որոնք, ինչպես նշվեց, կազմում էին 34,6% կամ 3.717 մարդ, պետք է դասել արդյունաբերական բանվորների շարքը: Այդ շարքին պետք է դասել նաև գյուղաբնակների այն մասը, որը զբաղված էր ոչ գյուղատնտեսական ոլորտներում, սակայն ցավոք առկա աղբյուրները նման հնարավորություն չեն ընձեռում:

Արևելյան Հայաստանում փոքրաթիվ չեն նաև բանվորների այն ջոկատները, որոնք մարդահամարում հաշվառված են "служители", "сторожа", "пристяги" խմբերում: Նրանք աշխատում էին արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններում, հիվանդանոցներում, ուսումնական հաստատություններում, եկեղեցիներում, սպասարկման ոլորտում և հիմնականում՝ անհատական տնտեսություններում (հատկապես քաղաքային):

Վերոհիշյալ կարգի բանվորների թվաքանակը, սեռային կազմը և տեղաբաշխումը Արևելյան Հայաստանի նշված վարչական շրջանների քաղաքներում և գյուղերում ունեն հետևյալ պատկերը (տես աղյուսակ թիվ 29)[468].

Աղյուսակ թիվ 29

	Քաղաքներում		Գյուղերում		Միասին		Ընդամենը
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի նահանգ	1.959	428	757	178	2.716	606	3.322
Կարսի մարզ	451	178	163	207	614	385	999
Բորչալուի գավառ	-	-	351	5	351	5	356
Զանգեզուրի գավառ	-	-	175	36	175	36	211
Ղազախի գավառ	-	-	220	88	220	99	308
Շուշիի գավառ	538	166	268	77	806	243	1.049
Ընդամենը Արևելյան Հայաստանում	2.948	772	1.934	591	4.882	1.363	6.245
	3.720		2.525		6.245		

Արևելյան Հայաստանում այդ խմբերում 1897թ. հաշվարկվել են ընդամենը 6.245 բանվորներ, որոնցից 3720-ը (59,6%) զբաղված էին քաղաքներում, իսկ 2525-ը (40,4%)՝ գյուղերում: Ընդհանուր թվաքանակից 5163-ը (82,7%) տնային ծառաներ և սպասարկողներ էին:

Գյուղական վայրերում կանայք կազմում էին 23,4%, քաղաքներում 20,8%-ը, իսկ ընդհանուրի 21,8%-ը: Ինչպես երևում է կատարված հաշվարկներից, կանանց տեսակարար կշիռը տնային ծառաների և սպասարկողների մեջ բնականաբար բավական բարձր է:

Վերը բերված տվյալների և աղյուսակների վերլուծությունը պատկերացում է տալիս ուսումնասիրվող ժամանակահատվածում արդյունաբերական բանվորության ճյուղային կառուցվածքի և նրանում կատարվող փոփոխությունների, աճի շարժի մասին: Հարկ չհամարելով կրկին անդրադառնալ դրան՝ ամփոփ ներկայացնենք արդյու-

[468] Աղյուսակը կազմված է 1897թ. մարդահամարի նախորդ աղբյուրների տվյալների հիման վրա:

նաբերական բանվորության ընդհանուր թվաքանակը և յուրաքանչյուր ճյուղում զբաղված բանվորների տեսակարար կշիռը դարավերջին: Այդ մեզ հնարավորություն կտա որոշել նաև բանվորության գրաված տեղը արդյունաբերական բնակչության, ինչպես և Արևելյան Հայաստանի ամբողջ բնակչության սոցիալական կառուցվածքում:

Ստորև բերվող աղյուսակի տվյալները վերաբերում են 1900 թվականին: Մի շարք ճյուղերում զբաղված բանվորների թվաքանակի վերաբերյալ ամփոփ տվյալներ է տալիս միայն ռուսական առաջին մարդահամարը, ուստի դրանք էլ օգտագործել ենք: Բնական է ենթադրել, որ երկու-երեք տարի անց այդ ճյուղերում զբաղված բանվորների քանակը արդյունաբերական վերելքի հետևանքով պիտի ավելանար (տե՛ս աղյուսակ թիվ 30):

Աղյուսակ թիվ 30[469]

Արտադրության ճյուղերը	Բանվորների քանակը	Տեսակարար կշիռը %-ով
Պղնձագործություն	1.117	3,46
Աղի հանույթ	113	0,35
Սպիրտային խմիչքներ	3.046	9,45
Մետաքսագործություն	1.200	3,72
Բամբակագործություն	748	2,32
Այլ ճյուղեր *	5.632	17,47
Երկաթուղում (մշտական ժամանակավոր) **	2.640	8,19
Տրանսպորտի այլ տեսակներ և կապ	1.898	5,89
Շինարարություն և հարակից ճյուղ	7.670	23,79
Առևտուր և սպասարկման այլ ոլորտներ	737	2,29
Օրավարձուներ և սեպագործներ***	3.717	11,53
Սպասավորներ և ծառաներ ***	3.720	11,54
Ընդամենը	32.238	100

[469] Աղյուսակը կազմված է առանց Ախալքալաքի գավառի համապատասխան տվյալների:

* Վերաբերվում է միայն Կարսի մարզին և Երևանի նահանգին:

** Հետագա տվյալները վերաբերվում են 1897 թվականին:

*** Տրված են միայն քաղաքաբնակները:

Աղյուսակից հետևում է, որ դիտարկվող ժամանակաշրջանի վերջերին Արևելյան Հայաստանում հաշվվում էին շուրջ 32.238 արդյունաբերական բանվորներ: Միաժամանակ նկատելի է, որ ըստ զբաղվածության ոլորտների՝ բանվոր դասակարգի ընդգրկման տեսակետից ամենամեծ բաժինն ունեն շինարարությունն ու հարակից ճյուղերը (23,79%): Ի դեպ, գրեթե նույն պատկերն է ներկայանում ամբողջ կայսրությունում, ուր նշված բնագավառում զբաղված բանվորները քանակապես զիջում էին միայն թեթև արդյունաբերության և մետաղամշակման ճյուղերում զբաղվածներին: Այդ փաստը գերազանցապես բացատրվում է ինչպես ամբողջ Ռուսաստանում[470], այնպես էլ հատկապես Արևելյան Հայաստանում արագ թափով ծավալվող երկաթուղային և խճուղային ճանապարհների շինարարությամբ: Ինչ վերաբերում է օրավարձուների, սևագործների (11,53%) և սպասարկողների ու ծառաների (11,54%) համեմատաբար բարձր տեսակարար կշռին, ապա պետք է ասել, որ նրանք հիմնականում զբաղված էին արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության ճյուղերում, ուր աշխատանքի մասամբ սեզոնային բնույթը (շինարարություն), մասամբ ցածր որակավորում պահանջող բանվորների առկայությունը թելադրում էին այդ կատեգորիայի աշխատողների համեմատաբար բարձր բաժին: Ավելացնենք, որ նրանց քանակը կարող էր ավելի շատ լինել, եթե չլիներ մշտապես դիտվող արտագնացությունը՝ հիմնականում դեպի Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններ:

Երկաթուղային բանվորների համեմատաբար բարձր տեսակարար կշիռը (8,19%) այդ դասակարգի ընդհանուր կազմում մեկնվում է այլ պայմաններով. ինչպես նշվեց, դարավերջին Արևելյան Հայաստանում արդեն շահագործման էր հանձնվել 205 վերստ երկարությամբ երկաթուղագիծ, ուր զբաղված բանվորների առկայությունը նոր երևույթ էր Արևելյան Հայաստանում: Տրանսպորտի այլ տեսակներում և կապում զբաղված էին ընդհանուրի 5,89%-ը:

Արդյունաբերական բանվորության ընդհանուր կազմում մեծ էր նաև սպիրտային խմիչքների արտադրության ոլորտում զբաղված բանվորների բաժինը (9,45%): Այդ փաստն ինքնին հասկանալի է դառնում, եթե բաղդատում ենք մեզ հետաքրքրող տարածաշրջանում սպիրտային խմիչքներ արտադրող ձեռնարկությունների թվաքանակը

---

[470] Բավական է նշել, որ Ռուսական կայսրությունում 90-ական թվականներին օրական կառուցվում էր 1,5 կմ երկաթուղային ճանապարհ: - Տե՛ս История СССР, т. V, М., 1968, с. 312.

և համեմատական մեծությունը: Չպետք է մոռանալ նաև, որ Արևելյան Հայաստանը կոնյակի արտադրությամբ Կովկասում գրավում էր առաջին, գինու արտադրությամբ՝ երկրորդ տեղը:

Տնտեսական կյանքում էական դեր խաղացող մետաքսագործության և բամբակագործության ճյուղերում զբաղված էր արդյունաբերական բանվորության 3,72 և 2,32%-ը:

Երևանի նահանգում և Կարսի մարզում, ըստ մարդահամարի տվյալների, առևտրում զբաղված էր 27.502 մարդ, որոնցից ինքնագործներ էին 7.252-ը[471]: Բնական է, որ առևտրում և նույնիսկ սպասարկման այլ ոլորտներում աշխատող բանվորների քանակը ևս փոքրաթիվ պիտի լիներ՝ ընդամենը 737 մարդ ամբողջ Արևելյան Հայաստանում (առանց Ախալքալաքի գավառի), որը կազմում էր արդյունաբերական բանվորության 2,29%-ը:

Արտադրության մյուս ճյուղերը Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում էական դեր չէին խաղում, իսկ նրանցում զբաղված բանվորական ջոկատները համեմատաբար փոքրաթիվ էին, ուստի տրված են միասին՝ 5632 մարդ: Բնական է, որ այդ դեպքում մեծանում է այդ ճյուղերում զբաղված բանվորների տեսակարար կշիռը՝ 17,47%:

Այսպիսով, Արևելյան Հայաստանի (առանց Ախալքալաքի գավառի) արդյունաբերական բանվորությունը (32.238 մարդ) 19-րդ դ. վերջին կազմում էր ինքնագործների (289.477 մարդ) 11,14%-ը, ոչ գյուղատնտեսական ինքնագործների (76.878 մարդ)՝ 41,93%, իսկ ամբողջ բնակչության (1.604.142 մարդ առանց զորքի և Ախալքալաքի գավառի)՝ ընդամենը 2,00%-ը: Այսպիսով, արդյունաբերական բանվորությունը (ոչ ամբողջական տվյալներով 32.238 մարդ), չնայած իր տեսակարար կշռով զիջում էր հարևան տարածաշրջանների, բնականաբար Ռուսական կայսրության համանման ցուցանիշներին, որոշակի ուժ էր և էական տեղ էր գրավում Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում:

---

[471] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 109, աղյուսակ թիվ 22:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

XIX դարի 80-90-ական թվականներին ապրանքադրամական հարաբերությունների հետագա զարգացման, գյուղացիության քայքայման և ունեզրկման հետևանքով խորանում էր սոցիալական շերտավորումը նաև արևելահայ գյուղում, որի վերջնական արդյունքը, գյուղատնտեսական բուրժուազիայի հետ մեկտեղ գյուղատնտեսական բանվորության ձևավորումն ու զարգացումն էր: Արդյունաբերական պրոլետարիատի հետ մեկտեղ գյուղատնտեսական բանվորության երևան գալը որպես սոցիալական երևույթ, նոր որակ էր պրոլետարիատի առաջացման և զարգացման պատմության մեջ:

Պրոլետարիատի ուղղահայաց բաժանման ժամանակ արդյունաբերականին (ֆաբրիկագործարանային բանվորներ, արդյունահանող բանվորներ, տրանսպորտի, կապի, շինարարության, սպասարկման և այլ բնագավառի բանվորներ) կապիտալիստական հասարակարգում հաջորդում է գյուղատնտեսական բանվորությունը, որին էլ՝ «սևագործները»: Ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական բանվորությունը բաժանվում է քաղաքայինի և գյուղականի (հորիզոնական բաժանում): Ի տարբերություն Ռուսական կայսրության մնացած շրջանների (բացառությամբ Միջին Ասիայի), քաղաքաբնակ գյուղատնտեսական բանվորությունը Արևելյան Հայաստանում տոկոսային հարաբերությամբ ավելի մեծաթիվ էր, որը բնականաբար բացատրվում է երկրի տնտեսական զարգացման մակարդակով:

Դարի 80-ական, նույնիսկ 90-ական թվականներին Արևելյան Հայաստանը, չնայած տնտեսության բուռն զարգացմանը, հիմնականում շարունակում էր մնալ գյուղատնտեսական երկիր: 1897թ. ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, Երևանի նահանգում գյուղատնտեսությամբ էր զբաղվում բնակչության 86,47%, Կարսի մարզում՝ 82,30%, Բաքվի նահանգում՝ 67,98%, Ելիսավետպոլի նահանգում՝ 79,50 %, Թիֆլիսի՝ նահանգում՝ 68,73 %: Ընդհանուր առ-

մամբ Ռուսական կայսրությունում, նույն տվյալների համաձայն, արտադրության այդ ճյուղում զբաղված էր բնակչության 74,57 %[472]:

Գյուղատնտեսությամբ էր զբաղվում նույնիսկ քաղաքային բնակչության նշանակալից մասը՝ Երևանի նահանգում 20,43%, Կարսի մարզում՝ 23,61 % (Ռուսական կայսրությունում՝ 9,36 %, Կովկասում՝ 18,59 %)[473]: Վերոհիշյալ հաշվարկների ժամանակ բնակչության օրգանական մաս չկազմող զորքը ևս նկատի է առնված, որն, ինչ խոսք, ճիշտ չէ: Եթե նկատի չունենանք Երևանի նահանգում և Կարսի մարզում տեղադրված զինվորական ստորաբաժանումները, նշված տոկոսները էլ ավելի կբարձրանան: Հենվելով նույն մարդահամարի այլ տվյալների վրա (համապատասխան հատորների 21-րդ աղյուսակ) և բացառելով զորքը, Վ.Ե.Խոջաբեկյանի կազմած աղյուսակը դրա վկայությունն է (աղյուսակ թիվ 31)[474]:

Աղյուսակ թիվ 31

բնակչություն	Ռուս. կայսրություն	Անդրկովկաս	Այդ թվում նահանգներ					
			Բաքվի	Ելիսավետպոլի	Երևանի	Թիֆլիսի	Կարսի	Քութայիսի
Գյուղատնտեսական	77,2	79,65	71,63	82,12	87,44	71,44	83,91	84,72
Առևտրաարդյունաբերական	17,3	13,78	23,33	12,98	7,79	18,67	6,63	8,63
Անարտադրողական	5,5	6,57	5,04	4,90	4,77	9,89	9,46	6,65
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100

Կարծում եմ, հազիվ թե հնարավոր լինի համաձայնվել այս հեղինակին, երբ նա գրում է. «Առանձին նահանգների զբաղվածության համապատասխան ցուցանիշները համեմատելի դարձնելու համար զբաղմունքի տարբեր բնագավառներ խմբավորելիս հավանաբար, պետք է նրանց ընդհանուր թվից բացառել ռանտյեներին ու թոշա-

[472] Процентное распределение наличного населения Империи обоего пола по группам занятий, показанных при переписи, главным, доставляющия главнейшия средства существовнаия, СПб, 1905, էջ 4, 16:

[473] Նույն տեղում:

[474] Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 84:

կառուներին ... նրանց չդիտելով որպես զբաղմունք ունեցողների»[475]: Բնակչության նշված խմբերը ամեն դեպքում՝ ունեն զբաղմունք թե չունեն, կազմում են տվյալ երկրի, տվյալ տարածաշրջանի բնակչության օրգանական մասը:

Ամեն դեպքում գյուղատնտեսության ցածր արտադրողականության, գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար լինելու կամ բացակայության պայմաններում բնակչության մեծ մասը հարկադրված էր զբաղվել գյուղատնտեսությամբ:

Նշվածը հետևանք էր նաև գյուղատնտեսական խոշոր տնտեսությունների բացակայության: Արևելահայ կալվածատերերի մեծ մասը, որոնց ձեռքում էր կենտրոնացած հողը, սեփական տնտեսություն չէին վարում, գերադասում էին հողը վարձակալության տալ, էլ ավելի մեծացնելով մանր տնտեսությունների քանակը, որն էլ, իր հերթին նպաստում էր գյուղատնտեսական բնակչության քանակի և տեսակարար կշռի ավելացմանը:

Արևելյան Հայաստանում գյուղատնտեսության հիմնական ճյուղը դարի 80-90-ական թվականներին շարունակում էր մնալ հողագործությունը, որով զբաղվում էր բնակչության մեծ մասը: Բնակլիմայական համապատասխան պայմանների առկայությունը պայմանավորում էր նրա բազմաճյուղայնությունը: Բազմաճյուղայնությունը նաև պայմանավորված էր ինչպես գյուղատնտեսության ցածր մասնագիտացումով, այնպես էլ միայն սեփական պահանջարկը բավարարելու միտումով: Կարևոր ենթաճյուղը շարունակում էր մնալ հացահատիկային կուլտուրաների մշակումը:

Ինչպես նշում է Երևանի նահանգապետն իր զեկուցագրերից մեկում՝ « ... սեփական հացը միշտ ունենալու համար գյուղացին իր բաժնեհողի թեկուզ մի մասը ցորեն է ցանում ...»[476]: 1881թ. Երևանի նահանգում նշված կուլտուրաների բերքը կազմել է մոտ 14 մլն, 1890 թ. մոտ 24, իսկ 1900 թ. մոտ 22 մլն. փութ[477]: Չնայած կրկնակի աճին, 90-ական թվականներից սկսած Երևանի նահանգը ցորեն և ալյուր էր ներմուծում: Հացահատիկային կուլտուրաները մշակվում էին հիմնականում Երևանի, էջմիածնի, Սուրմալուի և Նոր Բայազետի գավառնե-

---

[475] Նշվ. աշխ., էջ 85:

[476] Памятная книжка Эриванской губернии на 1906 г., էջ 75:

[477] Տվյալները վերցված են Երևանի նահանգապետի համապատասխան տարիների հաշվետվություններից: Աղյուսակ թիվ 1:

ռում, Կարսի մարզում: Վերջինիս տարածքում հացահատիկի արտադրությունը 1900թ. կազմել է 8 մլն. փթից ավելի[478]:

XIX դարի 80-ական թվականներից սկսած մեծանում է բամբակագործության ենթաճյուղում զբաղվածների թվաքանակը: Ռուսաստանում թեթև արդյունաբերության զարգացումը տեխնիկական կուլտուրաների հումքի մեծ պահանջարկ էր առաջադրում: Բամբակ մշակվում էր հիմնականում Սուրմալուի, Երևանի, էջմիածնի և քիչ չափով՝ Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում:

1881-1900 թվականներին բամբակի արտադրությունը Երևանի նահանգում աճում է մոտ 9 անգամ՝ 42,8 հազ. փթից հասնելով 382,0 հազ. փթի[479]: Բնականաբար բամբակի մշակման և արտադրության ընդլայնումը բնակչության զբաղվածության վերաբաշխում էր առաջացնում ինչպես բուն գյուղատնտեսության, այնպես էլ գյուղատնտեսության և արտադրության այլ ճյուղերի մեջ:

Երրորդ կարևոր ենթաճյուղը խաղողագործությունն էր: Այն տարածված էր Երևանի նահանգի համարյա բոլոր գավառներում, Կարսի մարզի Օլթիի և Կաղզվանի շրջաններում, ինչպես նաև Արևելյան Հայաստանի մնացած գավառներում: Չհաշված բամբակի նախնական մշակումը, խաղողը միակ հումքն էր, որն արդյունաբերական վերամշակման էր ենթարկվում տեղում: Իզուր չէ, որ, ըստ Գ. Առաքելյանի հաշվարկների, Երևանի նահանգում ոգելից խմիչքների արտադրությունում 1900 թ. աշխատում էին 2500-ից ավելի բանվորներ[480]:

Բացի թվարկվածներից տարածված էր նաև բրնձի, ծխախոտի մշակումը, շերամապահությունը (հիմնականում Օրդուբադի և Ղարաբաղի շրջաններում), այգեգործությունը: Այնպես որ բնակչության մի մասը, թեկուզ և փոքրաքանակ, զբաղված էր գյուղատնտեսական նշված կուլտուրաների մշակումով:

Երկրորդ կարևոր ճյուղը, որում զբաղված էր գյուղատնտեսական համեմատաբար փոքր մասը, անասնապահությունն էր: Այն տարածված էր հիմնականում Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի գավառներում, ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում: Անասնապահությամբ զբաղ-

---

[478] Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 138:

[479] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении. Ереван, 1957, 15 387:

[480] Առաքելյան Գ.Ռ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 1990, էջ 213:

վում էին հիմնականում թուրքերն ու քրդերը: Տարբեր տեսակի կենդանիների ընդհանուր գլխաքանակը դարի վերջերին Երևանի նահանգում և Կարսի մարզում 2,3 մլն.- ից ավելի էր[481]:

Գյուղատնտեսական բնակչության զգալի մասը՝ 10.275 մարդ, մարդահամարի տվյալների հիման վրա[482] Վ. Խոջաբեկյանի կատարած հաշվարկների համաձայն, ընդգրկված էր օժանդակ բնույթի աշխատանքներում[483]:

Բնականաբար մեծ էր նաև գյուղատնտեսության բնագավառում զբաղված ինքնուրույն զբաղմունք ունեցողների թվաքանակը: Երևանի նահանգում նրանց տեղաբաշխումը, ճյուղային կառուցվածքը և քանակը տրված է աղյուսակ թիվ 32-ում: Ինքնագործները կազմում էին բնակչության 12,7%, իսկ ընդհանուր ինքնագործների (138.933 մարդ) արդեն 72,76 %-ը (առանց զորքի): Ինքնագործների մոտ 94,5 %, (98.093 մարդ)[484] զբաղված էր երկրագործության ճյուղում, անասնապահության բնագավառում՝ 5,4% (5570 մարդ): Գյուղատնտեսության մնացած ճյուղերում զբաղված էին աննշան քանակությամբ ինքնագործներ (190 մարդ):

Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների գյուղատնտեսական ինքնագործների ընդհանուր թվաքանակը կազմում է 103.853 մարդ, որից իգական սեռի՝ ընդամենը 5570 (5,4%): Ինքնագործները կազմում էին բնակչության 12,7%, իսկ ընդհանուր ինքնագործների (138.933 մարդ) արդեն 72,76 %-ը (առանց զորքի): Ինքնագործների մոտ 94,5 %, (98.093 մարդ)[485] զբաղված էր երկրագործության ճյուղում, անասնապահության բնագավառում՝ 5,4% (5570 մարդ): Գյուղատնտեսության մնացած ճյուղերում զբաղված էին աննշան քանակությամբ ինքնագործներ (190 մարդ):

Նշենք, որ նահանգի քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրդուբադ, Վաղարշապատ և Նոր Բայազետ) գյուղա-

---

[481] Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне. Ереван, 1959, էջ 68:

[482] Первая всеобщая перепись ..., LXXI, Эриванская губ., с. XXIII, 154.

[483] Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 158:

[484] Խոջաբեկյանը մի դեպքում հողագործությամբ զբաղվող ինքնագործների քանակը հաշվարկել է 94,5 հազմարդ 91%: Այնինչ այդ ճյուղում միայն արական սեռի այդքանից ավելի ինքնագործներ էին զբաղված: Տե՛ս նշվ. աշխ., էջ 130:

[485] Խոջաբեկյանը մի դեպքում հողագործությամբ զբաղվող ինքնագործների քանակը հաշվարկել է 94,5 հազմարդ 91%: Այնինչ այդ ճյուղում միայն արական սեռի այդքանից ավելի ինքնագործներ էին զբաղված: Տե՛ս նշվ. աշխ., էջ 130:

տնտեսության բնագավառում զբաղված էին 3894 ինքնագործներ, ընտանիքի անդամների հետ միասին 12.614 մարդ[486]:

Գյուղատնտեսության բնագավառում զբաղված ինքնագործների թվաքանակը, ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը Կարսի մարզում տրված է աղյուսակ թիվ 33-ում: Ինքնագործները կազմում են բնակչության 14,34%-ը (39.000 մարդ), իսկ մարզի ընդհանուր ինքնագործների (49.708 մարդ) արդեն 78,46%-ը (առանց զորքի): Ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Կարսի մարզում գյուղատնտեսության բնագավառում զբաղված ինքնագործների ճնշող մեծամասնությունը՝ 35499 մարդ, զբաղված է երկրագործության ճյուղում (91,02%): Անասնապահության և մնացած ճյուղերում զբաղված էին ընդամենը 3501 ինքնագործներ (8,98%):

Արևելյան Հայաստանի մնացած շրջանների՝ Ախալքալաքի. Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառների գյուղատնտեսական ինքնագործների թվաքանակը, ճյուղային և տարածքային տեղաբաշխումը տրված է աղյուսակ թիվ 34-ում:

Ախալքալաքի գավառում ինքնագործների ընդհանուր թվաքանակը առանց զորքի կազմում էր 10.331 մարդ, որից գյուղատնտեսական՝ 7732 մարդ (74,8%): Նշված թվաքանակից 96%-ը՝ 7421-ը, զբաղված էր հողագործությամբ, մնացածը՝ անասնապահությամբ և միայն 19-ը՝ այլ ճյուղերում: Գավառի ինքնագործների ընդհանուր թվաքանակում աննշան էր կանանց տեսակարար կշիռը՝ ընդամենը 296 մարդ (3,8%):

Բորչալուի գավառում ինքնագործների քանակը կազմում էր 26.104 մարդ (առանց զորքի), որից գյուղատնտեսական՝ 17.625-ը: Այն կազմում էր ընդհանուրի 67,52%-ը: Գյուղատնտեսական ինքնագործների ճնշող մեծամասնությունը՝ 88%-ը (15.518 մարդ) զբաղված էր երկրագործության ճյուղում, 11% (1983 մարդ) անասնապահության, իսկ մնացածը՝ այլ բնագավառներում: Աննշան էր կին ինքնագործների քանակը՝ 629, որը կազմում էր ընդհանուրի 3,6%-ը:

---

[486] Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 391, հավելված 13: Անդրկովկասի հայ, Արևելյան Հայաստանի բնակչության, ինքնագործների թվաքանակի, տեղաբաշխման մասին տես նույն հեղինակի «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաբաշխումը XIX-XX դարերում, XXI դարի շեմին»: Երևան, 2001 և «Բնակչությունը և ինքնագործները Արևելյան Հայաստանում XIX դ. – XX դ. սկիզբ»: - ՊԲՀ, 2006, թիվ 1, էջ 29-49, աշխատանքները:

Աղյուսակ 32

Գյուղատնտեսական ինքնագործների թվաքանակը, ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը Երևանի նահանգում

Գավառներ / Ճյուղեր	Երևանի			Ալեքսանդրապոլի			Նախիջևանի			Նոր Բայազետի			Սուրմալուի			Շ.Դարալագյազի			Էջմիածնի			Ընդամենը		
	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.
Երկրագործություն	16930	552	17482	16397	404	16801	12271	989	13260	12900	353	13253	10177	398	10575	10139	460	10599	15635	488	16123	94449	3644	98093
Անասնապահություն	1275	12	1287	148	4	152	433	8	441	384	2	386	1862	22	1884	360	30	390	1024	6	1030	5486	84	5570
Այլ	22	-	22	54	-	54	68	8	76	17	1	18	6	-	6	2	-	2	12	-	12	18	9	19
Ընդամենը	18227	564	18791	16599	408	17007	12772	1005	13777	13301	356	13657	12045	420	12465	10501	490	10991	16671	494	17165	100116	3737	103853

Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI, Эриванская губерния, СПБ, 1905, сс. 104-109.Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т.III, СПБ, 1905, сс. 128-129

Աղյուսակ 33

Գյուղատնտեսական ինքնագործների թվաքանակը, ծյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը Կարսի մարզում.

Գավառներ / Ճյուղեր	Կարսի			Արդահանի			Կաղզվանի			Օլթիի			Ընդամենը		
	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.	ար.	իգ.	միաս.
Երկրագործություն	13943	300	12243	6918	146	7065	6361	585	6946	7070	175	7245	34293	1206	35499
Անասնապահություն	534	9	543	1861	29	1890	479	66	545	371	44	415	3245	148	3393
Այլ	49	2	51	30	1	31	25	-	25	1	-	1	105	3	108
Ընդամենը	1452	311	14837	8810	176	8986	6865	651	7516	7442	219	7661	37643	1357	39000

Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրի հիման վրա. Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т. III, СПБ, 1905, сс. 120-121

Աղյուսակ 34

Գյուղատնտեսական ինքնագործների թվաքանակը, ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը Ախալքալաքի. Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում

Գավառներ / Ճյուղեր	Ախալքալաք			Բորչալուի			Զանգեզուրի			Ղազախի			Շուշիի			Ընդամենը		
	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.
հողագործություն	7129	292	7421	14948	570	15518	18244	522	18766	12611	186	12797	13660	367	14027	66.592	1937	68529
անասնապահություն	288	4	292	1928	55	1983	1151	8	1159	2086	46	2132	2951	43	2994	8404	156	8560
այլ	19	-	19	120	4	124	24	36	60	10	14	24	202	20	222	375	74	449
Ընդամենը	7436	296	7732	16996	629	17625	19419	566	19985	14707	246	14953	16813	430	17243	75371	2167	77538

Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. Первая всеобщая перепись ..., LXIX, Тифлисская губ., с. 154-157; LXIII, Елисаветпольская губ., с. 104; Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдельным территориальным районам, т. III, СПБ, 1905, сс. 84, 96, 98, 99.

Զանգեզուրի գավառի գյուղատնտեսական ինքնագործները՝ 19.985 մարդ, կազմում էին ընդհանուրի (23.872 մարդ) 83,7%-ը: Գյուղատնտեսական ինքնագործների 94%-ը զբաղված էր երկրագործության, 5,8%-ը (1159 մարդ) անասնապահության և աննշան մասը (60 մարդ)՝ այլ բնագավառներում: Իգական սեռի ինքնագործների թվաքանակը 566-ն էր՝ ընդհանուրի 2,8%-ը:

Գյուղատնտեսական ինքնագործները Ղազախի գավառում կազմում էին ընդհանուրի (21.211 մարդ) 70,5%-ը (14.953 մարդ): Երկրագործության ճյուղում ընդգրկված էր 85,6%-ը (12.797 մարդ), անասնապահության ճյուղում՝ 14,3%-ը (2.132 մարդ): Շուշիի գավառում գյուղատնտեսական ինքնագործները (17.243 մարդ) կազմում էին ընդհանուրի (29.649 մարդ) 58,2%-ը: Երկրագործության ճյուղում զբաղված էր 81,3%-ը (14.027 մարդ), անասնապահությունում՝ 17,4%-ը (2994 մարդ) և միայն 0,1%-ը (222 մարդ)՝ այլ բնագավառներում:

Ընդհանուր առմամբ, Արևելյան Հայաստանի նշված շրջաններում 1.675.686 բնակչությունից ինքնուրույն զբաղմունք ունեին 299.808 մարդ՝ 17,89%-ը: Ինքնագործների նշված քանակից գյուղատնտեսությամբ զբաղվում էին 73,51%-ը՝ 220.391 մարդ:

Աննշան էր կանանց դերը երկրի տնտեսական կյանքում: Ճիշտ է, կանանց, ինչպես և երեխաների, աշխատանքը տվյալ դեպքում «թաքնված» էր, համենայն դեպս նրանք կազմում էին գյուղատնտեսական ինքնագործների ընդամենը 3,86% (6965 մարդ): Իգական սեռի ինքնագործների նման փոքր տոկոսը բնորոշ էր ոչ միայն Արևելյան Հայաստանին: Վ.Ե.Խոջաբեկյանի հաշվարկների համաձայն նրանք կազմում էին Անդրկովկասի ինքնագործների լոկ 8,2%-ը, ընդամենը 96 հազ.մարդ [487] և հիմնականում ընդգրկված էին գյուղատնտեսության մեջ, մասնավոր ծառայություններում (սպասավորներ, տնային ծառաներ և այլն), քիչ թվով՝ վերամշակող արդյունաբերությունում (ջուլհակներ և այլն):

Գյուղատնտեսական բանվորության թվաքանակը, տեղը և դերը բնակչության սոցիալական կառուցվածքում պարզելու համար մեծ նշանակություն ունի նաև գյուղացիության սոցիալական

---

[487] Խոջաբեկյան Վ.Ե., նշվ. աշխ., էջ 386, հավելված թիվ 8-ի ծանոթագրությունը:

շերտավորման, սոցիալական կազմի, հատկապես չքավորության թվաքանակի, տոկոսային հարաբերության ճշտումը, քանի որ գյուղական բնակչության հենց այդ մասն է նրա հիմնական սոցիալական բազան, մատակարարման հիմնական աղբյուրը:

Ռուսական կայսրության, հատկապես կենտրոնական նահանգների, գյուղացիության սոցիալական շերտավորումը, սոցիալական կազմը զեմստվոյական և այլ կարգի վիճակագրական նյութերի համեմատաբար ավելի բավարար առկայության հետևանքով, բավականին խորությամբ ուսումնասիրվել է: Արևելահայ գյուղացիության սոցիալական շերտավորումը, ունեզրկումն ու քայքայումը վերհանելու համար ևս բավարար նյութեր կան: Բայց ահա նույնը չի կարելի ասել նրա սոցիալական կազմի վերաբերյալ: Նյութերի սղությունը, միակողմանիությունը հնարավորություն չի տալիս Արևելյան Հայաստանի ամբողջ գյուղացիության մասշտաբով երևույթի համակողմանի ուսումնասիրմանը: Թերևս բացառություն է կազմում Երևանի նահանգը, որի դեպքում պատմաբանները, տնտեսագետները հիմք ընդունելով հողատարածությունը, ցանքը, բանող անասունը կամ ընդհանուր անասնաքանակը և երբեմն էլ սահմանափակ թվով բյուջեները, փորձել են որոշել գյուղացիության սոցիալական կազմը:

Մանրարտադրողի վերածվելը վարձու բանվորի ենթադրում է, որ նա կորցնում է արտադրության միջոցները՝ հողը, աշխատանքի գործիքները, բանող անասունները, արհեստանոցը և այլն, պահպանելով միայն աշխատուժը: Որ այդ գործընթացը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ընթանում էր նաև Արևելյան Հայաստանում, կասկած չի հարուցում, թեև մինչխորհրդային և թե խորհրդային շատ պատմաբանների, տնտեսագետների աշխատություններում այդ հարցը բավարար գիտական մակարդակով ուսումնասիրված է[488].

Ուստի հարկ չհամարելով անդրադառնալ արևելահայ գյուղացիության ունեզրկմանը, քայքայմանը, սոցիալական շերտավորմանը, փորձենք նախորդ ուսումնասիրությունների և այլ

---

[488] Տե՛ս Туманян О.Е., Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, Адонц М.А., Экономическое развитие Восточной Армениив XIX веке, Ереван, 1957, Амбарян А.С., Развитие капиталистических отношений в армянской деревне,Ереван, 1959, Ռշտունի Վ.Հ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ: Երևան, 1968 և այլն:

վավերագրերի հիման վրա պարզել չքավոր գյուղացիության թվային ընդգրկումը, որը գյուղատնտեսական բանվորության կազմավորման, նրա շարքերի հետագա համալրման հիմնական աղբյուրն է: Դրա համար հարկ է դիտարկել նախ և առաջ արևելահայ գյուղացիության հողապահովվածությունը: Հողն, անկասկած, արտադրության գլխավոր միջոցն է գյուղատնտեսության մեջ: Ուստի հողի քանակով, կատարած ցանքով հնարավոր է ավելի ճիշտ դատել տնտեսության չափերի, որակի մասին, մանավանդ որ Արևելյան Հայաստանում, ինչպես նշվեց, գյուղատնտեսական բնակչության մոտ 80%-ը զբաղված էր հողագործությամբ:

XIX դ. 80-ական թթ. կեսին Երևանի նահանգի պետական գյուղացիության (որը կազմում էր նահանգի գյուղացիության 72%-ը) 51.105 տնտեսություններից, արխիվային փաստաթղթերի հիման վրա[489] Ա.Համբարյանի կատարած հաշվարկների համաձայն, հող չունեին 144 տնտեսություն, իսկ 606-ը ունեին մինչև 1 դեսյատին վարելահող: 1-2 դեսյատին վարելահող ունեին 1482 տնտեսություն, 2-3՝ 1988 տնտեսություն, 3-5՝ 11.154 տնտեսություն[490]:

Պետական գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրող այդ ժամանակի ցարական պաշտոնյաները Արևելյան Հայաստանի շատ շրջաններում մինչև 5 դեսյատին վարելահող ունեցողներին համարում էին չքավոր [491] : Ուստի, հիմք ընդունելով վերոհիշյալ չափը և այն տարածելով ամբողջ նահանգի վրա, Ա.Համբարյանը պետական գյուղացիության 51.105

---

[489] Տես РГИА СПб,ф. 396, оп. 2, д. 1160.

[490] Համբարյան Ա.Ս., Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը 19-րդ դ. երկրերդ կեսին: - Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, էջ 120-121: Լենինը, նրան հետևելով ռուսական պատմագրությանը, Ռուսաստանում չքավորների շարքում են դասում այն տնտեսությունները, որոնք ունեին մինչև 8 դեսյատին վարելահող: Ըստ նրա, այդ «հողի մի քանակություն է, որն ընդհանուր և միջին առումով, անկասկած, անբավարար է ընտանիք պահելու համար» (Վ.Ի.Լենին, ԵԼժ, հ. 16, էջ 242):

[491] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. Тифлис, 1886 г., т. I, сс. 66-70, 350-362, т. II, вып. 3, сс. 220-330 և այլն:

տնտեսություններից 15.374-ը կամ 30%-ը համարում է չքավորներ [492]:

Ներկա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, ըստ 1886թ. ընտանեկան ցուցակագրության տնտեսագետ Օ.Ե. Թումանյանի արած հաշվարկների, կար 61.502 պետական գյուղացիական տնտեսություն, որից 5.200-ը, որը կազմում էր տնտեսությունների 8,5%-ը, չուներ հողատարածություն [493]:

Այդ նույն շրջանում նահանգի պետական գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրող պետական մի պաշտոնյայի տվյալներով 800 գյուղերից 55-ը ունեին անհող տնտեսություններ [494]: Նման տնտեսություններ կային բոլոր գավառներում անխտիր, որը վկայում է այն մասին, որ գյուղացիության ունեզրկում էր ընթանում ամբողջ նահանգում, իհարկե տարբեր գավառներում տարբեր չափերով:

Իրենց տնտեսական դրությամբ պետական գյուղացիությունից շատ քիչ էին տարբերվում արևելահայ գյուղացիության մյուս կատեգորիաները: Նրանց մեջ ևս անհող և չքավոր տնտեսությունների տեսակարար կշիռը փոքր չէր:

Արդեն 60-ական թվականների վերջերին, ըստ Ա.Համբարյանի հաշվարկների, «... կալվածատիրական գյուղերում հողազուրկ տնտեսությունները կազմել են բոլոր գյուղացիների 11,6 տոկոսը: Բայց դա նվազագույնն է, իրականում նրանց տոկոսն ավելի բարձր էր ...

Բացի հողազուրկներից, կալվածատիրական գյուղում կային նաև սակավահող գյուղացիներ, որոնց մեծ մասը, ըստ էության, նույնպես չքավորներ կամ գյուղական կիսապրոլետարներ ու պրոլետարներ էին»[495]: 70-ական թվականների սկզբին կալվածատիրական 36 գյուղերի 1405 տնտեսությունների 50%-ն ուներ մինչև հինգ դեսյատին հողատարածություն: Հենվելով նշված տվյալների վրա Ա.Համբարյանը եզրակացնում է. «Ըստ

---

[492] Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ս., Սիմոնյան Ս.Հ., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 119:

[493] Туманян О.Е., Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, с. 110.

[494] Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края. Тифлис, 1887 г.

[495] Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ս., Սիմոնյան Ս.Հ., նշվ., աշխ., էջ 121:

երևույթին կալվածատիրական գյուղում չքավորների թվաքանակն ավելի մեծ էր, քան պետականում»[496]:

80-90-ական թվականներին թե պետական, և թե կալվածատիրական գյուղացիության հողազրկումն էլ ավելի է արագանում և խորանում: 1895 թվականին Երևանի նահանգում արդեն կային 5.211 հողազուրկ գյուղացիներ[497]:

Գյուղացիության հողազրկմանը նպաստում էին նաև հողաբաժանումների պարբերաբար հետաձգումը, կամ գյուղական համեմատաբար խոշոր հողատերերի կողմից դրանց արգելումը: Այդ երևույթը, ըստ ցարական ժամանակաշրջանի մի ուսումնասիրողի, խիստ բացասաբար էր անդրադառնում չքավոր գյուղացիության տնտեսական դրության վրա[498]: Ղազախի գավառում գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրող պաշտոնյաներից մեկը նշում է, որ այդ գավառի Շամշադինի տեղամասում շատ վաղուց չի եղել հողի վերաբաժանում և որ երիտասարդները նույնիսկ ծանոթ չեն համփա-չարեքին[499] (հողաբաժանման ժամանակ կիրառվող ավանդական չափ):

Գյուղացիության սոցիալական կազմի որոշման համար կարևոր նշանակություն ունի ոչ միայն հողաբաժինը, ցանքը, այլ նաև բանող ուժի առկայությունը. «Հողի մշակման համար, - գրել են գյուղացիները մի խնդրագրում, - բանող ուժն այն Արքիմեդյան լծակն է, առանց որի չի կարելի պատկերացնել հողի շահագործումը և նրա լիառատ ու կենսատու բարիքներից օգտվելը»[500]: Վ.Ի.Լենինը, ինչպես և ռուսական հետագա պատմաբանները, եվրոպական Ռուսաստանի գյուղացիության սոցիալական շերտավորումը ցույց տալու համար օգտագործել են նաև բանող ուժին վերաբերվող վիճակագրական տվյալները: «Ավելի ճիշտ կլինի հարուստ, միջակ և չունևոր գյուղացիներին տարբերել նրանց ունեցած ձիերի քանակությամբ»[501]: Այնուհետև «... միաձի և ձիազուրկ գյուղացիներն իրենց կենսամակարդակով

---

[496] Նույն տեղում, էջ 122:

[497] Семин О., Великая годовщина (Аграрный вопрос и крестьянская/крепостная реформа на Кавказе), Киев, 1911, с. 27.

[498] Свод материалов ...., т.V, ч. 2, с. 110.

[499] Նույն տեղում, т. II, ч. 2, с. 97.

[500] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 99, թ. 2: Տես Հակոբյան Ա., Կարսի մարզի գյուղացիության սոցիալական կազմը: - Պատմա-բանասիրական հանդես, 1982, թիվ 4, էջ 99:

[501] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 7, էջ 190:

բատրակներից բարձր չեն, նույնիսկ ավելի շուտ մոտենում են բատրակի կենսամակարդակի minimum-ին» (ընդգծումը հեղինակինն է - Գ.Կ.): Կոնկրետացնելով այդ միտքը նա շարունակում է. «Գյուղական պրոլետարիատի ներկայացուցիչներին պետք է վերագրել ... բոլոր ձիազուրկներին և մեկ ձի ունեցող գյուղացիների մեծ մասին»[502]: Արևելյան Հայաստանում ձին, որպես քաշող ուժ, համարյա թե չէր կիրառվում: Բայց զեմստվոյական վիճակագրությունը մեկ ձին, իր տնտեսական օգտակարությամբ, հավասարեցնում է երկու եզի [503]:

Արևելյան Հայաստանի պետական գյուղացիության տնտեսական դրությունը դարի 80-ական թթ. կեսերին ուսումնասիրողներից մեկի՝ Ա.Վ.Պարվիցկու տվյալների հիման վրա[504], Մ.Հ.Ադոնցի կատարած հաշվարկների համաձայն Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի հյուսիս-արևելյան շրջաններում 4770 և Շարուր-Դարալագյազի գավառի 2881 տնտեսություններից 1428-ը (18,8%) չուներ բանող անասուն: 670 տնտեսություն (8,9 %) ուներ մեկ, իսկ 1505 տնտեսություն (19,7%) երկու գլուխ բանող անասուն[505]: Բնական է, որ բանող անասուն չունեցող և մեկ գլուխ ունեցող տնտեսությունները (27,7%) պիտի դասել չքավորների շարքը: Ավելացնելով երկու գլուխ ունեցող տնտեսությունների 3/4՝ ինչպես ընդունված է ռուսական զեմստվոյական վիճակագրությունում, կստացվի, որ նշված գավառների 7651 տնտեսություններից 3226-ը՝ 42%-ը, չքավորներ էին, կամ տնտեսապես ոչ լրիվ ապահովվածներ:

Սակայն այստեղ հարկ է նշել, որ բանող կամ ընդհանրապես անասուն չունեցող, կամ քիչ ունեցող գյուղացիական բավական թվով տնտեսություններ տիրում էին մեծ քանակությամբ հողատարածքների: Եվ հակառակը՝ անհող, սակավահող շատ տնտեսություններ ունեին մեծ թվով անասուններ: Նշված երևույթը ցայտուն երևում է հատկապես 1916, 1917 թվականներին

---

502 Նույն տեղում, հ. 3, էջ 192, 203:

503 Ռուսական պատմագրությունը կիրառելի համարելով այդ հավասարեցումը՝ 1 ձի ունեցող տնտեսությունների 3/4-ը դասում է չքավորների շարքը:

504 Տես Материалы ..., т. IV, ч., II, էջ 40-42, 136-137:

505 Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան: 1968, էջ 113, աղյուսակ թիվ 9:

Արևելյան Հայաստանում անցկացրած գյուղատնտեսական մարդահամարների նյութերի ուսումնասիրման ժամանակ[506]:

Եվ դա բնական է. կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացումը հանգեցնում է գյուղատնտեսական նշված երկու հիմնական ճյուղերի ավելի մասնագիտացմանը, նոր ճյուղերի երևան գալուն: Այնպես որ, մեր կարծիքով, չքավորության տոկոսը արևելահայ իրականության մեջ կարիք ունի նվազեցման:

XIX դարի 90-ական թվականներին արևելահայ գյուղում գյուղատնտեսության մասնագիտացումը, ապրանքային բնույթն ավելի ակնառու դարձավ: Կապիտալիստական հարաբերություններն ավելի խորն էին թափանցում գյուղատնտեսության մեջ: Այդ բոլորը հանգեցնում էր նախ և առաջ գյուղացիության սոցիալական շերտավորման ուժեղացմանը:

1892-1894 թթ. անբերրիության և սովի տարիներին այդ երևույթն ավելի ընդգծվեց: Միջակ գյուղացիության մի մասը, տնտեսական անկայուն դրության հետևանքով, զրկվեց արտադրության միջոցներից և համալրեց չքավորության շարքերը, բարձրացնելով վերջինիս տեսակարար կշիռը:

Թե որքանով էր անկայուն միջակ և չքավոր գյուղացիության տնտեսական դրությունը և որքանով նշված տարիների անբերրիությունն ու սովն ազդեցին գյուղացիության տնտեսական դրության վրա՝ երևում է ցարական պաշտոնյաներից մեկի՝ տնտեսագետ Ս.Զավարովի կազմած աղյուսակից (տոկոսներով)[507] (տե՛ս աղյուսակ թիվ 35):

Ավելացնենք, որ նույն հեղինակի վկայությամբ, նշված անբերրիության տարիներին Երևանի նահանգի և Կարսի մարզի շատ շրջաններում անասունների քանակը կրճատվեց 1/5, 1/4 և նույնիսկ 2/3-ով, իսկ անասնազուրկ ընտանիքները զանազան շրջաններում կազմում էին բնակչության 20, 30 և նույնիսկ 40%-ը[508].

Արևելյան Հայաստանում գյուղացիության սոցիալական շերտավորման վառ ապացույց են նաև բյուջեները: Գյուղա-

---

[506] Տե՛ս Համբարյան Ա., Առաքելյան Գ., Կիրակոսյան Գ., Մկրտչյան Ս., Արևելյան Հայաստանը 1916-1917 թթ. մարդահամարներում: Երևան, 1992:

[507] Заваров С., Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, с. 264.

[508] Նույն տեղում, էջ 313:

ցիական տնտեսությունների մասին այդ տվյալները հավաքվել են ոչ մշտապես, անհրաժեշտության դեպքում, ընտրովի:

Աղյուսակ թիվ 35

Վարչական շրջաններ	Բանող անասուն չունեցող տնտես.	Ցանք չունեցող տնտես.	Ցանքատարածք. կրճատ.
Կարսի մարզ	17,6	6,2	21,7
Ալեքսանդրապոլի գավառ	16,0	19,7	31,6
Էջմիածնի գավառ (նախալեռնային շրջան)	42,3	24,2	42,0
Երևանի գավառ (նախալեռնային շրջան)	37,0	36,0	50,0
Նոր Բայազետի գավառ (հյուսիս-արևմտյան շրջ.) (հարավարևմտյան շրջ.)	22,2 34,0	23,3 29,9	42,2 39,0

Նշված տվյալների կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հստակ տեղեկություններ են պարունակում գյուղացիական տնտեսությունների ծախսերի և եկամուտների մասին: Ընդհանուր առմամբ ցարական կայսրության եվրոպական նահանգներում ուսումնասիրվել են 12 հազար տնտեսությունների բյուջեներ[509], որից Արևելյան Հայաստանում տարբեր ժամանակներում՝ 1884թ., 1894 - 1895թթ. և 1902թ. համապատասխանաբար 18, 6 և 41 բյուջեներ:

Դրանց ուսումնասիրմամբ զբաղվել են խորհրդային տնտեսագետներ Օ.Ե.Թումանյանը, Ա.Մ.Ադոնցը և պատմաբան Ա.Համբարյանը[510], որոնք հանգել են այն եզրակացության, որ գյուղացիության չքավոր շերտերի տնտեսություններից ստացված եկամուտը մեծ չափով զիջում է անհրաժեշտ ծախսերին, և

---

[509] Массовые источники по социально-экономической истории России периода капитализма, М, 1979, с. 286.

[510] Տես Тунамян О.Е. Экономическое развитие Армении, ч. I, сс. 134-152, Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, сс. 364-373, Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне, сс. 114-123.

իրենց նորմալ գոյությունը պահպանելու համար նշված դասը ստիպված էր դիմելու աշխատուժը վաճառելուն:

Ապրանքադրամական հարաբերությունների հետագա խորացումը, ցարական կառավարության հարկային լծի ծանրացումը, վաշխառության սաստկացումը արևելահայ գյուղացուն հարկադրում էր դիմել արտագնացության, որը նույնպես նպաստում էր գյուղատնտեսական բանվորության (բնական է նաև արդյունաբերական բանվորության) առաջացմանը և զարգացմանը:

Պակաս դեր չէր խաղում նաև Արևելյան Հայաստանի ագրարային գերբնակեցումը, որը XIX դ. վերջին, XX դարի սկզբին ընդունեց ավելի սուր բնույթ, քան Վրաստանում, Անդրկովկասի մնացած շրջաններում[511]:

Գյուղացիության քայքայումը, շերտավորումն ընթանում էր ավելի արագ, քան արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը: Դրա հետևանքով ավելցուկ աշխատուժի հիմնական սպառումը կատարվում էր երկրից դուրս՝ (հիմնականում Թիֆլիս, Բաքու, Միջին Ասիա, բուն Ռուսաստան) և շատ քիչ չափով ներսում (Երևան, Ալեքսանդրապոլ, Ղափան, Ալավերդի): Տվյալ դեպքում մեզ շատ ավելի հետաքրքրում է ոչ արդյունաբերական՝ հողագործական արտագնացությունը: Այն Արևելյան Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններից ուղղված էր դեպի ցածրադիր, հարթավայրային շրջանները, որտեղ մշակվում էին շատ ավելի աշխատուժ պահանջող տեխնիկական կուլտուրաներ: Հողագործական արտագնացություն նկատվում էր նաև երկրից դուրս (բնականաբար շատ ավելի քիչ, քան արդյունաբերական)՝ հիմնականում դեպի Վրաստան, Անդրկովկասի մնացած շրջաններ, Հյուսիսային Կովկաս, Միջին Ասիա և բուն Ռուսաստան, որտեղ դեռևս գոյություն ունեին ազատ հողատարածքներ:

Արտագնացությունը կտրուկ աճում է դարի վերջին տասնամյակներին: Պետական գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրողների տվյալների համաձայն, 1884-1886 թթ. Նոր Բայազետի գավառի 31 գյուղերից արական սեռի 6400 ներկայացուցիչներից արտագնա աշխատանքի են մեկնել 2230-ը

---

[511] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, с. 512.

(մոտ 35%), նույն գավառի 11 գյուղերից՝ 5065-ը (21%)[512]: Ըստ Նոր Բայազետի ոստիկանական տեղամասի տվյալների, 1891–93թթ. մեկ տարուց ավելի ժամկետով արտագնացությանն մեկնելու համար տեղեկանքներ վերցնողների քանակը աճել է 2,3 անգամ՝ հասնելով 1247 մարդու:

Հարկ է նշել, որ շատ ավելի մեկնում էին առանց տեղեկանքի: Ըստ Մ.Հ.Ադոնցի կատարած հաշվարկների, նշված գավառի գյուղացիական տնտեսությունների 12%-ը երկարաժամկետ վաճառել է իրենց աշխատուժը, իսկ եթե ավելացնենք կարճաժամկետ մեկնողներին էլ, ապա նշված տոկոսը հասնում է մոտ 20-ի[513]:

Շարուր-Դարալագյազի գավառում 90-ական թվականներին արտագնացության էր դիմում աշխատունակ տղամարդկանց արդեն 10%-ը, Ադոնցի հաշվարկների համաձայն՝ 14%-ը[514]: «Նոր դար» -ի մի հաղորդման համաձայն այդ նույն շրջանում Զանգեզուրի աշխատունակ տղամարդկանց 28-30%-ը արտագնա կացություն ուներ[515]:

Դարի 90-ական թվականներին արտագնացությունը ավելի լայն չափեր ընդունեց ամբողջ նահանգում: Ըստ Ս.Զավարովի, նահանգի բոլոր գյուղերի աշխատունակ բնակչության մոտ 10%, իսկ երբեմն էլ նույնիսկ կեսը մեկնում էր արտագնացության [516]:

1898թ. Երևանի նահանգապետի տարեկան հաշվետվության համաձայն, արտագնա աշխատանքի են մեկնել 20.000, իսկ 1901թ. միայն Ալեքսանդրապոլի, Շարուր-Դարալագյազի, Նոր Բայազետի և Նախիջևանի գավառներից՝ 13.400 մարդ[517]: Իհար-

---

[512] Материалы ..., т. I, Тифлис, с. 345, ч. II, с. 140; т. IV, ч. 2, с. 49. – Տե՛ս Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին: ԼՀԳ, 1985, թիվ 8, էջ 25: Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., նշվ. աշխ., Երևան, 1988, էջ 130:

[513] Адонц М.А.,Экономическое развитие Восточной Армении, с. 354.

[514] Նշվ. աշխ., էջ 355:

[515] Նոր դար, 1885, թիվ 139: Տե՛ս Бадалян А. Население Армении современ присоединения ее к России до наших дней. ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների տեղեկագիր, 1953, թիվ 5, էջ 60:

[516] Заваров С., Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, с.285.

[517] Համբարյան Ա., նշվ. հոդվածը, էջ 25, Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., նշվ. աշխ., էջ 47-48:

կե, սրանք միայն պաշտոնական տվյալներ են: Իրականում մեկնողների թվաքանակը շատ ավելին էր:

Հենվելով վերոհիշյալ և ռուսական առաջին մարդահամարի տվյալների վրա Մ.Հ.Ադոնցը եզրակացնում է, որ ընդհանուր առմամբ XIX դարի վերջին գյուղական տղամարդկանց 13-15% վաճառում էր իր աշխատուժը[518]:

Ամփոփելով նշված տվյալները, հեղինակը գյուղատնտեսական բնակչությունը բաժանում է հետևյալ տոկոսային հարաբերության. չքավորներ՝ 47%, միջակներ՝ 40%, կուլակներ՝ 13%[519]: Ըստ նույն հեղինակի մի այլ ուսումնասիրության, XX դարի սկզբին չքավոր տնտեսությունները կազմում էին Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մոտ 48, միջակ տնտեսությունները 34, իսկ կուլակային տնտեսությունները՝ 18 տոկոսը [520]:

Ա.Համբարյանը մինչև 1 դեսյատին ունեցողներին համարելով չքավորներ, 1-3 դեսյատին ունեցողներին՝ միջակներ, 3-ից ավելի ունեցողներին՝ հարուստներ, եզրակացնում է, որ Երևանի նահանգում չքավոր տնտեսությունները կազմել են 26,2%, միջակները՝ 60,6%, իսկ հարուստները՝ 13,2%[521]: Ավելի ուշ նա չքավորներ համարելով մինչև 5 դեսյատին հողատարածք ունեցողներին՝ նման տնտեսությունների թիվը հասցրել է 30%-ի[522]: Իմ կարծիքով նշված հեղինակները գյուղացիության սոցիալական շերտավորումը անհարկի բևեռացրել են:

Հարկ է նշել, որ բավականին դժվար է հողատարածքի որևէ չափ տվյալ դեպքում ընդունել որպես հիմք: Ժամանակի ցարական պաշտոնյաները ևս այդ հարցում հստակ չափանիշ չեն ունեցել:

Այսպես, գաղտնի խորհրդական Մեդվեդևը փոխարքային ուղղված մի զեկուցագրում Կովկասի նախալեռնային շրջաններում չքավորներ է համարել մինչև 2 դեսյատին հողատարածք ունեցողներին: Այլ դեպքերում և այլ տարածքներում պետական

---

[518] Адонц М.А.,Экономическое развитие Восточной Армении, с. 355, 514.

[519] Նույն տեղում, էջ 518:

[520] Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 118-119:

[521] Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне,Ереван, 1959, с. 109.

[522] Տե՛ս Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, էջ 119:

գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրողները չքավորներ են համարել նաև մինչև 3 դեսյատին ունեցողներին: Հողատարածքի նշված չափը Երևանի նահանգի պայմաններում շատ ավելի ռեալ է: Դա թերևս երևում է նաև 51.105 տնտեսությունների հողատարածքների քանակի կտրուկ փոփոխություններից՝ հողազուրկ և մինչև 3 դեսյատին ունեցող տնտեսությունները (4220) կազմում էին ընդհանուրի 8.3%, 3-15 դեսյատին ունեցողները (43.784)՝ 85.7%, 15 և ավելի ունեցողները՝ (3.101)՝ 6.0%: Նշվածն ավելի ակնառու է տնտեսությունների քանակը և ունեցած հողատարածքը ներկայացնող մեր կազմած գծապատկերից (տես էջ 183):

Հարկ է նշել, որ գյուղական վայրերում վարձու աշխատուժ օգտագործած տնտեսությունները 1897թ. մարդահամարի տվյալներով կազմել են ընդամենը 4.5%, որն ավելի մոտ է 15 և ավելի դեսյատին հողատարածք ունեցող տնտեսությունների տոկոսին [523]:

Ուստի և գյուղացիության շերտավորման և անհարկի բևեռացման վերաբերյալ մինչ այժմ մասնագիտական գրականությունում շրջանառվող տվյալները հարկ է վերանայել: Ընդհանրապես ավելի ճիշտ կլիներ գյուղացիության շերտավորումը վերհանելու համար դիտարկել տնտեսությունների կատարած ցանքի քանակը: Միաժամանակ Հայաստանի պայմաններում՝ հարթավայրային, նախալեռնային, լեռնային շրջաններում հողատարածքի միևնույն չափը շերտավորման դեպքում ընդունել հիմք ճիշտ չէ:

Միաժամանակ նշենք, որ նույն գոտում էլ հողի որակը տարբեր տարածքներում տարբեր է լինում և բնականաբար տարբեր է լինում բերքը, եկամուտը: Շատ ավելի գիտական կլիներ տվյալ դեպքում դիտարկել տնտեսությունների ռեալ եկամուտը, սակայն առկա աղբյուրները նման հնարավորություն չեն ընձեռում, այնպես որ հետազոտողները ստիպված են բավարարվել եղածով և ուսումնասիրությունների արդյունքում ստանալ տարբեր թվական տվյալներ:

---

[523] Իշխանյան Բ., Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը. պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը: Թիֆլիս, 1914, էջ 79:


14000
12000
10000
8000
6000
4000
2000
0
տնտեսությունների թիվը
144
606
1482
1988
11154
9756
13436
9438
2641
270
190
0
1
1-2
2-3
3-5
5-7
7-10
10-15
15-25
25-40
>40
հողատարածքը դեսյատինով

Ըստ Հ.Ե.Թումանյանի «պրոլետարական և կիսապրոլետարական խմբերին պատկանող տնտեսությունները Հայաստանի մասշտաբով (հեղինակը նկատի ունի ներկա Հայաստանի սահմանները. - Գ. Կ.) կազմել են 52%, միջակները 40%, կուլակները 8%»[524]: Նույն հեղինակը Ալեքսանդրապոլի գավառում չքավորներ է համարել տնտեսությունների 45%-ը, Երևանի գավառում՝ 63%, իսկ էջմիածնի գավառում՝ նույնիսկ 70%[525]: Մեղմ ասած, դա չէր կարող համապատասխանել իրականությանը:

Այսպիսով, դարի 80-90-ական թվականներին արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացման, գյուղացիության քայքայման, ունեզրկման հետևանքով առաջացել էր մի հոծ մասսա, որոնց աշխատուժը լայն չափով կիրառվում էր նաև գյուղատնտեսության մեջ:

Գյուղատնտեսական պրոլետարիատի պահանջարկ էր ներկայացնում հացահատիկային կուլտուրաների մշակումը, այգեգործությունը, անասնապահությունը, որոնք ընդունել էին ապրանքային բնույթ: Իսկ որքան խորանում էր գյուղատնտեսության մասնագիտացումը Արևելյան Հայաստանում, ընդգծվում էր նրա ապրանքային բնույթը, այնքան աճում էր պահանջարկը բանվորական ուժի նկատմամբ: «Համարյա թե յուրաքանչյուր գյուղում կարելի է տեսնել այնպիսի տնտեսություններ, – գրում է 80-ական թթ. կեսերին պետական գյուղացիության տնտեսական դրությունն ուսումնասիրողներից մեկը, – որոնք չեն կարող առկա աշխատուժով մշակել իրենց հողերը և հարկադրված են պահել մշտական բատրակներ իրենց համագյուղացիներից, կամ մի շարք աշխատանքներ կատարելու համար վարձել հատուկ բանվորներ»[526]: Քոչվորական կյանք վարող քրդերը և մասամբ ադրբեջանցիները, անցնելով նստակեցության, սկզբնական շրջանում, ծանոթ չլինելով հողագործությանը, ևս լայն չափով օգտագործում էին վարձու աշխատուժ[527]:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում իր աշխատուժը վաճառող գյուղական բնակչության այդ

---

[524] Թումանյան Հ.Ե., Հայաստանի նախասովետական շրջանի բնակչությունը, ՊԲՀ, 1965, թիվ 4, էջ 50:
[525] Նույն տեղում, էջ 47-49:
[526] Вермишев Х.А. Земледелие у государственных крестьян Закавказского края. – Свод материалов, т. IV, ч. I, с. 454.
[527] Նույն տեղում, էջ 458:

«Նոր տիպը, - գրում է Վ.Ի.Լենինը, - գյուղական պրոլետարիատն է, հողաբաժին ունեցող վարձու բանվորների դասակարգը: Դրա կազմի մեջ է մտնում չունևոր գյուղացիությունը, այդ թվում նաև միանգամայն հողազուրկը, բայց ռուսական գյուղական պրոլետարիատի ամենատիպիկ ներկայացուցիչը հողաբաժին ունեցող բատրակն է, օրամշակը, սևագործ բանվորը, շինարարական կամ այլ բանվորը: Այդ տիպի հատկանշական գծերն են փոքրիկ հողակտորի վրա տարվող տնտեսության ողորմելի չափը, այն էլ մի տնտեսություն, որը լիակատար անկման մեջ է գտնվում (չքավոր գյուղացիության «արհեստագործությունը»), վերին աստիճանի ցածր կենսամակարդակը, հավանորեն ավելի ցածր, քան հողաբաժին չունեցող բանվորի կյանքի մակարդակն է»[528] (ընդգծումը հեղինակինն է):

Հողաբաժին ունեցող վարձու բանվորների առկայությունը միայն ռուսական կամ հայկական իրականության արգասիքը չէ: Այն չի կարելի ներկայացնել որպես առանձնահատկություն, ինչպես հաճախ կատարվում է: Հողաբաժին ունեցող գյուղական բանվորի տիպը հատուկ է կապիտալիստական բոլոր երկրներին: Տարբեր երկրներում նշված երևույթը տարբեր ձևեր է ընդունում կախված տվյալ երկրի ագրարային հարաբերությունների զարգացման ընթացքից, յուրահատկություններից: Բայց և այնպես այդ չի խանգարում ընդհանրացնելու նրանց որպես գյուղատնտեսական պրոլետարիատ:

Այս բոլորը հատկանշական է նաև գյուղատնտեսական պրոլետարիատի արևելահայ ներկայացուցչի՝ բատրակի վերաբերյալ: Բատրակն էլ ուներ իր հողակտորը, արտադրության այս կամ այն միջոցը, որը սակայն բավարար չէր տնտեսական անկախ գոյության համար, ուստի ստիպված էր վաճառելու իր աշխատուժը:

Աշխատուժը վաճառում էր ոչ միայն տնտեսության տղամարդը, այլև շատ հաճախ՝ կանայք, անգամ երեխաները[529]: 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն, Երևանի նահանգում գյուղատնտեսական մշտական վարձու բանվորների 4,8%-ը

---

[528] Լենին Վ.Ի.,ԵԼժ, հ. 3, էջ 202-203:

[529] Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и комерческом отношениях. Иссл. Аргутинского-Долгорукого А.М., Бочкарева В.П. и Даниловича Р.И., Тифлис, 1897, с. 660; Материалы, т. I, с. 46.

կազմում էին կանայք, իսկ 7,4%-ը՝ մինչև 15 տարեկան երեխաները, Կարսի մարզում կանայք կազմում էին ընդհանուրի 4,8%-ը, իսկ երեխաները՝ 5,2%-ը[530]:

Գյուղատնտեսական բանվորները վարձվում էին շատ հաճախ, ոչ մշտապես: Շատ ավելի էր սեզոնային բանվորների և օրամշակների քանակը: Վարձը տրվում էր ոչ միայն դրամով, այլ նաև բնամթերքով: Աշխատում էին օրական 11-12 ժամ, երբեմն ավելի[531], իսկ վարձատրումը բավականին ցածր՝ օրական մոտ 10-70 կոպեկ, տարեկան 20-25-ից մինչև 45-50 ռուբլի: Ընդ որում գյուղատնտեսական մթերքների գները տարեցտարի աճում էին արագությամբ, իսկ աշխատավարձը բարձրանում էր շատ դանդաղ[532]: Հատկապես ցածր էին վարձատրվում կանայք, երեխաները և Պարսկաստանից եկածները:

Արևելահայ գյուղատնտեսական պրոլետարիատի շարքերը համալրվում էին նաև Արևմտյան Հայաստանից թուրքական ջարդերից փախած հայ բնակչությամբ, որոնք պաշտոնապես կոչվում էին «ժամանակավոր բնակվողներ»: Նրանց քանակը մեծ էր հատկապես սահմանակից Կարսի մարզում՝ 1886 թվականին 11.837 մարդ[533]: Հետագա տարիներին նրանց քանակը գնալով ավելանում էր: Արտադրության բոլոր միջոցներից զրկված արևմտահայի գոյությունը պահպանելու միակ միջոցը, բնական է, աշխատուժը վաճառելն էր:

Վարձու աշխատանքի կիրառումը տարածված էր Արևելյան Հայաստանի համարյա բոլոր շրջաններում: Գարնանը և աշնանը ցանքի և բերքահավաքի շրջաններում պահանջարկն ավելի էր մեծանում, հատկապես Արարատյան հարթավայրում, որն ապրանքային հացահատիկային կուլտուրաների և այգեգործության հիմնական շրջանն էր:

Ամենամյա հաշվետվություններից մեկում (1900թ.) Երևանի նահանգապետը նշում է, որ բամբակի դաշտերի և խաղողի այ-

---

[530] Численность и состав рабочих в России на основании данных первой всеобщей переписи населения Российской империи, 1897 г., т. I, СПб, 1906, Приложение, с. 4.

[531] Материалы ..., т. I, с. 36.

[532] Амбарян А.С., Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, с. 109.

[533] Всеподданнейший отчет Карсской области за 1886 г., с. 10.

գիների 1/3-ը մշակվում էր արդեն վարձու աշխատողների միջոցով[534]:

Մինչև այժմ գյուղատնտեսության բնագավառում աշխատող բանվորների թվաքանակը հիմնականում փորձել են որոշել Ռուսական կայսրությունում անցկացված մարդահամարի նյութերով՝ հենվելով երկարաժամկետ ծառաներ կամ մշակներ պահող գյուղական տնտեսությունների թվի վրա:

Հայ պատմագրության մեջ դրանց առաջինը անդրադարձել է Բ.Իշխանյանը, տալով միայն վարձու աշխատանք օգտագործող տնտեսությունների թվաքանակը Կովկասում, բաժանումը՝ գյուղականի և քաղաքայինի[535], ինչպես նաև վարձու աշխատանք օգտագործող տնտեսությունների տոկոսային հարաբերությունը ընդհանուրի նկատմամբ[536]:

Աղյուսակ թիվ 36

Վարչական շրջաններ	Վարձու և ծառայող պերսոնալ ունեցող տնտ. %	Այդպիսի տնտեսությունների % քաղաքներում
Բաքվի նահանգ	4,2	11,5
Կարսի շրջան	5,9	9,5
Թիֆլիսի նահանգ	10,0	20,2
Երևանի նահանգ	4,5	14,2

Հ.Ե.Թումանյանը, հենվելով մարդահամարի հրատարակված նյութերի վրա[537], Երևանի գավառում գյուղատնտեսական ծխերում երկարաժամկետ վարձվողների քանակը հաշվարկել է 1096 մարդ, իսկ Նոր Բայազետի գավառում՝ 346 մարդ[538]: Նույն հարցին անդրադառնալով մի այլ անգամ հեղինակը նշված գավառների համար նշել է նույն տվյալները, իսկ Ալեքսանդրապոլի գավառում հաշվարկել է 370 մարդ[539], չգիտես ինչու չանդրադառնալով Արևելյան Հայաստանի մնացած շրջաններին:

---

[534] Обзор Эриванской губернии за 1900 г., с.3.

[535] Իշխանյան Բ., Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը. պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը: Թիֆլիս, 1914, էջ 79:

[536] Նույն տեղում, էջ 79:

[537] Памятная книжка Эриванской губернии, 1906 г., II, сс. 160-165.

[538] Туманян О.Е., Экономическое развитие Армении, ч. I, с. 130.

[539] Թումանյան Հ.Ե., Հայաստանի նախասովետական շրջանի բնակչությունը, ՊԲՀ, 1965, թիվ 4, էջ 47:

Նշված նյութերի հիման վրա Մ.Հ.Ադոնցը ներկա Հայաստանի տարածքում երկարաժամկետ վարձվողների քանակը գյուղատնտեսության բնագավառում հաշվարկել է 4356 մարդ[540], նշելով, որ սեզոնային և օրավարձու աշխատողների մասին վիճակագրական տվյալներ չկան: Դարի վերջին «Հայաստանի վարձու աշխատանք կատարողների ընդհանուր թվաքանակում, - շարունակում է հեղինակը, - ամենամեծ տեսակարար կշիռը կազմում էին սեզոնային և օրավարձու աշխատողները, որոնք հիմնականում զբաղված էին գյուղատնտեսական արտադրությունում: Հայաստանի գյուղատնտեսության մեջ վարձու աշխատողների թվաքանակը հասնում էր 40-50 հազար մարդու, որոնց 4/5 կազմում էին սեզոնային աշխատողները»[541]:

Փաստորեն Ադոնցը, ընդունելով, որ մարդահամարի տվյալները թերի են, չեն արտացոլում իրականությանը, փորձ չի կատարել ճշտելու գյուղատնտեսության բնագավառում աշխատող բանվորների ռեալ թվաքանակը: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, նրա տվյալները վերաբերում են ներկա Հայաստանի տարածքին, բաց թողնելով Արևելյան Հայաստանի բազմաթիվ շրջաններ:

Մ.Եգանյանը, հենվելով 1897թ. մարդահամարի տվյալների վրա, սակայն չնշելով աղբյուրները, վարձու բանվորներ օգտագործող տնտեսությունների հիման վրա, Երևանի նահանգում հաշվարկել է ընդամենը 5289 բանվորներ, որից գյուղական վայրերում ընդամենը 3484-ը[542]: Ինչ խոսք, բերված թվական տվյալները հեռու են իրականությունից: Իրականությանը շատ ավելի մոտ են Ա.Համբարյանի տվյալները: Նա ևս, հենվելով երկարաժամկետ մշակներ կամ ծառաներ ունեցող տնտեսությունների քանակի վրա և կատարելով անհրաժեշտ հաշվարկներ ամբողջ Արևելյան Հայաստանում, նշում է «ավելի քան 9 հազար բատրակ, որոնք աշխատում էին գյուղական հարուստների

---

[540] Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении, с. 352. Նշենք, որ հեղինակի՝ Երևանի նահանգի գյուղացիական ծխերի վերաբերյալ բերած տվյալներում կան անճշտություններ: Այսպիսիք կան նաև Հ.Թումանյանի՝ Երևանի գավառին վերաբերող տվյալներում:

[541] Адонц М.А., նշվ. աշխ., էջ 355:

[542] Եգանյան Մ., Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, էջ 138:

տնտեսություններում, կատարելով ամենատարբեր աշխատանքներ»[543].

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսական բանվորության ճիշտ թվաքանակի որոշումն աղբյուրների սղության պատճառով կապված է ավելի մեծ դժվարությունների հետ, քան արդյունաբերականինը: Միակ ամփոփ աղբյուրը շարունակում են մնալ 1897 թ. Ռուսական կայսրությունում կատարած մարդահամարի հրատարակված տվյալները[544]: Չգիտես ինչու, նշված աղբյուրի գյուղատնտեսական բանվորներին վերաբերող տվյալները մինչ այժմ անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել և շրջանառության մեջ չեն դրվել:

Համարյա թե բոլոր ուսումնասիրողների կարծիքով, նշված աղբյուրում բանվորների ընդհանուր քանակը Ռուսական կայսրությունում բավական նվազեցված են: Առավել ևս, դա վերաբերում է գյուղատնտեսական բանվորներին, քանի որ մարդահամարը անցկացվել է ձմռանը, երբ գյուղատնտեսական շատ աշխատանքներ հիմնականում ավարտված են լինում: «Մարդահամարի անցկացման ժամանակը, - գրում է նաև նշված հրատարակության առաջաբանի հեղինակը, - անշուշտ խիստ անդրադարձել է հողագործական բանվորների ընդհանուր թվաքանակի և հատկապես եկվոր բանվորների թվաքանակի վրա, քանի որ հիմք կա ենթադրելու, որ այդ թվաքանակում չեն ընդգրկվել այն բոլոր աշխատողները, որոնք վարձվում էին գարնանային և աշնանային գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում»[545]: Ավելացնենք միայն, որ ոչ թե հիմք կա ենթադրելու, այլ դա իրոք այդպես է. համենայն դեպս Պարսկաստանից Արևելյան Հայաստան եկած գյուղատնտեսական բանվորների մեծ մասն աշնան վերջին վերադառնում էր հայրենիք: Բացի այդ կանանց և երեխաների աշխատանքը կրում էր հիմնականում սեզոնային բնույթ (գարնանը և աշնանը) և բնականաբար նրանց մեծ մասը հաշվարկված չեն:

---

[543] Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ.Ա., Սիմոնյան Ա.Հ., նշվ. աշխ., Երևան, 1988, էջ 130:

[544] Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи1897 г., т. I, II, СПб, 1906.

[545] Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи1897 г., т. I, с. XX.

Գյուղատնտեսական բանվորության կազմը, թվաքանակը, զբաղվածությունը Երևանի նահանգում և Կարսի մարզում տրված է 1897թ. մարդահամարի տվյալների հիման վրա կազմված ստորև բերվող աղյուսակում[546]:

Աղյուսակ թիվ 37

Վարչակ. շրջան.	հողագործ.		անասնապահութ.		այլ բնագավ.		միասին		Ընդ.
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի նահանգ	4798	348	2751	29	212	14	7761	391	8152
Կարսի մարզ	2547	128	1715	21	117	3	4379	152	4531
Ընդամենը	7345	476	4466	50	329	17	12140	543	12683
	7821		4516		346		12683		

Դարի վերջին հողագործության բնագավառում զբաղված են եղել Երևանի նահանգում՝ 5146, իսկ Կարսի մարզում՝ 2675 մարդ, որը կազմում է նշված վարչական շրջանների գյուղատնտեսական բանվորների թվաքանակի 63,1 և 59 իսկ ընդհանուրի 61,7%-ը: Անասնապահության բնագավառում աշխատում էին Երևանի նահանգում՝ 2780, Կարսի մարզում՝ 1736 մարդ կամ համապատասխանաբար 34,1% և 38,3 %, իսկ ընդհանուրի 35,6%:

Ըստ բանվորների զբաղվածության աստիճանի, հողագործությունը գերակշռում է Երևանի նահանգում և Կարսի մարզում, սակայն Կարսի մարզում անասնապահության բնագավառում զբաղվածների տոկոսը բավական բարձր է, գերազանցելով Երևանի նահանգի համապատասխան ցուցանիշը: Եվ դա բնական է, քանի որ անասնապահությունը Կարսի մարզում գյուղատնտեսության մեջ շատ ավելի էական դեր էր խաղում, քան Երևանի նահանգում:

Թե Երևանի նահանգում, թե՛ Կարսի մարզում գյուղատնտեսական այլ աշխատանքներում զբաղվածների տեսակարար կշիռը բավական ցածր է: Նահանգում զբաղված էր ընդամենը 226, իսկ մարզում՝ 120 մարդ, որը կազմում էր գյուղատնտեսական բանվորների ընդհանուր քանակի 2,7%-ը: Նշված

---

[546] Численность и состав рабочих. Приложение. Численность и состав сельскохозяйственных рабочих ..., сс. 4-5.

ցուցանիշը վկայում է, որ գյուղատնտեսական այլ զբաղմունքները բնակչության տնտեսական կյանքում դեռևս երկրորդական դեր էին խաղում:

Աննշան էր կանանց դերը գյուղատնտեսական բանվորների կազմում՝ ընդամենը 4,5%: Իհարկե այդ տոկոսը շատ ավելի մեծ կլիներ, եթե մարդահամարն անցկացվեր ոչ ձմռանը: Չէ որ կանայք, ինչպես նաև երեխաները վարձվում էին գարնանը, իսկ հիմնականում՝ աշնանը որպես օրավարձու կամ սեզոնային բանվորներ, երբ նրանց աշխատուժի պահանջարկը բավական մեծանում էր:

Ընդհանուր առմամբ, մարդահամարի տվյալների համաձայն, 1897թ. ձմռանը Երևանի նահանգում և Կարսի մարզում գյուղատնտեսական բանվորների ընդհանուր թվաքանակը հավասար է 12.683 մարդու (8152-ը նահանգում, 4531-ը մարզում):

Արևելյան Հայաստանի մնացած շրջանների գյուղատնտեսական բանվորների թվաքանակը պարզելու համար վերոհիշյալ աղբյուրը (Численность и состав сельскохозяйственных рабочих) չի կարող օգտակար լինել, քանի որ նրանում տրված են միայն նահանգներին վերաբերվող ամփոփ տվյալները:

Այդ հնարավորությունը մեզ ընձեռում է Ռուսական կայսրության առաջին մարդահամարի համապատասխան հատորների, երկրորդ՝ "Распределение населения по хозяйствам и состав таковых" աղյուսակը, որում տրված է այն տնտեսությունների քանակը, որոնք ունեն մեկ և ավելի երկարաժամկետ վարձու աշխատողներ կամ ծառաներ: Տվյալները բերված են աղյուսակ թիվ 38-ում[547]:

Տնտեսությունների քանակը բազմապատկելով վարձու բանվորների քանակի միջին թվաքանակով (2,5; 4,5; 8 և 11) և կատարելով անհրաժեշտ հաշվարկները մոտավոր ճշտությամբ ստանում ենք, որ Ախալքալաքի գավառում գյուղատնտեսական բանվորների քանակը կազմում էր մոտ 230, Բորչալուի գավառում՝ 1346, Զանգեզուրում՝ 299, Ղազախում՝ 734 և Շուշիում՝ 549, միասին՝ 3158 մարդ: Նման ձևով կատարված հաշվարկնե-

---

[547] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXIX, Тифлисская губерния, СПб, 1905,; Т. LXII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 5.

ռով ստացված այս թվաքանակը թերևս ավելի պակաս է իրականից[548]:

Աղյուսակ թիվ 38

Տնտեսութ. քանակը ըստ գավառների	Վարձու աշխատողների քանակը					Ընդ. տնտես.	Վարձու աշխ. մոտ. քանակը
	1	2-3	4-5	6-10	11 և ավելի		
Ախալքալաք	151	30	1	-	-	951	230
Բորչալու	734	196	14	6	1	182	1346
Զանգեզուր	191	36	4	-	-	231	299
Ղազախ	304	111	16	10	-	441	734
Շուշի	288	62	14	4	1	369	549
Ընդամենը	1668	435	49	20	2	2.174	3158

Բնականաբար այս տվյալները հնարավորություն չեն տալիս որոշելու նշված գավառների գյուղատնտեսական բանվորների ճյուղային կազմը, բայց կարելի է ենթադրել, որ ինչպես Արևելյան Հայաստանի այլ, այնպես էլ նշված գավառներում ճնշող մեծամասնությունը զբաղված էր հողագործության, ապա՝ անասնապահության և միայն աննշան մասը այլ բնագավառներում: Երևանի նահանգում, այսպիսով, ըստ պաշտոնական, ոչ միտումնավոր նվազեցված տվյալների, գյուղատնտեսական երկարաժամկետ բանվորները կազմում էին բնակչության (առանց զորքի 817.948 մարդ) մոտ մեկ տոկոսը և ընդհանուր ինքնագործների 5,86%-ը: Գյուղատնտեսական ինքնագործների մեջ (103.853 մարդ) նրանց տեսակարար կշիռը, բնականաբար, ավելի է մեծանում կազմելով արդեն 7,85%:

Կարսի մարզում գյուղատնտեսական բանվորները կազմում էին բնակչության (առանց զորքի՝ 272.040 մարդ) 1,67%-ը, ինքնագործների 9,1%-ը, իսկ գյուղատնտեսական (39.000 մարդ) ինքնագործների արդեն 11,6%-ը:

Ստացված թվական տվյալները կրկին անգամ ապացուցում են, որ Կարսի մարզի գյուղատնտեսությունը շատ ավելի

---

[548] Որ դա իրոք այդպես է, լավագույնս երևում է նրանից, որ նման մեթոդով Ա.Համբարյանի կատարած հաշվարկների համաձայն, Արևելյան Հայաստանի գյուղատնտեսական բանվորների թվաքանակը կազմել է 9 հազար մարդ, այնինչ, մոտ այդքանը կար միայն Երևանի նահանգում: Տես Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, էջ 137:

էր ընդունել կապիտալիստական բնույթ, ավելի զարգացած էին ապրանքադրամական հարաբերությունները, և այդ բնագավառում ավելի լայն չափով էր կիրառվում վարձու աշխատուժ:

Ցավոք, առկա վիճակագրական տվյալները հնարավորություն չեն տալիս երևույթը դիտարկել ըստ գավառների և օկրուգների: Արևելյան Հայաստանի մնացած տարածաշրջաններում գյուղատնտեսության մեջ, բացառությամբ Բորչալուի գավառի, որտեղ գյուղատնտեսական բանվորները կազմում էին նշված ճյուղի ինքնագործների (17.625 մարդ) 7,65%-ը, վարձու աշխատուժը չնչին կիրառություն ուներ: Բնականաբար այդ տարածաշրջաններում (Ախալքալաքի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներ) ապրանքային արտադրությունը ևս թույլ էր զարգացած:

Այսպիսով, առկա տվյալների ամփոփումից պարզվում է, որ Արևելյան Հայաստանում երկարաժամկետ վարձված գյուղատնտեսական բանվորները, պաշտոնական, ոչ միտումնավոր նվազեցված տվյալների համաձայն (15.841 մարդ), կազմում են բնակչության (1.675.686 մարդ՝ առանց զորքի) մոտ 1%-ը, ինքնագործների (299.808 մարդ) 5,28%-ը, իսկ գյուղատնտեսական ինքնագործների (212.659 մարդ) արդեն 7,45%-ը:

Հետաքրքիր է նշել, որ ակադեմիկոս Ս.Գ.Ստրումիլինի հաշվարկների համաձայն, այդ ճյուղում զբաղված 4,5 մլն. բանվորները (մարդահամարի տվյալներով՝ 2.722.623 մարդ[549]) Ռուսական կայսրությունում կազմում էին ընդհանուր բնակչության 10%-ը[550]: Եզրակացությունը պարզ է:

Ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում շատ էր նաև սեզոնային, ժամանակավոր, օրավարձու և գործարքային գյուղատնտեսական բանվորների քանակը: Մեծ էր նաև «սևագործների» կատեգորիայի տակ հաշվառվածների քանակը, որոնք դիտարկվում էին առաջին անգամ (բանվորներ, որոնք հաշվառման ժամանակ չեն նշել որևէ մասնագիտություն):

Ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն Արևելյան Հայաստանի սևագործ և օրավարձու բանվորնե-

---

[549] Численность и состав рабочих в России, т. I, СПб, 1906, с. XVI.

[550] Рабочий класс России от зарождения до начала XX в., Москва, 1989, с. 269.

րի 65,4%-ը՝ 7041 մարդ, զբաղված էր գյուղական վայրերում (տե՛ս աղյուսակ թիվ 39)[551]:

Աղյուսակ թիվ 39

Վարչական շրջաններ	Օրավարձուներ և սեզոնային			Ծառաներ		
	ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.
Երևանի նահանգ	2028	347[552]	2375	757	178	935
Կարսի մարզ	972	192	1164	163	207	370
Ախալքալաքի գավառ	275	10	285	132	43	175
Բորչալուի գավառ	1552	24	1576	351	5	356
Զանգեզուրի գավառ	297	39	336	175	36	211
Ղազախի գավառ	722	32	754	220	88	308
Շուշիի գավառ	737	99	836	268	77	345
Ընդ. Արևելյան Հայաստանում	6.583	743	7326	2.066	634	2.700
	7326			2.700		

Գյուղական վայրերում զանազան հիմնարկներում, տնային տնտեսություններում և այլն, զբաղված ծառաների թիվը հասնում էր 2525-ի (ընդհանուրի 40,4%-ը Բնական է ենթադրել, որ նրանց մեծ մասն աշխատում էր գյուղատնտեսությունում: Համենայն դեպս ուսումնասիրողները նրանց դասում են գյուղատնտեսական բնակչության մեջ, բանվորության շարքը:

Գյուղական օրավարձուների և սեզոնային գործերի 32,4%-ը բաժին էր ընկնում Երևանի նահանգին, 21,5%-ը՝ Բորչալուի գավառին: Նշված ցուցանիշով երրորդ տեղը զբաղեցնում էր Կարսի մարզը՝ 16%: Օրավարձուների և սեզոնային գործերի ընդհանուր քանակում աննշան էր նրանց տեսակարար կշիռը Զանգեզուրի գավառում, ընդամենը՝ 4,6%: Տվյալ երևույթը յուրաքանչյուր տարածաշրջանի բնակչության թվի նկատմամբ դիտարկելիս, խիստ

[551] Աղյուսակը կազմված է Распределение населения по видам главных занятий, т. III, СПб, 1905, сс. 82-84, 94-97, 118-121, 125-126, 129, 135 տվյալների հիման վրա:

[552] Նշված աղբյուրի էջ 128-129-ում «այլ քաղաքներում» այնուամենայնիվ սեզոնային և օրավարձու կանանց թիվը նշված է 1.036: Բնական է, որ վրիպակ է: Պետք է լինի 136: Նահանգի գյուղերում և քաղաքներում նրանց ընդհանուր թվաքանակն ընդամենը 547 էր:

առանձնանում է Բորչալուի գավառը: Երևանի նահանգի բնակչությունը մի քանի անգամ գերազանցում է գավառի համապատասխան ցուցանիշը, այնինչ նահանգի օրավարձուները և սևագործներն ավել են միայն մոտ 11%-ով: Կանայք կազմում էին ընդհանուրի 10%-ը (743 մարդ):

Ծառաներ կատեգորիայի տակ հաշվառվածների թվաքանակով Երևանի նահանգը բնականաբար նույնպես գրավում է առաջին տեղը ընդհանուրի (2747) 34%-ը: Սակայն բնակչության թվաքանակի նկատմամբ ունեցած հարաբերակցությամբ կրկին առաջին պլան է մղվում Բորչալուի գավառը: Ծառաների ընդհանուր թվաքանակում կանանց տեսակարար կշիռը, նախորդի հետ համեմատած, կրկնակի բարձրանում է՝ 26%:

Սևագործների, օրավարձուների և «ծառաների» ընդհանուր թվաքանակն Արևելյան Հայաստանի գյուղական վայրերում հասնում էր մոտ 10026 մարդու, և ինչպես արդեն նշվեց, բնական է ենթադրել, որ դրանց մեծ մասը զբաղված էր գյուղատնտեսությունում:

Այսպիսով, գյուղատնտեսության բնագավառում զբաղված երկարաժամկետ վարձու աշխատողների, օրավարձուների, սևագործների և ծառաների ընդհանուր թվաքանակը Երևանի նահանգում, Կարսի մարզում և Ախալքալաքի, Բորչալուի, Զանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում, այն է Արևելյան Հայաստանում 1897թ. մարդահամարի պաշտոնական, ոչ դիտմամբ նվազեցված տվյալների համաձայն, կազմում էր 25.867 մարդ: Այդ դեպքում գյուղատնտեսական բանվորությունն արդեն կազմում է բնակչության (առանց զորքի՝ 1.675.686 մարդ) 1,54%-ը, ընդհանուր ինքնագործների (299.808 մարդ) 8,63%-ը, իսկ գյուղատնտեսական ինքնագործների (220.391 մարդ) 11,74%-ը

Գյուղատնտեսական բանվորների հիմնական մասը կենտրոնացված էր Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի և Բորչալուի գավառներում, ինչպես նաև Կարսի մարզում, որոնցում գյուղատնտեսության ճյուղում ապրանքադրամական հարաբերություններն ավելի զարգացած էին, քան Արևելյան Հայաստանի այլ շրջաններում:

Պետք է նաև եզրակացնել, որ գյուղատնտեսական բանվորների թվաքանակն Արևելյան Հայաստանում շատ ավելի էր, քան հավաստում են մարդահամարի պաշտոնական տվյալները:

ՎԵՐՋԱԲԱՆ

Փաստական նյութերի հիման վրա աշատությունում մեջ քննարկված հարցերը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացություններն ու հաշվարկները:.

Բնակչության բնական, մեխանիկական աճը, կառուցվածքային փոփոխությունները տվյալ երկրի զարգացման աստիճանի հիմնական ցուցանիշներից մեկն են: Որպես ընդհանուր օրինաչափություն բնակչության աճը և նրանում կատարված սոցիալական տեղաշարժերը նպաստում են տնտեսության զարգացմանը:

XIX դարի վերջին տասնամյակներին Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանն ընդգրկում էր Երևանի նահանգը, Կարսի մարզը, Ախալքալաքի, Բորչալուի (առանց հյուսիսային շրջանների), Շուշիի, Ղազախի, Զանգեզուրի գավառները և զբաղեցնում էր մոտ 70 հազ. քառ. տարածք:

Արևելյան Հայաստանն աչքի էր ընկնում բարձր ծնունդով և մահացության բարձր տոկոսով: XIX դարի 80-90-ական թվականներին բնական աճը 1000 մարդու հաշվով հիսզվադեպ է գերազանցում 16-ի սահմանները: 90-ական թվականների երկրորդ կեսին բնական աճը Երևանի նահանգի քաղաքներում կազմում էր ընդամենը 12 մարդ, իսկ գավառներում՝ արդեն 16,7 մարդ: Ընդ որում լեռնային գավառներում (Նոր Բայազետ) բնական աճը գերազանցում էր հարթավայրային գավառներին (Շարուր-Դարալագյազի և Երևանի գավառներ):

Նկատենք նաև, որ նորից 1000 մարդու հաշվով արական սեռի բնական աճը գերազանցում էր իգականին, որն էլ բնականաբար բնակչության ընդհանուր քանակում ապահովում էր արական սեռի գերակշռությունը:

Բնական աճի և մեխանիկական տեղաշարժերի հետևանքով 1880-1900 թվականներին Երևանի նահանգում բնակչությունն ավելացել է 51,6%-ով, կամ տարեկան՝ 2,7%-ով: 1880թ. արխիվային տվյալների համաձայն բնակչությունը կազմել է 563.047 մարդ, 1886թ. ընտանեկան ցուցակագրության համաձայն 670.405 մարդ: Տարեկան միջին աճը կազմել է 3,8%: Դարի 90-ական թվականների սկզբին աճի տեմպերը նվազում են (կապված հիմնականում անբերրիության հետ) կազմելով տարե-

կան 1%-ից քիչ ավելի: Հետագա տարիներին աճի տեմպերը բարձրանում են տարեկան մոտ 2,5%: 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն բնակչության քանակը Երևանի նահանգում կազմում էր 829.556 մարդ, իսկ դարի վերջում 853.404 մարդ երկու տասնամյակի ընթացքում ավելանալով 290.357 մարդով, կամ 51,56%:

Ռուսական կայսրությունում 1880–1897թթ. աճը կազմել է 20,45%, Երևանի նահանգի համապատասխան ցուցանիշին զիջելով 2,5 անգամ:

Բնակչությունը նահանգում տեղաբաշխված էր բավականին անհամաչափ: Դարի վերջին մոտ 18% բաժին էր ընկնում Երևանի, մոտ 20%-ը Ալեքսանդրապոլի գավառներին: Շարուր-Դարալագյազի գավառում այն կազմում էր ընդհանուրի 9,2%-ը: Մնացած գավառների բնակչության քանակի տարբերությունը մեծ չէր: Նրանց բաժին էր ընկնում 12-16%:

Ընդ որում, Երևանի գավառի բնակչությունն ընդհանուրի մեջ գնալով ավելանում էր, միտում ունենալով գերազանցել Ալեքսանդրապոլի գավառի համապատասխան ցուցանիշը:

1880 թվականին Կարսի մարզի բնակչության քանակը կազմել է 95.086, այլ տվյալներով 114.282 մարդ, 1886-1897 թվականներին 174.044 հազարից հասնում է 290.654 մարդու: Տարեկան միջին աճը կազմել է 6,4%: Ընդհանուր առմամբ բնակչությունը 1880-1897թթ. ավելացել է մոտ երեք անգամ, կամ ավելի քան 300%: Տարեկան միջին աճը կազմում է մոտ 17,6%: Աճի նման բարձր ցուցանիշը պայմանավորված էր մեծ մասամբ այլ երկրներից կատարված ներգաղթով: Ըստ մարդահամարի տվյալների, բնակչության մոտ 14%-ը ներգաղթել էր Թուրքիայից, հիմնականում՝ Արևմտյան Հայաստանից:

Բնակչությունը մարզում տեղաբաշխված էր շատ ավելի անհամաչափ, քան Երևանի նահանգում: Ընդհանուրի մոտ կեսը՝ 46,2%-ը բնակվում էր Կարսի օկրուգում և ընդամենը՝ 11%-ը Օլթիի օկրուգում: Կաղզվանի և Արդահանի օկրուգներին բաժին էր ընկնում 20 և 23%: Ընդ որում, Արդահանի և Օլթիի բնակչության տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, կապված բնակլիմայական պայմանների, տնտեսական զարգացման մակարդակի հետ, դարի վերջին տասնամյակում գնալով նվազում էր:

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում բնակչության աճի տեմպերը համեմատաբար ցածր են: Այսպես, Ղազախի

գավառում 1886-1897 թվականներին տարեկան միջին աճը կազմում է մոտ 3,2%՝ 85.056-ից հասնելով 112.074 մարդու, Բորչալուի գավառում՝ 2,6%, 101.847-ից հասնելով 128.587 հազար մարդու: Զանգեզուրի և Շուշիի գավառներում բնակչության տարեկան միջին աճը էլ ավելի ցածր է՝ մոտ մեկ տոկոս, որը զիջում է թե Անդրկովկասի, թե Ռուսական կայսրության համանման ցուցանիշներին: Առաջինում բնակչության քանակը 123.997-ից հասնում է 137.871 մարդու, երկրորդում 126.269-ից 139.771 մարդու:

Ընդհանուր առմամբ, Արևելյան Հայաստանի թվարկված շրջաններում բնակչության քանակը 1897թ. մարդահամարի համաձայն, Ախալքալաքի գավառի հետ միասին (72.709 մարդ), կազմել է 1.711.222 մարդ, առանց զորքի՝ 1.675.686 մարդ, որից ինքնագործներ՝ զորքի հետ 335.344 մարդ: Զորքը (35.536) կազմում էր ինքնագործների մոտ 10,6%-ը, իսկ բնակչության մոտ 2%-ը: Առանց զորքի ինքնագործների ընդհանուր թվաքանակը կազմում էր 299.808 մարդ, որից գյուղատնտեսական՝ 220.391, իսկ արդյունաբերական՝ 79.417 մարդ:

Բնակեցվածության վաղեմությամբ, սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանով, հատկապես աշխարհագրական ու բնակլիմայական և մի շարք այլ գործոններով պայմանավորված բնակչության ֆիզիկական խտությունը Երևանի նահանգում մեկ կմ^2 վրա տատանվում էր մոտ 51 (Երևանի գավառ) և 26-ի (Շարուր Դարալագյազի գավառ) միջև՝ ընդամենը 32 մարդ: Նշված ցուցանիշն ամենաբարձրն էր Անդրկովկասում, իսկ Ռուսական կայսրության համապատասխան ցուցանիշը գերազանցում էր մոտ հինգ անգամ (1897թ.՝ 6,5 մարդ):

Կարսի մարզի բնակչության ֆիզիկական խտությունն ավելանում էր շատ ավելի արագ, սակայն մոտ կիսով չափ զիջում էր նահանգին և մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում էր 15 մարդ:

Նախ և առաջ տնտեսական զարգացումով պայմանավորված քաղաքային բնակչությունը Երևանի նահանգում և Կարսի մարզում 1886-1897 թթ.աճում են 41,5 և 32,9%: Սակայն բնակչության ընդհանուր քանակում նրա տեսակարար կշիռը դարի վերջին շարունակում էր մնալ փոքր 11% Երևանի նահանգում (մոտ 80 հազար) և 13%՝ Կարսի մարզում (մոտ 38 հազար):

Միակ քաղաքը Շուշին էր, որի բնակչությունը նշված ժամանակահատվածում ոչ միայն չաճեց, այլև նվազեց (26.806 և

25.881 մարդ): Ամեն դեպքում 1897թ. Ելիսավետպոլի նահանգի քաղաքային բնակչության մոտ 30%-ը բաժին էր ընկնում Շուշիին:

Հայ բնակչության տեսակարար կշիռը (առանց Ախալքալաքի գավառի) շատ բարձր էր Անդրկովկասի քաղաքներում՝ 30,3% (թաթար-մահմեդականներ՝ 11,8%, վրացիներ՝ 9,2%): Ընդհանուր առմամբ քաղաքային բնակչությունն աճում էր ավելի արագ, քան գյուղականը:

Ռուսական կայսրությունում, բնական է և Արևելյան Հայաստանում, XIX դարի 80-90-ական թվականներին բնակչությունը շարունակում էր մնալ դասերի բաժանված: Դասերը ֆեոդալական հասարակարգին բնորոշ սոցիալական խմբեր են, որոնց իրավունքներն ու պարտականությունները ամրապնդվում են օրենսդրությամբ:

Դասերն օբյեկտիվ կատեգորիաներ են, կազմակերպված դասակարգերի հիման վրա՝ ամբողջովին չընդգրկելով դրանք:

Երևանի նահանգում 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների համաձայն արտոնյալ դասերից ազնվականները, բեգերը, աղալարները և մելիքները կազմում էին բնակչության 0,88%՝ (5901 մարդ), Շուշիի գավառում 4,75%, Զանգեզուրի գավառում 4,26%, Ղազախի գավառում 3,2%, Բորչալուի գավառում 1,75% (15.784 մարդ), ընդամենը 21.685 մարդ կամ մոտ 2%:

1897թ. ժառանգական-անձնական ազնվականները, ժառանգական-անձնական պատվավոր քաղաքացիները Երևանի նահանգում կազմում էին բնակչության 1,5%-ը՝ 12.481 մարդ, Կարսի մարզում՝ 1,12%-ը՝ 3.255 մարդ, Շուշիի գավառում՝ 5,16%-ը 7.159 մարդ, Զանգեզուրի գավառում մոտ 5%-ը՝ 6.868 մարդ, Ղազախի գավառում 3,35%-ը՝ 3.754 մարդ և Բորչալուի գավառում 1,8%-ը՝ 2.319 մարդ:

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, նշված արտոնյալ դասերի տեսակարար կշիռը շատ ավելի բարձր է Ղազախի, Զանգեզուրի և հատկապես Շուշիի գավառներում: Նշված դասերի ընդհանուր թվաքանակը (առանց Ախալքալաքի գավառի) հավասար էր 37.035 մարդու, որը կազմում էր բնակչության (առանց զորքի) 2,3%-ը:

Արտոնյալ դասերի թվում էր նաև հոգևորականությունը, որը բնակչության սոցիալական կառուցվածքը դիտարկելու ժա-

մանակ ընդգրկվում է մտավորականության կազմում: Հոգևոր դասի արտոնություններն ու պարտականություններն իրենց օրենսդրական արտացոլումն էին գտել 1836թ. «Պոլոժենիե» -ում, որոնք պահպանվել էին նաև դարի վերջին տասնամյակներին:

Դարի 80-ական թվականների կեսերին հոգևոր դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 1,14%-ը՝ 7.607.մարդ, Շուշիի գավառում մոտ 2%-ը՝ 2.461 մարդ, Բորչալուի գավառում մոտ մեկ տոկոսը՝ 1.065 մարդ, Զանգեզուրի գավառում 1,48%-ը՝ 1.831 մարդ, Ղազախի գավառում 1,1%-ը՝ 935 մարդ, ընդամենը 13.829 մարդ՝ կազմելով ընդհանուր բնակչության ընդամենը 1,25%-ը:

Դարի վերջին հոգևոր դասի քանակը Երևանի նահանգում պակասում է 44 մարդով և կազմում բնակչության 0,9%-ը՝ 7.563 մարդ: Կարսի մարզում հոգևոր դասը կազմել է 1.582 մարդ կամ բնակչության 0,54%-ը: Շուշիի գավառում հոգևոր դասը (1.184 մարդ) կրճատվում է մոտ կիսով չափ: Հոգևոր դասը նվազում է նաև Ղազախի, Զանգեզուրի և Բորչալուի գավառներում: Ախալքալաքի գավառը թերևս միակն էր, որում հոգևոր դասի թվաքանակը ոչ միայն չէր պակասել, այլև ավելացել էր՝ 1218-ից հասնելով 1292-ի:

Ճիշտ է, նշված գավառներում մահմեդական հոգևորականությունը հաշվառված չէ, սակայն այն փոքրաթիվ էր և էական փոփոխություն չէր կարող առաջացնել: Ընդհանուր առմամբ հոգևոր դասը Արևելյան Հայաստանում դարի վերջին կազմում էր 13.643 մարդ կամ բանկչության 0,8%-ը, ի տարբերություն նախորդ տասնամյակի 1,12%-ի (15.067 մարդ):

Ռուսական կայսրությունում, բնականաբար նաև Արևելյան Հայաստանում, առևտրականների դասը բաժանվում էր երկու գիլդայի: Այն միակ դասն էր, որում գրանցվելու համար պետք է վճարվեր, կախված ունեցած կապիտալից, մինչև 500 և 500-ից ավելի ռուբլի: 1898թ. օրենքով վաճառականական դասին պատկանելն արդեն անկախ դարձավ տնտեսական գործունեությունից, որը բնականաբար հանգեցրեց այդ դասի բացարձակ քանակի նվազմանը: Շատ ավելի նվազեց նրա տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում: 1886թ. Երևանի նահանգում վաճառականական դասին պատկանում էին 2539 մարդ, որոնց գերակշռող մասը բնակվում էր քաղաքներում: Այդ

դասը կազմում էր բնակչության 0,38%-ը: Զանգեզուրի գավառում նշված դասը բացակայում էր: Չնչին էր նրանց քանակը Ղազախի (15 մարդ) և Բորչալուի (29 մարդ) գավառներում: Դրա փոխարեն խիստ մեծաթիվ էր Շուշիի գավառում՝ 1110 մարդ, որը կազմում էր տեղի բնակչության 0,87%-ը:

Դարի վերջին վաճառականական դասը Երևանի նահանգում կրճատվում է մոտ 60%-ով, կազմելով ընդամենը 1014 մարդ, Կարսի մարզում՝ 241 մարդ: Կիսով չափ նվազում է նաև Շուշի գավառի վաճառականական դասը (597 մարդ):

Դարի 80-ական թվականների կեսերին Երևանի նահանգում քաղքենիների դասը բնակվում էր Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում: Նրանց թվաքանակը հավասար էր 33.526 մարդու, որը կազմում էր բնակչության 5%-ը: Բավականին մեծ էր նաև Շուշիում բնակվող քաղքենիների դասի թվաքանակը 23.025 մարդ, որը կազմում էր գավառի բնակչության մոտ 38%-ը: 90-ական թվականների վերջերին Արևելյան Հայաստանում քաղքենիների դասն ավելանում է ոչ միայն բացարձակ քանակով, այլև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ: Նրանք սկսում են բնակություն հաստատել ոչ միայն քաղաքներում, այլև գավառներում և օկրուգներում: 1897թ. տվյալների համաձայն Երևանի նահանգում քաղքենիներն արդեն կազմում էին 54.222 մարդ, կամ բնակչության 6,5%-ը:

Զանգեզուրի և Ղազախի գավառներում քաղքենիների դասը փոքրաթիվ էր 342 և 557 մարդ: Այդ դասը շատ ավելի սակավաթիվ էր Բորչալուի գավառում: Շուշիի բնակչության նվազման հետ կապված նվազել էր նաև քաղքենիների դասը, կազմելով ընդամենը 18.344 մարդ: Կարսի մարզում քաղքենիները կազմում էին բնակչության 5,46%-ը (15.871 մարդ): Ընդհանուր առմամբ քաղքենիները կազմում էին (առանց Ախալքալաքի գավառի) բնակչության 5,6%-ը (մոտ 89,5 հազար մարդ):

Հարկատու ամենամեծ դասն Արևելյան Հայաստանում դարի 80-90 - ական թվականներին բնականաբար շարունակում էր մնալ գյուղացիությունը: Երևանի նահանգում գյուղացիության 78,34%-ը պետական էր, Ղազախի գավառում՝ 61,53%-ը, Զանգեզուրի գավառում՝ 55,32%-ը, Բորչալուում՝ 52,59%-ը: Պետական գյուղացիության քանակը համեմատաբար փաքրաթիվ էր Շուշիի գավառում և կազմում էր բնակչության մոտ 24%-ը: Կարսի մարզում գյուղացիության այլ խմբեր գրեթե չկային, համարյա ամ-

բողջը պետական էր: Համեմատաբար մեծ էր նաև մուլքադարական գյուղացիության թվաքանակը, որը կազմում էր բնակչության 6,7%-ը: Աղայական, մելիքական, բեգական և կալվածատիրական այլ խմբերի գյուղացիությունը, որոնք 1886թ. ցուցակագրությամբ հաշվարկված են «տերունական» ընդհանուր անվան տակ, կազմում էին բնակչության 2,72%-ը, Զանգեզուրի գավառում՝ 37,16%-ը, Ղազախում մոտ 34%-ը, Բորչալուում՝ 32%-ը, իսկ Շուշիի գավառում՝ բնակչության կեսից ավելին 50,2%-ը: Սեփականատեր գյուղացիությունը Արևելյան Հայաստանում շատ փոքրաքանակ էր: Երևանի նահանգում այն կազմում էր բնակչության 0,42%-ը, Բորչալուի գավառում՝ 3,46%-ը, Զանգեզուրի գավառում՝ 1,79%-ը և Շուշիու՝ 0,6%-ը: 1897թ. մարդահամարի տվյալների համաձայն գյուղացիության դասը Երևանի նահանգում կազմում էր բնակչության 88,85%-ը, Կարսի մարզում՝ մոտ 84%-ը, Զանգեզուրում՝ մոտ 93%-ը և Ղազախում՝ մոտ 95%-ը: Այլ շրջանների հետ համեմատած այն փոքր էր Շուշիի գավառում՝ մոտ 78%:

Ռուսական կայսրությունում, ինչպես և Արևելյան Հայաստանում, տնտեսության զարգացումը հանգեցնում էր կրթված մարդկանց, մտավորականության պահանջարկի: Աճում էր դպրոցների աշակերտների քանակը: Այսպես, 1880թ. աշակերտները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 0,88%-ը, 1890թ.՝ 0,95%-ը, իսկ 1900թ.՝ արդեն 1,2%-ը: Այդ տոկոսը շատ ավելի արագ էր բարձրանում Կարսի մարզում: 1883թ. աշակերտները կազմում էին մարզի բնակչության 1,7%-ը, իսկ 1900թ.՝ մոտ 3%-ը: Բարձրանում էր նաև բնակչության գրագիտությունը: 1897թ. մարդահամարի տվյալներով գրագետ էր Երևանի նահանգի բնակչության 6,4%-ը, Կարսի մարզի՝ 10,8%-ը: Գրագիտության աստիճանն Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում ավելի ցածր էր: Նման ցածր տոկոսը պայմանավորում էր քուրդ և մահմեդական բնակչության առկայությունը, որոնց մոտ գրագիտության աստիճանը հասնում էր 0,6 - 4%-ի: Գրագիտությունը հայերի մոտ կազմում էր մոտ 12%:

Արևելյան Հայաստանում ձևավորվում էր մտավորականությունը, որը կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում տեղ է գրավում բուրժուազիայի և պրոլետարիատի միջակայքում միջին դասերում մանր բուրժուազիայի հետ միասին և ի տարբերություն այդ «հին միջին» դասի, կարելի

է անվանել «նոր միջին» դաս: Ի տարբերություն ռուսական մտավորականության, որը ձևավորվում էր հիմնականում բարձր խավերին պատկանող դասերի և դասակարգերի միջավայրից, Արևելյան Հայաստանում մտավորականությունն իր կազմով ավելի դեմոկրատական էր:

Ընդհանուր առմամբ, դարի վերջին մտավորականության քանակն Արևելյան Հայաստանում հավասար էր 3.904 մարդու, որը կազմում էր բնակչության 0,23%-ը, ինքնագործների՝ 1,3%-ը: Ծառայողները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության 0,18%-ը, իսկ ինքնագործների մոտ 1%-ը:

Այսպիսով, ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն, մտավորականությունը ծառայողների հետ միասին (7.165 մարդ) կազմում էր Արևելյան Հայաստանի բնակչության 0,43%-ը, ինքնագործների՝ 2,39%-ը: Ռուսական կայսրությունում նույն տվյալների համաձայն նրանք կազմում էին ինքնագործ բնակչության 2,7%-ը:

Արևելյան Հայաստանի մտավորականությունն իր սոցիալական կազմով միատարր չէր, համալրվում էր տարբեր դասերից և դասակարգերից: Հասարակության սոցիալական կառուցվածքում առաջացած փոփոխությունները համապատասխան վերափոխումներ էին առաջացնում մտավորականության կազմում:

Առկա վիճակագրական և հարակից փաստերի հետազոտությունները հերքում են մի շարք հետազոտողների այն եզրակացությունները, թե Արևելյան Հայաստանում բուրժուազիան և պրոլետարիատը որպես դասակարգ, բացակայում էին կամ մինչև 1917 թվականն էլ վերջնականապես չկազմավորվեցին: Վերջին հարցադրումն ինքնին թերի է և անորոշ: Ոչ մի դասակարգ «վերջնականապես» չի կազմավորվում: Բնակչության սոցիալական կառուցվածքում շարունակաբար կատարվող քանակական և որակական փոփոխությունները, տեղաշարժերը շարունակաբար փոփոխություններ են առաջացնում տվյալ հասարակության դասակարգային և ներդասակարգային կառուցվածքում:

XIX դարի երկրորդ կեսին և հատկապես 80-90-ական թվականներին Արևելյան Հայաստանում սկսված տնտեսական վերելքը աներկբա պայմանավորում էր գյուղացիության ֆեոդալական հասարակարգին բնորոշող դաս-դասակարգի քայքայումը գյուղատնտեսական, առևտրաարդյունաբերական բուրժուազիայի և բանվոր դասակարգի ձևավորումը:

Տնտեսական զանազան հանգամանքներով պայմանավորված հայ խոշոր բուրժուազիան գործում էր Արևելյան Հայաստանից դուրս հիմնականում Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլն: Հայկական կապիտալը վճռական դեր էր խաղում Թիֆլիսի սննդի և ընդհանրապես թեթև արդյունաբերությունում: Մարդահամարի տվյալների համաձայն տեղի 4.727 առևտրականների մոտ կեսը հայեր էին: Դարի վերջին Բաքվում շահագործվող նավթահորերի կեսից ավելին՝ 155-ը պատկանում էին հայերին, կամ շահագործվում էին այլ ազգության ներկայացուցիչների հետ: Արևելյան Հայաստանում բուրժուազիան հիմնականում մանր էր ու միջին: Ըստ հաշվարկների ներկա Հայաստանի տարածքում 1897թ. առևտրականներն ընտանիքի անդամների հետ միասին կազմել են 17,5 հազար մարդ, ձեռնարկատերերը 3,5 հազար մարդ: Առևտրաարդյունաբերական բնակչության ընդհանուր քանակը հավասար էր մոտ 63 հազար մարդու:

Գյուղատնտեսական բուրժուազիան ևս մանր էր: Շուրջ 10 հազար համեմատաբար խոշոր հողատերերից սեփական տնտեսություն էր վարում մոտ 20%: Դարի վերջին երկարատև վարձու աշխատուժ էր օգտագործում տնտեսությունների մոտ 3,5%-ը:

Դարի վերջին տասնամյակներին Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում բուրժուազիայից հետո կարևոր տեղ էր գրավում նաև բանվոր դասակարգը:

Ինչպես այլ, այնպես էլ բանվոր դասակարգը բաժանվում էր երկու խմբերի արդյունաբերական և գյուղատնտեսական: Իր հերթին արդյունաբերական պրոլետարիատը բաժանված էր ֆաբրիկա-գործարանայինի (որը համարվում է հիմնականը, իսկ զարգացման մակարդակով առաջատարը) և լեռնարդյունաբերականի, այսինքն, վերամշակող և արդյունահանող ճյուղերում աշխատողների:

Գյուղատնտեսական բանվորությունը նույնպես բաժանված էր երկու հիմնական ճյուղերի՝ հողագործական և անասնապահական: Այլ ճյուղերը Արևելյան Հայաստանում երկրորդական դեր էին խաղում, և նրանցում զբաղված գյուղատնտեսական բանվորների թիվը աննշան էր:

Ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, որոնցում բանվոր դասակարգը կազմավորվում էր հիմնականում (քայքայվող գյուղացիության հետ մեկտեղ) քաղաքային մանր ու միջին արտադրողների ունեզրկման հետևանքով, Արևելյան Հա-

յաստանում նրա կազմավորման հիմնական աղբյուրը գյուղացիությունն էր: Համալրման ներքին և արտաքին մյուս աղբյուրները և վերարտադրությունը դեռևս էական դեր չէին խաղում:

Արևելյան Հայաստանի (առանց Ախալքալաքի գավառի) բանվոր դասակարգի ներդասակարգային կազմը, ընդհանուր թվաքանակը, տեսակարար կշիռը և տեղը բնակչության սոցիալական կառուցվածքում որոշելու, այլ տարածաշրջանների համապատասխան ցուցանիշների հետ համեմատելի դարձնելու համար, վիճակագրական և այլ կարգի փաստական նյութերի ուսումնասիրության հիման վրա ստացված վերջնական տվյալներն ամփոփենք ստորև տրվող աղյուսակում[553]:

Աղյուսակ թիվ 40

Տնտեսության ճյուղերը	Արևելյան Հայաստանում		Վրաստանում		Ռուսական կայսրությունում	
	թվաքանակը	%	թվաքանակը	%	թվաքանակը	%
Արդյունահանող, վերամշակող, շինարարական ու հարակից	19.526	34,0	25.149	21,2	2.596.948	28,4
Տրանսպորտ, կապ, որից երկաթուղային	4.538 2.640	7,9 4,6	7.181 2.891	6,0 2,4	369.029 175.246	4,0 1,8
Գյուղատնտեսական	15.631	27,2	33.141	28,0	2.722.614	29,8
Օրավարձուներ, սևագործներ	10.758	18,7	19.405	16,4	1.094.848	12,0
Առևտրում, սպասարկման այլ բնագավառներում	737	1,3	4.807	4,6	255.588	2,8
«ծառաներ» և այլն	6.245	10,9	28.907	24,4	2.112.635	23,0
Ընդամենը	57.435	100	118.590	100	9.153.662	100

[553] Ռուսական կայսրության և.Վրաստանին վերաբերող տվյալները տե՛ս А.Г.Рашин. Формирование рабочего класса России, М. 1958, сс. 175, 240-242. М.Я.Кантере. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970, с. 14.

Այսպիսով, Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի ընդհանուր թվաքանակը XIX դարի վերջին կազմում էր ավելի քան 57.00 մարդ, որի 34%-ը զբաղված էր արդյունահանող, վերամշակող արտադրությունում, շինարարության և հարակից աշխատանքներում: Այդ բարձր ցուցանիշը պայմանավորված է միայն և միայն նշված խմբում շինարարական բանվորների մեծ թվով 7670 մարդ, որը կազմում է նշված խմբի բանվորների 40%-ը: Նշենք, որ Վրաստանում շինարարությունում զբաղված էր համարյա թե նույնքան բանվոր (7731 մարդ)[554], որը սակայն կազմում էր նշված խմբի բանվորների միայն 15,4%-ը: Արդյունահանող և վերամշակող արդյունաբերությունում զբաղված բանվորների տեսակարար կշռով Արևելյան Հայաստանը բավականաչափ զիջում էր ոչ միայն Ռուսական կայսրությանը, այլև Վրաստանին:

Բանվոր դասակարգի ընդհանուր թվաքանակում իր տեսակարար կշռով 27,2% (15.631 մարդ), երկրորդ տեղում էին գյուղատնտեսությունում զբաղվածները: Այդ ցուցանիշը բավականին մոտ է Վրաստանի (28%) և Ռուսական կայսրության (29,8%) համապատասխան ցուցանիշներին, սակայն դա դեռևս չի նշանակում, թե Արևելյան Հայաստանը գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման աստիճանով հավասար էր Ռուսաստանին: Դա ավելի շուտ բացատրվում է գյուղատնտեսության բազմաճյուղայնությամբ, ավելի աշխատատար ճյուղերի առկայությամբ, ինչպես և սակավահող և հողազուրկ գյուղական բնակչության հարաբերականորեն ավելի մեծ թվաքանակով:

Վերջինով է բացատրվում նաև օրավարձու և սեզոնային բանվորների տեսակարար կշիռը՝ 18,7% (10.758 մարդ), որը գերազանցում է Վրաստանի (16,4%) և Ռուսական կայսրության (12%) համապատասխան ցուցանիշները:

Տրանսպորտում և կապում աշխատում էր բանվորների 7,9%-ը (4.538 մարդ), առևտրում և սպասարկման այլ ոլորտներում՝ 1,3%-ը (ընդամենը 437 մարդ): Առաջին դեպքում այն գերազանցում է Վրաստանի (6%) և Ռուսական կայսրության (4%) համապատասխան ցուցանիշները, իսկ երկրորդում զիջում է երկուսին էլ (համապատասխանաբար՝ 4 և 2,8 տոկոս):

---

[554] Кантере М.Я.. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970, с. 32.

Նշված երկրների հետ համեմատած ցածր էր նաև «ծառաների» տեսակարար կշիռը՝ 10,9% (6.295 մարդ), չնայած Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի ընդհանուր թվաքանակում այդ ցուցանիշը չորրորդն է:

Արևելյան Հայաստանի (առանց Ախալքալաքի գավառի) տնտեսության բոլոր ճյուղերում աշխատող բանվորությունը կազմում է ինքնագործների 19,8%-ը (335.344 մարդ), իսկ բնակչության 3,58%-ը (առանց զորքի 1.604.142 մարդ): Վերջին ցուցանիշով Արևելյան Հայաստանը զիջում էր Վրաստանին (5,6%), և շատ ավելի Ռուսական կայսրությանը (7,4%): Իսկ եթե այդ ցուցանիշով Արևելյան Հայաստանը համեմատենք Ռուսական կայսրության առավել զարգացած շրջանների Պետերբուրգի (24,5%) և Մոսկվայի նահանգների հետ (27,1%), ապա տարբերությունը շատ ավելի զգալի կլինի: Դա նորից գալիս է ապացուցելու, որ չնայած արդյունաբերության համեմատաբար արագ զարգացմանը, Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ Ռուսական կայսրության տնտեսապես թույլ զարգացած շրջաններից մեկը և բնակչության մեջ բանվոր դասակարգի տեսակարար կշռով գերազանցում էր միայն Միջին Ասիային (3,4%):

Ի տարբերություն զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների, բանվոր դասակարգի թվաքանակում աննշան էր կանանց դերը: Ըստ 1897թ. մարդահամարի նյութերի, Երևանի նահանգում նրանք կազմել են ինքնագործ բնակչության ընդամենը 5,71%-ը, (առանց զորքի), Կարսի մարզում 4,2%-ը, Ելիսավետպոլի և Թիֆլիսի նահանգներում համապատասխանաբար մոտ 7%-ը և 12%-ը, Անդրկովկասում ընդհանրապես 8,2%-ը: Նշենք, որ Անդրկովկասում հայ ինքնագործների մեջ կանայք կազմում էին 7,5%-ը:

Բնականաբար ցածր էր նաև իգական սեռի բանվորների տեսակարար կշիռն Արևելյան Հայաստանի բանվորների ընդհանուր թվաքանակում: Երևանի նահանգում և Կարսի մարզում նրանք կազմում էին արդյունաբերական բանվորների երկու տոկոսից էլ պակաս, գյուղատնտեսականում՝ 4,3%-ը (կայսրությունում՝ 28%), սևագործների և օրավարձուների 9,1%-ը (կայսրությունում 26%): Կանանց տեսակարար կշիռը կտրուկ բարձրանում է «ծառաներ և այլն» խմբում հաշվարկվածները՝ մոտ 22%, որոնց մեծ մասը տնային աղախիններ էին:

Անչափահասների աշխատուժն Արևելյան Հայաստանում շատ ավելի էր օգտագործվում, քան Անդրկովկասում և Ռուսական կայսրությունում: Մինչև 17 տարեկան բանվորները կայսրությունում կազմել են ընդհանուրի մոտ 13%-ը, Անդրկովկասում մոտ 16%-ը: Երևանի նահանգում և Կարսի մարզում անչափահասները կազմել են արդյունաբերական բանվորների մոտ 18%-ը, իսկ մինչև 15 տարեկանները մոտ 10%-ը: Ոչ արդյունաբերական ոլորտներում անչափահասների աշխատուժն էլ ավելի լայն չափով էր օգտագործվում, կազմելով տվյալ ճյուղերի բանվորների 35%-ը:

Այսպիսով, XIX դարի վերջին տասնամյակներին Արևելյան Հայաստանում, տնտեսական զարգացմանը զուգընթաց, աճում էր բնակչությունը, փոխվում էր նրա սոցիալական կառուցվածքը՝ ավատատիրական հասարակարգին բնորոշող դաս-դասակարգերն իրենց տեղը զիջում, վերափոխվում էին բուրժուական հասարակարգին բնորոշող դասակարգերի:

РЕЗЮМЕ

Вопросы, обсуждаемые в данной работе на основе фактических материалов, позволяют делать следующие заключения и расчеты. Естественный и механический рост населения и структурные изменения являются основными показателями степени развития данной страны. Как правило, рост населения и социальные сдвиги в нем способствуют развитию экономики.

В течение последних десятилетий XIX века Восточная Армения в составе Российской империи включала в себя Эриванскую губернию, Карсскую область, уезды Ахалкалакский, Борчалинский (без северных районов), Шушинский, Казахский и Зангезурский, занимала более 70 тыс. км^2.

Благодаря естественному росту населения и механическим сдвигам в 1880-1900гг., в Эриванской губернии численность населения возрастала на 51.6 % или 2.7% ежегодно. В 1880г. численность населения Эриванской губернии составляла 563.047 человек, а в конце века - 853.404 человек, то есть, в течение двух десятилетий возросла на 290.357 человек или 51.56%.

В 1880г. численность населения в Карсской области составляла 95.086 человек, по другим данным 114.282 человека, в 1886 - 1897гг, это число со 174.044 достигало да 290.654 человека. Сред-

негодовой рост составил 5,4%. В общем в течение 1880 - 1897гг. численность населения возросла в три раза или более на 300%. Среднегодовой рост составил приблизительно 17,6%. Такой высокий показатель роста, в большей степени был обусловлен эмиграцией из других стран. По данным переписи 14% населения были мигрантами из Турции, в основном, из Западной Армении.

В других регионах Восточной Армении рост численности населения сравнительно низкий. Так, в Казахском уезде в течение 1886-1897гг. среднегодовой рост составил приблизительно 3.2%, достигнув от 85.056 человек до 112.074, в Борчалинском уезде - 2.6%, достигнув от 101.847 до 128.587. В Зангезурском и Шушинском уездах среднегодовой рост еще более низкий - приблизительно 1%, отставая от соответственных показателей Закавказья и Российской империи. В первом случае численность населения от 123.997 человек доходит до 137.871 человека, во втором - от 126.269 до 139.771.

В общем счете в перечисленных регионах Восточной Армении численность населения по данным переписи 1897 года составила 1.711.222 человек, не считая войско - 1.675.686 человек, вместе с Ахалкалакским уездом (72.709 человек), из которых самодеятели вместе с войском - 335.344 человек. Войско (35.536) составляло приблизительно 10.6% самодеятелей и 2% населения. Не считая войска, число самодеятелей составляло 299.808 человек, из которых сельскохозяйственные - 220.391, промышленные - 79.417 человек.

В Эриванской губернии и в Карсской области в 1886-1897гг. городское население растет соответственно на 41.5% и 32.9%. Однако его удельный вес в общем числе населения в конце века продолжал оставаться низким - 11% в Эриванской губернии (около 80 тыс.) и 13% в Карсской области (около 38 тыс.).

Шуши был единственным городом, где в упомянутом периоде численность населения не только не выросла, но и снизилась от 26.806 до 25.881 человек. В любом случае, в 1897г. в Елисаветпольской губернии около 30% городского населения доставалась Шуши. Удельный вес армянского населения (без Ахалкалакского уезда) был очень высок в городах Закавказья - 30.3% (татаро - мусульмане - 11.8%, грузины - 9.2%). В общем счете городское население росло быстрее сельского.

В 1886г. в Эриванской губернии по данным посемейных списков из привилегированных слоев дворян, бегы, агалары, мелики составляли 0.88% населения (5901 человек), в Шушинском уезде 4.75%, в Зангезурском уезде - 4.26%, в Казахском уезде - 3.2%, в Борчалин-

ском уезде - 1.75% (15.784 человек), в общем числе 21.685 человек или около 2%. В 1897г. потомственные и личные дворяне, потомственные и личные почетные граждане в Эриванской губернии составляли 1.5% населения - 12.481 человек, в Карсской области - 1.12% или 3.255 человек, в Шушинском уезде - 5.16%, 7.159 человек, в Зангезурском уезде - 5%, 6.868 человек, в Казахском уезде - 3.35%, 3.754 человек и в Борчалинском уезде - 1.8%, 2.319 человек.

Как показывают расчеты, удельный вес этих привилегированных слоев более высокий в Казахском, Зангезурском и особенно Шушинском уездах. Общая численность упомянутых слоев (без Ахалкалакского уезда) составляла 37.035 человек, или 2.3% населения (без войск).

В общем счете духовенство в Восточной Армении в конце XIX века составляло 13.643 человека или 0.8% населения в отличие от предыдущего десятилетия -1.12% (15.067 человек).

Законом 1898 года принадлежащие слою купцов делало их независимыми от экономической деятельности. Поэтому слой купцов в Эриванской губернии сокращается на 60%, составляя 1014 человек, в Карсской области - 241 человек. Вдвое сокращается и слой купцов в Шушинском уезде (597 человек).

В конце 90-ых гг. в Восточной Армении слой мещан растет не только в абсолютном виде, но и в процентном от численности населения. Они начали обустраиваться не только в городах, но и в уездах, в округах. Согласно данным 1897г., число мещан уже составляло 54.222 человека или 6.5% населения. В Зангезурском и Казахском уездах этот слой был малочисленным - 342 и 557 человек. С сокращением населения Шуши сократился и слой мещан, достигнув 18.344 человек. В Карсской области мещане составляли 5.46% (15.871 человек). В общем счете мещане составляли 5.6% населения, около 89.5 тыс. (без Ахалкалакского уезда).

Согласно данным переписи 1897 года слой крестьян в Эриванской губернии составлял 88.85% населения, в Карсской области - 84%, в Зангезурском уезде - около 93%, в Казахском уезде - около 95%. По сравнению с другими районами эта цифра была низкой в Шушинском уезде - 78%. В Российской империи, как и в Восточной Армении, развитие экономики приводило к росту спроса на образованных людей и интеллигенцию. Росло число школ, учеников. Так, в 1900г. они составляли 1.2 % населения Эриванской губернии, и 3% населения Карсской области.

Согласно первой русской переписи интеллигенция вместе сослуживцами составляла 0.43% населения Восточной Армении,

2.39% самодеятелей. В Российской империи, по тем же данным, они составляли 2.7% самодеятелей.

По разным экономическим причинам армянская крупная буржуазия действовала за пределами Восточной Армении, в основном в Тифлисе, Баку, Москве, Петербурге и т.д. По оценкам на нынешней территории Армении в 1897г. купцы с членами семей составляли 17.5 тыс. человек, предприниматели 3.5 тыс. Общее число торгово-промышленного населения составляло около 63 тыс. человек. Сельскохозяйственная буржуазия была тоже малочисленной. Из соответственно более крупных землевладельцев собственное хозяйство вели около 20%. В конце века долгосрочную наёмную рабочую силу использовали 3.5% хозяйств.

Для того, чтобы определить удельный вес рабочего класса Восточной Армении (без Ахалкалакского уезда), его место в социальной структуре населения и сделать сопоставимыми с соответствующими показателями других регионов, итоговые данные, полученные на основе исследования статистических и других фактических материалов приведены в таблице ниже.

Отрасли экономики	Восточная Армения		Грузия		Российская империя	
	численность	%	численность		численность	%
Промышленные, перерабатывающие, строительные и смежные	19.526	34,0	25.149	21,2	2.596.948	28,4
Транспорт, связь, из них: железнодорожные	4.538 2.640	7,9 4,6	7.181 2.891	6,0 2,4	369.029 175.246	4,0 1,8
Сельскохозяйственные	15.631	27,2	33.141	28,0	2.722.614	29,8
Поденщики, чернорабочие	10.758	18,7	19.405	16,4	1.094.848	12,0
В торговле, в других сферах обслуживания	737	1,3	4.807	4,6	255.588	2,8
"Слуги" и т.д.	6.245	10,9	28.907	24,4	2.112.635	23,0
Итого	57.435	100	118.590	100	9.153.662	100

Таким образом, в течение последних десятилетий XIX века в Восточной Армении параллельно с экономическим развитием,

росла численность населения, менялась его социальная структура - классы, типичные для феодального общества, уступали место классам характерным буржуазному обществу.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ազգային արխիվ – ՀԱԱ

ֆ. 14, g. 1, գ. 8
ֆ. 56, g. 3, գգ. 5, 314
ֆ. 101, g. 1, գգ. 133, 134
ֆ. 102, g. 1, գ. 953
ֆ. 112, g. 2, գ. 152, մաս II
ֆ. 113, g. 1, գ. 506; g. 2, գ. 152
ֆ. 117, g. 1, գգ. 127, 134, 506, 933
ֆ. 125, g. 1, գգ. 14, 23, g. 2, գ. 152
ֆ. 170, g. 1, գ. 11
ֆ. 270, g. 1, գ. 24
ֆ. 271, g. 1, գ. 17

2. Российский Государственный Исторический Архив в С.Петербурге – РГИА, СПб

ф. 20, оп. 2, д. 2927; оп. 12, дд. 12, 245, 395
ф. 22, оп. 2, д. 2927; оп. 12, дд. 12, 395
ф. 37, оп. 32, д. 17
ф. 229, оп. 2, д. 1136
ф. 387, оп. 7, д. 4604
ф. 560, оп. 26, д. 86
ф. 932, оп. 1, дд. 306, 333
ф. 1233, оп. 1, д. 116; оп. 30, д. 112
ф. 1263, оп. 1, д. 163, 4259, 4334, 4477; оп. 2, 4938, 5013, 5189, 5257, 5329, 5384, 5554, ж.з. 1884 г., д. 113, оп. 2, дд. 5189, 5257; ж.з. 1900 г., ч. II
ф. 1268, оп. 14, д. 153; оп. 21, д. 174; оп. 23, дд. 53, 219; оп. 24, д. 231; оп. 25, дд. 170, 262, 297
ф. 1276, оп. 17, д. 485
ф. 1282, оп. 3, дд. 263, 325, 371, 372, 432, 438, 471, 529,

530, 536, 538, 541
ф. 1284, оп. 3, д. 263; оп. 17, д. 485; оп. 223, дд. 36, 59, 67, 75, 86, 113, 116, 118, 122, 123, 124, 136, 180, 191 Б, 197, 200, 204, 214
ф. 1290, оп. 11, дд. 1 - 2823

3. Центральный Государственный Исторический Архив Грузии – ЦГИАГ

ф. 5, дд. 4816, 4849, 5800, 6311, 6655, 7063, 7405
ф. 12, оп. 1, кн. I, дд. 969, 1061, 1109, 1262, 1466, кн. II, дд. 2573, 2653, 2757, 3158
ф. 254, оп. 3, дд. 2230, 2231
ф. 264, оп. 1, кн. I, дд. 143, 1030, 1908, 1909, 1132, 1389, 1390, 1474, 1477, 1542, 1658, 1908, 1909, 1912, 2032, 2037, 2912, 2943, ч. I, дд. 2132, 2143, 2144, 2163, 2171, 2292, 2385, 2460, 2912, ч. I, дд. 2943, 5737, 5746, 5858; кн. II, дд. 2544, 2545, 2673, 2784, 2913, 2959, 2960, 3120, 3158
ф. 279, оп. 1, д. 947

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՏՊԱԳՐՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Արդյունաբերության և բանվոր դասակարգի ծնավորումը Արևելյան Հայաստանում (1803-1920թթ.): Խմբ. Ա.Հ.Հարությունյան, Ա.Կ.Գրիգորյանց: - Բանբեր Հայաստանի արխիվների, 1984, թիվ 1:
2. Արևելյան Հայաստանը 1916-1917թթ. մարդահամարներում: Կազմողներ՝ Համբարյան Ա., Առաքելյան Գ., Կիրակոսյան Գ., Մկրտչյան Ս.: Երևան, 1992:
3. Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931): Երևան, 1932:
4. Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Խմբ. Զ.Ս.Կիրակոսյան: Երևան, 1972:
5. Акты, собранные Кавказской археографической комиссией. Под ред. А.Берже, т. I – XII. Тифлис, 1866-1904.
6. Варзар Б.Е. Список фабрик и заводов Российской империи с включением Сибири, Среднюю Азию, Кавказа (Закавказья). СПб, 1912.

7. Весь Кавказ, Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Сост. и изд. М.С.Шапсович. Баку, 1914.
8. Всеподданейший отчет о состоянии Карсской области за 1884-1893 г.
9. Кавказский календарь 1880-1900гг. Тифлис, 1881-1902гг.
10. Известия Кавказского отдела императорского русского географического общества, т. 7. Тифлис, 1881.
11. Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып I.
12. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, тт. I – VII. Тифлис, 1886-1887гг.
13. Обзор Елисаветпольской губернии за 1895-1900гг. Тифлис, 1896-1901гг.
14. Обзор Эриванской губернии за 1886-1900гг. Эривань, 1887-1901 гг.
15. Обзор Карсской области за 1896-1900гг. Тифлис, 1897-1901гг.
16. Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказском и Закавказском краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862-6 декабря 1872гг. Тифлис, 1873.
17. Памятная книжка Эриванской губернии на 1888-1900гг.
18. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXIII Елисаветпольская губерния, СПб, 1904 г., т. LXIX, Тифлисская губерния, СПб, 1905 г., т. LXXI, Эриванская губерния, СПб, 1905 г., т. LXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900 г., т. LXIV, Карсская область, тетрадь II, СПб, ТИП, Народн. польза 1904-х.
19. Первая всеобщая перепись населения Российской империи. Общий свод по империи результатов разработки данных первой всероссийской переписи, произведенной 28 января 1897 г., тт. I-II, СПб, 1905г. Распределение населения по главнейшим сословиям, вероисповедениям, родному языку и некоторым занятиям. Распределение населения по видам главных занятий и возрастным группам по отдаленным территориальными районами, т. III, СПб, 1905г.
20. Первая всеобщая перепись населения Российской империи 1897г. под ред. Троиницкого Н.А., Общий свод по империи результатов данных всеобщей переписи населения, произведенной 28 чнваря 1897г., т. II, СПб, 1900-1905гг.

21. Погожев А.В. Адресная книга фабрично-заводской и ремесленной промышленности всей России, СПб, 1905г.
22. Полное собрание Законов Российской империи, II, тт. V, IX, XI.
23. Рабочий класс и технический прогресс. Москва, 1965г.
24. Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономических отношениях, Исследования А.М.Аргутинского-Долгорукова, В.П.Бочкарева и Р.И.Даниловича. Тифлис, 1897г.
25. Распределение населенных мест Российской империи по численности в них населения по данным первой всеобщей переписи, 1897г. СПб, 1902г.
26. Распределение рабочих и прислуг по занятий и по месту рождения на оснований данных первой всеобщей переписи населения Российской империи 28 января 1897г. СПб, 1905г.
27. Сборник сведений о Кавказе. Т. VI, Тифлис, 1897г.
28. Сборник статистических сведений о Кавказе, т. VII. Тифлис, 1880г.
29. Сборник статистических сведений о горнозаводской промышленности России в 1887г. Сост. С.Кулбин. Санкт Петербург, 1890г.; Сборник в 1888г., СПб, 1891г.; Сборник в 1889 г., СПб, 1892г.; Сборник в 1890 заводском году, СПб, 1892г.; Сборник в. 1891 заводском году, СПб, 1893г.; Сборник в 1892 заводском году, СПб, 1895г.; Сборник в 1893 заводском году, сост. А.Лоранский, СПб, 1896г.; Сборник в 1894 заводском году, СПб, 1896г.; Сборник в 1895 заводском году, СПб, 1897г.; Сборник в 1896 заводском году, СПб, 1899г.; Сборник в 1898 заводском году, СПб, 1900г.; Сборник в 1899 заводском году, СПб, 1901г.; сост. К.Робук, Сборник в 1900 заводском году, СПб, 1903г.
30. Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Вып. 1-46. Тифлис, 1881-1914гг.
31. Свод законов Российской империи, т. IX, СПб, 1899.
32. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, тт. I-V. Тифлис, 1887-1888гг.
33. Свод статистических данных о населении Закавказского края (Извлечения из посемейных списков) 1886г. Тифлис, 1893.
34. Список фабрик и заводов Европейской России. С.Петербург, 1903.
35. Статистика Российской империи, вып. I. Сборник сведений по России за 1884-1885гг. СПб, 1887.
36. Статистика Российской империи, вып. II. Сборник сведений по России за 1886г. СПб, 1887.

37. Численность и состав рабочих в России на основании Первой всеобщей переписи населения Российской империи 1897г. Под ред. Н.А.Тройницкого, тт. I-II. СПб, 1906.

ՄԱՄՈՒԼ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1. Արծագանք, 1882թ., թիվ 27; 1888թ., թիվ 1:
2. Բանբեր Երևանի համալսարանի, 1983թ., թիվ 3; 1984թ., թիվ 1:
3. Բանբեր Հայաստանի արխիվների, 1983 թ., թիվ 2; 1984թ., թիվ 1:
4. ՀՀ ԳԱԱ Լրաբեր Հասարակական գիտությունների, 1953թ., թիվ 5; 1958թ., թիվ 12; 1959թ., թիվ 1, 6, 7; 1961թ., թիվ 5; 1967թ., թիվ 2-3; 1974թ., թիվ 3; 1975թ., թիվ 8; 1976թ., թիվ 4; 1981թ., թիվ 1; 1982թ.,թիվ 6; 1984թ., թիվ 1, 8; 1985թ., թիվ 8:
5. Մշակ, 1896թ., թիվ 90; 189 թ., թիվ 213:
6. Մուրճ, 1890թ., թիվ 1,13; 1891թ., թիվ 1, 14; 1894թ., թիվ 4; 1899թ., թիվ 11; 1900թ., թիվ 13:
7. Նոր դար, 1885թ., թիվ 139:
8. Պատմա-բանասիրական հանդես, 1961թ., թիվ 5; 1962թ., թիվ 3; 1965թ., թիվ 4; 1967թ., թիվ 2-3; 1976թ., թիվ 4; 1981թ., թիվ 1; 1984թ., թիվ 1:
9. Եզերք, 2007թ., թիվ 2:
10. Археографический ежегодник за 1964г., М., 1965.
11. Вестник воспитания, 1905г., N 9.
12. Вопросы истории, 1971г., N 11; 1976г., N 1; 1980г., N 3; 1985г., N 4.
13 История СССР, 1963г., N2-3; 1976г., N1; 1980г., N3; 1985г., N4.
14. Кавказский календарь на 1880-1901гг.
15. Советская этнография, 1982г., N 4.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբելյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում: Երևան, 1931:
2. Ադոնց Մ.Հ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և տնտեսական միտքը 20-րդ դարի սկզբին: Երևան, 1968:
3. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900): Հ. 2, Էջմիածին, 1921թ.: Հ. 3, Վենետիկ, 1926:

4. Առաքելյան Գ.Ռ., Արևելյան Հայաստանի արդյունագործությունը 19-րդ դարի երկրորդ կեսին: Երևան, 1990:
5. Առաքելյան Գ.Ռ., Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում: Երևան, 2003:
6. Ավագյան Գ.Ե., Հայկական ՍՍՀ բնակչությունը: Երևան, 1975:
7. Ավդալբեգյան Խ.Հ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.): Երևան, 1959:
8. Ավետիսյան Վ.Ա. Հայ հասարակական մտքի զարգացման մարքսլենինյան փուլի սկզբնավորումը: Երևան, 1976:
9. Ավետիսյան Վ.Ա., Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից (1986-1990): Երևան, 1961:
10. Արկոմեդ Ս.Տ. (Ղարաջյան), Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում: Երևան, 1929:
11. Բաղալյան Գ., Հայկական Գանձակի ազգացեղային նկարագիրը XIX դարի վերջին և XX դարի սկզբին: - Եզերք, 2007, թիվ 2:
12. Բարսեղյան Խ.Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ. - 1904թ.): Գիրք առաջին: Երևան, 1967: Գիրք երկրորդ: Երևան, 1975:
13. Գալոյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները: Երևան, 1978:
14. Գրիգորյանց Ա., Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում: Երևան, 1960:
15. Գուլանյան Խ.Գ., Մարքսիստական տնտեսական մտքի տարածումը հայ իրականության մեջ: Երևան, 1961:
16. Գուլանյան Խ.Գ., Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականները: Երևան, 1959:
17. Եգանյան Մ., Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները: Երևան, 1964:
18. Եղիազարյան Ա.Ս., Անդրկովկասի հայ բնակչության սոցիալական կազմի մասին: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր»: Երևան, 1961:
19. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905թթ.): Երևան, 1970:
20. Երկանյան Վ., Հայկական մշակույթը 1800-1917թթ.: Երևան, 1982:
21. Զուրաբյան Ս.Շ., Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր (XVIII դարի վերջին քառորդ - XIX դ. 90-ական թվականներ): Երևան, 1959:
22. Թադևոսյան Ա.Ա., Երևանի նահանգապետի հաշվետվությունների հավաստիության հարցի շուրջը (1851-1917): - Բանբեր Հայաստանի արխիվների: 1983:
23. Իշխանյան Բ., Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը (սոցիոլոգիական պրոբլեմներ): Թիֆլիս, 1908:

24. Իշխանյան Բ., Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը: Թիֆլիս, 1914:
25. Լենին Վ.Ի., ԵԼժ. հ. 3, Երևան, 1975:
26. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838-1913: Թիֆլիս, 1914:
27. Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837-1912: Թիֆլիս, 1914:
28. Լյաշչենկո Պ.Ի., ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. II, Երևան, 1950:
29. Խոնդկարյան Մ.Ա., Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից (XIX դ. վերջ և XX դ. սկիզբ): Երևան, 1974:
30. Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը: Երևան, 1979:
31. Խոջաբեկյան Վ.Ե., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX - XX դարերում, XXI դարի շեմին: Երևան, 2001:
32. Կասյան Ս., Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան: Թիֆլիս, 1923:
33. Կիրակոսյան Գ.Լ., Արևելյան Հայաստանի լեռնաարդյունաբերությունը և նրանում զբաղված բանվորների թվաքանակը (XIX դ. 80-90-ական թվականներ): - ԼՀԳ, 1984, թիվ 8:
34. Կիրակոսյան Լ.Գ., Արտոնյալ դասերը Արևելյան Հայաստանի բնակչության կազմում (XIX դ. 80-90-ական թվականներ): - ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, թիվ 11:
35. Կիրակոսյան Գ.Լ., Քաղքենիների և գյուղացիության դասերը Արևելյան Հայաստանում XIX դ. 80-90-ական թվականներին: - Բանբեր Հայաստանի արխիվների, 1986, թիվ 2:
36. Կիրակոսյան Գ.Լ., Մտավորականության կազմն ու թվաքանակն Արևելյան Հայաստանում XIX դ. 80-90-ական թվականներին: - ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, թիվ 3:
37. Կիրակոսյան Գ.Լ., Արևելյան Հայաստանի դպրոցների և աշակերտների թվաքանակը XIX 80-90-ական թվականներին: - ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, թիվ 2:
38. Կիրակոսյան Գ.Լ., Գյուղատնտեսական ինքնագործները և վարձու աշխատողները Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում: - Պատմա-բանասիրական հանդես, 2009, թիվ 1:
39. Կիրակոսյան Գ.Լ., Մեթոդական դիտարկումներ Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորման և ուսուցման վերաբերյալ: - Միջբուհական գիտաժողովի նյութեր, հատ. II. մաս I, Գյումրի - Երևան, 2009:

40. Կորկուոյան Զ., ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն: Երևան, 1929:
41. Կորկոտյան Զ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը: Հարյուրամյա աճման պատկերը 1830-1930՝ համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ: Երևան, 1930:
42. Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931): Երևան, 1932:
43. Հակոբյան Ա., Կարսի մարզի ազգաբնակչությունը (1817-1914թթ.): Պատմաբանասիրական հանդես, 1976, թիվ 4:
44. Հակոբայն Ա., Կարսի մարզ (գյուղացիության պատմության ուրվագծեր, 1878-1917թթ.): Երևան, 2000:
45. Հակոբյան Թ.Խ., Երևանի պատմությունը (1801-1879թթ.): Երևան, 1959:
46. Հակոբյան Թ.Խ., Երևանի պատմությունը (1879-1917թթ.): Երևան, 1963:
47. Հակոբյան Թ.Խ., Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբ): Երևան, 1960:
48. Հակոբյան Ս.Ս., Բանվոր դասակարգի ձևավորումը Արևելյան Հայաստանում (1861-1914թթ.): Երևան, 1998, Ատենախոսություն:
49. Հայ ժողովրդի պատմություն: Հատոր V: Երևան, 1974: Հատոր VI, Երևան, 1981:
50. Համբարյան Ա.Ս., Մանուֆակտուրայի զարգացումը Հայաստանի արդյունաբերության մեջ: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 12:
51. Համբարյան Ա.Ա., Ֆաբրիկա-գործարանային արտադրության զարգացումը նախասովետական Հայաստանում: - ՀՀ ԳԱ «Տեղեկագիր». 1959, թիվ 6:
52. Համբարյան Ա.Ս., Արևելյան Հայաստանում բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման հարցի շուրջը 19-րդ դարի 80-ական թթ.: - ՀՀ ԳԱ ԼՀԳ, 1981, թիվ 1:
53. Համբարյան Ա.Ս., Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): Երևան, 1983:
54. Համբարյան Ա.Ս., Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը XIX դարի երկրորդ կեսին: - «Պատմա-բանասիրական հանդես», 1984, թիվ 1:
55. Համբարյան Ա.Ս., Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին: - ՀՀ ԳԱ ԼՀԳ, 1985, թիվ 8:
56. Համբարյան Ա.Ս., Մուրադյան Դ., Սիմոնյան Ա., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն: Երևան, 1988:

57. Համբարյան Ա.Ս., Առաքելյան Գ.Ռ., Կիրակոսյան Գ.Լ., Մկրտչյան Ս.Ս., Արևելյան Հայաստանը 1916-1917թթ. մարդահամարներում: Երևան, 1992:
58. Հարությունյան Պ.Պ., Հայաստանի բանվոր դասակարգի դրությունը 1900-1914թթ.: - ՀՀ ԳԱ ԼՀԳ, 1975, թիվ 8:
59. Հարությունյան Պ.Պ., Կիրակոսյան Գ.Լ., Արևելյան Հայաստանի արդյունաբերության զարգացման պատմությունից (19-րդ դարի վերջ - 20-րդ դ. սկիզբ): Բանբեր Հայաստանի արխիվների, 1983, թիվ 2:
60. Հարությունյան Հ.Մ., Նոր Բայազետի գավառը 1818-1913թթ.: Երևան, 2008:
61. Հովհաննիսյան Օ.Մ., Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին: Երևան, 1949:
62. Հովակիմյան Վ.Խ., Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում XIX դարի վերջին: Երևան, 1984:
63. Մելիք-Յոլչյան Ե., Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903-1907: Երևան, 1930:
64. Մելքոնյան Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար - 20-րդ դարի սկիզբ): Երևան, 2005:
65. Մելքոնյան Ա.Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին: Երևան, 2003:
66. Մելքումյան Բ.Գ., Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն (XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1920թ.): Երևան, 1972:
67. Շահումյան Ստ., ԵԼԺ: Հատ. 1, Երևան, 1975:
68. Պարսամյան Վ.Ա., Հայ ժողովրդի պատմություն (1801-1917թթ.): Հատ. երրորդ Երևան, 1967:
69. Ռշտունի Վ.Հ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության: Մաս Ա (1828-1870): Երևան, 1960: Մաս Բ (1870-1917): Երևան, 1968:
70. Агаян Ц.П. К вопросу формирования рабочего класса в Закавказье. – Պատմա-բանասիրական հանդես, 1974, թիվ 3:
71. Адонц М.А. Экономическое развитие Восточной Армении в XIX в. Ереван, 1957г.
72. Амбарян А.С. Развитие капиталистических отношений в армянской деревне (1860-1920). Ереван, 1959.
73. Амфилов А.М. О мелком товарном производстве в сельском хозяйстве пореформенной России. – История СССР, 1963, N2.
74. Андраников И.З. Скотоводство в Закавказском крае. – Свод материалов, т.V, ч. I, Тифлис, 1888.
75. Антелава И.Г., Орджоникидзе Э.А. К вопросу о генезисе и развитии капитализма в сельском хозяйстве и промышленности Грузии, Тбилиси, 1967.

76. Арасханян А.Н. Закавказские шелкомотальные заводы. Тифлис, 1888.
77. Аргутинский-Долгоруков А. История сооружения и эксплуатации Закавказской железной дороги за двадцать пять лет ее существования 1871-1896. Тифлис, 1896.
78. Арутюнян П.П. Положение рабочего класса и рабочего движения в Восточной Армении в 1900-1914гг. Автореферат дис. канд. ист. наук,. Ереван, 1979.
79. Афросов А.А. Изменение социальной структуры советского общества. Москва, 1966.
80. Бадалян А. Население со времени присоединения ее к России до наших дней. – ՀՀ ԳԱ «Տեղեկագիր», 1953, թիվ 5.
81. Балас М. Виноделие в России. Ч. III, СПб, 1897.
82. Баликян О.С. Из истории формирования рабочего класса на строительстве дорог в Восточной Армении. ՀՀ ԳԱ «Լրաբեր», 1975, թիվ 3.
83. Берлин П.А. Русская буржуазия в старое и новое время. Москва, 1922.
84. Боханов А.Н. Российское купчество в конце XIX - начале XX века. - История СССР, 1985, N 4.
85. Брейтерман А.Д. Медная промышленность России и мировой рынок. Ленинград, 1925.
86. Брук С.И., Кабузан В.М. Динамика и этнический состав населения России в эпоху империализма (конец XIXв.- 1917г.). – История СССР, 1980, N 3.
87. Брук С.И., Кабузан В.М. Динамика численности и расселения русского этноса (1678-1917гг.). - Советская этнография, 1982, N 4.
88. Васильев В.И. Численность, состав и территориальное размещение фабрично-заводского пролетариата Европейской России в конце XIX – начале X в. - История СССР, 1976, N 1.
89. Вермишев Х.А. Земледелие у государственных крестьян Закавказского края. – Свод материалов, т. IV, ч. I. Тифлис, 1888.
90. "Весь Кавказ", редакция и издание М.Шапсовича. Баку, 1914.
91. Войтинский Вл. Весь мир в цифрах, т. 1. Берлин, 1925.
92. Волков М.Я. Формирования городской буржуазии в России XVII – XVIII вв. В кн. Города феодальной России. Москва, 1966.
93. Вырсаладзе Б.С. Краткий обзор Александрапольского податного участка. Александраполь, 1910.
94. Воробьев Н.Я. Очерки по истории промышленной статистики в дореволюционной России и в СССР. Москва, 1961.

95. Восканян В.К. Материалы из украинских архивов. - Известия АН Арм. ССР. 1962, N 3.
96. Галоян Г.А. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900 – 1922. Ереван, 1969.
97. Гесен Ю. История горнорабочих СССР, т. II. Москва, 1929.
98. Гиндин И.Ф. Русская буржуазия в период капитализма, ее развитие и особенности. - История СССР, 1963, N 2 - 3.
99. Григорянц А.К. Формирование и развитие технических интеллигенции Армении. Ереван, 1966.
100. Гугушвили П.В. Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX – XX вв. Тбилиси, 1957.
101. Гугушвили П.В. Фабрично-заводская статистика в Закавказье 1864-1928гг. – Труды института экономики АН Груз. ССР, т. XI. Тбилиси, 1957.
102. Гулишамбаров С.И. Обзор фабрик и заводов Закавказского края. Тифлись, 1894.
103. Гулишамбаров С.И. Обзор фабрик и заводов Тифлисской губернии. Историко-статистическое описание фабрично-заводской деятельности Тифлисской губернии в связи с развитием в ней кустарных промыслов. Тифлис, 1898.
104. Гулишамбаров С.И. Историко-экономической обзор шелководства Закавказского края. СПб, 1898.
105. Дубенский М.М. Очерки по экономической географии Закавказья. Тифлис, 1924.
106. Дятлова Н.П. Отчеты губернаторов как исторический источник. – Проблемы архивоведения и источниковедения. Ленинград, 1964.
107. Егиазаров С.А. Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община. Казань, 1889.
108. Егиазаров С.А. Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии. – Свод материалов, т. I. Тифлис, 1887.
109. Ерман Л.К. Интеллигенция в первой русской революции. – М. 1966.
110. Заваров С. Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899.
111. Заваров С. Кавказ в сельскохозяйственном отношений в 1899 г Тб., 1899, Тб. 1900.
112. Заваров С. Экономические условия Карабага и голод 1906 – 1907 гг. СПб, 1907.

113. Зелинский С.П. Садоводство в Закавказском крае. – Свод материалов, т. IV, ч. II. Тифлис, 1888.
114. Из истории меднорудной промышленности Армении. - Գիտաինֆորմացիոն բյուլետեն, 1958, թիվ 2 (9).
115. Из истории рабочего класса дореволюционной Армении. - «Տեղեկագիր», 1959, թիվ 7.
116. Исмаил – Заде Д.Н. Промышленность Азербайджана XIX в. Баку, 1965.
117. Исмайлов М. Социально-экономическая структура Азербайджана в эпоху империализма. Баку, 1982.
118. История СССР, т. V, VI (в двенадцати томах). Москва, 1968.
119. Кадомцев Б.П. Профессиональный и социальный состав населения Европейской России по данным переписи 1897 г. СПб, 1909.
120. Кантере М.Я. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970.
121. Карапетян Р.О. Интеллигенция в социальной структуре общества. М., 1974.
122. Карапетян Р.О. Становление и развитие интеллигенции как особо социального слоя. М., 1974.
123. Каспарова И.Г. Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал. Ереван, 1961.
124. Краткая история рабочего движения в России (1861 – 1917 гг.). Москва, 1962.
125. Корневская Н. Бюджетные обследования крестьянских хозяйств в дореволюционной России. Москва, 1954.
126. Крузе Э.Э. Положение рабочего класса России 1900-1914гг. Ленинград, 1976.
127. Крузе Э.Э. Условие труда и быта рабочего класса в России в 1900 – 1914 гг. Ленинград, 1981.
128. Кугель С.А. Новая в изучении социальной структуры общества. Ленинград, 1968.
129. Лейкина-Свирская В.Р. Интеллигенция в России во второй половине XIX века. М., 1971.
130. Литвак Б.Г. Очерки источниковедения массовой документации. Москва, 1979.
131. Лященко П.И. История народного хозяйства СССР, т. II, Ш., 1956.
132. Марголиус А.М. Соленосные образования Карсской области и Эриванской губернии и другие, кроме каменной соли, полезные ископаемые,. Тифлис, 1909.

133. Массовые источники по социально-экономической истории России периода капитализма. Ред. Ковальченко И.Д. Москва, 1979.
134. Минц Л.Е. Очерки по истории статистики СССР. – В кн. Очерки развития статистики, численность и состав промышленного пролетариата в России. Москва, 1957.
135. Мочалов В.Д. Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX в. Москва, 1958.
136. Оганесян В.Х. Кафанские медные рудники. Ереван, 1978.
137. Пажитанов К.А. Положение рабочего класса в России, т. I. Москва, 1906.
138. Парвицкий А.В. Численный состав государственных крестьян. – Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. II. Тифлис, 1887.
139. Парсамян В.А. История армянского народа 1801 – 1900 гг. Ереван, 1972.
140. Петрович П. Хлопководство в Закавказье. Тифлис, 1912.
141. Пичикян Г. Капиталистическое развитие нефтянной промышленности в Азербайджане. История классовой борьбы в Закавказье, книга I. Тифлис, 1930.
142. Плеханов Г.В. Избранные философские произведения, т. I. Москва, 1956.
143. Погожев А.В. Учет численности и состав рабочих в России. СПб, 1906
144. Погожев А.В. Адресная книга фабрично-заводской и ремесленной промышленности Всей России. СПб, 1907.
145. Рабочий класс и технический прогресс. Москва, 1965.
146. Рабочий класс и рабочее движение в России 1861-1917гг. Сб. статей. Москва, 1966.
147. Рабочий класс России от зарождения до начала XX в. Москва, 1989.
148. Рабочий класс в период империализма. М., 1981.
149. Рашин А.Г. Формирования промышленного пролетариата в России, Статистич. экономическ. очерки. М., 1940.
150. Рашин А.Г.Население России за 100 лет. М., 1956.
151. Рашин А.Г. Формирование рабочего класса России. М., 1958.
152. Риндзюнский П.Р. Городское гражданство дореформенной России. Москва, 1958.
153. Рыбаков Ю.И. Программа и организация сбора сведений по промышленной статистике России XVIII - XIX веков. – Археографический ежегодник за 1964 г. Москва, 1965.

154. Рындзюнский П.Г. Экономический строй крестьянского хозяйства России в пореформенное время. – Вопросы истории, 1971, N 11.
155. Сагратян А.Т. История железных дорог Закавказья. Ереван, 1970.
156. Саркисян Г.Г. Население Восточной Армении в XIX – начале XX в. Ереван, 2002.
157. Свавидский Н.А. Земские подворные переписи. Москва, 1961.
158. Семенов В.С. Капитализм и классы. Исследование социальной структуры современного капиталистического общества. Москва, 1969.
159. Семин О. Великая годовщина. Аграрный вопрос и крестьянская / крепостная реформа на Кавказе. Киев, 1911.
160. Симонян А.Г. Рабочие Закавказья в общерпссийском рынке наемного труда в конце XIX – начале XX вв. (Историко-статистический анализ). Ереван, 1995.
161. Социология в СССР. М., 1965.
162. Степанов П.Ф. Заметка о Карсской области. – Известия КОИРГО, т. 7, Тифлис, 1883.
163. Стригунов И.В. Из истории формирования бакинского пролетариата 70 - 90 –е годы XIX в. 1960.
164. Струмилин С.Г. Статистико – экономические очерки. М., 1958.
165. Струмилин С.Г. Избранные произведения, т. 3. Москва, 1964.
166. Сумбат – заде А.С. Сельское хозяйство Азербайджана в XIX веке. Баку, 1958.
167. Сумбат – заде А.С. Промышленность Азербайджана в XIX веке. Баку, 1965.
168. Туманян О.Е. Экономическое развитие Армении, ч. 1. Ереван, 1954.
169. Улашчик Н.Н. Очерки губернаторов Литвии и Западной Белоруссии как исторический источник. – Проблемы источниковедения, Москва, 1961.
170. Философский словарь. Москва, 1963.
171. Хатисов И.С. Хлопководство в Закавказии. – Свод материалов, т. IV, ч. II, Тифлис, 1888.
172. Хоштария Э.В. Очерки социально – экономической истории Грузии. Промышленность, город, рабочий класс, XIX - начало XX в. Тбилиси, 1974.
173. Хрящева А.Х. К вопросу о принципах группировки массовых статистических материалов в целях изучения классов в крестьянстве. М., 1925.

174. Чайнов А.В., Студенский Г. История бюджетных исследований. Москва 1922.
175. Чайнов А.В. Бюджетные исследования. История и методы. Москва, 1929.
176. Шавров Н.Н. Очерк шелководства в Закавказии. – Свод материалов, т. IV, ч. II. Тифлис, 1888.
177. Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб, 1852.
178. Шостак М.А. Исторический очерк развития горного дела на Кавказе 1801-1901гг. Тифлис, 1901.
179. Шостак М.А. Современное состояние медных рудников и заводов в Зангезурском уезде Елисаветпольской губернии в Закавказье. Тифлис, 1904.
180. Эсадзе С. Историческая записка об управлении Кавказом, т. I. Тифлис, 1907.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Վարչական բաժանումը: Բնակչության
տեղաբաշխումը և աճը 35

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Բնակչության դասային կառուցվածքը 67

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Կրթական մակարդակը: Մտավորականությունը
բնակչության սոցիալական կառուցվածքում 90

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
Արդյունաբերական բանվորությունը բնակչության
սոցիալական կառուցվածքում 110

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Գյուղատնտեսական բանվորությունը բնակչության
սոցիալական կառուցվածքում 162

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն 196

Резюме 208

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 212

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ
ԵՎ ՏՊԱԳՐՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ 213

ՄԱՄՈՒԼ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ 216

Գ Ր Ա Կ Ա Ն Ու Թ Յ Ու Ն 216

ԳԱՍՊԱՐ ԼԵՎՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ XIX ԴԱՐԻ 80–90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան
Համակարգչային շարվածքը՝ Մ. Մաթևոսյանի

Հրատ. պատվեր N 278
Ստորագրված է տպագրության՝ 27.10.2010թ.
Չափսը՝ 60 x 84 1/16, թուղթ՝ օֆսեթ N 1:
14,25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Մարշալ Բաղրամյան պող. 24:

[2000]

ԳԱԱ Հիմնադրամ Գիտ. Գրադ.

А II
9596

Գասպար Լևոնի Կիրակոսյանը ծնվել է 1949թ. հունվարի 9-ին Աշտարակի շրջանի Ուջան գյուղում (այժմ՝ Արագածոտնի մարզ): Տեղի միջնակարգ դպրոցը մեդալով ավարտելուց հետո՝ 1966-1971 թթ., ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որից հետո ընդունվել է աշխատանքի ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որտեղ էլ մինչև այժմ աշխատում է որպես առաջատար գիտաշխատող:

1976 – 1979 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1996 – 1998 թթ. եղել է Արագածոտնի մարզի կրթության վարչության պետ:

Պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ: 1988 թ. Հայոց պատմություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում, իսկ 2008 թ.՝ նաև Գավառի պետական համալսարանում:

Հեղինակ է մեկ մենագրության և 14 գիտական աշխատությունների: Համահեղինակ է նաև երկու գիտական աշխատությունների: Զբաղվում է Հայաստանի պատմության նոր շրջանի ժողովրդագրության հարցերով: